23295
23296

892.7
2-14

ՀԱԶԱՐ ՈՒ ՄԻԿ ԳԻՉԵՐՆԵՐ

Ֆ 2003

892.7
Հ-14

ՀԱԶԱՐ ՈՒ ՄԷԿ ԳԻՇԵՐՆԵՐ

ԱՐԱՊԱԿԱՆ ՎԷՊԵՐ

ԹԱՐԳՄԱՆԵՑ

Մ. Մ.

ՀԱՏՈՐ ԵՐՐՈՐԴ

ՏԻՐ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

ՏՒԳՐԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԵԱՆ

166

ՋՄԻՒՌՆԻԱ.

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԵԱՆ

1870

ГЕСУДАРСТВЕННАЯ
Гос. Библиотека
ЗУЗЛ-Арм.ССР
им. А. Мясникяна
ГОСУДАРСТВЕННАЯ БИБЛИОТЕКА

24806-4.3

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
им. А. Мясникяна

3902-56

ՀԱԶԱՐ ՈՒ ՄԻԿ ԳԻՇԵՐՆԵՐ

ԱՐԱՊԱԿԱՆ ՎԷՊԵՐ

ԱՊՈՒԼՀԱՍՍԱՆ ԱԼԻ ԷՊՆ ՊԷԳԱՐԻ
ԵՒ
ՀԱՐՈՒՆ-ԱԼ-ՐԱՇԻՏ ԱՄԻՐԱՊԵՏՒՆ ՇԻՄ-
ՇԷԼՆԻՀԱՐ ՄՏԵՐՄԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Հարուն—ալ—Րաշիտ ամիրապետին իշխանութեան օրովը՝ Պաղտատ մէջ Ապուլհասան Էպն Թահէր անունով խիստ հարուստ, վայելչակազմ և գեղանի գեղաւաճառ մը կար, որ իր պաշտօնակիցներէն շատ աւելի մեծացի և մարդաւար էր. իր ուղղութեան, անկեղծութեան և զուարթ բնաւորութեան համար ամենուն սիրելի եղեր էր։ Ամիրապետ՝ որ անոր արժանիքը կը ճանչէր, կայր վստահութիւն մը տնէր անոր վրայ։ Ա՛ինքան կը յարգէր որ իր սրտակից կանանց ալիւռոյքը հոգալու գործն անոր յանձներ էր։ Ա՛յն կ՚ընտրէր իրենց հագուստը, կարասին և գոհարներն. և այս պաշտօնը զարմանալի ճաշակով կը կատարէր։

Իր ընաիր ձրկց և ամիրապետին պաշտպանութիւնը վայելելուն համար, աւազանիին և առաջին կարգի պաշտօնատարներու որդիքն իր տունը կը դամարէին, և իր բնակարանը պալատի աղնուականներուն ժամադրութեան տեղն էր։ Բայց գեղաւաճառն այս այցելուներուն մէջ

ջին ամենէն աւելի կը յարգէր և կը սիրէր Ապուհասան Ալի Էմին պէզար անունով երիտասարդն։ Այս իշխանը Պարսից արքայական դերդաստանէ մը կը սերէր։ Այս դերդաստանը դեռ Պաղտատ կը պատուէր, քանի որ վերոնշեալ մահմետականներն այս երկրին տիրերը էին։ Կարծես թէ ընութիւնն ախորժեր էր այս երիտասարդին շնորհել մարքն և մարմնոյ ամէն հաղուագիւտ յատկութիւններն։ Իր դէմքին դեղեցկութիւնն անհման էր, հասակը բարակ, կերպարանքը զուարթ և հրապուրիչ, այնպէս որ տեսնողը վերէն անշուշտ պիտի սիրէր։ Երբ խօսէր, յստակ և լսելիր բառեր կը դուրգուրէր, ախորժելի և նոր ձև մը տալով անոնց։ Իր ձայնին հնչման մէջ այնպիսի բան մը կար որ զայն լսողը կը դիւթէր։ Ասկից զատ՝ շատ խելք և դատողութիւն ունենալուն՝ սքանչելի ճշտութեամբ կը մտածէր և կը խօսէր ամէն տեսակ նիւթի վրայ։ Այնչափ շրջահայեաց և պարկեշտ էր՝ որ ամէն կարելի միջոց կը դուրգուրէր որպէս զի իր խօսակիցները չվտանգէն որ իր կարծիքն իրենց կարծիքէն նախադաս կը համարի։

Ուրեմն պէտք չէ զարմանալ եթէ Էմին Թահէրը այս երիտասարդը միւս իշխաններէն աւելի կը յարգէր, քանի որ շատերն անոր առաքինութեանց հակառակ՝ մոլութիւններ ունէին։ Օր մ՚այս իշխանն Էմին Թահէրի քովը կը պատուէր՝ երբ ան ու Ջերմանի Ջորջի վրայ հեծած ախկին մ՚եկաւ, որուն ընկերացեր էին տաս ազախին, ամէնքն ալ պեղանի, որչափ որ հնար է պատեր իրենց երեսը ծածկող քօղին տակէն։ Տիկինը վարդապոյն գոտի մ՚ունէր, չորս մատ լայն, որուն վրայ հիանալի խոշորութեամբ մարգարիտներ կը փայլէին. իսկ պեղեցկութիւնն՝ աղախիններուն պեղեցկութենէ դէր մ՚ի վեր էր, որչափ լման լուսինը դերազանց է երիջրեայ մահիկէն։ Տիկինը քանի մը բան դնէր էին եաև՝ Էմին Թահէրի խանութը մտեր էր անոր խօսելու, որ մտքուր էր և ընդարձակ. Թահէր խորին յարգանօք զանի ընդունեց, խնդրելով որ նստի և ամենէն պատուաւոր տեղն անոր ցոյց։

Սակայն Պարսկաստանի իշխանազունը յարմար աւելի սեպեց իր քաղաքավար և քծնող բնաւորութիւնը յայտնելու, ոսկեհուռ գիպակէ քարձը շտկեց որպէս զի տիկինն անոր վրայ կռթնի և խոհրն քաշուեցաւ։ Ձեռաց՝ տիկնոջ բարև առաւ անոր ոտիցն օթոցը պագնելով և բազմե-

ցին վարը դնաց կեցաւ։ Որովհետև տիկինն Էմին Թահէրի քովը հասմարձակ էր, իր քօղը վերուց և Պարսից իշխանին աչքին այնպիսի տարօրինակ դեղեցկութիւն մ՚ընծայեց որ պատանին մինչև սրտին խորը ծակեց։ Իր աչքերն անոր վրայէն չէր հեռացներ և սիրոյ մի և նոյն նեղոցածութիւնը կ՚ընդունէր։ «Տէր իմ, ըսաւ անոր՝ բարեսէր դէմքով մը, կ՚աղաչեմ շնորհ բերէ նստելու։» Պարսից արքայազունը հնազանդեցաւ և բազմոյին ծայրը նստաւ։ Իր աչքերն անդուլ անոր վրայ յառեր՝ սիրոյ անուշ թոյնը կը շնչէր։ Տիկինն անոր հոգւոյն մէջ անցածը գիտեց և ասով իր կրակին աւելի բորբոքեցաւ։ Ոտք ելաւ, Էմին Թահէրի մօտեցաւ և իր այցելութեան պատճառը կամացուկ մը անոր ըսելէն եաև՝ Պարսից իշխանազնին անունն և հայրենիքը հարցուց։ «Տիկին, պատասխանեց Էմին Թահէր, այն նորատի իշխանն Ապուլհասան Ալի Էմին Պէզար կ՚անուանի և թագաւորական ցեղէ է։»

Տիկինը շատ ուրախացաւ իմանալով որ իր սրտած անձն այնպիսի բարձր աստիճանի տէր անձ մ՚է։ «Անշուշտ, ըսել կ՚ուզես թէ, յարեց նա, Պարսից թագաւորներէն կը սերի։ — Այո, տիկին, պատասխանեց Էմին Թահէր։ Պարսից վերջին թագաւորներն իր նախահարքն են։ Պարսկաստանի տիրելէս վեր՝ իրենց արքայազունները մեր ամիրապետութեան պալատին մէջ պատուաւոր տեղ մը բռնած են։ — Մեծապէս գոհ կ՚ընես իս, ըսաւ տիկինն, որ այն նորահասակ իշխանն ինձի կը ծանօթացնես։ Երբ այս կինը քեզի զրկեմ, ըսաւ՝ իր աղախիններէն մէկը ցոյց տալով, կ՚աղաչեմ որ ինձի պատ տեսնես և այս իշխանազունն ալ հետդ բերես։ Շատ կը փափաքիմ որ իմ տանս շքեղութիւնը տեսնէ, որպէս զի ամէն տեղ երթայ ըսէ թէ Պաղտատ մէջ աղահութիւնն ամենէն չեն ձանձրար ամուսիններէն։ Հասկցար ինչ ըսի. ըսածս անպատճառ կատարէ, թէ ոչ քեզի դէմ պիտի բարկանամ ու բիշ անգամ այս տեղ չպիտի գամ։»

Էմին Թահէր բաւական սրամիտ մարդ մ՚էր և այս խօսքերէն դիւրաւ ըմբռնեց տիկնոջ միտքն։ «Իմ իշխանուհիս, իմ թագուհիս, պատասխանեց նա, Աստուած չընէ որ ինձի դէմ նեղանալու պատճառ մը տամ քեզ. պարզ մը պիտի սեպեմ հրամաններդ կատարելու։» Այս պատասխանին վրայ՝ տիկինը մեծ բարև ըսաւ Էմին Թահէրի, գլուխը

Ծռելով, և պարսիկ իշխանազնին քաղցր նայուած մ՚ուղղելէն ետև՝ իր ջորին հեծաւ և մեկնեցաւ։

Պարսիկ իշխանը՝ տիկնոջ մեղրագին սիրահարած ըլլալով կրցածին չափ աչքովանոր հետևեցաւ. և թէև արդէն տիկինն անհետացեր եղեր էր, գարձեալ աչքն անոր գացած կողմը գարձուցեր կը նայէր։ Էմին Թահէը իմացուց անոր թէ քանի մը մարդիկ գինքը կը գիտեն և կը ծիծաղին իր կերպարանքին վրայ։ «Ափսո՛ս, ըսաւ իշխանազունն, ամէն մարդ և դու իմ վրայ սիրտի դժայիք, եթէ գիտնայիք որ ասկից եղող գեղեցիկ տիկինն իմ սիրտս հետն առաւ տարաւ, և անձս ալ կը փափաքի որ երթայ անոր միանայ։ Խնդրեմ, իմացուր ինձ թէ ո՞վ է այս բռնաւոր տիկինն որ ամենուն սիրտն իրեն կը քաշէ առանց ժամանակ տալու խորհրդածութեան։ — Տէր իմ, պատասխանեց Էմին Թահէը, այս տիկինն երևելին Շէմսէդտինհարը, մեր ամիրապետին առաջինն սիրելին է։ — Իրաւունք ունի այսպէս կոչուելու, ըսաւ իշխանն, որովհետև անմայր երկրիկ վրայ փայլիլով արևէն աւելի գեղանի է։ — Այդ իրաւ է, պատասխան տուաւ Էմին Թահէը. ուստի հետաքրքրեց իշխանն ալ կը սիրէ, կամ լաւ ևս ըսեմ, զանի կը պաշտէ։ Յատկապէս հրաման տուած է ինձ որ իր ուզածը կատարեմ, և նոյն իսկ կանխեմ, որչափ որ կարելի է, իր բոլոր փափաքները։»

Էմին Թահէը այսպէս կը խօսէր որպէս զի պարսիկ իշխանազնին սէրը փարատի, քանի որ կրնար ապագային մէջ իրեն աղէտալի դառնալ, սակայն իր խօսքերն աւելի բորբոք տալին սրտին։ «Զքնազդ Շէմսէդտինհար, պոռաց նա, ի՛նչ րսեմ ուրիշ արդէն որ ներելի չէ ինձ աչքս մինչև քեզի բարձրացնել, սակայն որչափ որ անոյշ եմ սէրդ գրաւելու, գարձեալ ձեռքս չէ քեզ չսիրելն։ Ուստի քեզ սիրտի պաշտեմ և օրհնեմ սիրտի բաղդս որ արևը լուսաւորող ամենէն գեղեցիկ էակին գերին եմ։»

Երբ պարսիկ իշխանազունն այսպէս իր սիրալ գեղանի Շէմսէդտինհարի կը նուիրէր, տիկինն ալ՝ իր առնը գառնալով՝ իշխանը տեսնելու և՝ անոր հետ խօսակցելու միջոցը կը մտածէր։ Ան ինչ իր պալատը մտնալ՝ Էմին Թահէրի գրկեց անոր ցոյց տուած ազնիկն որ իր բոլոր գաւառները կը վայելէր, որպէս զի երթայ քսէ որ անյապաղ պարսիկ իշխանին հետ դայ գինքը տեսնելու։ Ազնիկն Էմին Թահէրի խառնելէն ետև, մինչդեռ սա իշխանին հետ կը խօսէր և զօրաւոր պատրաստութիւններով ի՛նչպատէր հանդիպելու որ ամիրապետին մտերմութիւնը չսիրէ։ Ազնիկը զանոնք միատեղ տեսաւ. «Տեսաք իմ, ըսաւ անոնց, իմ մեծարելի սիրտիս Շէմսէդտինհար, հաւատացեալ իշխանին տառապելին սիրելին, ի՛նչպէս ձեզ գալու իր պատրաստ է հետապնդելու, իսկոյն ուրք երթալ առանց ազնիկին բան մ՚ըսելու, և անոր երեսէն գնայ՝ փոքր ինչ ներելին գժկամակութեամբ մը։ Իսկ իշխանն ալ անոր ուղևիկ եղաւ առանց մտածելու թէ արդարև վտանգաւոր էր այս պարկերութիւնը։ Սակայն Էմին Թահէր՝ որ ամիրապետին մտերմութեան տունն ազատօրէն մտնելու արտօնութիւն ունէր, իր հետն ըլլալուն վրա մը չէր զգար իշխանազունն։ Ուստի երկու քոյրն ալ ազնիկին երեսէն ի՛նչպէսին որ իրենցմէ քիչ մ՚առչնէն կը գայէր։ Անոր հետ ամիրապետին պալատը մտան և մինչև Շէմսէդտինհարի փոքր ապարանին դուռը հասան, որ արդէն բաց էր։ Ազնիկը զանոնք մեծ սրահ մը տարաւ և աղաչեց որ նստին։

Պարսիկ իշխանազունն ինքզինքն երկնային գնայելի պալատ մը կարծէց։ Երբէք իր գանազան տեղին պէս շքեղ վայր մը տեսած չէր։ Գեհենի օճմոյնները, բարձերն ու նստարանին միւս սարքն ու զարդն և ճարտարապետութիւնը զարմանալի գեղեցկութիւն և ճոխութիւն ունէին։ Դատելէն ետև շատ չանցաւ որ սև և մազրատեր աղախին մը սեղանը գրաւ և անոր վրայ համադամ կերակուրներ տեղաւորեց, որոնց համեմներուն ընտրութիւնը աքանչելի հոտէն կ՚ինայուէր։ Երկնց կերակուրն ուտելու առնն՝ զանոնք առաջնորդող աղախինն անկէ չհեռացաւ, և ամենէն գոզարիկ համադամներէն անոնց հրամցուց. ուրիշ աղախիններ ալ կերակուրէն ետքը՝ պատուական գինի մեծարանքին։ Վերջապէս սեղանէն ետև և ամէն մէկուն զատ կոնք մ՚ու ամպոզէն ջրի առնն մը ներկայացուցին ձեռք բերելին լուալու համար. յետոյ՝ ոսկի բուրանոցով մը հալուէ բերին որով իրենց մօրուքն ու հագուստը ծխացին։ Անուշահոտ ջուրն ալ չմոռցան, որ գոհարազարդ ոսկի ամանի մը մէջ՝ յատկապէս այս բանին գործածութեան համար շինուած էր.

աչն ջրէն իրենց ափին մէջ առին և՝ ըստ սովորութեան՝ մօրուքնին և դէմքերնին քսկլին: Ապա իրենց տեղը նստան, բայց հազիւ թէ նստեր էին որ աղախինն աղաչեց որ առք եկեն և իրեն հետևին: Իրենց գանուած սրահին մէկ դուռը բացաւ և հրաշակերտ սրահիկ մը մտան: Գեղաձև գմբեթի մ՚ունէր, որ էջն ալէս սպիտակ հարիւր սիւներու վրայ կեցած էր: Ամէն սիւներուն խարիսխներն ու խոյակները չորքստանի կնդանիներով և այլազան ոսկեփայլ թռչուններով զարդարուած էին: Ամէն տարօրինակ սրահկին գեղանի գործն՝ որ միակտուր և կարմիր ու սպիտակ մեսրոպէ վարդի փունջերով զարդարուն էր, նոյնալէս գմբեթին արտաքին նկարներով փայլկուն՝ չքնաղ երեւոյթ մ՚ունէին: Մէն մի սիւնակի մէջ տեղ՝ փոքրիկ բազմոց մը կար՝ մի և նոյն կերպով զարդարուած՝ յատնասակէ, վառնակէ, յասպիսէ, սև սամէ, պորփիւրէ, ակատէ և ուրիշ թանկագին նիւթերով շինուած ոսկեհուռ ու գոհարազարդ սանդներ կային: Սիւներուն մէջ գտնուած մկրճոցները պատուհաններ էին, վերի գին պատշգամներով որ բազմոցներուն դէմ շարուած էին, և գեղատեսիլ պարտիզի մը վրայ կը նայէին: Պարտիզին ծառուղիները զմրուխտի գայլախաղներով ծածկուած էին, որ գմբեթաձև սրահկին գորվին նկարը կ՚ընծայէին, այնպէս որ ներսէն ու դրսէն գորվը նայելով մարդ կարծէր թէ գմբեթին ու պարտէզին իրենց բոլոր զարդերով՝ մի և նոյն գորվին վրայ էին: Ծառուղիներուն երկայնքն և շրջանակի երկու ակնաւէտ ջրանցքներ կային որ գմբեթին պէս բոլորակի ձև մ՚ունէին և որոյմէ մին՝ միւսէն աւելի բարձր ըլլալով՝ ջրվէժի պէս անոր մէջէն կը հոսէր, իսկ ոսկեղօծ արձանէ թաղարներ՝ որ հետզհետէ անկիւնով և ծաղկներով զարդարած՝ երկորդ ջրանցքին մէջ տեղ տեղ դրուած էին: Այն ծառուղիները կը զատէին ընդարձակ միջոցներ՝ ուր շիտակ ու թմանձրախիտ ծառեր կային, և բիւրաւոր թռչուններ ներդաշնակ հանգոյց մը յօրինելով՝ մարդուս աչքը կ՚գմայլեցնէին թռչտելով և օդին մէջ մերթ ամպով և մերթ արեւնալի կերպեր ընելով:

Պարսից իշխանն ու Էմն Թահէր երկար առեն կեցան և այս հիանալի ու շքեղ տեսարանը դիտեցին: Ամէն անդամուն որ բան մ՚աչքերնին զարնէր, կը զօչէին իրենց զարմանքն ու հիացումը յայտնելու

համար, նա մանաւանդ պարսիկ իշխանն՝ որ երբէք ատոնց նման բան մը տեսած չունէր: Էմն Թահէր, թէև երբեմն այս ալօր տեղը մտեր էր, դարձեալ կարծէր թէ նոր՝ նորոյ գեղեցիկ բաներ կը տեսնէր: Վերջապէս այն եզական իրերուն վրայ անդուլ կը հիանային, և գեռ ևս ախորժելի կերպով անոնցմով համակուած էին, երբ խումբ մը կանոյք տեսան պերճօրէն հագուած: Ամէնքնին ալ դուրսն՝ և դմբեթէն քիչ մը հեռու նստեր էին Հնդկաստանի ոսոխի փայտէ աշխատուած վրայ, որ խորշաձև արծաթէ թելերով զարդարուած էին, և ամէն մէկ կին ձեռքը նուագարան մ՚առեր, ու հրամանի մը կ՚սպասէին որ նուագեն:

Ամէնքնին ալ գայլն պատշգամին վրայ նստան ուսկից երեսնին դէմ առ դէմ կը տեսնուէր, և աչ կողմը դիտելով մեծ բան մը տեսան, ուսկէ տասնհինգ տրով պարտէզը կ՚երկարէր և չորս կողմն ալօր տեսարաններ կային: Աղախինը ձգեր գացեր էր, և որովհետև միտակ մնացեր էին՝ ժամանակ մ՚իրարու հետ խօսեցան: «Գուռ որ խնամատուն մարդ մ՚ես, ըսաւ Պարսիկ իշխանն, անհրելիա եմ որ գոհունակութեամբ կը նշմարես այս մեծութեան և շքեղութեան նշանները: Իսկ իմ կարծեօքս, աշխարհիս մէջ ասկից աւելի հիանալի բան մը չկայ. բայց կը խորհիմ որ այս է ամենագեղազարդ Շէմախիհարի շքեղապանծ քնակարանն՝ և աշխարհիս առաջին միապետը զանի այս տեղ կը պատհէ, կը խոստովանիմ որ իրեն ամենէն անբաղդ մարդը կը կարծեմ: Կ՚երևի ինձ որ իմիտէս աւելի անապօրէն վիճակ մը չկայ, քանի որ կը սիրեմ էակ մ՚որ իմ ոսոխս իշխանուհւոյն հետքն կը գտնուի, և այնպիսի տեղ որ սոյն ոսոխս այնքան ղօբաւոր է որ այս ժամուս իմ կեանքիս վրայ անդամ ապահով չեմ:»

Էմն Թահէր երբ պարսիկ իշխանազնին այս խօսքը լսեց՝ անոր ըսաւ. «Տէր իմ, երանի թէ քու սիրոյդ յաջողութեան վրայ տայի քեզ այն ապահովութիւնները զոր կրնամ տալ կենացդ վրայ: Որչափ որ այս հայակաղ պարտէզն ամէրսալտնին է, և իրքը յատկապէս շինեալ տուած է Շէմախիհարի համար, յատնհանգան բերկրութեանց պատճառ մնալէ, և թէ միտղամնայն իր պալատին մասը կը համարուի, սակայն պէտք է գիտնալ որ այս տիկինն անոր մէջ կատարեալ ազատու-

թեամբ կ'ապրի : Բնաւ ներքինիները չուզեն առնուիլ իր դործերուն վրայ չեն հակիր . իր յատուկ տունն ունի , զոր ըստ հաճոյս կը դործածէ : Առանց մէկէն հրաման ուզելու քաղաքը կ'երթայ պտըտելու , և տուն կը մնայ երբոր ուզէ . երբէք ամբրաւաւորը չդար զինքը տեսնելու՝ ներքինապետ Մէսրուրին միջոցաւ անոր խնդիր տալէն առաջ : Ուսոի սիրտդ հանդարտ պահէ , Շէմսէդինհասի տալիք երաժշտական հանդէսը վայելելու աշխատէ :»

Այն միջոցին որ Էմին Թահէր այս խօսքերը կ'ատարէր , պարսկի իշխանն և ինքն ամբրաւաւոին սիրելւոյն սրտակից ազատնին դալը տեսան , որ հրամայեց իրենց առջևը նստոյ կանանց երթալու և նուագելու : Խնդրոյ ամէնքնին մէկտեղ՝ սկսելու համար՝ նուագարանները ածեցին , և քիչ մ'ատեն խաղալէն ետև՝ անոնցմէ մէկը սկսաւ երդել , ձայնակից ընելով իրեն վրայ մը զոր շատ քաջ կը նուագէր : Որովհետև արդէն իսկ ատեր էր իրեն թէ ինչ նեղութիւն վրայ պիտի երթէ , ըստ խօսքերն այնքան յարմար էին պարսկի արքայազնին դժդունութեանը որ նուագին վերջերը ծափ զարկաւ : «Ո՞նչպէս կարելի է , գոչեց նա , որ մարդուս սիրտը թախանձելու կարողութիւն ունենայ , և իմն Ճանչելով՝ այդ խօսքերով չհաշխարհիկ ձայնիւդ մէկ փորձը մեզի կը յայտնես : Ես անդամ իմ սրտիս զդացմունքն ուրիշ կերպով չիսի կարենայի բացատրել :» Ինն այս խօսքերուն պատասխան մը չտուաւ : Իր երդը շարունակեց և ուրիշ չատ մը տաղեր երդեց , որով իշխանն այնքան զմայլեցաւ որ մէկ քանին կրկնել տուաւ աջօք . ուսոի կ'նմացուէր որ անոնց նշանակութիւնն իր սրտին կը յարմարցնէր : Երբ բոլոր տաղերը վերջացուց , ինքն ու իր ընկերուհիներն ոտք եղան և մնասին երդեցին՝ իրենց խօսքերէն սա իմացնելով թէ՝ «Լեցուն լուսինն իր բոլոր պայծառութեամբ պիտի երթէ և քիչ առնէն արևուն պիտի մնտենայ :» Այս կը նշանակէր թէ Շէմսէդինհասը պիտի երևէր և թէ պարսկի իշխանը զանի տեսնելու զուարճութիւնը պիտի ունենար :

Եւ իրօք՝ բակին կողմը նայելով , Էմին Թահէր և պարսկի իշխանազունը դիտեցին որ սրտակից ազատնին կը մօտենար , իր եռևէն տասև կիներ կղզային և մեծ դժուարութեամբ ձուլածոյ արծաթէ և ոսկեզօծ մեծ ամոռ մը կը բերէին . ազատնին սոյն ամոռը քիչ մը հեռու անոնց առջևը դնել տուաւ . յետոյ անոնք ալ ազատնին ծառայութեան մատուցին : Ա՛երջը՝ քսան կիներ՝ ամէնքն ալ դեղանի և միօրինակ զարդարուած՝ երկու կարդ յառաջ անցան , երդելով և նուագելով նուագարան մ'որմէ ամէն մէկը հատ մ'ունէր , և եկան դահլին մօտ շարուելան , մէկ մասը մէկ կողմը , միւսը՝ մէկալ կողմը :

Այս ամէն բաներն Էմին Թահէրի և պարսկի իշխանին ուշադրութիւնը կը դրաւէին , մանաւանդ անոր համար որ հետաքրքիր էին իմանալու թէ ինչ վերջ պիտի ունենան : Ա՛երջապէս դահը բերող տասև կիներ տեսան , որ գեղանի էին և աղտոր հադուած , և նոյն տեղը քիչ մ'ատեն կանգ առին : Ամբրաւաւոին սիրելին կ'սպասէին , որ ի վերջէ երևան եկաւ և անոնց մէջ տեղը կեցաւ : Դիւրին է զանի որոշել թէ իր վեհապանծ հասակին ու կերպարանքին , թէ ամենաթեթև կերպասէ լօդիկէն , որ լըջապոն էր , և իր ամենամաքուր , ամենապերճ հադուստին վրայէն ուսերուն վրայ ձգեր էր : Մարդարիտներն , ադամանդներն և սուտանիներն առատ չէին , այլ քիչ , բայց ամենագին և անգին էին : Ա՛ոպիսի վեհապանծութեամբ յառաջ անցաւ որ քաջ կը ներկայացնէր արևն իր ամպոտ ընթացքին մէջ , բայց այս ամէն պերճ ադդատութիւնը կ'ընդունէին առանց փայլը նսեմացնելու , և իրեն համար պատրաստուած դահլին վրայ եկաւ նստաւ :

Երբ պարսկի իշխանազունը Շէմսէդինհասը տեսաւ՝ իր աչքերն լոկ անոր վրայ սևեռեց , ու ըսաւ . «Երբ մարդ իր ուզածը կը գտնէ ալ անոր վրայ լուր չհարցներ , և ամէն կասկած կը փարատի երբ Ճշմարտութիւնն երևան կգայ : Ա՛յս է իմ ազէտից սկիզբն , այնպիսի աղէտներ որ որչափ ծանր և երկարատև ըլլան՝ գարձեալ կ'օրհնեմ և չսիսի գադրիմ զանոնք օրհնելէն : Ա՛յս էակին առջև՝ ես ինքզինքս կ'ելնեմ , հոգիս կը վրդովի , կը նշմարհի և կարծես թէ սիսի պայթի : Գնա ուրեմն , հոգիդ իմ , կը նեղեմ քեզ , բայց թողայս ակար մարմնոյս օդտին և պահպանութեան համար ըլլայ : Դու ես , բազմազութ Էմին Թահէր այս անկարդութեան պատճառը , կարծեցիր թէ իս այս տեղ բերելով մեծ Հաճոյք

մը պիտի պատճառես ինձ, և կը տեսնեմ որ եկայ հոս ինքզինքս չի կո-
րստա տեսնելու համար: Ներէ ինձ, շարունակից նա խօսքն ուղղե-
լով, կը սխալիմ. ես ինքնին պալ ուղեցի, և պէտք է որ ես ինքզինքս
պարտաւեմ:» Այս խօսքերն ուսարտելով յորդ արտոսուք թափեց:
«Ջատ գոհ եմ, ըսաւ անոր Էմին Թահէրը, որ իս չես մեղաւորը: Երբ
իմաց տուի քեզ որ Շէմսէդինհար ամիրապետին առաջին սիրելին է,
կամաւ ըսի որ առաջն առնում այն ազետալի տպաւորին զոր սրտիդ
մէջ առաջելու ախորժ կ'ունայ: Բոլոր այս տեղ տեսածներդ պէտք է որ
քեզ սէրէ վերծ պահեն, և Շէմսէդինհարի քեզ ցոյց տուած սրտոյն
համար մի միայն երախտապէտ ղգայուններ ցուցնելու պարտաւոր ես,
քանի որ ինքը հրամայեց որ քեզ այս տեղ բերեմ: Ուսոի մոռնալեն-
նէդ դարձիր, և պատշաճութեան համեմատ շնորհքով շնորհքով անոր
առջևն երթալու պատրաստուէ: Ահաւասիկ Շէմսէդինհար կը յառաջա-
նայ: Եթէ այս քայլն առած չըլլայինք, ուրիշ միջոցներ կրնայի դործա-
ածել, բայց քանի որ հոս կը գտնուինք, կ'ուզեմ զԱստուած որ մեր
ըրածին վրայ չզղջանք: Այս ալ պէտք է յիշեցնեմ քեզ, յարեց նա, որ
սէրը գաւաճան մ'է, որ կրնայ քեզ անել անդունդի մէջ նետել:»

Էմին Թահէր աւելի ևս խօսելու առանն չունեցաւ, որովհետև Շէմ-
սէդինհար հասաւ: Իր դահճն եղաւ նոտաւ և դլուխը շարժելով երկու-
քին ալ բարևեց: Բայց իր աչքը պարսիկ իշխանազնին վրայ կեցուց, և
իրարու հետ համր լեզու մը խօսեցան, հառաչներով խառն, որով քիչ
առենի մէջ աւելի շատ բան իմացուցին իրարու քան ինչ որ չէին կրնար
ըսել երկարագոյն ժամանակի մէջ: Շէմսէդինհար որչափ իշխանին աչ-
քերուն մէջ կը նայէր՝ նոյնչափ կը համոզուէր որ իշխանն անտարբեր
չէ և այս համոզմամբ ինքզինքն աշխարհիս ամենէն երջանիկ էակը կը
համարէր: Վերջապէս անոր վրայէն աչքերը դարձուց և հրամայեց
որ առաջին անգամ երգող կիները մօտենան: Ամենքն ալ եկան, և
մինչդեռ կը յառաջանային ծառուդիին մէջ գտնուղ սև կիները դուրս
եկան՝ աթոռներ բերին և պատշգամին պատուհանին մօտ դրին, ուր
Էմին Թահէրը և պարսիկ իշխանազունը կը գտնուէին, այնպէս որ ա-
թոռները՝ դահլին և անոր երկու կողմը գտնուղ կանանց հետ կիսաբոլոր
մը կը յօրինէին հիւրերուն առջև:

Երբ կանայք որ առաջուց այն պատուհերուն վրայ նստեր էին՝ Շէմ-
սէդինհարի հրամանաւ իրաքանչիւրն իր տեղը բռնեց՝ ամիրապետին
այս սիրելին իր կիներէն մէկն ընտրեց երգելու համար: Այդն կինն իր
տաւիղը լարելու համար քիչ մը ժամանակ անցնելէն ետև՝ երգ մ'եր-
գեց, որուն խնամատը սա էր թէ՝ գիրար լիուլին սիրող սիրահարներ
անսահման զորով կ'ղգային իրարու համար, թէ իրենց սիրտերը՝ թէև
երկու տարբեր մարմնոյ մէջ կը գտնուէին՝ բայց մի էին, և թէ երբ ի-
րենց փափաքին դէմ արդելք մ'եղնէր՝ կրնային իրարու ըսել արտա-
սուաղին. «Եթէ գիրար կը սիրենք, որովհետև գիրար սիրալիր կը
գտնենք, միթէ հնարկ է որ մեզ մեղադրեն. ոչ, պէտք է ձակատագրին
տալ յանցանքը:»

Շէմսէդինհար իր աչքերով և շարժուածներով քաջ հասկցուց որ այս
խօսքերն իրեն և պարսիկ իշխանին կը վերաբերին և ինքզինքը չկրնա-
յով զսպել, իշխանն ոտք ելաւ և իրեն իբր նեցուկ ծառայող սիւնակին
վերյառաջանալով երգող կնկան մէկ ընկերուհին յայտնեց որ իր երա-
ժիշտ ուշադիր ըլլայ: Որովհետև այս կինն իր քոյրն էր, անոր ըսաւ.
«Մտիկ ըրէ ինձ և շնորհ ըրէ տաւիղով ձայնակցիլ երգելիք երգիս:»
Այն տաեն իր սիրոյն բռնութիւնը յայտնող քնքուշ և եռանդուտ խօսքե-
րով երգ մ'երգեց: Երբոր լմնցուց, Շէմսէդինհար՝ անոր օրհնակից
հետևելով՝ իր կանանց մէկուն ըսաւ. «Ինձի ալ մտիկ ըրէ և երգիս
ձայնակից նուագարանով:» Նոյն պահուն այնպիսի եղանակաւ մ'եր-
գեց որ աւելի ևս բորբոքեց պարսիկ իշխանին սիրտն՝ որ նորէն իր
կողմէն պատասխան տուաւ աւելի տաքափալի եղանակաւ մը:

Այս երկու սիրահարներն իրենց երգերով փոխադարձ սէրերնին ի-
րարու յայտնելով Շէմսէդինհար իր սիրոյն տասակութեան չդիմացաւ:
Իր դահէն եղաւ բոլորովին սիրամոլար և դէպ ի սրահին դուռը գի-
մեց: Իշխանն՝ որ անոր միտքը հասկցաւ, իսկոյն ոտք ելաւ և արտօր-
նաք զանի դիմաւորեց: Գրան տակն իրարու հանդիպեցան և իրարու
ձեռք տալով այնպիսի հաճոյքով գիրար համբուրեցին որ մարե-
գան: Գետինը պիտի ընկնէին եթէ Շէմսէդինհարի ետևէն եկող կա-
նայք զանոնք չբռնէին և բազմոցի մը վրայ չփոխադրէին. այն տեղ հո-
տաւէտ ջրեր երեսնին սրսկելով և հոտաւոր տալով զանոնք սթափեցին:

Երբ ուշքը գնաց՝ Ջէմմէ-ինհարի առաջին գործն եղաւ չորս կողմը դիտել, և որովհետև Էմին Թահէրը չտեսաւ՝ արտորոք հարցուց թէ ո՞ւր է։ Էմին Թահէրը առ յարդանս հետացեր էր, միտքէն կանայք ի բնոյ սիրուհին սիրելու կը ջանային, և իրաւամբ կը վախնար որ այն պատահած դէպքն աղէտալի հետևութիւն մը չունենայ։ Երբ լսեց որ Ջէմմէ-ինհար վիրքը կը հարցնէ, յուսալ անցաւ և անոր առջևն ելաւ։

Ջէմմէ-ինհար՝ Էմին Թահէրը տեսնելով շատ զոհ եղաւ, իր ուրախութիւնն անոր յայտնել այս բառերը խօսքերով. «Էմին Թահէր, չգիտեմ թէ ինչպէս պարտիմ փոխարինել քեզմէ տեսած անբաւ բարիքս։ Առանց քու միջնորդութեան՝ չպիտի տեսնէի բնաւ պարսիկ իշխանն և ոչ պիտի սիրէի աշխարհիս ամենէն սիրաշահելի մարդը։ Սակայն վատահ եղիր որ ապերախտ չպիտի մնանիմ, և իմ երախտագիտութիւնս, եթէ հնար է, պիտի հատուցանի ինձ ըրած բարեգործութեանդ։» Էմին Թահէր խորին խոնարհութիւն մ'ընծայեց պատասխանեց այս շնորհակալութեան և մաղթելով ամիրապետին սիրելւոյն բոլոր փափաքանաց կատարումը։

Ջէմմէ-ինհար պարսիկ իշխանին կողմը դարձաւ որ իր քովը նստեր էր, և շիտակութեամբ մ'անոր երեսը նայելով «Տէր իմ, ըսաւ անոր, ստոյգ եմ որ իս կը սիրես, և որչափ եուանդագին ըլլայ սէրդ՝ չես կրնար տարակոյս մ'ունենալ որ իմն ալ քուկինդ չափ բուռն է։ Բայց մնաոի յայտնելով չմոռնինք. որչափ որ իմ և քու զգացումներդ հաճելի են, թէ քեզ և թէ ինձի համար ուրիշ բան չեմ տեսներ այլ միայն նեղութիւն, տատապանք և մահատու տրտմութիւն. մեր աղէտից ուրիշ գարման մը չունինք, այլ միայն միշտ իրար սիրել, Աստուծոյ ապաւինիլ և մեր ձակատագրին անօգնականութիւնն անոքմէ սպասել։ — Տիկին, պատասխան տուաւ անոր պարսիկ իշխանն, ինձի խիստ մեծ անհրաժեշտութիւն մ'ըրած ի'ըլլայիը, եթէ վայրկեան մը սիրոյս վրայ կասկած ունենայիը։ Սէրս հոգւոյս հետ այնպէս միացած է որ կրնամ ըսել թէ անոր լաւագոյն մասն է և իմ մահս անոնէս ետքը զայն պիտի պահեմ։ Նեղութիւն, տանջանք, արգելք և ամէն ինչ չպիտի կարենան իմ սէրս մարել։» Ա՛յս խօսքերն ուտարեալով իշխանն յորդ արտասուք թափեց և Ջէմմէ-ինհար ալ չկրցաւ իր արտասուքը զսպել։

Էմին Թահէրը պատեհ առիթ սեպեց նոյն պահուն ամիրապետին սիրելւոյն խօսելու։ «Տիկին, ըսաւ անոր, ներէ ինձ յայտնելու որ լալու տեղ պէտք է ուրախանաս որ միտքին կը գտնուիք։ Ինձ չեմ կարող ըմբռնել թէ ինչ պատճառաւ կը տրտմիք։ Հապա ինչ պիտի ընէք եթէ՝ ի հարկէ տեսնելու իրարմէ բաժնուիք։ Բայց ինչի՞ համար, ի հարկէ։ Շատ տեղեր վեր այս տեղենք, և քանի դիտես, տիկին, որ քաշուելու ժամանակ է։ — Ա՛հ, ինչ անգութ ես, պատասխանեց Ջէմմէ-ինհար։ Դուն որ իմ արտասուքիս պատճառը դիտես, միթէ իմ գանուած վիճակիս վրայ չե՞ս գթար։ Տխուր ձակատագիր։ Ինչ ըրի ես որ այսպէս սոսկալի բաժնուելու այն ծանր օրէնքին, որով մի միայն իմ սիրահարս վայելելու ի'արգիլուիմ։»

Որովհետև՝ համոզուած էր որ Էմին Թահէր լոկ բարեկամութենէ շարժեալ կը խօսէր, դժարը չեկաւ անոր ըսածին վրայ, նա մանաւանդ օգուտ քաղեց։ Ու յիրաւի, իր մտերիմ աղաչեին նշան մ'ըրաւ. սա ալ դուրս ելաւ խնդրոյն. և քիչ առնէն արծաթէ սեղանի մը վրայ դրուած պատրաստեր բերաւ, և զայն իր սիրուհիին և պարսիկ իշխանին մէջ տեղը դրաւ։ Ջէմմէ-ինհար ամենէն պատուական պատուղն ընտրեց և իշխանին ընծայեց աղաչելով որ իր սիրոյն համար անկից ուտէ։ Իշխանը զայն առաւ և իր սիրուհիին դրած կողմէն բերանը դրաւ։ Ինքն ալ իր կողմէն Ջէմմէ-ինհարի բան մը առաւ, զոր առնելով նոյն կերպով կերաւ։ Ձմոռցաւ նաև Էմին Թահէրը հրաւիրելու որ իրեն հետ ճաշակէ, բայց ինքզինքն անապահով տեղ մը տեսնելով՝ առջի աղէկ առիթը որ իր տունը գտնուեր, ուտի միտակ երեսպաշտութենէ քիչ մը բան առաւ կերաւ։ Երբ սեղանը վերցուցին՝ արծաթէ կոնք մը և ոսկի ամանով ջուր բերին, և միատեղ ձեռք բերին լուացին։ Ցետոյ իրենց տեղը նստան. այն տեղ՝ առաւ սա կենդանի երեքը վտանգներէ բաժանելով պաղարիկ դիմի մեծարեցին՝ ոսկի ափսեով, և Ջէմմէ-ինհարի, պարսիկ իշխանին և Էմին Թահէրի առջևը դրին։

Ջէմմէ-ինհար առջի առանձին մնալու համար իր քովը տաս սև կիներն և միւս երկիչ նուագող աղախինները պահեց. միւսները ձամբելէն ետև՝ պատուիրեցին մէկն առաւ և ձեռքը բռնելով՝ պաղարիկ կրպ մ'երթեց, որուն ձանապարհը եղաւ կիներէն մէկին իր վիճակն։ Երբ

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZUUՈ-Арм.ССР
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
им. А. Мясникяна
3902-56

երգը լինցուց, պինին խանգ. յետոյ երկու բաժակներէն մին առաւ և իշխանին ներկայացուց, աղաչելով որ իր սիրոյն համար զայն խմէ, ինչպէս որ ինքն ալ անոր սիրոյն համար ընդուներ էր: Իշխանն ուրախութեամբ և խանդավառ սիրով զայն ընդունեց, և ինքն ալ հինգ մը ձայնակցութեամբ երգ մ'երգեց. երգելու առնեն՝ աչքերէն առատ արտասուք վազեցին. ուստի իր խօսքերով հասկցուց որ չդիտեր եթէ խմելիքն անոր տուած պինին էր թէ ոչ իր յատուկ արտասուքը: Վերջապէս Էմմէլինհար երրորդ բաժակն Էմին Թահէրի ներկայացուց, որ շնորհակալ եղաւ անոր ըրած շնորհին և պատուոյ համար:

Ցետոյ՝ կիներուն մէկուն ձեռքէն տուիլ մ'առաւ և այնպիսի խանդավառ ձայնով մ'երգեց որ կարծես թէ լիովին շուարեր էր. իսկ պարսիկ իշխանն աչքերն անոր վրայ սևեռած՝ անշարժ մնաց, որպէս թէ թովուեր էր: Նոյն պահուն՝ մտերիմ աղախինն եկաւ մնայողն և իր տիրուհին դառնալով՝ «Տիկին, ըսաւ անոր, Մէսրուր և ուրիշներու պաշտօնակալները՝ շատ մը նեղբլինիներու հետ դուռը կեցեր՝ ամիրապետին կողմէ ձեզի խօսիլ կ'ուզեն:» Երբ Պարսիկ իշխանն ու Էմին Թահէրը այս խօսքերը լսեցին՝ դոյն առին տուին և սկսան դողալ, որպէս թէ ազատուելի չունին. բայց Էմմէլինհար անոնց երկիւղը ցրուելով՝ հառաչով մը զանոնք հանդարտեցուց: Իր մտերիմ աղախինը ղրկեց որ երթայ Մէսրուրին և երկու պաշտօնակալներուն հետ խօսի՝ մինչև որ զանոնք ընդունելու կարող ըլլայ և զանոնք ներս մտցնելու հրաման տայ: Անմիջապէս ապսպրեց որ սրահկին բոլոր պատուհանները գոցեն և պարտիզին կողմը գանուղ նկարչին վարագոյրներն իջեցնեն. յետոյ իշխանն ու Էմին Թահէրը վստահացուց որ կընան անվրդով մնալ, և ինքը պարտիզին վրայ նայող դռնէն դուրս ելաւ, զայն քաշեց և անոնց վրայէն գոցեց: Բայց որչափ որ անոնց ապահովութեան տուաւ, դարձեալ մեծ տագնապի մէջ ընկան երբ միմեանք մնացին:

Երբ Էմմէլինհար իրեն ընկերացող կանանց հետ պարտէզն եկաւ, նռւագածու կանանց աշխատները բերել տուաւ, որոնք այն պատուհանին քովն էին ուսկից պարսիկ իշխանն ու Էմին Թահէրը անոնց ձայնը լսեր էր. երբ ամէն բան իր ուզած կերպովը գտաւ՝ իր արծաթէ սքեմին վրայ նստաւ: Ան ատեն մարդ ղրկեց իր մտերիմ աղախինն որ ներքի-

նասլետն ու իր երկու արբանեակներն առնու բերէ:

Առանք երեկոյեան մութը Հապուած՝ և չորս մատ լայն ոսկի գօտիէ կախուած սուրերով քսան ևս նեղբլինիներ եւս ևն կղային: Հեռուէն Էմմէլինհարն որ տեսաւ՝ խորին խոնարհութիւն մ'ըրին, որուն պատասխանեց իր աջովն վրայէն: Երբ աւելի յառաջացան՝ Էմմէլինհար ոտք ելաւ և Մէսրուրը դիմաւորեց. հարցուց անոր թէ ինչ նոր լուր կը բերէ. Մէսրուր պատասխանեց. «Տիկին, հաւատացնեմ իշխանն, որ իս ձեզի կը ղրկէ, հրամայեց յայտնելու որ չէ կարող աւելի ևս սպրիլ առանց քեզ տեսնելու: Այս պիշեր քեզի այցելութեան դալու միտք ունի. ուստի եկայ լսելու որպէս զի ընդունելութեան պատրաստութիւն տեսնէք: Կը յուսայ, տիկին, որ այնքան մեծ հաճոյք պիտի զգաք զանի տեսնելու, որչափ ինքը ձեզ դալու անհամբեր է:»

Մէսրուրի այս խօսքին վրայ՝ Էմմէլինհար սիրելին երկիրպագութիւն ըրաւ, ամիրապետին հրամանին ունեցած հնազանդութիւնը յայտնելու համար: Երբ ոտք ելաւ, «Ո՛աղաչեմ քեզ, ըսաւ անոր, հաւատացնելոց իշխանին ըսելու, որ փառք կը սեպեմ միշտ նորին վեհափառութեան հրամանները կատարելու, և թէ իր աղախինն իրեն վայել յարգանօք պիտի ընդունի պիտի ջանք ընէ:» Նոյն միջոցին ապսպրեց իր մտերիմ աղախնին որ սև կանանց ձեռօք պատառը կարգի դնէ ամիրապետն ընդունելու համար: Ցետոյ՝ նեղբլինապետը Էմմէլինհարի հետ խօսելով «Կը տեսնես, ըսաւ անոր, որ քիչ մը ժամանակ պէտք է ամէն բան պատրաստելու. ուստի, ո՛աղաչեմ որ, ամիրապետը քիչ մը համբերութեան յորդորես, որպէս զի դալուն մեզ տանի ու վրայ չդանէ:»

Երբ նեղբլինապետն ու իր արբանեակները դացին, Էմմէլինհար սրահկին դարձաւ, յետին ծայրայեղութիւնը պիտի ստիպուի պարսիկ իշխանն իր անկասկած ժամանակէն առաջ պիտի Էմմէլինհար: Անոր մօտ դնաց լալագին, որով Էմին Թահէրը աւելի ահ ու դող ղդաց, կարծելով թէ դուժման մ'եկած է: «Տիկին, ըսաւ անոր իշխանը, կը դիտեմ որ կղաս ինձ խնդուն տալու որ հետաքրքրութեամբ: Թուական է որ այս բաժանումն աւելի ծանր փորձանք մը չկրեմ, դարձեալ կը յուսամ որ երկին պէտք եղած համբերութիւնը պիտի տայ ինձ բաղդատութեանդ

կարօտը տանելու : — Աւաղ, իմ հոգիս, իմ սիրտս, ընդմիջեց փափկասուն Շէմսէդինիհար, քեզ ուշքի երջանիկ, և իս ուշքի ապերջանիկ կը դանեմ, երբ քու վիճակդ իմ տխուր վիճակիս հետ կը բաղդատեմ : Անշուշտ իս չտեսնելուդ պիտի ցաւիս, բայց այս պիտի ըլլայ միայն քու բոլոր ցաւդ, և իս նորէն տեսնելու յուսով կրնաս մխիթարուիլ : Իսկ ես, աչքս Աստուած, ինչ դառն տանջանքի մէջ պիտի մնամ : Ոչ միայն իմ մէկ հատիկ սիրականիս տեսքէն պիտի զրկուիմ, այլ պէտք է նաև այն անձին տեսքը տանիմ որ քու պատճառաւ զրկուելս զարձած է ինձ : Մխիթ ամիրապետին դալուստը չպիտի յիշեցնէ ինձ քու երթդ : Եւ ինչպէս, ու միայն քու սիրոյդ նկարագիդ զրաւած ըլլալով՝ պիտի կարենամ այդ յիմարութիւնը զոր իմ աչացս մէջ կը նշմարէր՝ ամէն անգամուն որ իս տեսնելու կրնար : Միաքս գլուած պիտի ըլլայ անոր խօսելու միջոցիս, և իր սիրոյն համար իմ կողմէս գոյ տուած ամէնէն թեթև նշանները մէյմէկ գաշոյնի հարուածներ պիտի դառնան որ սիրտս պիտի ծակեն : Պիտի կարենամ իր բարեաէր և գգուելի խօսքերը վայելել. դատ, իշխան, թէ ինչ տանջանաց պիտի ենթարկիմ քեզնէ հեռանալիս եսքը :» Այդ պահուն Թափած արտասուքն ու հեծկլտանքը խօսքը շարունակելու արգիլեցին : Պարսիկ իշխանն անոր պատասխան տալ ուզեց, բայց անկարող եղաւ. իր յուսոյ վիշտն և իր սիրուհիին յայտնած կսկիծէն ափ՝ի բերան մնացեր էր :

Էսմն Թահէր՝ որուն միակ փափաքն էր պալատէն դուրս ելնել, սահմանեցաւ զանոնք միխիթարել և համբերութեան յորդորել : Բայց մաներիմ ազախինն եկաւ խօսքին ընդմիջեց : «Տիկին, ըսաւ Շէմսէդինիհարին, ժամանակ չկորսնցնինք. նեղբնինիներն սկսան գալ, և պիտես որ ամիրապետն ալ քիչ առեղէն պիտի երևի : — Ո՛ երկին, քանի՛ գառն է այս բաժանումը, գոչեց Շէմսէդինիհար : Շուտ ըրէ, ըսաւ իր մաներիմ ազախնին, երկու քնին ալ սա տուր այն գաւխին որ մէկ կողմէն պատիլն և միւս կողմէն Տիգրիսին վրայ կը նայի. և երբ մութ պիտի ըլլայ, եաւնի դունէն դուրս հանէ, որպէս զի ապահովապէս քաշուին երթան :» Ա՛յս ըսելով պարսիկ իշխանը գրկեց դուրսլանաք, խօսք մ՝ըսելու կարող չըլլալով, և ամիրապետը գիմաւորելու դնաց

պէսպիսի վրդոված վիճակի մէջ զոր գիւրին է երևակայել :

Սակայն մաներիմ ազախինը Շէմսէդինիհարի ցոյց տուած տեղը տարաւ իշխանն ու Էսմն Թահէրն, և երբ ներս մնացած, զանոնք թողուց և հեռանալու առին դուռն անոնց վրայէն գոցեց, վստահացնելով որ վախի տեղ մը չունին և թէ ժամանակին պիտի պայ զանոնք դուրս հանելու : Բայց պարսիկ իշխանն ու Էսմն Թահէրը մնացան ազախնին ըսածը թէ վախնալու բան մը չկայ, վասն զի բոլոր բանը պատրաստելով՝ յանկին ծայր սարսափ մ՝զգացին երբ տեսան որ փախչելու տեղ մը չկար, եթէ երբեք ամիրապետը կամ պաշտօնակալներէն մէկն եղներ այն տեղը գար :

Վանդակներուն մէջէն՝ պարտիզին կողմէն եկած պայծառ լոյս մը տեսնելով՝ սոխակեան պատուհանին մօտենալու, որպէս զի անոր պատճառն իմանան : Այս լոյսը Հարեմ Ճերմակ մանրիկ յատակ կրկար, զոր նոյնչափ սև գերիներ բռներ էին : Այս նեղբնինիներուն եաւնէն ուրիշ Հարիւրի չափ սեւ մարդիկ կային, որոնք ամիրապետին կանանցին վրայ հսկելու պաշտօն ունէին միւսներուն պէս : Ամէնքն ալ աղուոր հագուած էին և մէջքերնին մէյմէկ թուր ունէին, իսկ ամիրապետին պատից եաւնէն կը քալէր՝ ալ կողմը Մէսրուր ներքինապետն ունենալով և ձախ կողմը Վասիֆ երկրորդ պաշտօնակալը :

Շէմսէդինիհար ամիրապետին պատից ծառուդիի մը մուտքը, հետն ունենալով քանի կանայք՝ ամէնքն ալ հիանալի դեղեցկաձև, որոնք ամենք ականակուռ մանեակներով և օղերով զարդարուած էին, ամենք իրենց ղլուխն անգամանդներով ծածկած էին : Իրենց նուագարաններուն ձայնին կ՝երգէին և աքանչելի ներդաշնակութիւն մը կը յօրինէին : Շէմսէդինիհար այն ինչ ամիրապետը տեսաւ հեռուէն որ յատակ անցաւ և անոր առջևն երկիրը պագաւ : Ա՛յս պարզութիւնն ընելու առնն՝ մնաւ կ՝ընէր. «Իշխանդ Պարսից, եթէ քու վշտալի աչքերդ ախտաւոր են ըրած, կրնաս իմ վիճակիս ծանրութիւնը դատել : Կը փափաքէի քու առջևդ այսպէս խոնարհիլ, և սիրտս ինքնայօրդոր պիտի կատարէր այս խոնարհութիւնը :»

Ամիրապետը զմայլելով տեսաւ Շէմսէդինիհարն. «Ոտք ելլիր, տիկին, ըսաւ անոր, և մօտեցիր : Շատ կը պարտաւորիմ ինքդինքս որ այս-

չափ ատեն դիմեցի անձս քու տեսութենէդ ։» Ա՛յս խօսքն ատարաելով անոր ձեռքէն բռնեց, և շարունակ անոր դիտելի խօսքեր ուղղելով դիտաց Շէմսէդտինհարի բերել տուած արծաթեայ դահլէն վրայ նստաւ ։ Տիկինն անոր առջև գրուած աթոռի մը վրայ բազմեցաւ, և միւս քանի կանայք ուրիշ աթոռներու վրայ անոնց չորս կողմը շրջան մ՚րած էին, մինչեւ մամլերը կրող նորահասակ նեգրքնիները պարտիզին մէջ ցրուեցան, իրարմէ բաւական հեռու կենալով՝ որպէս զի ամիրապետին երեկոյեան զուարթութենն աւելի հանդիսա վայելէ ։

Երբ ամիրապետը նստաւ, իր շորս դին նայեցաւ և մեծ պոհտնա-կութեամբ դիտեց որ բոլոր պարտէզն անբաւ լուսաներով լուսաւորուած էր, բայ՚ի այն ջահերէն զոր դեռահասակ նեգրքնիները բռներ էին ։ Սակայն դիտեց որ սրահիկը դուռ էր, զարմացաւ և ասոր պատճառը հարցուց ։ Կամաւ դուռ սրահեր էին որ աւելի մեծ տպաւորութիւն մը գործեն անոր վրայ ։ Եւ իրօք, այն ինչ խօսեցաւ, որ բոլոր պատուհանները միկին բացուեցան և դիտեց որ իր ամենալաւ ձէն աղաղակ թէ ներսէն և թէ դրսէն լուսաւորուած էր ։ «Ձքնաղ Շէմսէդտինհար, դուշդ նա այս տեսարանիս վրայ, կը հաւնիս՝ միտքդ ։ Փափաքեր ես խմցնելու ինձ որ ամենէն գեղեցիկ օրերուն չափ գեղեցիկ դիշերներ ալ կան ։ Ա՛յս ամէն բաները տեսնելէն ետև՝ պէտք է որ ձշմարիտը խոստովանիս ։»

Հիմակ Պարսկի իշխանին և Էսմն Թահէրի դառնանք, զոր բակը ձդեր էինք ։ Էսմն Թահէր զմայլեր մնացեր էր տեսած բաներուն վրայ ։ «Երևոյաւորդ չիմ, ըսաւ նա, և կենացս մէջ շատ երևելի հանդիսաներ տեսեր եմ, բայց երբէք այսպիսի հիանալի և մեծաշուք տեսարան մը տեսած չունէի ։ Մեր լսած ամէն հմայելի պալատները չեն կրնար մեր աչքի առջև դնուած տեսարանին նմանիլ, այս ինչ ճոխութիւն և շքեղութիւն է միանդամայն ։

Պարսիկ իշխանն անտարբեր էր այս շքեղ տեսարանին որ Էսմն Թահէրի այնքան հաճոյք կը պատճառէր ։ Մինակ աչքերը Շէմսէդտինհարի վրայ սևեռեր էր և սիրապետին ներկայութիւնը զինքն անպատում արամութեան մէջ կ՚ընկղմէր ։ «Սիրելի Էսմն Թահէր, ըսաւ, երանի թէ իմ սիրտս քուկինդ պէս աղտա ըլլար որպէս զի այս հիւսքանչ

քաներով զբաղէի ։ Բայց, աւաղ, խիստ տարբեր վիճակի մը մէջ կը գտնեմ ։ Ա՛յս ամէն առարկանեըն իմ տանջանքս տատկացնելու կը ծառայեն ։ Մինթէ կրնամ իմ սիրուհիս ամիրապետին հետ առանձին տեսնել և յուսահատութենէ չմեռնիլ ։ Ինչու համար իմ սիրոյս պէս պղտրիկ սէր մ՚այսպիսի հզօր հարատարորդի մը կողմէ վրդովի ։ Երկկին, քանի՛ այլանդակ և անպատրոյն է իմ՚ձակատագիրս ։ Քիչ մ՚առաջ աշխարհիս ամենէն բարերաղդ սիրահարը կը համարէի ինքզինքս, և այս միջոցիս այնպիսի հարուած մը կընդունիմ՝ որմէ կարծես թէ պիտի մեռնիմ ։ Չեմ կարող դիմանալ, սիրելի Էսմն Թահէր, իմ համբերութիւնս հատաւ, վիշտս կը տանջէ իս և արիութիւնս կը կորսուի ։» Ա՛յս վերջին խօսքերն արտասանելու ատեն՝ դիտեց որ պարտիզին մէջ բան մը կ՚անցնի ։ Ուստի լուռ կենալու և ուշադրութիւն ընելու ստիպուեցաւ ։

Եւ արդարև՝ ամիրապետն իր քովը գտնուղ կանանց մէկուն հրամայեր էր որ իր տաւիղին երգէ, և այն ալ երգել կ՚սկսէր ։ Երգին խօսքերը շատ եռանդուն էին և ամիրապետը համոզուած ըլլալով որ Շէմսէդտինհարի հրամանին համեմատ այնպէս կ՚երգէր, քանի որ այսպիսի սիրոյ նշաններ սաստիկ յայտներ էր, նոյն խօսքերն իր վրայ առաւ ։ Սակայն այս անգամ Շէմսէդտինհարի միտքն անոր չէր նայեր, երբ դին նայատակն իր սիրական Էսմն Պէգարն էր ։ ուստի այնպիսի կծու վիշտ մ՚զգաց իր առջևն ունենալուն անձ մ՚որուն ներկայութիւնն անտանելի էր իրեն՝ որ մարեցաւ, աթոռին կռնակին վրայ ընկաւ, որ նեցուկ չունէր, և անշուշտ դետին պիտի իյնար եթէ իր կիներէն մէկ քանին իսկոյն օգնութեան չհասնէին ։ Ուստի վերցուցին զանի և սրահը տարին ։

Էսմն Թահէր՝ որ բանն էր, այս դէպքին վրայ զարհուրելով պարսիկ իշխանին կողմը դարձաց իր գլուխն, և փոխանակ զանի վանդակին կռթնած տեսնելու, յետին ծայր հիացաւ անշարժ դետինը փուռած տեսնելով ։ Ակկից հասկցաւ թէ պարսիկ իշխանն որչափ ուժգին կը սիրէր, և զմայլեցաւ Շէմսէդտինհարի այս տարօրինակ ազդեցութեան վրայ որ իրեն դժդեակ ցաւ մը պատճառեց, իր գտնուած տեղին աւելիւ ։ Սակայն ամէն ձեռքէն եկածն ըրաւ որ իշխանին խելքը

դլուխը բերէ, և անօգուտ եղաւ։ Էմին Թահէր այս չփոթմտութեան մէջն էր, երբ Շէմսէդինհարի մտերիմ կինն եկաւ բակին դուռը բանալու, և հնչասպաւ ներս մտաւ, ըրածը դրածը չգիտցող անձի մը պէս։ «Շուտ մ՚եկէք որ ձեզ ասկից դուրս հանեմ, գոչեց նա։ Ամէն բան տակին ու վրայ է այս տեղ, և կարծեմ թէ այս պիտի ըլլայ մեր կենաց վերջին օրն։ — Է՛հ, ինչպէս կ՚ուզես որ մեկնինք, պատասխան տուաւ Էմին Թահէրը այրպիսի ձայնով մ՚որմէ իր արտասուքները կ՚ինացուէր։ Խնդրեմ, մօտեցիր և դայէ թէ պարսիկ իշխանն ինչ վիճակի մէջ կը գտնուի։» Երբ աղախինը զանի մօտաց տեսաւ, վաղեց ջուր վիճակեց առնոյ ժամանակ կորուսելու և քիչ առէնէն գարձաւ։

Վերջապէս՝ Պարսիկ իշխանն՝ երբ իր երեսին վրայ ջուր սրսկեցին, ինքզինքը գտաւ. «Իշխան, ըսաւ այն առեն Էմին Թահէրը, մեր կեանքը կորուսելու վտանգի մէջ կը մնանք եթէ առելի կենանք այս տեղ. բոլոր ձիգ թափէ որ շուտ մ՚ասկից փախչինք։» Էմին Թահէրը և մնացորդները երկու ձեռքով գլուխնին բռնեցին և մինչև երկաթէ դուռ մը գացին որ Տիգրիսի վրայ կը բացուէր։ Անկից դուրս ելան և փոքր ջրանցքի մ՚եզերը յառաջացան, որ դեպին կը միսանար։ Մտերմուհին ձեռքերը զարկաւ և խնդոյն նաւակ մ՚երեւցաւ և լոկ թիավարով մը դէպ անոնց առջևն եկաւ։

Ալի Էմին Գէպար և իր ընկերը նաւակը մտան, և մտերիմ աղախինը ջրանցքին եղերը կեցաւ։ Երբ իշխանը նաւակը մտաւ, իր մէկ ձեռքը պալատին կողմը ուղղեց և միւսը սրտին վրայ դնելով, «Իմ հոգւոյս սիրականը, գոչեց նա սիրտ ձայնով մը, ընդունէ իմ հաւատարմութիւնս այս ձեռքէս, մինչդեռ կ՚ապահովեմ միւսովս որ սիրտս յաւիտեան անշէջ պիտի պահէ այն կրակն որով կ՚այրի։»

Սակայն նաւավարն իր բոլոր ուժովը թիի կը քաշէր, և Շէմսէդինհարի մտերիմ աղախինը՝ ջրանցքին եղերքը քալելով ընկերացաւ պարսիկ իշխանին և Էմին Թահէրի՝ մինչև որ Տիգրիսի հոսանքին հասան։ Այն առեն, որովհետև առելի առաջ չէր կրնար քալել, անոնց բարեւ տուաւ և քաշուեցաւ։

Պարսիկ իշխանը միշտ մեծ ակարութեան մէջ կը գտնուէր։ Էմին Թահէրը զանի կը մխիթարէր և կը յորդորէր որ սիրտ առնու։ «Պատ-

ծէ անդամ մը, ըսաւ անոր, որ երբ հաւանիմ երթանք՝ շատ ճամբայ պիտի քալենք մինչև որ մեր առնը հասնինք. վասն զի այս ժամուս քեզ քու բնակարանդ տանիլ, որ իմիտէս շատ հեռու է, խոհեմութիւն չեմ համարիր. կարելի է որ դիշերապահներէն մէկ բռնուին։» Վերջապէս հաւանեցան, բայց իշխանն այնքան տկար էր որ չէր կարող քալել, որուն Էմին Թահէրը մեծ չփոթմտութեան մէջ ընկաւ։ Ցիշեց որ բարեկամ դրացի մ՚ունի. իշխանը մինչև այն տեղ քշեց շատ նեղութեամբ։ Բարեկամն ուրախութեամբ ընդունեցաւ զինքն, և երբ զանոնք հաւատացաց, հարց ու փորձ ըրաւ թէ այնքան ուշ ժամանակ ուսկից կգան։ Էմին Թահէրը անոր պատասխան տուաւ։

«Այս իրիկուն խնդայր որ մեծ դումար մը պարտական եղող մարդ մ՚երկար ուղևորութիւն մ՚ընելու դիտաւորութիւն ունէր. բնաւ ժամանակ չկորուսի, գայի գինքը փնտռելու, և ճամբան այս նորատի իշխանին հանդիպեցայ, և որուն շատ ընտրհատարտ եմ. որովհետև իմ պարտատանս կը ճանչէ, բարեհաճեցաւ ինձի հետ դալու։ Շատ դժուարութիւն քաշեցինք այն մարդուն խօսք հասկցնելու։ Սակայն մեր նպատակին հասանք, և ահա այս պատճառաւ անոր տունէն շատ ուշ ելանք։ Պատնեշը առնն այս նորատի իշխանը՝ քիչ մ՚անդին յանկարծ ցաւ մ՚զգայ և համարձակեցայ անոր դարմանն մը տանելու հասնար դուռդ զարնելու։ Կը յուսամ որ ընտրհ կ՚ընես այս երեկոյին մեզ սեղանակիցդ ընել։»

Էմին Թահէրի բարեկամն այս առասպելը կլլեց, անոնց դալստեղ շնորհաւորեց և պարսիկ իշխանին, զոր չէր ճանչեր, փափաքած օգնութիւնը մատոյց։ Էմին Թահէր՝ իշխանին տեղը խօսելով՝ ըսաւ թէ անոր ցաւն ուրիշ դարման չպահանջեր այլ միայն հանդիստ։ Բարեկամն այս խօսքէն հասկցաւ որ հանդչիլ կ՚ուզեն, ուստի սենեակ մը տարաւ զանոնք և մոգուց որ ազատօրէն հանդստանան։

Թէև պարսիկ իշխանը քնացաւ, սակայն իր քունն աղէտալի երազներով վրդովեցաւ. Շէմսէդինհարը մարած կը տեսնէր ամիրապետին ուրն և իրցաւերն իրեն կը յայտնէր։ Էմին Թահէր՝ որ իր տունը դառնալու անհամբեր, և անհասած էր որ իր ընտանիքը մեծ տագնապի մէջ կը գտնուի (որովհետև երբէք պիշերով դուրս մնացած չէր),

ձեռ և առաու կանո խ մեկնեցաւ իր բարեկամին. մնաս բարև ըսելէն ետև, ու այդուն երիր էր քունէն իր աղօթքն ընելու համար: Վերջապէս իր տունը հասաւ, և պարսիկ իշխանին առաջին դործն եղաւ քաղմնայի մը վրայ նիստ, վասն զի այնչափ դժուարաւ քալեր և յոդներ էր որ կարծես թէ ուղեդրութենէ մը կը դառնար: Էմն Թահէբ տեսնելով որ իշխանն անկարող է իր բնակարանը երթալ, սենեակ մը պատրաստել տուաւ անոր համար, և որպէս զի ընտանիքը հոդ չընէ՝ մարդ դրկեց և իմացուց դանուած տեղը: Սակայն ազաչեց պարսիկ իշխանն որ միաքը հանդարտ պահէ, իր տան մէջ պէտք եղածը հրամայէ որ ընեն: «Արտաքին ի՛նդունիմ այդ շնորհքդ, ըսաւ անոր իշխանը, բայց չեմ ուզեր քեզ նեղութենիդ տալ, և ի՛նաղաչեմ քեռնէ թէ այս տեղ չեմ, վասն զի եթէ պէտքդ իմ նեերկայութենս քեզ կը նեղէ, վայրկեան մը առնդ չեմ մնար:»

Երբ Էմն Թահէր քիչ մը շունչ առաւ, Շէմսէդինհարի պատուն անցած պատածն իր ընտանիքին իմացուց և իր պատմութենն առաջոտեց՝ շնորհակալ ըլլալով Աստուծոյ այն վտանդէն ազատելուն համար: Պարսիկ իշխանին դլխաւոր սպասաւորներն Էմն Թահէբի տունն եկան որ՝ եթէ հրաման մ՚առնի՝ առնուն. նոյնպէս շատ չանցաւ իր բարեկամներէն շատերն անոր անհանդստութենն իմանալով՝ անոր այցի եկան: Օրուան մեծ մասն անոր հետ անցուցին, և եթէ անոնց խօսակցութենն իր վշտակից մնալուքը չդրուեց, դոնէ սա օդուտն ունեցաւ որ քիչ մը սփոփում դտաւ: Երեկոյեան դէմ Էմն Թահէբի տունէն մեկնիլ կ՚ուզէր, բայց այս հաւատարիմ բարեկամը դիտելով որ տակաւին շատ տկար է, ստիպեց որ հետևեալ օրը մեկնի: Սակայն անոր համձոյք տալու համար իրիկունն երթիչներ և դուապածուներ կանչեց, բայց նուադախումբն առջի երեկոյեան երաժշտութենն իշխանին միաքը ձգելու օդնեց, ուստի վոխանակ մեղմելու իր ցաւերը դրդռեց, այնպէս որ հետևեալ օրն իր հիւանդութենն աւելի ծանր երևցաւ: Ան տունն Էմն Թահէբ դէմ չկենցաւ և թողուց որ պարսիկ իշխանն իր տունը դառնայ: Ինքն անձամբ հոդ տարաւ որ անկնաս փոխադրեն պինքն. ինքն ուղեկից եղաւ անոր, և երբ անոր հետ առանձին մնաց անկողնին մէջ, պէտք եղած պատճառները մէջ բերաւ համոզելու հա-

մար որ վերհանձնական ձիգ մ՚ընէ իր սէրը զսպելու, քանի որ անոր վախճանն ոչ իրեն և ոչ Շէմսէդինհարի կրնար բարեբաստիկ ըլլալ:

«Ա՜հ, սիրելի Էմն Թահէբ, պոչեց իշխանն, ուրքան դիւրին է քեզ այդ խորհուրդը տալ, սակայն քանի դժուարին է անոր հետևիլն: Անոր կարևորութենը կ՚ըմբռնեմ առանց անկից օդուտ քաղել կարենալու: Արդէն քեզի ըսի, Շէմսէդինհարի համար ունեցած սէրս ինձի հետ դերեզման պիտի տանիմ:» Երբ Էմն Թահէբ դիտեց որ իշխանը չպիտի կարենայ համոզել, մնաս բարև ըսաւ և մեկնիլ ուզեց, բայց պարսիկ իշխանը զանի չդներ: «Բարեսէրդ Էմն Թահէբ, ըսաւ անոր, եթէ յայտնեցի քեզ որ ձեռքս չէ քու խնամտուն խորհրդոդ հետևելու, կ՚ազաչեմ, այդ բանին համար մի մեղադրեր իս, և մի դադրիր քու բարեկամական ծառայութենդ ինձ մատուցանելու, և աւելի մեծ բարեկամութիւն մը չես կրնար ընել ինձ քան յայտնելով իմ սիրական Շէմսէդինհարիս վիճակն, եթէ երբէք անոր վրայ լուր առաջնաս: Իր ճակատագրին վրայ անտոդ, իմ դուաղնանէ առտիկ տաղնապի մէջ ըլլալով՝ այս ախտութենան մէջ ընկած եմ և որուն համար իս կը պարտաւնս: — Տէր իմ, պատասխանեց անոր Էմն Թահէբ, պէտք է յայտնս որ իր դուաղութիւն յաւալի հետևանք մը չունենար և իր մտերիմ ազախինը պիտի պայ խնայ տալու ինձ թէ ինչպէս անցաւ այն պիշերն: Երբ այս լուրն առանամ, պիտի դամ անշուշտ քեզ հաղորդելու:»

Էմն Թահէբ այս յայտով թողուց իշխանն ու իր տունը դարձաւ, ուր, բոլոր օրն, անօդուտ տեղը ապառեց Շէմսէդինհարի մտերիմ ազախինին: Հետևեալ օրն անդամ չտեսաւ զանի: Պարսիկ իշխանին առաղջութենան վրայ անհանդիստ ըլլալուն՝ չուզեց իր տեսութենն աւելի ուշացնել: Ուստի անոր տունը դնաց զանի համբերութենան յորդորելու դիտումով: Անիոդինն էր պարսիկ իշխանը, սովորականին պէս հիւանդ պառկած, և իր չորս կողմն առեր էին բազմաթիւ բարեկամներ և քանի մը բժիշկներ՝ որ իրենց բոլոր դիտութիւնը կը դործածէին անոր հիւանդութենան պատճառն իմանալու համար: Իշխանն Էմն Թահէբը տեսնելուն պէս, ժպտելով անոր նայեցաւ՝ երկու բան հասկընելու համար. մէկը սա էր թէ ուրախութիւն ի՛դդար դինքը տեսնե-

լուն, միայն սա էր թէ որչափ իր բժիշկներն, որ իր հիւանդութեան չարժառիթը չէին կարող գուշակել, կը սխալէին լինից գառողութեան մէջ։

Թարեկամ ու բժիշկ իրարմէ հեռ քաշուելուան, այնպէս որ Էմին Թահէրը հիւանդին հետ միայակ մնայ։ Անոր անկողնին մօտեցան Հարցնելու համար թէ վերջին տեսութենէ վեր ինչպէս կը գտնուի։ «Ա յս միայն կրնամ ըսել, պատասխանեց տուտ անոր իշխանը, թէ իմ սէրս, որ շատ նակ նոր զօրութիւն կ'առնու, և Շէմսէդդինհարի վիճակին վրայ ունեցած անսասանութիւնս՝ ամէն վայրկեան հիւանդութիւնս կ'աւելցնեն, և այնպիսի վիճակի մը մէջը ձգեն իս որ իմ բուկամներս ու ծառքս կը տարտնապէ և բժիշկներն՝ որ բան մը չեն հասկնար, կը շփոթէ։ Ձես կարող հաւատալ, յարեց նա, թէ որչափ կը տառապիմ տեսնելով այդչափ մարդիկ որ իս կը նեղեն և չեմ կրնար անոնց ձամբայ տալ առանց անքաղաքավարութեան։ Քու ընկերութիւնդ միայն լինձ սիփոփում կը բերէ, բայց վերջապէս, կ'ազաչեմ, իմանէ բան մը մի պահեր։ Ինչ լուր կը բերես լինձ Շէմսէդդինհարի վրայ։ Մինէ տեսնար անոր խորհրդակից աղախինն, և քեզի ինչ ըսաւ։» Էմին Թահէրը պատասխանեց թէ չէ տեսեր զանի. և այն ինչ այս ախուր լուրն իշխանին հաղորդեց որ աչքերն արտասուքով լցան. և ոչ բառ մը բերնէն հանեց, այնքան սիրտը ձնշուած էր։ «Իշխան, վրայ բերաւ այն տաեն Էմին Թահէրը, նեբաւ լինձ ըսելու որ ինքդինդ տանջելու հնար կը փնտռես։ Ցանուն Աստուծոյ, արտասուքդ սրբէ, մարդկեղդ մէկը կրնայ յանկարծ ներս մտնել, և քանի դիտես թէ որչափ զգոյշ ըլլալ պէտք ես զգացումներդ ևրևան չհանելու, որունք այդ ընթացքովդ ինեվես յայտնուին։» Ինչ որ ըսաւ այս ուշիմ խորհրդակիցը, գարձեալ իշխանը չկրցաւ իր արտասուքը բռնել։

«Իմաստուն Էմին Թահէրը, գոչեց նա՝ երբ խօսելու կարող եղաւ, շատ աղեկ կրնամ զգալ լեզուս որ սրտիս գաղտնիքն ևրևան չհանէ, սակայն իմ արտասուքիս վրայ իշխանութիւն չունիմ, այս պարագային մէջ որ պէտք է դողամ Շէմսէդդինհարի համար։ Եթէ այս իմ տենչանացս պաշտելի և միակ առարկան աշխարհս չէ, չկրնար տարբեր անոր խանգել Էմին Թահէրը. Շէմսէդդինհարս գեռ կ'ապրի, պէտք է որ այս մասին անհատած ըլլաս։ Եթէ իր վրայօք քեզի լուր չհաղորդեց, պատճառն այն է որ առիթ չգտաւ, և կը յուսամ որ այսօր իրկուն չանցած լուր մը կ'առնես։» Ա յս խօսքերուն տրիշ շատ մը միխիթարական յորդորներ միացուց և ապա քաշուեցաւ դնաց։

Հաղիւ թէ Էմին Թահէր իր տունը հասեր էր որ Շէմսէդդինհարի մտերիմ աղախինն եկաւ։ Տրտում էր դէմքն, որով Թահէր գուժկան մը գուշակեց։ Իր սիրուհիին վրայ լուրեր հարցուց։ «Դախ ձեր լուրերէն հաղորդէ լինձ, պատասխանեց խորհրդակից կինը. վասն զի մեծ ցաւ ըղացի այն օրն երբ սարսիլ իշխանին հետ այն վիճակին մէջ ձեր մնինելը տեսայ։» Էմին Թահէր անոր խնդրածը պատմեց, և երբ խօսքն առարսեց, աղախինը բերանը բացաւ ու ըսաւ. «Եթէ պարսիկ իշխանը մեծ տատապանք քաշեց և գեռ կը տառապի իր սիրուհիւս համար, այս ալ անոր համար նեղութեան ցաւ կ'ըղայ։ Ձեր ձգելէն ետև՝ շարայարեց աղախինը, սրտին գարձայ, և տեսայ որ տակաւին Շէմսէդդինհարի մարմնոյ քը չէ անցեր, թէև պէտք եղած գարմանքը շուտով հասուցին։ Ամիրապետն անոր մօտ նստեր էր և իր տարմնէթիւնն ետ բերելն վրայ ակնարև կ'ներևէր. ամէն անոնց, և յատկապէս լինձի կը հարցնէր թէ արդեօք սիրուհիս նուագման պատճառը գիտե՞ք. բայց պօրձը պաղատի պահեցինք և մեր գիտցածէն ոչերեր ըսինք։ Ա մէնէն ամէնքնիս ալ արտասուք կը թափեինք անոր երկարատև տագնապը տեսնելով, և բան մը չէինք մտնար պէտք եղած օգնութիւնը տալու համար։ Վերջապէս կէս գիշեր կար երբ խելքը գլուխն եկաւ։ Ամիրապետն՝ որ այս վայրկենիս ապասելու համբերութիւնն ունեցեր էր, իր ուրախութիւնը յայտնեց և Շէմսէդդինհարի հարցուց թէ այս սիրուհիան պատճառն ինչ է։ Երբ ամիրապետին ձայնը լսեց, սիրուհիս Ճիշդ մ'ըրաւ կիսամեռ նստելու, և անոր ոտքը հանիւթելէն ետև՝ անոր արդիլելէն առաջ, «Վե՛հափառ տէր, ըսաւ, Աստուծմէ պիտի որանիջամ որ չնորհ չընդաւ լինձ ստիպդ տակ մեռնելու, որպէս զի կարող ըլլամ յայտնելու թէ որչափ չնորհակալ եմ ձեր բարիդ։ — Լիտվին հանդուցած եմ որ իս կը սիրես, ըսաւ անոր ամիրապետը, բայց կը հրամայեմ որ իմ սիրոյս համար լինքդինդ սպանես։ Ա՛ներևի թէ

այսօր չափէն աւելի գինի խմեցիր եւ այդպէս անհանգստութիւն մ'ունեցար. զզաշ եղիր, եւ կ'ազաչեմ որ այսուհետեւ այդչափ խմես. ուրախ եմ քեզ լաւագոյն վիճակի մէջ տեսնելուս, եւ կը յորդորեմ քեզ պիշերն այս տեղ անցնելու, փոխանակ սենեակդ դառնալու, որպէս զի մնաս մը չգայ քեզ՝ շարժում ընելովդ:» Ա՛յս լսելով Հրաման տուաւ որ մատ մը գինի բերեն. իր ձեռքովը խմցուց որպէս զի այժը վրան գայ: Յետոյ մնաս բարեւ ըսաւ եւ իր սենեակը քաշուեցաւ: Երբ առաւօտը դնաց, Էմմէնիկհար նշան ըրաւ ինձ որ մօտենամ: Ձեր վրայ լուր հարցուց անձամբօք: Վաստահացուցի զինքն որ երկար առնէ վեր պատահէն մնկներ էք, եւ այս կողմէն իր վախը փարատեցի: Գարշելի իշխանին մարելուն վրայ բան մ'ըսելու զուշացայ, վախնալով որ նորէն չնուազի եւ նոյն իրար անցումը չպատահի. բայց իմ զգուշութիւնս անօգուտ եղաւ, ինչպէս որ հիմակ պիտի հասկնաս: «Իշխան, գնչէյ նա այն առեն, այսուհետեւ կը հրաժարիմ ամէն տեսակ զբաղմունքէ, որչափ որ քու տեսակցութիւնդ զբաղմութիւնէ զրկիս: Եթէ քու սիրոդ թափանցեցի, ըսել է թէ լոկ քու օրինակիդ կը հետեւիմ: Միտքդ դրիր ես կամաւ մեռնիլ եւ մեղալ քեզի հետ մեռցնել: Ա՛նզգաչեմ քեզ, յանուն պարսիկ իշխանին, որուն համար ապրելու կը փափաքիս անշուշտ, որ կեանքդ պահպանելու ջանաս: Ա՛նգէ բսիմ, խօսքիս հասկնաս, եւ պէտք եղած ձիերը թափէ թէ քեզ, թէ իշխանին սիրոյն եւ թէ մեզի համար: — Շատ շնորհապարտ եմ ձեզ, վրայ բերաւ նա, ձեր խնամոց եւ անդին եւ խրատներուն համար, բայց, ափսոս, կրնան ինձի օգուտ մ'ընել: Ներելի չէ մեզ թեթեւ յոյս մը ունենալ, եւ միտակ դերեզմանին մէջ պիտի դանենք մեր տառապանաց վերջն:» Ընկերուհիս մէկն այս խօսքը տեսնելը չկրնալ ուզեց, իր նուազարանով եղանակ մ'երգել, բայց սիրուհիս հրամայեց որ լռէ եւ

միւսներուն ալ ըսաւ որ քաշուին երթան: Մինակ իս պահեց իր քովը նոյն գիշերն անցնելու: Եւ ինչ գիշեր էր այն, ո՜հ երկին, արտասուքը եւ հեծութեամբ անցուց գայն. անդադար սարսիկ իշխանին անունը կը յիշէր եւ իր բազդին վրայ կը ցաւէր որ գինքն ամբռատեանին սահմաներ էր, որուն վրայ սէր չունէր, փոխանակ գինքը պարսիկ իշխանին տալու, զոր մեծարգին կը սիրէր: Հետեւեալ օրն, որովհետեւ սահմանին մէջ հանդիստ չէր, օդնեցի անոր որ իր սենեակն անցնի, եւ այն ինչ հոն հասաւ որ պատահին բժիշկներն՝ ամբռատեանին հրամանին համեմատ՝ անոր այցելութեան եկան. եւ նոյն ինքն ամբռատեան ալ քիչ ատենէն եկաւ: Բժիշկներուն պատուիրած դեղերը բնաւ ներգործութիւն մը չըրին, որովհետեւ անոր հիւանդութեան բուն պատճառը չդիտէին. իսկ ամբռատեանն նախընթերցութենէն ալ աւելի կը տառապէր իր ցաւերը: Վախէն այս գիշեր քիչ մը հանդիստ վայելեց, եւ երբ արթնցաւ, պատուիրեց որ գամ քեզ տեսնեմ եւ պարսիկ իշխանին վրայ լուր հարցնեմ:

— Արդէն քեզի յայտնեցի անոր վիճակին, ըսաւ անոր Էմին Թահէրը, ուստի ամբռատիփ դարձիր եւ վստահացուր գինքն որ պարսիկ իշխանն իրեն չափ անհամերեցութեամբ լուր կ'սպասէր իրմէ: Մանաւանդ յորդորէ որ չափազանց ու զսպէ իր եռանդն, որպէս զի ամբռատեանին առջեւ բերնէն խօսք մը չհանէ եւ անով մեզ ամէնքնիս'ի կորուստ չմատնէ: — Իմ մտիս, վրայ բերաւ մեռելիմ ազատիչը, շատ կը վախնամ անոր բուռն խանդին: Իմ կարծիքս ազատօրէն ըսի անոր, եւ հաւատամ եմ որ անպատեհ չափազանց ընէ եթէ քու կողմէդ ալ այս մասին իրեն խօսիմ:

Էմին Թահէրը՝ որ պարսիկ իշխանին տունէն նոր դարձեր էր, յարմար չդատեց նորէն երթալ եւ իր գործերն երեսի վրայ թողուլ. ուստի երեկոյեան դէմ գնաց հոն: Իշխանը մինակ էր եւ առաւօտեան վիճակէն աւելի լաւ չէր: «Էմին Թահէրը, ըսաւ անոր իշխանն երբ զանիկ տեսաւ, անշուշտ շատ բարեկամներ ունիս, բայց այս բարեկամներդ արժէքդ չին ճանչեր, ինչպէս որ ինձ կը յայտնես եռանդագին հոգւոյ երթ զանունք պարտաւորել ուզես: Ամօթ ազատ եմ առջեւդ քու սիրոդին ծառայութեանդ համար, եւ չգիտեմ թէ ինչպէս գինի փո-

խաբնեմ։

«Ինչ պայծառութիւն, կամ լաւ ևս, ինչ հրաշագեղ սքանչելիք երեսուն պիտի գան, ըսաւ ինքն իրեն, երբ արեւանանց պահած աչքերը բացուին։ Արդեօք ինչ յանցանք գործած է որ այսպէս իր աստիճանին անարժան կերպով գինքը պատժեր են։» Վասն զի արդէն անոր վրայ լաւ տեր և քիչ մը գործին վրայ կասկածներ ունեցեր էր։

Մէհմեն՝ Քամարալզամեան իշխանին վրայ զննելէն չէր շատնար, բայց՝ ի վերջ, անոր երկու երեսներէն և ձախէն պատ, առանց զանի արթնցնելու, առաջուան պէս ծածկեց վերմակն և օդը սրացաւ թռաւ։ Երբ բաւական բարձր, ու միջնապատառները հասաւ՝ դէպ ուր շշուկ մը լսեց և ինքն ալ նոյն կողմէն գարկաւ։ Մօտենալու առենը հասկցաւ որ Ջին մ՚է այս շշուկն ընողը, բայց այն տեսակ Ջիններէն որ ապստամբեր են Աստուծոյ դէմ, վասն զի Մէհմեն այս գաւէնն էր զոր մեծն Սողոմոն

առիպեց Ճանչելու այն առնէն վեր :

Այն Ձինն՝ որ Ցանհաշը կոչեր և Ըամհուրաշի որդին էր, Մէ-մունը Ճանչէր, սակայն սաստիկ երիւղ մ՚զգայ : Եւ արդարև, քանի դիտեր որ Մէմունն Աստուծոյ հնազանդելովը մեծ առաւելութիւն մը ունէր իր վրայ : Կը փափաքէր շատ անոր հանդիպիլ, բայց այնչափ ա-նոր քովէն անցած որ հարկ էր մաքառիլ և անդի տալ :

Ցանհաշ ձայն առաւ Մէմունին այսպէս . «Քանի Մէմուն, բաւ անոր աղերսագին ձայնելդ, երդուա՛ր ըրէ Աստուծոյ մեծ անունն վը-րայ որ ինձի ճնաս չտիտի հասցնես, և ես ալ իմ կողմէս կը խոստա-նամ քեզ չվնասել :

— Անիծեա՛լ Ձին, վրայ բերաւ Մէմուն, ինչ ճնաս կրնաս ընել ինձ . քեզնէ չեմ վախնար : Այս շնորհը քեզ ընելու կը հաճիմ և խնդրած երդումդ կ՚ընեմ : Հիմակ ըսէ ինձ թէ ուսկից կգաս, ինչ աե-սար և այս դիշեր ինչ ըրիր :

— Գեղանի տիկին, պատասխանեց Ցանհաշ, յարմար առին հան-դիպեցար ինձի և հրաշալի բան մը պիտի իմանաս : Քանի որ կը փա-փաքիս, պիտի յայտնեմ քեզ թէ Զինաստանի ծայրէն կգամ . . . բայց, չքնաղ Մէմուն, բաւ նորէն Ցանհաշ՝ որ վախէն կը դողար այս փէ-րիին առջև և դժուարաւ կը խօսէր, դուն կը խոստանա՞ս ինձ ներելու և ազատ թողլու որ երթամ, երբոր խնդիրներդ կատարեմ :

— Շարունակէ, շարունակէ, անլիծեալ դու, վրայ բերաւ Մէ-մուն, և բանէ մը մի՛ վախնար : Սիրեմ կարծես թէ քեզի պէս նեն-գաւիր մ՚եմ որ իմ երդումն դրժեմ : Միմակ նայէ որ Ճշմարիտն ըսես ինձ, ապա թէ ոչ թևերդ պիտի կտրեմ և քեզի արժանի եղած կեր-պով հետդ պիտի վարուիմ :»

Ցանհաշ՝ Մէմունին այս խօսքերէն քիչ մը սիրտ առնելով «Սիրելի տիկինս, վրայ բերաւ նա, բոլոր ըսելիքս Ճշմարիտ պիտի ըլլան, մի-նակ չնորհ ըրէ ինձ մտիկ ընելու : Զինաստանի երկիրն աշխարհիս ա-մենէն մեծ և զօրաւոր պետութիւններէն մէկն է, և որմէ կախում ու-նին քեզի արդէն ըսած կիսատղին կղզիները : Հիմակուան թագաւորը Կեամուր կը կոչուի, և այս թագաւորը միածին աղջիկ մ՚ունի որ՝ աշ-խարհքս աշխարհ եղածէն ի վեր՝ նմանը տեսնուած չէ գեղեցկութեան

կողմանէ : Ոչ դու, ոչ ես, ոչ իմ և ոչ քու գաստ Ձիներն և ոչ իսկ հա-մայն մարդիկ յաստուկ ոճ մը, բաւական վառվուռն բացատրութիւններ, կամ Ճարտասան լեզու մ՚ունինք, որպէս զի այս աղջկան պատկերին նմանող պատկեր մը նկարագրենք : Աղջիկը թիսպղին են և այնքան երկայն որ իր ոտքերէն աւելի վար կ՚իջնեն, և այնչափ առատ են որ կրնան նմանիլ արտաքոյ կարգի խոշոր հատեր ունեցող գեղեցիկ խաղո-ղի ողկոյզներու երբոր զանոնք դէլտոյն վրայ փաթթեր գանդակեր : Իր մազերուն ներքև ամենազարդ հայելի մը պէս միատաղաղ ճակատ մը ունի գեղանի : Աչքերը՝ սև, փայլուն և հրապոյտ . քիթն՝ ոչ շատ երկայն և ոչ շատ կարճ . բերանը՝ փոքր և կարմրուն . ականջները՝ մար-գարտաշար և ձիւնափայլ . իսկ երբ լեզուն շարժէ խօսելու համար, անուշ և ախորժելի ձայն մը կը հանէ, և այնպիսի ոճով մը կը խօսի, որով իր մտքին աշխուժութիւնն երևան կը հանէ . ամենէն գեղեցիկ Ձիրանի կտրիճն իր վիզէն աւելի ազնիւ չէ . այս հարևանցի նկա-րագրէն անգամ կրնաս դիւրաւ դատել որ աշխարհքիս մէջ ասկէ աւելի կատարեալ գեղեցկութիւն մը չկայ :

«Ով որ այս իշխանուհիին հայրը քալ չճանչէ՝ պիտի կարծէ թէ անոր սիրոյն է, այնչափ գործակալները սիրոյ նշանները կը յայտնէ անոր : Երբեք սիրահար մ՚իր ամենէն սիրական սիրուհիին այնչափ մեծ բա-ներ ըրած չէ, որչափ որ ըրած է այս հայրն իր աղջկան համար . և իրօք ամենէն բուռն նախանձն երբեք հնարած չէ ինչ որ հնարեր է զանի՝ բայ՚ի իր առնելիք մարդէն՝ անմատչելի ընելու համար՚ի գործ դրուած հոգատարութիւնն : Որպէս զի աղջիկն իրեն սահմանուած առանձնութեան մէջ չձանձրանայ, եօթն հատ անուանի և անլուր պա-լատներ շինել տուած է :

«Առաջին պալատը վանակի է, երկրորդը՝ պղնձէ, երրորդը՝ պո-ղոլատէ, չորրորդը՝ պղնձէ և պողոլատէ պալատներէն աւելի թան-կագին սեռակ մը պղնձէ շինուած է, հինգերորդը՝ փորձաքարէ, վեց-երորդն՝ արծաթէ և եօթնեերորդը՝ ձուլածոյ ոսկիէ : Ամեն մէկ պա-լատ իրեն նիւթին յարմար շքեղ կարասեաք զարդարուած է : Մուս-տաճած չեն շրջակայ պարտէզներուն մէջ ծաղկատէտ գալարիէ ածուխե-րը, ջրմուղները, շատրուանները, ջրանցքները, ջրվէժներն, աչք

կարելու չափ պուրակներն, որոց մէջ ալեն երբէք չմոփանային, և այս ամէնն իրարանցիւր պարտիզի մէջ տարբեր տարբեր կարգադրուած էր։ Վերջապէս Կեամուր թագաւորը յայտնեց որ Հայրական սէրը միայն կարող է այսպիսի ասրօրինակ և ահագին ծախքեր ընելու։

«Իշխանուհին անհամեմատ գեղեցկութեան համբաւը լսելով, դրացի ամենէն զօրաւոր թագաւորները հանդիսաւոր կերպով դեսպաններ ղրկեցին զանի կնութեան խնդրելու համար։ Զինաստանի թագաւորը մի և նոյն ընդունելութիւնն ըրաւ անոնց, բայց որովհետև իշխանուհին հաւանութեամբը կ'ուզէր զինքը կարգել, և իշխանուհին ալ այս խնամախնութիւններէն և ոչ մէկը կ'ընդունէր, հետևապէս եթէ դեսպանները ժպտոհ կը դառնային իրենց պաշտօնին անյաջողութեան վրայ, գոնէ գոհ էին իրենց ընդունած մարդավարական յարգանաց և պատիւներուն համար։

«Վերհատաւ սէր, կ'ըսէր իշխանուհին Զինաստանի թագաւորին, իս կարդել կ'ուզես և կարծես թէ ասով մեծ հաճոյք մը պիտի պատճառես ինձ, վստահ եմ և շնորհապարտ այս բանիս համար։ Բայց ձեր կրնամ պատճել ջեռ վերհատաւութենէդ հետև այսպիսի հոյակապ պատմուճաններ և զմայլելի պարտէզներ։ Կրնամ ըսել թէ քեզ շնորհիւդ բանէ մը զուրկ ձնացած չեմ և, ինչպէս քեզ, ոդիսպէս իմ անձիս մի և նոյն պատիւը կը շնորհեն։ Ատոնք այնպիսի օգուտներ են որ աշխարհիս երեսն ուրիշ սեղ չպիտի գտնեմ, ինչ ամուսին որ առնեմ։ Ամուսիններն միշտ սիրապետել կ'ուզեն, և ես ալ ուրիշի լծին տակ մտնելու տրամադրութիւն չունիմ։»

«Շատ մը դեսպաններէ ետքն ամենէն հարուստ և հզօր թագաւորի մը կողմէ նոր դեսպան մը ներկայացաւ։ Զինաստանի վերհատան այս իմանալով թագաւորը իր աղջկան հետ խօսեցաւ և չափազանց գովելով ըսաւ թէ շատ շահաւոր է իրեն համար։ Իշխանուհին ալ չէր որ պինքը չյորդորէ և իր առաջին պատճառները մէջ բերաւ։ Ան ատեն թագաւորը զանի բռնադատեց, բայց իշխանուհին հաւանութիւն տալու տեղ՝ բոլորովին մտացաւ իր օրէնք ունեցած յարգանքն և բարկութեամբ անոր ըսաւ. «Վերհատաւ սէր, այս ուրիշ ամուսնութեան վրայ մի խօսիր ինձ, ապա թէ ոչ այս թախանձանքէդ ազատե-

լու համար գոշոյնը կուրծքս պիտի խօթեմ։»

«Զինաստանի թագաւորը ստոփակ սրամտեցաւ իշխանուհիին դէմ և անոր պատասխանեց. «Աղջիկս, դու չեմար ես, և քեզ խնդրի տեղ պիտի գնեմ։» Եւ իրաւի, իր պալատին մէջ սենեկին մէջ զանի փակեց և անոր լոկ սաս պատուհիկներ տուաւ որ անոր շնկեր ըլլան և ծառայեն, և ասոնց դլխաւորն իր դպրեակն էր։ Վերջն, որպէս զի դեսպաններ ղրկող դրացի թագաւորներն անոր չմոռածեն, նոյն իրաւնքներ ուղղեց անոնց իմաց տալու համար որ հաճութիւն չունի աղջիկը կարդալու, և որովհետև անկարելի էր որ աղջիկը խենդ է, մի և նոյն նոյն իրաւնքներուն ապալրեց որ ամէն արքունեաց մէջ վճռուն նային որ եթէ զանի բժշկելու ճարտար բժիշկ մը կայ, առնուն բերեն, և այս բանիս իրը վարձք իր դուստրը պիտի տայ։

«Գեղանի Մէմուն, շարայարեց Տանհաշ, զորձերն այս վիճակիս մէջն են, և ամէն օր կ'երթամ անվրէպ այս անմման գեղանի օրիորդը տեսնելու, և թէև չի բնէ չարանենգ էակ եմ, բնաւ անոր դէշութիւն մը չպիտի ընեմ։ Եկուր հետս և զանի նայէ, կ'աղաչեմ, կ'արժէ որ տեսնես։ Երբ անձամբ դիտես որ ստոյգ չեմ, տարակոյս չունիմ որ դոհ պիտի ըլլաս իրեն նմանը չունեցող իշխանուհի մը քեզ ցոյց տալուս։ Պատրաստ եմ քեզ առաջնորդ ըլլալու, բաւական է որ հրաման տաս։»

Մէմուն փոխանակ Տանհաշի պատասխան տալու, քանի քանի խնդայ երկար տեսն. և Տանհաշն ալ, որ տարբ պատճառը չդիտէր, զարմացաւ մնաց։ Երբ վերջէ վերջ քանի մ'անդամ ծիծաղեցաւ.

«Լա՛ւ, լա՛ւ, ըսաւ անոր, դու կ'ուզես հաւատացնել ինձ ըսածդ։ Կարծէի թէ զարմանալի և տարօրինակ բան մը պիտի պատմես ինձ, և կը նայիմ որ բժշկի օրիորդի մը վրայ է խօսքդ։ Ի՜հ, բա՛հ, բա՛հ, ուրեմն ի՞նչ պիտի ըսես, անիծեալ, եթէ տեսնես քիչ մ'առաջ տեսած իշխանս, և զոր ըստ արժանւոյն կը սիրեմ։ Ցերեկ կարդէ դուրս էակ մ'է, և խելքդ պիտի թռչցնես։

— Սիրելիր Մէմուն, վրայ բերաւ Տանհաշ, արդեօք կրնամ հարցնել թէ ո՞վ է ըսած իշխանդ։

— Գիտցիր, ըսաւ անոր Մէմուն, որ քու ըսած իշխանուհիդ

պլխին հասածն անոր ալ հասաւ։ Իր հայրը բունի կարգել Ղուզէր պիտին, երկար ատեն անոր թախանձանաց դէմ կենալէն ետև՝ բացէ ՚ի բաց յայտնեց որ իր հօրը կարգը չպիտի կատարէ. ահա այս պատճառաւ է որ հիմակ հին աշտարակի մը մէջ փակուած է և այն տեղ ալ անոր վրայ հիացայ։

— Ձեմ ուզեր բոլորովին հակառակիլ քեզ, պատասխանեց Տանհաշ, բայց, իմ պեղանի տիկինս, ներէ ինձ սիզելու որ մահկանացու մը կամ մահկանացուհի մ՚իմ իշխանուհիս պեղեցկութեան չվերնար համարիլ, և այս կարծիքս չեմ փոխեր մինչև որ իշխանը չտեսնեմ։

— Լաւ, անիծեալ, պատասխանեց Մէմուն, նորէն կ՚ըսեմ քեզ որ այդ բանը չվերնար ըլլալ։ — Ձեմ ուզեր կամակորութեամբ պնդել խօսքս, յարեց Տանհաշ, Ձմմարիտ կամ սուտ ըսելուս վրայ կրնաս համոզուիլ ինձի հետ գալով և իշխանուհիս տեսնելով, և այնուհետև քու իշխանդ ինձի ցոյց տալով։

— Հարկ չկայ այդ ծանրութիւնն առնուլ, վրայ բերաւ նորէն Մէմուն. իբր գոհ ընելու միջոց մը կայ. այս է, բերել իշխանուհիդ և իմ իշխանիս քով անկողնին վրայ նստեցնել։ Այս կերպով դիւրին պիտի ըլլայ ինձի և քեզի՝ զանոնք իրարու հետ բաղդատել և մեր դատը վճռել։»

Տանհաշ փերիին փափաքը կատարելու հաճեցաւ, և ի՚ուզեր անվնաս Ձմմատան դառնալ։ Մէմուն զանի կեցոյց. «Սպասէ, ըսաւ անոր, եկուր որ ցոյց տամ նախ քեզի այն աշտարակին ուր բերես պիտի իշխանուհիդ։»

Երկուքին ալ մէկտեղ մինչև աշտարակը թռան, և երբ Մէմուն զանի Տանհաշի ցոյց. «Գնա իշխանուհին առ, ըսաւ անոր, և շուտ ըրէ դարձիր, իս այս տեղ պիտի սպասես։ Բայց մանիկ ըրէ, ի՚ուզեմ որ քաոս բունեմ հետդ որ եթէ իշխանս իշխանուհիդ աւելի գեղեցիկ չէ, վճարես ատակներն. իսկ եթէ քու իշխանուհիդ աւելի գեղեցիկ ըլլայ ես վճարեմ։»

Տանհաշ փերիին բաժնուեցաւ, Ձմմատան դնաց և անհաւատալի արագութեամբ վերադարձաւ, հետը բերելով քնացած իշխանուհին։ Մէմուն ընդունեցաւ զանի և Քամրալըմանի իշխանին սենեակը

մտցուց, և երկուքին ալ զանի անկողնին վրայ դրին։

Երբ այսպէս իշխանն ու իշխանուհին իրարու մօտ նստան, մեծ վէճ մը ծագեցաւ փերիին ու Ձինին մէջ թէ ո՛վ է անոնցմէ աւելի գեղանին։ Քանի մը ժամանակ անցնց վրայ զմայլեցան և իրարու հետ համեմատեցին առանց խօսելու։ Տանհաշ բերանը բացաւ ու Մէմունի ըսաւ. «Կը տեսնես որ, ինչպէս ըսի էի, իմ իշխանուհիս քու իշխանէդ աւելի գեղեցիկ է։ Միթէ հիմակ այս մասին կասկած մ՚ունի՞ս։

— Ինչպէս կասկած, վրայ բերաւ Մէմուն։ Անշուշտ կը կասկածիմ։ Այդ պէտք է ըլլաս չտեսնելու համար որ իմ իշխանս չափազանց աւելի գեղանի է քան իշխանուհիդ։ Քանի գեղեցիկ է, կը խոստովանիմ, բայց մի շտապիր և առանց պաշարումի իրարու հետ բաղդատէ, պիտի տեսնես որ գործն ըսածիս պէս է։

— Որչափ ժամանակ անցնիմ զանոնք իրարու հետ համեմատելու, վրայ բերաւ Տանհաշ, դարձեալ իմ կարծիքս չպիտի փոխեմ։ Առաջինն նայուածքով տեսածս տեսայ, և ժամանակը տարբեր կերպով չպիտի ցուցնէ ինչ որ այժմ կը տեսնեմ։ Սակայն ասով ըսել չեմ ուզեր, չքնաղ Մէմուն, որ քեզ չեմ ուզեր հնազանդիլ, եթէ կը փափաքիս։

— Ես այդպիսի բան մը չեմ ընդունիր, վրայ բերաւ Մէմուն, չեմ ուզեր որ քեզի պէս չար ոգի մ՚ինձի չնարհ ընէ։ Խոստիւն իրաւարարի մը կը յանձնեմ, և եթէ չհաւանիս խօսքիս և մեղաւոր, ըսել է թէ պատն ես շահած կ՚ըլլամ։»

Տանհաշ՝ որ պատրաստ էր Մէմունի կամքին ամենայն սիրով կատարել, այն ինչ իր հաւանութիւնը տուաւ որ Մէմուն ուզածով զբաղուի։ Գեղինը բացուեցաւ, և խիղճն նողկալի, սասպառող, միամտի և հաղճին մ՚ելաւ, որ ղլուխը վեց եղջիւր ունէր և ձեռներն ու ոտները սպռիւսաւոր։ Այն ինչ դուրս ելաւ, երկիրը միացաւ և Մէմունը տեսաւ, անոր ուշն ընկաւ, և մէկ ծունկը հողին վրայ դրած, հարցուց թէ ինչ հրամանն ունի տալու։

«Ոաք ելիր, Քաշքաշ, ըսաւ անոր (այս էր ձիւնին անունը), քեզ կանչեցի որ սա անիծեալ Տանհաշի հետ ունեցած մեր վէճին դատաստան ըլլաս։ Աչքդ սա անկողնին վրայ դնեա՛ և ըսէ մեզ՝ առանց կողմնապահութեան՝ թէ այս երիտասարդն է աւելի գեղեցիկ թէ ոչ

մարալզաման իշխանին այս սիրոյ նշանները զղալով. ոմանք ըլլաս, քո սիրոյդ անարժան չէ։» Խոհյն զանի սիտի արձնցնէը, բայց յանկարծ ինքզինքը բռնեց և ըսաւ. «Արդեօք այս է իմ թագաւոր հօրս իրը կին ինձ սահմանած էակը։ Մեծ անիրաւութիւն մ'ըրած է ինձ աւելի շուտ ցոյց չտալով զանի։ Զսիտի նախատէի զինքը հրապարակաւ անոր դէմ անհնազանդ և ըմբոստ գտնուելով, և այսպէս իրեն պատճառած սրտմտութեան առաջն առած կ'ըլլար։ Քամարալզաման իշխանն անկեղծօրէն զղջայ իր ըրած սխալանաց վրայ, և նայելն քիչ մնաց Ջինաստանի իշխանուհին սիտի արձնցնէը, երբ ինքզինքը զսպելով «Կարելի է, ըսաւ, հայրս սուլթանն ինձի խաղ մը կ'ուզէ խաղալ. անտարակոյս այս նորատի տիկինը զրկած է ինս փորձելու համար թէ արդեօք երևցածին չափ աւելս ունի՞մ ամուսնութեան դէմ։ Ո՛վ դիտէ, կարելի է նոյն ինքն բերաս այս տիկինն ու տեղ մը պահուեցաս որ եաքէն երևան գալով իմ կեղծաւորութիւնս երեսիս զարնէ։ Այս երկրորդ յանցանքս առաջինէն աւելի մեծ կ'ըլլայ։ Ինչ և է, այս մտանիով սիտի դոհ ըլլամ որպէս զի զինքը յիշեմ։»

Այս մտածմունքն որ իշխանուհին մտան էր՝ շատ ընտիր էր։ Ճարպիկութեամբ մը զսյն քաշեց, և իրն անոր մտան անցուց։ Խոհյն կռնակն անոր դարձուց, և Ճինեբուն կախարդութեամբը շուտ մը քունը կսխելով առաջուան պէս խորտնկ ննջեց։

Երբ Քամարալզաման իշխանը լաւ մը քնացաւ, Ցանհաշալլու դարձաւ և գնաց իշխանուհիին շրթին վարի կողմը կծեց։ Ընդոստ արթնցաւ, անկողնին վրայ կիսովին նստաւ, և շատ զարմացաւ տեսնելով մարդու մը հետ պառկեր է։ Զարմանքն հիացումայաղորդեց, և հիացումն ուրախութեան անցաւ՝ տեսնելով որ քովի մարդը վայելչանաղմ և սիրալիր երիտասարդ մ'է։

«Ինչ, ըսաւ, արդեօք թագաւոր հայրս իս քեզմ սահմաներ էր իրը ամուսին։ Շատ դժգոհ եմ այս բանիս համար, վասն զի այն ատեն չէի բարկացներ զինքն, և այսչափ ատեն ամուսնէ մը զատ չէի մնար, քանի որ սրտովին զանի սիրելու ախորժ կ'զգամ։

Այս խօսքերն ըսելով իշխանուհին Քամարալզաման իշխանին թևէն բռնեց և այնքան ուժով ցնցեց, որ անշուշտ սիտի արձնար եթէ՝

նորատի օրիորդը։

Քաշքաշ անհնարին զարմանք և հիացում յայտնելով նոցեցաւ իշխանին և իշխանուհիին։ Երկուքին ալ լաւ մը դիտելէն ետև՝ առանց վճիռ մը տալու. «Ցիկին, ըսաւ Մէմունին, կը խոստանամ որ քեզ սիտի խաբեմ և ինքզինքս սիտի մատնեմ եթէ ըսեմ որ սկն սիւսէն առելի գեղեցիկ կը գտնեմ։ Որշափ քննեմ, այնշափ կ'երևի ինձ թէ երկուքին ալ յետին ծայր գեղանի են, իմ կարծեօքս, և մէկը փոքրիկ պակասութիւն մը չունի, որպէս զի ըսեմ թէ միւսէն աւելի վար է։ Սակայն եթէ սկն կամ միւսը պակասութիւն մ'ունի, ըստ իս, լոկ միջոց մը կայ այս կէտը պարզելու, այսինքն՝ պէտք է իրարմէ եաքը զանունք արձնցնել, և սիտի հատանիք որ իր եաւտով, իր շուռպով և նոյն իսկ իր զայրոյթով միւսին համար աւելի սէր ցցնողը, բանի մը ժմ աւելի նուազ գեղեցկութիւն սիտի ունենայ։»

Քաշքաշի խորհուրդը շատ ախորժելի եկաւ Մէմունի և Ցանհաշի։ Մէմուն լաւ եղաւ և Քամարալզամանի վզին վրայ յօսիկեց։ Ա՛նքան ուժգնին կծկեց զանի որ արձնցաւ և ձեռքն այն կողմը տարաւ, բայց բան մը չբռնեց։ Մէմուն արագօրէն դէպ ի եանն յօսիկեր և իր սովրական կերպարանն առեր էր, թէև միւս երկու Ճինեբուն պէս անտեսանելի կը մնար անոր ընելիքը դիտելու համար։

Ձեռքը քաշելով իշխանը զսյն Ջինաստանի իշխանուհիին ձեռքին վրայ ձգեց։ Աչքը բացաւ և յետին ծայր զարմացաւ իր քովն այսպիսի գեղեցկութեամբ պատճառած կին մը տեսնելով։ Գլուխը վերցուց և արմունկերուն վրայ կռթնեցաւ որպէս զի աւելի լաւ նկատէ զանի։ Իշխանուհիին նորատիթիթ հասակն և անոր անման գեղութիւնը վինքն խոհյն բորբոքեցին այնպիսի կրակով մ'որուն անզսպ մնացեր էր ցսյն կէտ և մեծ առելութիւն մ'ունէր։

Սէրը սաստիկ պրաեց անոր սիրտն և ակամայ գոչեց. «Ինչ գեղեցկութիւն, ինչ շնորհք, իմ սիրտս, հոգիս։» Եւ այս խօսքերն ըսելով անոր ձախէն, ոտներէն և բերնէն պագաւ, այնպիսի անզուշութեամբ մը, որ անշուշտ իշխանուհիին սիտի արձնար եթէ Ցանհաշի հմայութեամբ սովրականէն աւելի խորունկ քուն չբռնար։

«Ինչպէս, իմ գեղանի տիկինս, ըսաւ իշխանը, չէս արձնար քա-

նոյն պահուն՝ Մէմնոն անոր քունը չտասնապատկեր իր հմայութիւնը տասնապատկելով։ Բայց դարձեալ քանի մ՚անգամ զանի շարժեց և տես-նելով որ չարթնար. «Ո՛հ, վրայ բերաւ նա, ի՞նչ պատահեցաւ քեզ։ Ա՛վ է մեր նախանձոտն՝ որ քու և իմ երջանկութեանս աչք ունենալով կախարդութեան գիմած և այս անդարմանելի թմրութեան մէջ նետեր է քեզ, թէև հիմակ աչքերդ չորս բացած պիտի ըլլայիր։»

Իշխանուհին անոր ձեռքը բռնեց, զայն դորովալից պագաւ և մտան ունեցած մտանին տեսաւ։ Աչքան կը նմանէր իրենին որ վատահ էր թէ նոյն իսկ իրն է, երբ դիտեց որ ինքն ալ ուրիշ մտանի մ՚ունի։ Զկրցաւ հաւնիլ թէ ինչպէս եղեր է այս փոխանակութիւնը, բայց անհրկիտա էր որ այն պիտի ըլլար իրենց տնտեսութեան անտես նշանն։ Իշխանն արթնցնելու համար բաւական յորնելէն ետև՝ և ստոյգ ըլլա-լով որ նա իր ձեռքէն չպիտի փախչի, ըսաւ. «Քանի որ անկարող եմ քեզ արթնցնելու, քունդ վրդովելէն կը դադրիմ. ի կրկին տեսա-թիւն։» Ա՛յս խօսքերն ըսելով անոր երեսէն պաղաւ, նորէն պառկե-ցաւ և քիչ առեղէն նիրհեց։

Երբ Մէմնոն պիտոց որ առանց Զինաստանի իշխանուհին արթնցնե-լու կրնար խօսիլ. «Լաւ ուրեմն, անիծեալ, ըսաւ Տանհաշին, հիմակ տեսար։ Հանգստացար որ իշխանուհիդ իշխանին չափ դեղեցիկ չէ։ Ինչպէս է, գրած գրադ քեզի կը բաշխեմ. ուրիշ անգամ երբ բան մ՚ըս-տեմ, ինձի հաւատա։» Ցետոյ ձաշքաշի կողմը դառնալով, «Իսկ քեզ-նէ շնորհակալ եմ, ըսաւ։ Առէք իշխանուհին Տանհաշի հետ և միաս-սին իր անկողինը տարէք։» Տանհաշ և ձաշքաշ Մէմնոնին հրամանը կատարեցին, և Մէմնոն ալ իր ջրհորն իջաւ։

Երբ հետևեալ օրը ձամաթալղաման իշխանն արթնցնալով իր քովը գտաւ այն տիկինը զոր դիշերը տեսեր էր, և չգտաւ. «Քաջ գուշա-կեր էի, ըսաւ ինքն իրեն, որ հայրս ինձի խաղ մ՚ուզեր էր խաղալ, պոհ եմ որ այս որոգայթէն զգուշացեր եմ։» Ուստի իր դերձին՝ որ գեռ կը քնանար, արթնցուց և սիսկից որ գայ գինքը հագուեցնէ, ա-ռանց անոր բան մ՚ըսելու։ Գերձին կինքն ու ջուրը բերաւ. իշխանն ե-լաւ և իր աղօթքն ընելէն ետև՝ ոտք ելաւ և քիչ մ՚առեն կարգայ։

Ա՛յս սովորական կրթութիւններէն ետև՝ ձամաթալղաման դերձին

կանչեց. «Ա՛յս տեղ եկուր, ըսաւ անոր, և ատա մի խօսիր։ Ըսէ ինձ թէ ինչպէս ներս մտար այս պիշերը ինձի հետ պտտող տիկինն ու գինքն ալ բերար։

— Իշխան, պատասխանեց դերձին մեծ զարմանքով, ձեր տիկնոջ հա-մար կը խօսիս։ — Ա՛յն կինան վրայ կ՚ըսեմ քեզ, վրայ բերաւ իշ-խանն, որ ինքն եկաւ կամ գինքն այս տեղ բերին և իմ անկողնիս մէջ գրին։ — Իշխան, պատասխանեց դերձին, կ՚երդնում որ այդ մասին բան մը չգիտեմ։ Ա՛յն կինն ճակիկ կրնայ ներս մտնել քանի որ ես գրան առջև կը պառկիմ։

— Սատիսօ ես դու, անպիտան, պատասխանեց իշխանն, և խօսքը մէկ բրած ես իս առելի նեղելու և զայրացնելու համար։» Ա՛յս խօս-քերն ըսելով, անոր ապտակ մը առաւ և գետինը տապալեց. յետոյ երկար առեն անոր վրայ կոխկրտելէն ետև՝ անոր ուսերէն չորհրնին չուանը կապեց և անոր մէջ լիճեցնելով քանի մ՚անգամ ջրին մէջ խօթեց Հանեց։ «Գեղ պիտի խղդեմ, գոչեց նա, եթէ շուտ մը չբերես թէ ով է այն տիկինն և ով զանի այս տեղ բերաւ։»

Գերձին՝ որ կատղեր և շուարեր էր, ինքնավին ըսաւ՝ մինչդեռ կէս մը ջրին մէջ և կէս մը գուրսն էր. «Անտարակոյս իշխանը տրամա-նէ խելքը թռուցեր է և միտակ ատա մ՚ըսելով կրնամ ազատիլ։ Իշ-խան, ըսաւ աղերսագին ձայնով մը, կ՚ուզես ինձի շնորհէ, կը պատա-հիմ քեզ, և կը խոստանամ գործն եղածին պէս պատմել քեզ։»

Իշխանը չբհորէն հանել գերձին և ատիպես որ ամէն բան ըսէ։ Երբ չբհորէն ելաւ. «Իշխան, ըսաւ անոր գերձին դողալով, կը տեսնես որ այս վիճակիս մէջ չեմ կրնար քեզ գոհ ընել, ուստի ժամանակ տուր ինձ որ երթամ պեսաս փոխեմ։ — Խղիրդ կը շնորհեմ քեզ, վրայ բերաւ իշխանը, բայց շուտ ըրէ, և նայէ որ ձշմարտութիւնն իմանէ չպահես։»

Գերձին դուրս ելաւ և դուրն իշխանին վրայ գոցելէն ետքն՝ այն իր վիճակին մէջ պալատը վազեց։ Թագուհուն իր մեծ վեղիրին հետ կը խօսակցէր և իր որդւոյն անհնազանդութեան և մեղապարտ բարկու-թեան համար գանգատելով իր զէշ գիշեր մ՚անցնելը կը յայտնէր։

Իսկ պաշտօնեային զանի միխիթարելու և միանգամայն անոր հակչնտե-

լու կը ջանար թէ նոյն ինքն իշխանն առիթ տուեր էր իրեն բանտարկութեան : «Վեհափառ տէր , կ'ըսէր անոր , պէտք չէ զղջալ վինքը ձերբակալ ընելուդ համար : Եթէ համբերէք և քիչ մ'առեն ևս վինքը բանտը թողուք , պիտի համոզուիք որ իր երիտասարդական աշխոյժը պիտի մարի և վերջապէս ամէն պահանջմանդ պիտի գլուխ ծռէ :»

Մեծ վէզիրն այս վերջին խօսքերն առարկելու վրայ էր՝ երբ գերին Շահզամանի թագաւորին ներկայացաւ . «Վեհափառ տէր , ըսաւ անոր , շատ կը ցաւիմ Ձեր վեհափառութեան իմաց տալու լուր մ'որ իրեն մեծ ահաճութիւն պիտի պատճառէ : Ձեր որդին կ'ըսէ թէ այս գիշեր կին մ'իրեն մօտ պառկեր է , և ինչպէս որ կը տեսնէք , իս այս վիճակիս մէջ դրաւ . ասկից կրնաք երևակայել որ խելքը փախուցեր է :» Ցետոյ Քամրալզամանի իշխանին բոլոր ըրածները , նոյնպէս իրեն դէմ բռնած վարմունքը պատմեց , այնպիսի ոճով մ'որ իր խօսքերուն ճշմարտութեան վրայ կասկած չէր մնար :

Թագաւորն՝ որ չէր յուսար արտմութեան այս նոր առիթին ունենալու . «Ախաւասիկ , ըսաւ իր առաջին պաշտօնէին , ամենայարմարագոյն դէպք մը , որ՝ ի գերև կը հանէ քիչ մ'առաջ տուած յոյսդ : Գնա , ժամանակ մ'առնիր , նայէ թէ ինչ է խնդիրն և եկուր ինձի լսելու տալու :»

Մեծ վէզիրն իսկոյն հնազանդեցաւ , և իշխանին խուցը մտնելով՝ զանի նստած և հանգարտ գտաւ , ձեռքը գիրք մը բռներ կը կարդար : Անոր բարև տուաւ և քովը նստելէն ետև՝ «Շատ կը պարտաւեմ քու գերիդ , ըսաւ անոր , որ եկաւ հօրդ սիրտը թմրեցնդ հանելէ իրեն հաղորդած լուրովը :

— Ինչ լուր է այդ , վրայ բերաւ իշխանն , ինչ պատճառաւ այնչափ կը զարհուրի : Ես առիլի բանտուր պատճառ մ'ունիմ գերիս դանդատելու :

— Իշխան , պատասխանեց վէզիրն , Աստուած չընէ որ քու վրայդդ ըսածը ճշմարիտ ըլլայ : Քեզ այնպիսի լաւ վիճակի մէջ կը տեսնեմ , և կ'աղաչեմ զԱստուած որ միշտ նոյն վիճակին մէջ պահէ քեզ , որ կը դատեմ թէ բոլոր ըսածը սուտ է :

— Արդեւ է , պատասխանեց իշխանն , որ իր միտքը լաւ չհասկը-

ցուց : Քանի որ դու անձամբ եկար իս տեսնելու , քեզի պէս անձի մը հարցնելու կը փութամ թէ ուր է այս գիշեր ինձի հետ եղող կինը , քանի որ դու պիտի գիտնաս :»

Ա յս հարցման վրայ վէզիրը շուարեցաւ . «Իշխան , պատասխանեց նա , մի զարմանար եթէ ըրած հարցմունքդ ինձ զարմանք կը պատճառէ : Մինչ կարելի բան է , չեմ ըսեր տիկին մը , որ նոյն իսկ մարդ մը դիշերային այս տեղ մնած ըլլայ , քանի որ խաղդ մնանելու համար դունէն անցնիլ պէտք է գերիդիդ փորին վրայ կոխելով : Կ'աղաչեմ , յիշողութիւնդ ամփոփէ , և պիտի տեսնես որ տեսածդ երազ մ'է որ մնքիդ վրայ մեծ տպաւորութիւն մ'ըրած պիտի ըլլայ :

— Չեմ հաւատար խօսքիդ , վրայ բերաւ իշխանը բարձր ձայնով մը , կ'ուզեմ անպատճառ իմանալ թէ ինչ եղաւ այն կինն . և այս տեղ այնպիսի տեղ մ'եմ ուր կրնամ հրամանս կատարել տալ :»

Ա յս անվրդով լեզուն լսելով՝ մեծ վէզիրն անորոշութեան շփոթութեան մէջ ընկաւ , և մտածեց որ միջոց մը գտնէ այս դժուարին վիճակէն ազատելու համար : Իշխանն անուշ բռնեց և հարցուց հլու ու զգոյշ կերպով մը թէ արդեօք ինքն անձամբ տեսած է այն կինը :

— Այո , այո , պատասխան տուաւ իշխանը , զանի տեսայ , և քաջ դիտեցի որ զանի կանաչ զրհեղիք որ իս փորձէք : Շատ աղէկ խաղած ձեր սորվեցուցած խաղն , այնպէս որ բաւ մը չարտասանեց , սուտ քուն եղաւ և քնանալուս պէս ձգեց դնաց : Այս բաներս քաջ դիտէք անշուշտ , վասն զի ամէն ինչ ճշտիւ պատմած է քեզ :

— Իշխան , պատասխանեց մեծ վէզիրը , կ'երդնում որ բոլոր ըսածներդ անհիմն են , և քու հայրդ Թագաւորն ու ես այն ըսած կինդ բնաւ չզրկեցինք քեզ . և ոչ իսկ մեր մտքէն այդպիսի բան մ'անցած է : Ներէ ինձ ըսելու նորէն որ այդ կինն երազդ տեսած պիտի ըլլաս :

— Դիմ ալ եկար իս ծաղրելու , պատասխանեց նորէն իշխանը բարկութեամբ , և ըսելու երեսիս որ զրպացած երազ մ'է :» Անմիջապէս անոր մօրուքին բռնեց և անոր շատ մը հարուածներ իջեցուց որչափ որ ոյժը ներեց :

«Կը խոստովանիմ , իշխան , ըսաւ այն առեն մեծ վէզիրը կեղծելով , ըսածդ բոլորովին անհիմն չէ : Թայց պիտես որ պաշտօնեայ մը

պարտաւոր է իր Թագաւորին հրամանը կատարելու : Եթէ չորհ ընես ինձ Թողլու, պատրաստ եմ քու կողմդ երթալ ըսելու ինչ որ ասպարես ինձ :

— Կը Թողում, պատասխանեց անոր իշխանը . գնա, և ըսէ անոր որ ի՛մ ազեմ կարդալ իր գրած կամ բերած սիրոյդ հետ, և որ այս պիշեր ինձի հետ ճնայ : Ըստով գնա, և պատասխան բեր :» Մեծ վէզիրը խորին խոնարհութիւն մ՚ըրաւ քաշուելով և ինքզինքը բոլորովին ազատ այն տեղն միայն հասնելուն երբ աշտարակէն դուրս ելաւ և իշխանին վրայ դուռը գոցեց :

Մեծ վէզիրը Շահզաման Թագաւորին տունը եկաւ այնպէս տրտում որ նախ տատիկ վշտացաւ : «Վաւ ուրիշն, հարցուց անոր միտքեան, ի՞նչ վիճակի մէջ զտար իմ որդիս : — Վ՚ևհափառ տէր, պատասխանեց պաշտօնեան, գերիին բանտնները շատ տոյժ են :» Ցետոյ պատմեց Քամարալզաման իշխանին հետ ունեցած խօսակցութիւնն, անոր բարկութիւնն՝ երբ եկաւ հասկցնելու Թէ կարելի չէ որ այն կինն իր խուցը մնած ըլլայ, իր քաշած նեղութիւնն և ինչ Ճարպկութեամբ անոր քովէն խոյս տալը պրոցեց :

Շահզաման՝ այնչափ տատիկ վշտացաւ որչափ որ միշտ կը սիրէր իշխանը գորովալին, և ուղեց նոյն ինքն Ճշմարտութիւնն անձամբ իմանալ . ուստի գնաց աշտարակին որ որդին տեսնէ և մեծ վէզիրն ալ իր հետը տարաւ :

Քամարալզաման իշխանը մեծ յարգանօք ընդունեց իր հայրն աշտարակին մէջ : Թագաւորը նստաւ, և իշխանն ալ իր քովը նստեցնելէն ետև՝ քանի մը հարցուփորձեր ըրաւ անոր, որոց օրինաւոր պատասխան առաւ . և տեսն տեսն ալ մեծ վէզիրին կը նայէր, որպէս Թէ ըսելու համար Թէ իր որդին խենդեցած չէ, ինչպէս որ հաստատեր էր, և Թէ անշուշտ խելքն ինքը Թուացած է :

Ի վերջ Թագաւորը կնկան վրայ խօսեցաւ իշխանին : «Որդեակ, ըսաւ անոր, ի՞նչ եղեր, ըսէ ինձ Թէ ձի է այս սիրելին որ այս պիշեր քեզի հետ տատկեցաւ, ինչպէս որ կ՚ըսեն : — Վ՚ևհափառ տէր, պատասխանեց Քամարալզաման, կը պաղատիմ ձեզ որ արդէն այս մասին ինձ տրտում վիշտը չտատկացնէք . շորչ ըրէք միայն զանի կնութեան

տալ ինձի : Մինչև յայսօր որչափ որ հետաքրքրութիւն ցոյց տուի կանանց համար, այն նորատի սիրելին այնպէս գրաւեց իս որ յօժարակամ կը խոստանամ իմ սիրտս բերել : Պատրաստ եմ ընդունելու զանի ձեր ձեռքէն մեծ երախտագիտութեամբ :»

Շահզաման Թագաւորն իշխանին պատասխանին վրայ շուարեցաւ, վասն զի բոլորովին իմաստէ զուրկ կ՚երևէր, մինչդեռ առաջ այնքան խելացի Թեամբ կը խօսէր : «Որդեակ իմ, վրայ բերաւ նա, այնպիսի խօսք մը կ՚ըսես ինձ որ անհնարին զարմանքի մէջը ձգէ իս : Կ՚երդնում այն Թագին վրայ որ իմ մահուանէս ետքը քեզի պիտի անցնի, որ քնաև ամենևին տեղեկութիւն չունիմ ըսած կինդանի վրայ : Եթէ մէկն այս տեղ մտած է, ես չդիտեմ : Բայց ինչպէս ասոր աշտարակէն կրնար անցնիլ տատնց իմ հատատութեանս : Վատն զի ինչպէս որ ըսած է քեզ իմ մեծ վէզիրս, մի միայն քեզ խաղաղ ցնելու համար ըսած է : Անտարակոյս երազ մը տեսած ես, խելքդ ղլուխդ ժողվէ, ի՛նաչեմ, և ինքզինքիդ եկուր :

— Ցեր իմ, պատասխանեց իշխանը, Ձեր վ՚ևհափառութեան բոլորեցս անարժան պիտի ըլլամ, եթէ իր տատած ապահովութեան հատատ չընծայէի : Բայց կը պաղատիմ որ չորչ ընէ համերութեամբ մնիկ ընելու և դատելու եթէ երազ մ՚է ինչ որ ձեզի ըսելու պատրաստի ունենամ :»

Ա՛յն տատն Քամարալզաման իշխանը պատմեց իր հօրը Թագաւորին Թէ ինչ կերպով քատնէն արթնցեր էր : Իր անկողնին վրայ գտած կնկան շորհքն ու գեղեցկութիւնը չափազանց գովեց, ըսաւ Թէ նոյն միջոցին որչափ սէր զգաց անոր համար, և Թէ ինչպէս պարապ տեղն աշխատեր է արթնցնելու : Ձպահեց անորմէ Թէ ինչպէս ստիպուեր է արթննալու և նորէն քնանալու իր մատնին կնկանը մատնին հետ փոխատակելէն ետև : Վերջապէս խօսքն ատարտելով, և իր մատնէն հատած մատնին անոր ներկայացնելով՝ «Վ՚ևհափառ տէր, յարեց նա, խոս քեզի անձատօմ չէ, շատ անգամ տեսար զանի : Ա՛յսհետև, յուսամ որ սիրտ հատղուխս որ խելքս Թուացած չեմ, ինչպէս որ քեզի հատատցուցին :»

Շահզաման Թագաւորն այնքան ակն յայտնի տեսաւ Ճշմարտութիւնն

իր որդւոյն ըսածներուն մէջ, որ պատասխանելու խօսք մը չունե-
ցաւ: Նա մանաւանդ այնքան մեծ եղաւ զարմանքն որ երկար առեն
ափ ի բերան մնաց: Իշխանն այս վայրկենէն օղուտ քաղեց, «Վե՛հա-
փառ տէր, ըսաւ անոր նորէն, այն չքնաղ անձին համար զգացած
խանդս, այն անձին որուն անդին նկարը սրտիս մէջ դրոշմուած է, ար-
դէն այնչափ բաւական է, որ բաւական այժ չունիմ անոր դէմ դնելու: Կը
պաղատիմ ձեզ, որ իմ վրաս գթաք և զանի ստանալու երջանկութիւնն
ինձի շնորհէք:

— Որդեակ, այս բոլորը լսածներէս և սոյն մատնին տեսնելէս ետ-
քը, վրայ բերաւ Շահզաման թագաւորը, չեմ տարակուսիր որ սէրդ
ճշմարիտ է և տեսած պիտի ըլլաս անոր ծնունդ առղութիւնին: Երանի՛
թէ ճանչնայի այն տիկինն, այժմէն գոհ պիտի ընէի քեզ և աշխարհիս
ամենէն երջանիկ հայրը պիտի ըլլայի: Բայց ինձ գտնել պէտք է զանի:
Ո՞նչպէս և ձը կորզնէն ներս մնաս որ ես չկրցայ իմանալ: Ինչո՞ւ համար
ներս մնաս քեզի հետ քննալու, իր պղպեղկութիւնը քեզի ցոյց տա-
լու, սէրդ բորբոքելու քննալու առեն, և վերջն աներեւոյթ ըլլալու
մտօք: Այս արհամարհն բան մը չեմ համարիր, որդեակ իմ, և եթէ
երկնի մեզի նպաստաւոր չէ, այս պատճառաւ դուն և ես դերեզմանի
պիտի իջնենք:» Այս խօսքերն ուսումնասիրելով և իշխանին ձեռքէն բռնե-
լով՝ «Եկուր, յարեաց նա, երթանք միասին ցատկելու, դուն անոր
սկսիլով, և ես ալ առանց դարմանը բերել կարենալու տրամիլով:»

Շահզաման թագաւորն իշխանին աշտարակէն դուրս հանեց և պա-
լատը տարաւ, ուր որ իշխանին անծանօթ կին մը բոլորը հոգւովը սիրե-
լուն համար յուսահատած՝ նախ անկողնին մնաս: Թագաւորն իր սենեա-
կը փակուեցաւ, անոր հետ շատ օրեր լացաւ, և իր թագաւորութեան
գործոց վրայ տեղեկութիւն ա՛ռնուլ չուզեց:

Իր առաջին պաշտօնեան, որ ազատօրէն իր քովը գալու արտօնու-
թիւն ունէր, օր մ՛եկաւ և թագաւորին ըսաւ որ բոլոր իր ազգունիքն
և նոյն իսկ ժողովուրդները սկսեր են դանդաղիլ որ պիտքը չեն տես-
ներ, ըստ սովորականին, դատաստանները կիարեր և թէ ինքը պա-
տասխանատու չուզեր մնալ պատահելիք անկարգութեան:

«Կը պաղատիմ Ձեր վեհափառութենէն, շարունակեց նա, որ այս

գանիս ուշադրութիւն ընէք: Գիտեմ որ Ձեր ներկայութիւնն իշխանին
միշտ կ՛սփոփէ, ինչպէս որ իշխանին ներկայութիւնը քուկդ կ՛սփոփէ.
բայց պէտք է խորհիլք որ ամէն բան չի կորուսա չմատնէք: Եթէ հա-
ճիլք՝ պիտի առաջարկեմ ձեզ որ նաւահանգստէն քիչ մը հեռու փոքրիկ
կղզիին դղեակը փոխադրուիլք իշխանին հետ և շաբաթը մինակ երկու
անգամ գրութիւն շնորհէք մեզ: Երբ մէկ կողմէն այս պաշտօնով իշխա-
նէն պիտի հեռանաք, միւս կողմէն տեղւոյն պեղեցկութիւնն, աղտոր
օդն և վայելչի տեսարանը պիտի օգնեն իշխանին ձեր կարճատեւ բա-
ցակայութիւնը համբերութեամբ տանելու:»

Շահզաման թագաւորն այս խորհրդին հաւնեցաւ, և երբ դղեակն՝
ուր շատոնց պացած չէր, կամ կարասիով զարդարելին, իշխանին ան-
ցոյց, և անոր քովէն կը հեռանար միայն երկու անգրութիւն տա-
լու համար: Միւս առաւօտներն իր անկողնին մօտ կ՛անցնէր, և երբեմն
անոր միխիթարութիւն տալու կ՛աշխատէր և երբեմն անոր հետ կը
վշտակցէր:

Մինչդեռ այս բաները Շահզաման թագաւորին մայրաքաղաքը կ՛անց-
նէին, երկու ձիւները Տանհաշ և Քաշքաշ Զինաստանի իշխանուհին
տարեր էին այն պալատն որ Զինաց թագաւորը գինքը փակեր և ան-
կողնին մէջ դրեր էր:

Հետևեալ առաւօտ երբ Զինաստանի իշխանուհին արթնցաւ՝ աչք ա-
հեակ նայեցաւ, և երբ տեսաւ որ Քամարալզամանի իշխանն իր քովը
չէ, իր կիները հանչցաւ, այնպիսի ձայնով մ՛որ ամէնքը մէկէն խելքէն
վազեցին և անոր անկողնին բոլորտիքն առին: Սանտուն որ անոր մա-
քրին մօտեցաւ, հարցուց թէ ինչ կը փափաքի, և թէ արդեօք գլխին
բան մ՛եկած է:

«Ըսէք ինձի, վրայ բերաւ իշխանուհին, ինչ եղաւ այն երիտասարդ
զոր սրտովին կը սիրեմ և ինձի հետ այս պիշեր պահեցաւ: — Իշխանուհիս, պատասխանեց սանտուն, ըսածդ բան մը չենք հասկը-
նար, եթէ աւելի աղէկ չբացատրէք ձեր միտքը:

— Խնդիրը սա է, վրայ բերաւ իշխանուհին, որ երիտասարդ մը,
ամենասիրելուչ և սիրասուն, այս պիշեր իմ մօտս կը քնանար, զոր ե-
կար առեն պգուիլի և ձեռքէս եկածն ըրի զանի արթնցնելու համար,

պարապ տեղը, հիմակ կը հարցնեմ թէ ինչ է:

— Իշխանուհիս, պատասխանեց սմբատն, անշուշտ մեզի խաղ մը խաղալու համար այդպէս կը խօսիք: Աչքէ կը հանձիք անկողնէն ելնելու: — Ճշմարիտը կ'ըսեմ, պատասխանեց իշխանուհին, և ի՛սկ վեմ պիտակ թէ ինչ է: — Բայց, իշխանուհիս, մխիթեց սմբատն, միտակ էիր երբ երեկ իրիկուն պատկեցանիք, և ոչ ոք ներս մտաւ ձեզի հետ պատկելու համար, ինչպէս որ քաջպիտանիք ես և բոլորը կ'ինդրէ:»

Հինաստանի իշխանուհին համբերատրութիւնը հատաւ. սմբատին դլխէն բռնեց և անոր ապտակներ և կատուներ տուաւ. «Ճշմարիտը պիտի ըսես ինձ, պատուհասիդ, ըսաւ անոր, թէ ոչ քեզ պիտի սպանեմ:»

Սմբատն բոլորը ձիգը թափեց անոր ձեռքէն պրծելու համար: Վերջապէս ազատեցաւ և գնաց անմիջապէս Հինաստանի թագուհին, իշխանուհիին մայրը տեսնելու: Ալաղին և դէմքը բոլորովին վիրաւորուած ներկայացաւ անոր. թագուհին չափազանց զարմացաւ և հարցուց թէ ինչ դրած է գինքն այս վիճակիս մէջ:

«Տիկին, ըսաւ սմբատն, նայեցէք թէ ինչ վիճակի մէջ դրաւ իս իշխանուհին. եթէ ձեռքէն չազատէի՝ անտարակոյս իս պիտի սպանէր: Ցետոյ իր բարկութեան և ցասման պատճառը յայտնեց, որով թագուհին վշտացաւ և զարմացաւ: «Կը նայիք, տիկին, յարեց նա խօսքն աւարտելով, որ իշխանուհին փախստեր է: Դուք կրնաք գտնել եթէ գինքը գալ տեսնելու ծանրութիւնն առնուք:»

Հինաստանի թագուհին դորովը շատ յուզուեցաւ այս լսած բաներէն, սմբատին հետ գնաց նոյն միջոցին իսկ իր աղջիկը տեսնելու համար:

Հինաստանի թագուհին իր իշխանուհի աղջկան քով նստաւ երբ անոր փակուած սենեակը հատաւ, և անոր առողջութեան վրայ հարցուփորձ ընելէն ետև՝ հարցուց թէ իր դայեակէն ինչ դանդատ ունի որ այնպէս ծեծեր է: «Աղջիկս, ըսաւ անոր, այդ աղէկ բան չէ, և քեզի պէս մեծ իշխանուհի մը պէտք չէ որ այսպէս բարկութեան բերի:

— Տիկին, պատասխանեց իշխանուհին, կը նայիմ որ Ձեր վեհա-

պատութիւնն ալ եկեր է իս ծաղրելու. բայց ահա կը յայտնեմ որ հանդստութիւն չպիտի դանեմ մինչև որ այն սիրանուշ աղախնան՝ որուն հետ այս պիշերը պատկեցայ, ինձ էրկիկ չընեմ: Դուք պիտի դիտնաք թէ ինչ է, կը պատմեմ ձեզ որ հոս կանչէք զանի:

— Աղջիկս, վրայ բերաւ թագուհին, իս կը զարմանամ և խօսքէդ բան մը չեմ խմանար:» Իշխանուհին յարդանքը կրկնացուց: «Տիկին, պատասխանեց նա, իմ թագաւոր հայրս և դուք իս չարչարեցիք որպէս զի կարգադրելու ստիպուիմ, մինչդեռ ես փափաք չունէի, հիմակ այս փափաքն ունիմ և անպատճառ կ'ուզեմ իրը ամուսին առնուլ այն անձն որուն վրայ ձեզի խօսեցայ, ապա թէ ոչ ինքզինքս պիտի սպանեմ:»

Թագուհին չկրնայ անուշադրութեամբ բռնել իր աղջկին: «Իմ սիրելի կանս, ըսաւ անոր, դուք քաջպիտաս որ սենեկին մէջ միտակ ես և ոչ ոք կրնայ ներս մտնել:» Բայց միա դնելու տեղ իշխանուհին անոր խօսքն ընդմիջեց և արտարոյ բաներ ըրաւ այնպէս որ թագուհին ստիպուեցաւ վշտագին հեռանալ և թագաւորին երթալով ամէն բան անոր իմացնել:

Հինաստանի թագաւորն ուզեց անձամբ ստուգել գործն՝ իր աղջկան սենեակը գնաց և հարցուց թէ արդեօք ըսածը ճիշդ է: «Վեհափառ տէր, պատասխանեց իշխանուհին, մի խօսիր այդ նենգին վրայ. միտակ չնորհ ըրէ իս կարգելու այն երիտասարդին հետ որ այս պիշերը ինձի հետ էր:

— Ո՞նչ, աղջիկս, վրայ բերաւ թագաւորն, ձեզ պատկեցաւ քեզի հետ այս պիշեր: — Ո՞նչպէս, վեհափառ տէր, պատասխանեց իշխանուհին, կը հարցնես թէ ձեզ պատկեցաւ հետս այս պիշեր: Դուք արդէն քաջպիտաս: Աշխարհիս մէջ անոր պէս վայելչակազմ տղայ մը չկայ: Կ'աղաչեմ, ի՛մ սիրտեր այն երիտասարդը, կ'ուզեմ զանի: Եւ որպէս զի կասած չտնեսնաս, շարունակեց նա, որ այն տղայոտ տեսեր եմ, որ ինձի հետ պատկեր է, որ գինքը պղտեր եմ և ամէն ձիգ թափեր եմ զանի արձակելու անօգուտ տեղը, նայէ, կ'աղաչեմ, սա մատանին:»

Իշխանուհին ձեռքն երկնցուց. Հինաստանի թագաւորն ինչ ըսելն

քը չգիտէր երբ տեսաւ որ մարդու մահուն էր։ Բայց որովհետեւ բան մը չէր կրնար հասկնալ անոր ըսածներէն, և զանի իրը խենդ բանտարկեր էր, զանի առաջուանէ աւելի խենդ համարեց։ Այսպէս, առանց աւելի բան մ'ըսելու, որպէս զի իրեն և ուրիշներուն դէմ բռնութեան պործ մը չընէ, զանի շղթայի զարնել և աւելի խստիւ պահել տալով՝ միմակ դայեակը ձգեց անոր քովէ ծառայելու համար և պահակ մը կեցուց դրան առջև։

Ձինաստանի թագաւորն՝ իր աղջկան հասած դժբաղդութեան վրայ անմխիթար՝ քանզի կը կարծէր թէ խելքը թռուցեր է, մնացեալ անոր բժշկութեան հոգ տանիլ։ Իր խորհուրդը դումարեց և աղջկան վիճակը բացատրելէն ետև՝ «Եթէ ձեզմէ մէկն, ըսաւ նա, բաւական ճարտարութիւն ունի զանի բուժելու, զանի աղջկանս հետ պիտի կարողեմ, և մեհուանէս ետքը պետութեանս և թագիս ժառանգորդ պիտի ընեմ։»

Գեղեցիկ իշխանուհիի մը հետ կարգուելու փափաքն և օրին մէկը Ձինաստանի պէս հզօր տէրութիւն մը կառավարելու յոյսը սաստիկ յուզեցին ալևոր էմիրի մը միտքն, որ ներկայ էր խորհրդին։ Որովհետև ճարպիկ էր կախարդութեան մէջ, յուսաց յաջողիլ և իր միտքը թագաւորին յայտնեց։

«Կը հաւանիմ, վրայ բերաւ թագաւորը, բայց պէտք է կանխապիտանաս որ եթէ չյաջողիս՝ գլուխդ պիտի կտրել տամ. օրինաւոր չէ որ առանց քու կողմդ վնաս մը կրելու այդպիսի մեծ վարձքի մ'արժանանաս։ Գնդի ըսածս, քեզնէ ետքը նոյն բանն առաջարկողներուն ալ պիտի ըսեմ, եթէ երբէք այս իմ պայմանս չընդունիս կամ եթէ չյաջողիս ձեռնարկութեանդ մէջ։»

Էմիրն ընդունեց այս պայմանն, և թագաւորն փնճամբ իշխանուհիին տարաւ զանի։ Իշխանուհին երեսը դոյնց երբ էմիրը տեսաւ։ «Վեհափառ տէր, ըսաւ, կը զարմանամ որ ինձի այնպիսի մարդ մը կը բերես զոր չեմ ճանչեր և կրօնքս հներեր որ անոր երևիմ։ — Աղջիկս, վրայ բերաւ թագաւորն, իր ներկայութիւնը պէտք չէ որ քեզ դպիճակտութիւն պատճառէ. իմ էմիրներէս մէկն է այն որ քեզ կնութեան կը խնդրէ։ — Վեհափառ տէր, պատասխանեց իշխանուհին, ասի այն մարդը չէ

զոր արդէն ինձի տուիր և որ այս մահուընէ տուաւ ինձի իրը խօսքակալ։ Ուստի անտեղի մի համարիր եթէ ուրիշ մը չեմ կրնար ընդունիլ։»

Էմիրը կը յուսար որ իշխանուհին խենդ ու խելառ պիտի թափէ։ Զարմացաւ երբ տեսաւ որ հանգարտ և լսամտալէյ կերպով կը խօսի. հակցաւ որ ուրիշ յիմարութիւն մը չունի, այլ բուռն սէր մ'որ հիմնաւոր պիտի ըլլար։ Չհամարձակեցաւ այս մասին բացատրութիւն մը տալ թագաւորին. վասն զի թագաւորը չպիտի հանդուրժէր որ իր աղջկին իր ընտրած մարդէն տարբեր անձ մ'առնու։ Բայց էմիրն անոր ոտքը խափանելով.

«Տէր իմ, ըսաւ, այս ամէն բաները լսելէս ետքն՝ անօգուտ պիտի ըլլայ ձեռնարկել որ իշխանուհիս բժշկեմ. անոր հիւանդութեան յարմար դեղ չունիմ և իմ կեանքս Ձեր վեհափառութեան ձեռքը կը յանձնեմ։» Թագաւորն՝ էմիրին անկարողութեան և իրեն տուած նեղութեան վրայ բարկանալով՝ հրամայեց որ անոր գլուխը կտրեն։

Քանի մ'որ ետքն՝ որպէս զի չըսուի թէ իր աղջկան բժշկութեան համար անհոգ մնաց, թագաւորը հրատարակեց իր մայրաքաղքին մէջ որ եթէ բաւական փորձառու բժիշկ, աստղագէտ, կախարդ մը կը գտնուի իշխանուհիին մտքի հիւանդութիւնը բժշկելու, թող գայ իրեն ներկայանայ, սա պայմանաւ որ եթէ չյաջողի գլուխը պիտի կտրէ։ Մի և նոյն բանն իր պետութեան գլխաւոր քաղաքներուն, և զրացի իշխաններուն արքունեաց մէջ հռչակել տուաւ։

Առաջին ներկայացողն եղաւ աստղագէտ և մոգ մը, որ թագաւորին հրամայեաւ ներքինի մը ձեռքէն իշխանուհիին սենեակը դնայ։ Աստղագէտն՝ իր հետը բերած ծրարէն աստղաչափ մը, փոքրիկ գունդ մը, ակռայ մը, և ուրիշ ծխելու յարմար շատ մը նիւթեր, պղնձէ աման մը, և շատ մ'ուրիշ բաներ, և կրակ ուզեց։

Ձինաստանի իշխանուհին հարցուց թէ ինչ կը նշանակէ բոլոր այս նիւթերն։ «Իշխանուհի, պատասխանեց ներքինին, այս ամէն բաները չար ոգին քեզնէ վանելու, սա տեսած ամանիդ մէջ փակելու և ծովը նետելու համար է։

— Անիծեալ աստղահմայ, գոչեց իշխանուհին, դիտցիր որ այդ պատրաստութիւններն անօգուտ են, եթէ իմ խելքս գլուխս է և դու

ինքդ յիմար ես : Եթէ կարողութիւն ունիս , իմ սիրտդ առջեւս Հանէ , ասկից աւելի մեծ ծառայութիւն մը չես կրնար ընել ինձ :

— Իշխանուհի , վրայ բերաւ աստղագէտն , եթէ այդ այդպէս է , պէտք չէ խլենք , այլ մի միայն պէտք է որ հօրմէդ պահանջես այդ քանին :» Իր պարկին մէջ նորէն դրաւ բոլոր Հանածոները , յաւելով որ դիւրաւ յանձն առեր էր երեւակայական հիւանդութիւն մը բուժելու գործը :

Երբ ներքինին Զինաստանի թագաւորին առջեւը տարաւ աստղագէտն , ասի չսպասեց որ ներքինին թագաւորին խօսի , այլ նախ ինքը բերանը բացաւ և Հանգրձակ ըսաւ . «Ցեր իմ , ինչպէս որ Համբաւ Հանեցիք և անձամբ Հաստատեցիք , ես ալ կարծէի թէ իշխանուհին խենթ է , և ատոր էի զանի բուժել իմ ունեցած գաղանի դիտութեամբս , բայց դիւրաւ Հասկցայ որ անոր հիւանդութիւնն ուրիշ բան չէ այլ սէր , և իմ արհեստովս սիրոյ հիւանդութիւն մը բժշկելու կարողութիւն չունիմ : Ձեր վեհափառութիւնն ամենէն աւելի լաւ կրնայ գարման բերել , եթէ միայն իշխանուհին խնդրած էրիկն անոր տայ :»

Թագաւորը ժպիրհ անձի մը տեղ դրաւ այս աստղագէտն ու անոր գլուխը կարել տուաւ : Ձեր վեհափառութիւնը՝ կրկնութիւններ ընելով չձանձրացնելու Համար , Հարիւր յիսունի չափ բժիշկ և մոգ ներկայացաւ , որոնք մի և նոյն բաղդն ունեցան , և իրենց գլուխը քաղքին ամէն մէկ դրան վրայ շարեցին :

Զինաստանի իշխանուհին դայեակն որդի մ՚ունէր Մարզաւան անուն , որ իշխանուհին ծիծեղբայրն էր և անոր հետ միասին սնուցեր և մեծցուցեր էր : Իրենց բարեկամութիւնն այնչափ սերտ եղեր էր մանկութեան տարին որ իրարու հետ իրը եղբայր ու քոյր կը վարուէին , մինչեւ անգամ երբ Հասակնին առնելէն ետեւ՝ սիրուհեցան իրարմէ բաժնուելու :

Երիտասարդութեան ժամանակ Մարզաւանի մշակած շատ մը գիտութիւններէ զատ՝ յատուկ Հակում մ՚ունեցած էր դատաստանական քաղաքութեան , դեղագործութեան և ուրիշ խորհրդաւոր ծանօթութիւններու և տակն մէջ մեծ Ճարտարութիւն ստացեր էր : Իր դատաստաններէն սորված անբաւական սեպելով Ճամբորդութիւն ընելու ե-

լեր էր երբ տեսեր էր որ կարող է այս յոյնութեան տանիլ : Որ և է դիտութեան և արհեստի մէջ նշանաւոր Հանդիսացող մարդ չկար ոչ Մարզաւան վիտուած չըլլար հեռաւոր քաղաքներու մէջ , և իր Ճանշակին Համեմատ անոնց դիտութենէ օգուտ քաղած չըլլար :

Շատ տարի տարաձայ դանուելէն ետեւ՝ Մարզաւան վերջապէս Զինաստանի մայրաքաղաքը դարձաւ , և մտած դուներուն վրայ տեսած դլուխներն իրեն չափազանց պարզանք պատճառեցին : Երբ իր տունն եկաւ՝ Հարցուց թէ ինչի Համար այն դլուխներն այնպէս շարեր են , և այս բաներէն զատ՝ իշխանուհին վրայ լուր խնդրեց , քանի որ իր ծիծ.բոյրն էր և չէր մոռցեր : Որովհետև իր առաջին Հարցման պատասխան տալու տունն երկրորդ Հարցումն ալ Հարկ էր պահ ընել , Մարզաւան վեր՚ի վերոյ խնացաւ ուզածը մեծ յաւոյ , և միտքը դրաւ իշխանուհին դայեկէն աւելի մանր տեղեկութիւններ առնուլ այս մասին :

Թէև Մարզաւանի մայր՝ դայեակը Զինաստանի իշխանուհին մօտ շատ գբաղած էր , երբ խնացաւ որ իր սիրական որդին վերադարձեր է , անմիջապէս դուրս ելնելու առիթ գտաւ և եկաւ զանի գրկելու և հետը քիչ մ՚առնն խօսակցելու : Երբ մայրն՝ արտասուաթոյր աչօք պատմեց իշխանուհին ողբալի վիճակն և թագաւորին բռնութեամբ պատճառը , Մարզաւան Հարցուց թէ արդեօք միջոց մը չկրնար գտնել իշխանուհին ծածուկ տեսնելու : Դայեակը քիչ մ՚առնն խորհելէն ետեւ՝ «Որդեակ իմ , ըսաւ անոր , առ այժմ չեմ կրնար բան մ՚ըսել , բայց վաղը մի և նոյն ժամուն սպասէ ինձ և պատասխանս կ՚ընդունես :»

Որովհետև՝ դայեկէն զատ՝ ոչ ոք կարող էր իշխանուհին մօտենալ առանց ներքինին Հրամանին որ դրան առջև պահպանութիւն կ՚ընէր , դայեակն որ գիտէր թէ նոյն ներքինին նոր ծառայութեան մտեր և անտեղեակ էր թէ ինչ անցած է Զինաստանի թագաւորին աբգատնի՚ անոր դիմաց և ըսաւ .

«Գիտես որ իշխանուհին ես մտնցի և մեծցուցի , բայց կարելի է չգիտես որ անոր հետ մտնցի նաև անոր տարեկից մէկ աղջիկս զոր քիչ մ՚առաջ կորսնցուի : Իշխանուհին՝ որ միշտ իր սիրովը կը պատուէ

աղջիկս , կը փափաքի զանի տեսնելու , բայց կ'ուզէ որ անոր ներս մնանէն ու դուրս երթէն ոչ ոք տեսնէ ։»

Դայեակն աւելի խօսիլ կ'ուզէր , բայց ներքինին անոր խօսքը կարճեց ու ըսաւ . «Բաւական է , յօժարակամ պատրաստ եմ ընելու ինչ որ հաճելի է իշխանուհւոյն , աղջիկդ բերել տուր , կամ անձամբ դնա դուն բեր , դիշերը տուն , և երբ թագաւորը քաշուի , ներս մտցուր . դուն անոր համար բայց պիտի թողում ։»

Երբ դիշեր եղաւ , դայեակն իր Մարզավան որդին վճտուելու դնաց . անոր կնկան զգեստ հագցուց , այնպէս որ մէկը չէր կրնար կասկածիլ որ մարդ մ'է , և իրեն հետ բերաւ . ներքինին՝ որ անհրկիտ էր թէ այդելուն դայեկին աղջիկն է , դուռը բացաւ և թողուց որ երկուքեան ալ ներս մտնեն ։

Մարզավանը ներկայացնելէն առաջ՝ դայեակն իշխանուհիին մօտեցաւ և անոր ըսաւ . «Օրիորդ , այս այդելուն կին մը չէ , իմ մարզավան որդիս է , որ ձամբորդութենէ նոր կը դառնայ , այս հագուստովը ներս մտցնելու ձարը գտայ ։ Յուսամ որ թոյլ կտաս իրեն յանդգնքը քեզ ծառայանելու ։»

Մարզավանի անունը լսելուն , իշխանուհիին մեծ ուրախութիւն յայտնեց . «Մօտեցիր , եղբայր իմ , ըսաւ իսկոյն Մարզավանի , և այս քօղը վերցուր . արդիւնաւ չէ եղբօր և քրոջ մը բայ երեսով դիրար տեսնելու ։»

Մարզավան յարգանօք բարև տուաւ , և անոր խօսելու ժամանակ չտալով . «Սատիկ ուրախ եմ , ըսաւ իշխանուհին , քեզ քաջառողջ վիճակի մէջ տեսնելուս , բազմանայ բարեկամութենէ եռքը , վասն զի քու վրադ լուր չէինք առնուր և ոչ իսկ բարի մայրդ ։

— Իշխանուհի , վրայ բերաւ Մարզավան , չափազանց շնորհակալ եմ բարեմեծանդ ։ Կը յուսայի որ 'ի դարձիս քու վրայօք աւելի աղուոր լուրեր կ'ընդունիմ քան ինչ որ լսացայ , և որոյ վշտաձղին ախտաստես եմ ։ Սակայն շատ ուրախ եմ որ ժամանակին հասայ՝ շատ մ'անյաջող մարդիկներէ եռքն , որպէս զի քեզի պէտք եղած դարմանը բերեմ ։ Եթէ իմ ուսանելքս և ճամբորդութենէս մինակ այս արդիւնքը քաղեմ , դարձեալ իմ վարձքս գտած պիտի համարիմ ։»

Այս խօսքերն աւարտելով Մարզավան իր հետը բերած պիրք մը ուրիշ բաներ հանեց , որպէս զի մօրը տուած տեղեկութեան վրայ իշխանուհւոյն համար գործածէ ։ Իշխանուհին՝ որ այս պատրաստութիւնը տեսաւ , դոչեց . «Ո՞նչ , դո՞ւ ալ , եղբայր իմ , այն տեսակ մարգարէն ես որ կարծեն թէ խնդ եմ ։ Այդ կարծիքդ ուղղէ և ինձ մոխիկ ըրէ ։»

Իշխանուհին Մարզավանի պատմեց իր բոլոր պատմութիւնն , առանց ամենէն փոքր պարագան մոռնալու , մինչև մանկիկին դէպքը հասկըցուց և զանի ցցուց ։ «Բան մը չպահեցի քեզնէ , յարեց նա , և ամէն բան ըսի ։ Իրաւ է որ այս դէպքին մէջ կարգէ դուրս բան մը կայ ուրուն խելքս չհասնիր և ասոր վրայ կը կարծեն թէ փախուցեր եմ , բայց իմ միւս ըրածներուս ուշադրութիւն չեն ըներ որ ձշմարիտ են ։»

Երբ իշխանուհին խօսքը դադրեցուց , Մարզավան՝ հիացմամբ և զարմանքով լի , քիչ մ'առեն անխօս և անշնորհ կեցաւ ։ Ի վերջ դլուխը վերցուց և բերանը բանալով . «Իշխանուհի , ըսաւ , եթէ պատմածդ ձշմարիտ է , ինչպէս որ վստահ եմ , յայս ունիմ քու փափաքդ դոհ ընելու ։ Կը պաղատիմ միայն որ քիչ մ'առեն ևս համբերես , մինչև որ դեռ չպարտած երկիրներս երթամ շրջիմ . իսկ երբ իմ վերադարձս իմանաս , հաւատաս եղիր որ խնդալիր սիրած անձդ քեզնէ հեռու չպիտի դտնուի ։» Այսպէս խօսեցաւ եռքը՝ Մարզավան հրաժարական ողջոյն տուաւ իշխանուհւոյն և հեռացաւ օրն իսկ ձամբայ ելաւ ։

Մարզավան քաղքէ քաղաք , պատառէ պատառ , կղզիէ կղզի շրջեցաւ , և ուր որ հանդիպ մինակ Պատուր իշխանուհւոյն խօսքը կը լսէր (այս էր Հինաստանի իշխանուհիին անունն) և անոր պատմութիւնը ։

Ձորս ամսէն եռքը՝ մեր ձամբորդը Թօրփ հասաւ , ծովեզերեայ , մեծ և բազմամարդ քաղաք մ'էր այն , ուր Պատուր իշխանուհւոյն վրայ բան չէր լսեր , այլ Քամարալզամանի իշխանին վրայ , որուն համար կ'ըսէին թէ հիւանդ էր և պատմութիւնը կը պատմէին , Պատուր իշխանուհւոյն պատմութենան շատ նման ։ Մարզավան անպատում ուրախութիւն զգայ . տեղեկացաւ թէ այս իշխանն աշխարհիս որ կողմը կը նստի և տեղն իմացաւ ։ Երկու ձամբայ կար այն երկիրն երթալու հա-

մար. մեկը ցանաքէն և ծովէն, և միւսը մի միայն ծովէն, որ առնէին կարճն էր:

Մարզավան վերջին ձամբան բռնեց, և վճռատական նաւ մը մնաւ, որ յաջող նաւարկութիւն մ՚ունենայաւ և հասաւ մինչև Շահզամանի թագաւորութեան մայրաքաղքին առջև: Սակայն նաւահանգիստը մտնելէն առաջ՝ գժբաղդաբար նաւը ժայռի մը վրայէն անցաւ նաւաղիղին անձարակութենէն: Նաւը կտրտեցաւ և ծովին խորը սուզուաւ. այս պատահարը Քամարալզաման իշխանին նստած դղեկին առջև և անկէ քիչ մը հեռու պատահեցաւ, նոյն միջոցին որ Շահզաման իր վէզիրին հետ կը խօսակցէր:

Մարզավան քաջ լողալ գիտէր. չվարանեցաւ ծովը նետուելու և դնաց Շահզաման թագաւորին դղեկին առջև եկաւ. այն տեղ՝ թագաւորին հրամանատ վէզիրը զինքն ընդունեց և անոր օգնեց: Անոր ղրկեաց մը տուին որ վրան փոխէ և զինքը շատ ազնիկ նայեցան, և երբ ինքզինքին եկաւ, զանի մեծ վէզիրին առջև տարին, որովհետև ուզեր էր որ իր առջևը բերին:

Որովհետև Մարզավան շատ վայելչադէմ և գեղեցիկ էր, այս պաշտօնեայն զինքը պատուով ընդունեց և անոր վրայ մեծ համարում ունեցաւ իր հարցմանց տուած ճիշտ և խմաստալից պատասխաններուն համար. գիտէց նաև որ տեսակ տեսակ գիտութիւններու տէր է: Ուստի սիրելեցաւ անոր ըսելու. «Քու խօսքերդ կը տեսնեմ որ սովորական մարդ մը չես: Երանի՛ թէ քու ուղեորութեանդդ մէջ սորված ըլլաչիր հիւանդ մը բժշկելու պաղանիք մը՝ որ երկար տեսնէ վեր մեծ վիշտ կը պատճառէ այս արքունեաց մէջ:»

Մարզաման Քամարալզաման իշխանին ականջին մօտեցաւ, և յանձ ձայնով խօսելով՝ «Իշխան, ըսաւ, ժամանակ է որ այսուհետև անհնարինս վշտանալէն դադրիս: Ան կինն որուն համար կը տատանիս, ինձի ծանօթ է, պատուր իշխանուհին է նա, Զինաստանի թագաւորին աղջիկն, այն թագաւորին որ Կեամբոր կը կոչուի: Կրնամ ապահովել քեզ իր և քու պատահարիդ վրայ լսածիս նայելով թէ ըսածս ճշմարիտ է: Ուրեմն դու իշխանուհիին, նոյնպէս ինքը քեզի համար կը տառապի:»

Ցետոյ իշխանուհիին պատմութեան վրայ դիտցածն անոր ըսաւ, այն դժնդակ դիշերէն սկսելով՝ ուր անհաւատալի կերպով իրարու հետ տեսնուեր էին. չմոռցաւ ըսելու նաև թէ ինչպէս Զինաստանի թագաւորը կը վարուի այն անձերուն հետ որ ընդ ունայն ելան պատուր իշխանուհիին կարծեցեալ յիմարութիւնը բուժելու: «Դու միայն կարող ես, յարեց նա, բոլորովին զանի բուժել և անվախ անոր ներկայանալ: Բայց, այսպիսի երկար ուղեորութիւն մը սկսելէն առաջ՝ պէտք է որ բոլորովին քաջառողջ ըլլաս. այն ատեն պէտք եղած միջոցներն՚ի գործ կը դնենք: Ուրեմն իսկոյն քու առողջութիւնդ կապդուրելու կանոնները գտնուէ:»

Մարզավանի խօսքերը մեծ ազդեցութիւն ըրին Քամարալզաման իշխանին վրայ, որ այնքան սիրուեցաւ նոր ստացած յուսով՝ որ բաւական ոյժ պիտի առ երևնելու և աղաչեց իր թագաւոր հայրն որ հապաղի՝ այնպիսի դէմքով որ իր հայրն անհաւատալի ուրախութիւն մ՚զգայ:

Թագաւորը միևնակ Մարզավանը կը դրկէր իր ջորհակալութիւնը յայտնելու, և չէր հարցներ թէ ինչ միջոց գործածեր էր այս զարմանալի ներգործութիւնն ընելու. իսկոյն իշխանին խօսցէն գուրս եկաւ մեծ վէզիրին հետ այս ուրախալի լուրը հրատարակելու: Հրամայեց որ շատ մ՚օրեր խրախճանութիւններ ընեն, իր պաշտօնակալներուն պարգևներ, աղքատներուն ողորմութիւններ տուաւ, և բոլոր բանտարկեալներն ազատեց: Ան տեղն մայրաքաղաքիս ամէն կողմէն դատաստանի և ցնծութեան ձայներ լսուեցան և քիչ տեղն Շահզամանի ամէն քաղաքներուն մէջ տարածուեցան:

Քամարալզաման իշխանն՝ որ գիշերները անդադար հսկելէն և ամէն տեսակ մտածութենէ զուրկ մնալուն տատիկ տկարացեր էր, քիչ տեղն իր առաջին առողջութիւնը գտաւ: Երբ տեսաւ որ բաւական ոյժը վերադարձեր էր և կրնար ուղեորութեան նեղութիւնները կրել, Մարզավանն առանձին կանչեց և անոր ըսաւ.

«Սիրելի Մարզավան, ժամանակ է ինձ ըրած խոստումդ կատարել: Ան չափ անհամբեր եմ չքնաղ իշխանուհին տեսնելու և ինձի համար կրած դժնդակ տանջանաց վերջ տալու որ անշուշտ իմ առջի վիճակիս մէջ պիտի իյնամ, թէ որ անմիջապէս ճամբայ չելլենք: Բան մը միայն

իս կը վշտացնէ և կը վախնամ որ իմ ուղևորութիւնս ուշացնէ. այս է հօրս անձնանձիր պարտքը, վասն զի չպիտի հանձի թողուլ որ իր քովէն հեռանամ: Մեծ յուսահատութիւն մը պիտի պատճառէ իս եթէ այս անպատեհութեան դարման մը չգտնես: Դու ալ կը տեսնես որ իս իր աչքին չհեռացներ:» Իշխանն այս խօսքերն ատարելու ատեն չկրցաւ իր արտասուքը զսպել:

«Իշխան, վրայ բերաւ Մարղավան, արդէն ըսած մեծ արդելքդ պուշակեցի. ես պէտք եղածը պիտի ընեմ որ մեր ուղևորութիւնը չարգիլէ: Իմ ճամրորդութեանս առաջին նպատակն եղած է Զիւռատանի իշխանուհւոյն տատային դադրեցնել, վասն զի փոխադարձ բարեհաճութեամբ կը սիրուինք մեր ծնողքին վրը: Իմ պարտաւորութեանս դէմ վարուած պիտի ըլլամ եթէ այս վիճաբանութիւնն ատոր և քեզի չտամ և եթէ իմ բոլոր ճարպկութիւնս այս այրադային մէջ չգործադնեմ: Ահաւասիկ ինչ մտածեցի ամէն խոչընդոտն բառնալու, և՝ մեր փափաքին հասնիմ՝ հօրդ հրամանը առնելու: Իմ պալէս վրը տարի քաւին դուրս չես ելլեր. ըսէ ատոր որ կ'ուզես քիչ մը հով առնել և խնդրէ որ երկու երեք օր որսորդութիւն ընելու համար միատեղ քեզի թոյլտուութիւն տայ. չեմ կարծեր որ խնդիրդ մերժէ: Երբ փափաքիդ հասնիս, ապացոյց որ երկերկու լաւ ձիեր պատրաստեն, մէկը հեծնելու և միւսը հեռուակ. իսկ մնացածն ես կը հոգամ:»

Հետևեալ օրը՝ Քամարալզամանի իշխանը յարմար առիթ գտաւ և իր հօրը յայտնեց թէ փափաք ունի քիչ մ'օդ առնելու, ու աղաչեց որ Մարղավանի հետ մէկ քանի օր որսորդութիւն ընելու իրեն հրաման տայ:

«Ըստ աղէկ, ըսաւ թագաւորը, սա պայմանաւ միայն որ միակ պիշերը մը դուրս պիտի պատկիս: Առջի օրերն եթէ շատ կրթութիւն ընես, կարելի է ձեռաստիս, և առելի երկար բացակայութիւն մ'ինձի նեղութիւն պիտի տայ:» Թագաւորը հրամայեց որ լաւագոյն ձիերն ընտրեն և ամէն միջոց բանեցուց որ որդին ուշացնէ ունենայ: Երբ ամէն բան կազմ ու պատրաստ եղաւ, թագաւորը զանի դրկեց և Մարղավանի ըսելէն ետև որ անոր վրայ հոգ տանի, թողուց որ մեկնի:

Քամարալզամանի իշխանն ու Մարղավան ճամբայ ելան և դաշտերը

հասան. ձիապանները խաբելու համար սկսան սուտ որսալ և քաղքէն կարելի եղածին չափ հեռացան: Երբ մութը կոխեց, կարաւանի օթեւան մ'ելլան, ընթրիք ըրին և մինչև կէս պիշեր քնացան: Մարղավան առաջ արթնցաւ, Քամարալզամանի իշխանը վերցուց, և ձիապաններուն թողուց որ քնանան: Իշխանին ըսաւ որ իր հագուստը տայ և ինքն ուրիշ մը հագնի: Ամէն մէկն իր հեռուակ ձին հեծաւ, և Մարղավան մէկ ձիապանին ձիուն սանձէն բռնելով ճամբայ ելան, և ձիերնին յառաջ քշեցին:

Ա.յգուն՝ երկու ձիաւորներն անտառ մը հասան, այնպիսի տեղ մը ուր ճամբան չորսի կը բաժնուէր: Նոյն տեղը, Մարղավան աղաչեց իշխանն որ սպասէ, և ինքն անտառը մտաւ: Հասպանին ձին մերթեց, իշխանին հանած հագուստը պատուեց, արեան մէջ թաթխեց, և երբ իշխանին միացաւ, զայն քառատղիին մէջ տեղը նետեց:

Քամարալզամանի իշխանը հարցուց Մարղավանի թէ ինչ իմաք ինչ է: «Իշխան, պատասխանեց Մարղավան, հայրդ տեսնելով այս իրերուն որ պատահած չգտնէ, կամ երբ լսենայ որ իրենց քոն եղած տեղը ձերբ դուցեր ենք, անտարակոյս մեր հետևէն մարդիկ պիտի հանէ: Ա.յս կողմն եկող մարդիկ սոյն արիւնաթաթաւ հագուստը պիտի տեսնեն և պիտի կարծեն թէ գազան մը վրադ յարձակեր քեզ պատառեր է, և ես ալ թագաւորին բարկութենէ վախնալով՝ անոր չեմ ներկայացած: Թագաւորն այս տեղկութիւնն առնելով պիտի հաւատայ թէ մեռած ես, և քեզ փնտռելէն պիտի դադրի և մեր ուղևորութիւնը շարունակելու արձակ համարձակ պիտի թողու մեզ: Իրաւ է որ այս ղազրշութիւնը խիստ բռնն է, վասն զի շատ ծանր պիտի դայ հօր մը որ իր որդին կաթողին կը սիրէ՝ յանկարծ անոր մահուան լուրը տալ. բայց հօրդ ուրախութիւնն առելի մեծ պիտի ըլլայ երբ լսենայ որ կենդանի ես ու պահ:

— Աղնիւ Մարղավան, վրայ բերաւ Քամարալզաման, կը հաւնիմ այսպիսի քաջահնար միջոց մը և քեզի այս մասին պարտաւոր եմ:»

Իշխանն ու Մարղավան՝ իրենց ճամբան շարունակելին ծուէն ու յամաքէն և ուրիշ արդելք մը չտեսան այլ միայն ժամանակին երկարութիւնը զգը

առ հարկի անցնել պէտք էր։ Վերջապէս Զինաստանի մայրաքաղաքը հասան. Մարզավան՝ փոխանակ իր առնը տանելու իշխանը նոյն միջոցին քաղդէի մը հազուստ կտրել տուաւ որպէս զի իշխանը ծպտեալ ներկայացնէ։ Երեք օր անցնելէն ետև՝ միասին բաղնիք գացին, և այն տեղ Մարզավան քաղդէի զգեստը հագցնել տուաւ իշխանին. իսկ բաղնիքէն էլնելուն՝ զանի Զինաստանի թագաւորին պալատին առջևը տարաւ, և այն տեղ ձգեց զանի որ երթայ ինչպէս Պատուր իշխանուհին պատկէն իր գալուստն և խնդրէ որ իշխանուհին այս լուրը հաղորդէ։

Քամարալզաման իշխանն արդէն հասկցած ըլլալով թէ ինչ պէտք էր ընել, և քաղդէի մը կարևոր գործիներն ունենալով Զինաստանի թագաւորին պալատին դրան մօտեցաւ և կանչ առնելով բարձրաձայն պոռաց՝ պահապան դռնապաններուն ներկայութեան.

«Ես քաղդեայ եմ և կգամ բժշկելու Պատուր յարգելի իշխանուհին, Զինաստանի վեհապանծ և հզօր թագաւորին աղջիկը, Նորին վեհափառութեան առաջարկած պայմաններուն համաձայն՝ աղջիկն իմ կինս պիտի ընեմ, եթէ չապրիմ, և գլուխս կորսնցնեմ, եթէ չապրիմ։»

Թագաւորին պահակներէն և բարեպատներէն զատ՝ բաղնիքը մը դուռնարուեցաւ՝ Քամարալզաման իշխանին բոլորովին այս նպատակաւ թողուելուն պիտի ըլլալու համար։ Եւ արդարև՝ շատ տանէ վեր ոչ բժիշկ, ոչ աստղագէտ, ոչ կախարդ մը ներկայացեր էր՝ քանի որ շատերն իրենց ձեռնարկութեան մէջ ողբալի վախճան մը գտեր էին։ Կարծէին թէ այնպիսի անհնարք մարդիկ չկային, կամ լաւ ևս, չպիտի գտնուէին աշխարհիս մէջ։

Ամէն մարդ իշխանին բարեդէմ ու աղնիւ կերպարանն, անոր ծաղիկ հասակը տեսնելով՝ կը գթային վրաս։ «Ո՞նց խելքի կը ծառայես, տէր իմ, ըսին իր քոթի եղողներն։ Ո՞նչպէս այդ յուսադիր կեանքդ անխնայելի մահուան մ՚ենթարկելու կատղութիւնն ունիս։ Գոնեպուն վրայ գրուած գլուխները միթէ քեզի ահ ու դող չպղտեցի՞ն։ Յանուն Աստուծոյ, այդ յուսահատական ընթացքդ մէկդի դիր, և ձգէ գնա։»

Այս յանդիմանութիւններուն առջև՝ Քամարալզաման իշխանն անդողդոջ մնաց, և փոխանակ այս յորդորները մտիկ ընելու, երբ տեսաւ որ ոչ ոք գինքը ներս չէնցներ, ու և նոյն աղաղակը կրկնեց այնպիսի վստահութեամբ որ զամէնքը զոչ հանեց, և այն առեն ամէնքը գոչեցին. «Միտքը գրեր է մեռնելու, և Աստուած միայն գիտ անոր երիտասարդութեան և հոգւոյն։» Երրորդ անգամ մ՚ալ պոռաց իշխանն, և վերջապէս մեծ վէգիրն անձամբ եկաւ գինքն առնելու Զինաստանի թագաւորին կողմէն։

Այս պաշտօնեային թագաւորին առջև ներկայացուց Քամարալզամանն։ Այն ինչ իշխանը զանի իր աթոռին վրայ նստած տեսաւ որ երկիր պագաւ։ Թագաւորն որ՝ անչափ անձնասիրութեամբ իրենց գլուխն ողին առջև բերողներուն մէջ՝ իր անհարկութեան արժանի մէկը տեսած չէր՝ ճշմարտապէս կարեկցութիւն զգաց Քամարալզամանի համար՝ տեսնելով որ ինքզինքը մեծ վտանգի մէջը գտնէր։ Անոր առաջի պատիւ ըրաւ, ուղեց որ մօտենայ և անոր քովը նստաւ։

«Երիտասարդ, ըսաւ անոր, չեմ կրնար հաւատալ որ այս տարիքիդ մէջ բառական փորձառութիւն ստացած ըլլաս որ յանդգնիս աղջիկս քուժելու ձեռնարկել։ Կը փափաքիմ որ կարենաս յաջողիլ. զանի քեզի հինութեան պիտի տամ ոչ միայն առանց ընդդիմութեան, այլ չափազանց ուրախութեամբ մը, մինչդեռ քեզմէ առաջ եկողներէն մէկուն մեծ տհաճութեամբ պիտի տայի։ Բայց վշտացին կը յայտնեմ քեզ, որ եթէ չյաջողիս, քու երիտասարդութիւդ, քու աղնիւ կերպարանդ չպիտի արգիլեն իս գլուխդ կտրել տալու։

— Տէր իմ, վրայ բերաւ Քամարալզաման իշխանը, մեծապէս շնորհակալ եմ Ձեր վեհափառութեան որ ինձի պէս անծանօթի մը այսչափ բարիք և պատիւ կ՚ընէ։ Թերևս Ձեր պետութեան անծանօթ հետաւոր երկրէ մը կգամ միայն իմ նպատակիս համեմատ. ինչ պիտի ըսեն իմ թեթևամտութեանս վրայ եթէ այս իմ վեհանձն խորհուրդս կատի, իմ բոլոր կրած նեղութիւններս և վտանգներս ետքը։ Ձեր վեհափառութիւնն արդեօք իմ վրայ ունեցած համարումն ալ չէր կորսնցներ։ Եթէ մեռնելու եմ, տէր իմ, գոնէ պիտի մեռնիմ այն դոհունակութեամբ որ համարմանդ արժանի ըլլալէն ետև՝ զգայ չկորսնցուած։ Ուստի կը պաղատիմ որ շուտով իմ դէպս կատարես և իմ արհեստս

ինձմով ցոյց տալու անհամբերութիւնս զոհ ընես։»

Զինաստանի թագաւորը Պատուր իշխանուհւոյն նեբքինի պահակին հրամայեց որ Քամարալզաման իշխանն իր աղջկան քովը տանի։ Ա՛յս թոյլտուութիւնը ապէն առաջ՝ ըսաւ անոր որ ազատ է եթէ կարի իր խորհրդէն ետ կենալու։ Բայց իշխանն անոր մտիկ չըրաւ. նեբքինին եաւէն գնաց անվհերութեամբ, կամքս ևս, զրահնաւոր մը։

Նեբքինին առաջնորդեց Քամարալզաման իշխանն. և երբ երկար վերնասրահ մը հասան, որուն ծայրը կը գտնուէր իշխանուհւոյն սենեակն, իշխանն՝ տեսնելով որ մօտեցաւ այն սիրական էակին՝ որուն համար այնքան արտասուք թափեր և անդադար հառաչեր էր, սկսաւ արտասուել և նեբքինիէն առաջ անցաւ։

Նեբքինին ալ փութաց և դժուարաւ անոր միացաւ. «Ա՛յդ չափ շտապ ինչ կ՚երթաս, ըսաւ անոր թևէն կեցնելով։ Չես կրնար առանց լինելի ներս մտնել։ Կ՚երևի թէ մեռնելու մեծ փափաք ունիս, քանի որ այդպէս մահուան կը շտապես։ Բոլոր այն աստղագէտները՝ զոր տեսայ և տարի այն տեղ՝ ուր հարկաւ պիտի հանիս և դու, այնչափ եռանդ չէյայտնեցին։

— Բարեկամ, ըսաւ Քամարալզաման իշխանը նեբքինին դիտելով և անոր հետ քալելով, պատճառն այն է որ բոլոր այն աստղագէտներն իրենց պիտի թեան վրայ լինելի չափ վստահ չէին։ Հաւատալ էին որ դալուխնին պիտի կորսուին եթէ չյաջողին, և յաջողելու ալ անյոյս էին։ Ուստի զոլալու իրաւունք ունէին քանի իմ պատճառ անոնց մեռնելու սարսափելի չէի։ Ինչպես ես իմ երջանկութիւնս գտնելու տարակոյս չունիմ։» Ա՛յս խօսքերն ըսելու ատեն դրան առջևը հասան։ Նեբքինին բացաւ դուռն և իշխանը մեծ սրահ մը մտաւ, ուսկից իշխանուհւոյն սրահը կ՚երթուէր, որ լոկ վարագուրով պատուած էր։

Մտնելէն առաջ՝ Քամարալզաման իշխանը կանգ առաւ, և որպէս զի իշխանուհւոյն խոյանքն իր ձայնը չլսեն, ուշի կանգ խօսելով ըսաւ. «Քեզ համոզելու համար որ իմ ձեռնարկութիւնս մեծ անձնասպառնութիւն կայ, ոչ քանձին խորհուրդ, ոչ երիտասարդական եռանդ, երկու միջոց ունիմ և քու ընտրութեանդ կը թողում. որ միջոցը կ՚ուզես. կ՚ուզես որ քու առջևդ բժշկիմ իշխանուհին, թէ ոչ այս սեղէն, առանց առաջ երթալու և վինքը սպանելու։»

Նեբքինին չափազանց զարմացաւ որ իշխանը մեծ վստահութեամբ կը խօսէր։ Կատակը մէկդի թողուց և ճանրաբար խօսելով անոր ըսաւ. «Փոյթ չէ որ ասկից կամ անկից բժշկես զանի։ Ինչ միջոց որ գործածես, եթէ յաջողիս, անմահ անուն պիտի ստանաս ոչ միայն այս աշխարհիս մէջ այլ բոլոր բնակիչներուն աշխարհիս մէջ։

— Ուրեմն աւելի լաւ է որ իշխանուհին առանց տեսնելու բուժեմ, որպէս զի իմ ճարտարութեանս վկայես։ Որչափ որ անհամբեր եմ այսպիսի բարձրագիր իշխանուհի մը տեսնելու որ իմ կողակիցս պիտի ըլլայ՝ քու սիրոյդ համար կ՚ուզեմ այս հաճոյքէն պահ մը զրկուիլ։» Որովհետև իշխանն աստղագիտի մը պէտք եղած բաները ունէր, իր կաղամարն ու թուղթը հանեց, և սա առնակը գրեց Զինաստանի իշխանուհւոյն։

ՔԱՄԱՐԱԼԶԱՄԱՆԻ ՏՈՄՍԱԿՆ

ԱՌ ԶԻՆԱՍՏԱՆԻ ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

«Պաշտելի իշխանուհի, Քամարալզաման սիրահար իշխանը չուզեր խօսիլ քեզ այն անպատում աղէտից վրայ զոր կը քաշէ այն աղէտաբեր պիշերէն վեր երբ քու շնորհագեղ դէմքդ՝ ցմահ պահելու համար որոշած ազատութիւնը՝ կորնչցնել տուաւ։ Ա՛յսչափ միայն կ՚ըսէ որ այն առեն իր սիրտը քեզի տուաւ՝ երբ ի քուն էիր սիրանուշ, քուն անպատիժ՝ որ վինքը քու դեղեցիկ աչքերուդ վառվռուն վայրէն զրկեց, թէև շատ ճիգ թափեց որ տակալէ քեզ զանոնք բանալու։ Իր մտանիկն անգամ տալու քեզ իշխեց, իբր ապացոյց իր սիրոյն, և քուկդ առաւ փոխարէն, և զոր այս առնակովս քեզ կը զրկէ։ Եթէ կը հաճիս զայն ետ դարձնել իբր քու սիրոյդ գրաւական մը, սիրահարներուն մէջ ամե-

նէն երջանիկը պիտի սեպէ զինքն. եթէ ոչ քու մերժումդ չպիտի ար-
գիլէ զինքն այնքան աւելի մեծ համբերութեամբ ընդունելու մահն
որչափ որ քեզի համար ընդունած պիտի ըլլայ: Քու պատասխանիդ
կ'սպասէ նախասենեկիդ մէջ:»

Երբ Քամարալզամանի իշխանն այս տոմսակը դրեց՝ իշխանուհին
մատնին հետ ծրար մ'ըրաւ, առանց նէրքինին ցոյց տալու. յետոյ
անոր ձեռքը յանձնեց և ըսաւ.

«Բարեկամ, առ այս ծրարն և տիրուհւոյդ տար: Եթէ այս տոմ-
սակը կարդալէն և անոր մէջինը տեսնելէն ետև՝ չբժշկուի, արտօնու-
թիւն կտամ քեզ ամէն ուրիք հրատարակելու որ դանուած և դանուե-
լիք աստղագիտաց մէջ ամենէն անարժանն ու անհերետն եմ:»

Նէրքինին Զինաստանի իշխանուհւոյն սենեակը մնաւ և Քամարալ-
զաման իշխանին ուղղած ծրարը տարաւ՝ «Իշխանուհի, ըսաւ անոր,
ամենէն աւելի յանդուգն աստղահմայ մը նոր եկաւ և կը սպասէ թէ այս
տոմսակը կարդալէն և մէջի եղածը տեսնելէն անմիջապէս ետքը պիտի
բժշկուիս: Կը փափաքի որ տասիսօս խարերայ մը չըլլար:»

Պատուր իշխանուհին տոմսակն առաւ և բաւական անտարբերու-
թեամբ բացաւ. բայց այն ինչ իր մատնին տեսաւ որ զայն կարգալու
համբերութիւն հաղիւ ունեցաւ: Ամէն արտորնօք եղաւ, ըրած ձիզէն
զինքը կապող շղթան կտրեց, դռնակին վազեց ու բացաւ: Իշխանու-
հին ճանչցաւ իշխանը, նորոգեալ իշխանն պիշխանուհին: Խոհրն ղիրար
դիմաւորեցին, պօրավարն իրարու փարեցան և իրենց չափազանց ու-
րախութենէ խօսիլ չկարենալով երկար ժամանակ իրարու երես նայե-
ցան, զարմանալով թէ իրենց առաջին տեսութենէ ետքն ինչ անխմա-
նալի դիպուածով իրարու կը հանդիպէին: Գայեանին՝ որ իշխանուհւոյն
հետ եկեր էր, զանոնք խօսքը հրամցուց, և այն տեղ իշխանուհին
մատնին իշխանին յանձնեց: «Առ այս մատնին, ըսաւ անոր, եթէ այս
մատնին պահեմ, քու կեանքդ եմ պարձնեմ և քու կեանքդ ալ ցմահ քովս
պահելու միաք ունիմ, երիւքն ալ իրենց յարմար տեղը պատճ են:»

Սակայն Նէրքինին Զինաստանի թագաւորին պատուոյ վարդը պայծ
էր այս դէպքն անոր պատմելու համար. «Վեհափառ տէր, ըսաւ ա-
նոր, ամէն աստղահմայք, բժիշկք և ուրիշ անձինք որ մինչև յայսօր

պորձ ըրին իշխանուհին բուժելու, տպէտ մարդիկ էին: Այս վերջինն
ոչ պիտ թագաւոր մատեան, ոչ դիւանագիտութեան միջոցին, ոչ հռատաէտ բոյ-
սեր պորձածեց, այլ իշխանուհւոյն բժշկութիւն առաւ առանց անոր
երեսը նայելու:» Նէրքինին պատմեց թէ ինչ կերպով իշխանը վարուե-
ցաւ, և թագաւորն ալ, շատ զմայլելով իսկոյն իշխանուհւոյն սե-
նեակն եկաւ և զանի համբուրեց. նոյնպէս իշխանն ալ համբուրեց, ա-
նոր ձեռքն առաւ և զայն իշխանուհւոյն ձեռքին մէջ դնելով.

«Բարեբաղդ օտարական, ըսաւ անոր, հալ որ ես, իմ խոստումս կը
բռնեմ և իմ դուստրս քեզի կնութեան կտամ. սակայն դէմքիդ կը
տեսնեմ որ ինչ որ երևիլ կ'ուզես, չես բնաւ:»

Քամարալզաման իշխանը շնորհակալ եղաւ թագաւորին հլութեամբ
որպէս զի իր երանաստաղիտութիւնը լաւ ևս բացատրէ:

«Վեհափառ տէր, ըսաւ անոր, իմ անձիս համար ինչ որ ըսիք,
ճիշտ է, աստղահմայ չեմ, ինչպէս որ Ձեր վեհափառութիւնը քաջ
գտաւ. միայն հմայագործի հագուստը հագեր եմ, որպէս զի աշ-
խարհիս ամենէն հզօր միապետին հետ մտադրած խնամութեանս մէջ
աւելի դիւրաւ յաջողիմ: Իշխանազուն ծնած եմ, թագաւորի և թա-
գուհիի որդի եմ, անունս Քամարալզաման է, հայրս Շահզաման կը
կոչուի, և Քալէտանի ծանօթ կղզիներուն վրայ կ'իշխէ:»

Ցետոյ իր պատմութիւնը պատմեց և հասկցուց թէ իր սիրոյն
սիրտն արշաւի հրաշալի է և թէ այս սիրոյն ապացոյցն էր իրենց փո-
խանակած մատնիները:

Երբ Քամարալզաման իշխանը խօսքը լմնցուց. «Ա,յսպիսի կարգ
դուրս պատմութիւն մը, պոչից թագաւորը, պէտք է որ ապագայ սե-
րունդին անյայտ չմնայ: Պիտի գրել տամ զայն, և անոր բնագիրն ար-
քունի դիւանին մէջ պահել տալէն ետև, պիտի հրամայեմ, որպէս զի
պետութեանս ամէն երկիրներուն մէջ տեղեկանան:»

Ամուսնութեան արարողութիւնը նոյն օրը կատարուեցաւ և Զինաս-
տանի ամէն կողմերը հանդիսաներ ըրին: Մարզման բնաւ չվրդովե-
ցաւ. Զինաստանի թագաւորն իր արքունեաց մէջ անոր պաշտօն մը
շնորհեց, ուրիշ բարձրագոյն պաշտօններու հաւասարեցուց խոստանալով:

Քամարալզաման իշխանն ու Պատուր իշխանուհին իրենց բաղձանաց

հանձնելով Հարսանեաց անուշ թխվածները վայելելին, և Հինաստանի թագաւորն իր ուրախութիւնը յայտնելու համար շատ ամիսներ շարունակ հանդէսներ կատարել տուաւ:

Այս զուարճութեանց առեն՝ Քամարալզամանի իշխանը պիշիր մը տեսաւ. իրեն այնպէս կ'երեւէր թէ իր հայրը Շահզաման անհագին պատկած՝ հողին տանջելու մեռած է և իրեն կ'ըսէր.

«Ո՛վ որդին զոր ծնայ, կաթոգին սիրեցի, այն որդիս ես եղեր վրայ թողուց և իմ մահուանս պատճառ է: Քամարալզաման խորին հառաչ մը հանելով արթնցաւ, և պատուր իշխանուհին հարցուց թէ ինչը համար կը հառաչէ:

«Ւաւղ, դուխեց իշխանը, կարելի է որ այս միջոցիս խակ իմ հայրս կենդանի չէ:» Ցետոյ պատմեց անոր իր տեսիլքին ահագին իշխանուհին այս պատմութեան վրայ երկնած խորհուրդն իշխանին չհայտնելով նոյն օրն խակ յարմար առիթ դտաւ իր հօրը խօսելու՝ ի մասնաւորի, քանի որ իր ամուսնոյն հաճելի ըլլալու փափաք ունէր, և կրնար իր հայրը տեսնելու համար ունեցած տենչն իրեն հետ հետաւոր աշխարհ մը բնակելու երջանիկ թիւնը խանգարել: Ուստի իր հօրն ըսաւ անոր ձեռքը համբուրելով.

«Վեհափառ տէր, ձեզնէ շնորհ մ'ունիմ խնդրելու, և կը պաղատիմ որ զայն չմերժէք: Բայց որպէս զի չկարծէք թէ ամուսնոյս դրդմամբը կը խնդրեմ այս շնորհը, կանխաւ կ'ազահաւիմ ձեզի որ այս մասին տեղեկութիւն մը չտանի: Խնդիրս այս է որ հաճիք հրաման տալ որ երթամ անոր հետ իմ անիրա Շահզաման թագաւորը տեսնելու:»

— Աղջիկս, վրայ բերաւ թագաւորն, որչափ որ քեզնէ բաժնուիլն ինձ մեծցաւ մ'է, այդ դիտաւորութիւնդ կը հաւնիմ. գովելի է այն, թէև այդպիսի երկար ուղեւորութեան մը դժուարութիւնները շատ են: Գացէք, ընդդիմութիւն մը չունիմ, բայց սա պայմանաւ որ Շահզաման թագաւորին պատուոյ տալիք մ'ունիս չմոռնաս: Ցառաջ որ Շահզաման թագաւորն այս կարգադրութեան կը հաւանի, այնպէս որ հետզհետէ տեսնենք, նա իր որդին և հարսն, և ես իմ դուստրս և աիեսաս:»

Իշխանուհին Հինաստանի թագաւորն այս հրամանը Քամարալզամանի իշխանին յայտնեց, որով չափազանց ուրախացաւ. իշխանը շնորհակալ եղաւ սիրոյ այն նոր ապացոյցին համար:

Հինաստանի թագաւորը ճամբորդութեան պատրաստութիւններն ընելու հրամաններ տուաւ, և երբ ամէն բան կազմուած պատրաստ եղաւ, անոնց հետ ճամբայ ելաւ և քանի մ'օր անոնց ընկերացաւ: Վերջապէս երկու կողմն ալ արտասուք թափելով իրարմէ բաժնուեցան: Թագաւորը դրկեց պանդուխտը պատուով, և ազատելէն ետև իշխանին որ սիրտը միշտ մի և նոյն սիրով կապուած մնայ իր աղջիկան հետ, թագաւոր որ իրենց ուղեւորութիւնը շարունակեն և որոշուած տեղը իր մայրաքաղաքը գտնեն:

Քամարալզամանի իշխանն և պատուր իշխանուհին իրենց արտասուքը սրբելէն ետև՝ կը մնաձելին միայն թէ արդեօք ինչ ուրախութիւն պիտի պատճառ Շահզաման պիրենք տեսնելով և դրկելով, և թէ իրենք ալ որչափ պիտի կենան:

Գրեթէ ամիս մը կար որ ճամբայ ելեր էին՝ երբ մարզպետին մը հասան, որ ընդարձակ էր և տեղ տեղ մեծ ծառեր տնկուած ըլլալով ախորժելի շրջակայք մը կ'ընէին: Ուստի ետև այն օրը շատ տաք կ'ըլլար, Քամարալզամանի իշխանը յարմար գտաւ նոյն վայրն լքանելու, և իր միտքը պատուր իշխանուհւոյն յայտնեց. իշխանուհին փութաց իր հաճութիւնը տալու, որովհետև ինքն ալ տրամադիր էր նոյնն առաջարկելու: Գեղեցիկ վայր մ'էր, և երբ վրանը կանգնեցին, պատուր իշխանուհին որ ծառի մը շուքին տակ նստեր էր, ներս մնաւ՝ մինչդեռ Քամարալզամանի իշխանը ալեաք եղած պատուէրները կատար բնակութեան համար: Աւելի հանգիստ ընելու համար՝ իշխանուհին իր պօռէն հանել տուաւ և կրնկերը զայն իր քովը դրին. յետոյ, որովհետև յոգնած էր, քնացաւ և կրնկերը վրկէն տատանելին թողլոյին քաշուելու:

Երբ ամէն բան տեղաւորեցին, Քամարալզամանի իշխանը վրանն եկաւ, և տեսնելով որ իշխանուհին կը նիրհէր, ներս մնաւ և սպասեց ձայն հանելու նստաւ: Ինքն ալ քնանալու յոյսով իշխանուհւոյն պօռէն տուաւ, հետզհետէ անոր վրայի անպատմանդներն ու տաստակները պիտեց, և փոքրիկ քանակ մը տեսաւ, որ կնոջական վրայ կոկիկ կերպով մը կարուած և լորով մը պօռուած էր: Այս քանակին դպաւ և տեսաւ որ

անոր մէջ կարծր բան մը կար : Ինչ ըլլալն իմանալու հետաքրքրութեամբ քսակը բացաւ և մէջէն ականա մը հանեց , որուն վրայ իրեն անծանօթ նիշերներ և տառեր փորագրուած էին : «Ա յս ականան անշուշտ թանկագին բան մը պիտի ըլլայ , ըսաւ իր մտքին , ապա թէ ոչ իշխանուհիս այսքան խնամքով իր վրայ չէր կրեր , եթէ կորսնցնելու երկչոտը չունենար :»

Եւ արդարև հմայիկ մ՚էր այն և Զիհանտանի թագուհին իր աղջկան պարգևեր էր , զանի երջանիկ ընելու , ինչպէս որ կ՚ըսէր , քանի իր վրայ կրէր :

Հմայիկն առնլի լաւ քննելու համար՝ Քամարալզաման իշխանը վրանէն դուրս ելաւ , ուր մութ էր , և զայն լուսին դիտեց : Որովհետև ականին մէջ բաներ էր , թռչուն մ՚ինչաւ օդէն յանկարծ և զայն յափշտակեց :

Ձեր վհատութիւնն իմ՝ նկարագրածէս առնլի լաւ կրնայ երեւակայել Քամարալզամանի զարմանքն ու վիշտն՝ երբ թռչունն հմայիկն առաւ ձեռքին վրայէն : Ա յս պատահարին վրայ , որ ամենայատուկի էր և անպատեհ հետաքրքրութեան արդիւնք մ՚ըլլալով իշխանուհին թանկագին բանէ մը կը զրկէր , իշխանն անշարժ մնաց քանի մը վայրկեան :

Թռչունն՝ այս որսն ընելէն ետև՝ քիչ մը հեռու դեռնին վրայ դադարեր էր հմայիկը կտուցը բռնած : Քամարալզաման իշխանը յառաջ անցաւ յուսալով որ կը թողու կտուցէն , բայց մօտենալուն՝ թռչունը հմայիկը կլլեցնէն ետև՝ առնլի հեռուն թռաւ : Իշխանն՝ որ շատ ճարպիկ էր , քարով մը զայն սպաննելու ելաւ և հանէն վազեց : Որչափ թռչունը կը հեռանար՝ այնքան հանէն կը վազէր և աչքէ չէր կորսնցներ :

Բլրէն ձորակ , ձորակէ բլուրն՝ի վեր երթալով թռչունը բոլոր օրն հանէն վազցուց Քամարալզաման իշխանը , միշտ մարզադհանէն և Պատուր իշխանուհիէն հեռանալով . իսկ իրիկունը՝ թռչունը փոխանակ մայրաի մը մէջ դադարելու , ուր Քամարալզաման կրնար մոտիկն բռնել , գնաց բարձր ծառի մը վրայ կեցաւ և այն տեղ ապահով էր :

Իշխանն՝ այնչափ նեղութիւն պարապ տեղը կրելուն վրայ յուսա-

հատ՝ մտածեց թէ արդեօք իր օթևանը դառնայ թէ ոչ : «Բայց , ըսաւ ինքն իրեն , ուսկից գառնալ պէտք է , եթէ բոլորովին և յուսահատելէն վար իջնեմ արդեօք չեմ մոլորիր մութին մէջ և միթէ այժմ կը նեղէ այս արշաւանքն ընելու : Եւ եթէ գառնամ անդամ , պիտի համարձակիմ իշխանուհւոյն առջև ներկայիլ առանց հմայիկը բերելու :» Ա յս գառն խորհրդածութեամբ պաշարուած և յոգնած գադրած , անօթի ու ծարաւ ծառի մ՚ոտքն ընկաւ և քնացաւ :

Հետևեալ օրը՝ Քամարալզաման՝ թռչունը ծառէն չհեռացած տեսնելնուն , և երբ անոր թռիլը տեսաւ , նորէն բոլոր օրն հանէն վազել , թէև առջի օրուան պէս չյաջողեցաւ , և ճամբուն վրայ գտած խոտեր և պտուղներ կերաւ : Ցաւն օր շարունակ նոյն ուղևորութիւնն ըրաւ՝ թռչունը դիտելով հետևէն և դիշերները ծառի մը տոտրոտը պահակելով՝ մինչդեռ թռչունն անոր դպաշէը կը գադարեր :

Մեհասանեորդ օրը՝ թռչունը միշտ թռելով՝ և Քամարալզաման ամէնէն հետևելով անոր՝ մեծ քաղաք մը հասան : Երբ թռչունը պարիսպներուն մօտեցաւ , վեր սլացաւ և անկէ անդին թռչելով՝ բոլորովին Քամարալզամանին աչքէն անհետացաւ եղաւ . իշխանն զայն նորէն տեսնելու և Պատուր իշխանուհւոյն հմայիկը ձեռք ձգելու յոյսը բոլորովին կարեց :

Ա յսպէս Քամարալզաման ամէն կողմէն և անհնարինս վշտանալով՝ քաղաքը մտաւ , որ ծովեզերը շինուած էր , և ազոր նաւահանգիստ մը ունէր : Ինչ ընելիքը չգիտնալով՝ ծովեզերին երկայնքը քալեց և մինչև պարտիզի մը դուռը հասաւ , որ բաց էր , և ներս մտաւ : Պարտիզպանն՝ որ տարեւոր մարդ մ՚էր և կ՚աշխատէր , նոյն պահուն գլուխը վեր ցցաց . այն ինչ տեսաւ իշխանն՝ հասկցաւ թէ օտար մահմետական մ՚էր և հրաւիրեց որ շուտ մը ներս մտնէ ու դուռը դոցէ :

Քամարալզաման ծերունի պարտիզպանին պատուէրը կատարեց , և անոր մօտ գալով հարցուց թէ ի՞նչ պատճառաւ այս գլուխ-գլխին ընելու հրաւիրեց զինքը :

«Ա ման դի , պատասխանեց պարտիզպանը , կը տեսնեմ որ նորեկ օտարական մահմետական մ՚ես , և այս քաղքիս բնակիչներուն մեծ մասը կռապաշտ են . մեծ տեսլութիւն ունին մահմետականաց դէմ և մեր

սակաւաթիւ կրօնաւիրներուն հետ շատ պէտք վարուին : Անշուշտ այս բանս չես գիտեր , և հրաշք մը կը համարիս որ մինչև հոս հեռու ա-ռանց փորձանքի մը հասնիլնիս : Եւ արդարև՝ այս կատաշանները՝ մանաւանդ օտար մահմետականները կը վնասուին որպէս զի ծուղակը նետեն , երբ տեսնեն որ իրենց անզգամ թենէ : Կ'օրհնեմ զԱ-ստուած որ այս ապահով տեղը ձգեց քեզ :»

Քամարալզաման երախտագիտութեամբ շնորհակալ եղաւ այս բարե-միտ մարդուն , նախատինքէ պերճ պահելու մտօք վերհանձնօրէն իրեն ստուած ապաստանարանին համար : Աւելի խօսիլ կ'ուզէր՝ երբ պար-սիպանն անոր խօսքն ընդմիջեց :

«Մեկուկէ թող այդ քաղաքավարական ձևերն , բաւ անոր , անշուշտ յոգնած ես և կերակուրի պէտք ունիս , եկուր հանդստացիր :» Ուստի առաւ զանի իր անակը տարաւ , և երբ իշխանը՝ պարսիպպանին հիւ-րասիրութեամբ ստուած կերակուրը կերաւ , աղաչեց որ իրեն ըսէ այս Ճանապարհորդութեան պատճառը :

Քամարալզաման պարսիպպանը դոհ ըրաւ , և երբ իր պատմութիւնը լմնցուց առանց բան մը պահելու , ինքն ալ հարցուց անոր թէ իր հօրն երկիրները դառնալու համար ինչ Ճամբան բռնել պէտք է : «Վասն զի , յարեց նա , կարելի բան չէ երթալ Իշխանուհին վնասելէ , այս արատ-քոյ կարգի պիտի ածէին եւքն , ուր երթամ զանի գտնելու : Ա'վ պիտէ , կարելի է մեռած է :» Ա՛յս ախուր յիշատակին վրայ՝ իր արտասուքը չկրցաւ զսպել :

Պարսիպպանը Քամարալզաման իշխանին պատասխանեց թէ իր գտնուած քաղքէն մինչև մահմետական բնակիչ և իշխան ունեցող եր-կիրները տասնեակ մը Ճամբայ կայ . բայց ծովէն աւելի քիչ ժամանակի մէջ Եգիպտոս կզգին կ'երթամ , և թէ անկից ալ դիւրագոյն է Քալէ-տան նաւ կզգիները հասնիլ . թէ ամէն տարի վաճառական նաւ մ'Եգիպտոս կզգին կը նաւարկէ և թէ այս միջոցը կրնայ բռնել անկից Քալէտան գտնալու :

«Եթէ քանի մ'օր առաջ հասած ըլլայիր , յարեց նա , այս տարի Ճամբայ բնազ նաւով կրնայիր երթալ : Բայց մինչև գալ տարուան նա-ւուն Ճամբայ ելնելը կրնաս իմ տունս մնալ , եթէ կը հաճիս , սիրով կ'ընդունիմ քեզ այս տեղ :»

Քամարալզաման իշխանն ինքզինքն երջանիկ անպէս այս պատսպարա-նը գտնելով այսպիսի քաղքի մը մէջ , ուր մարդ չէր Ճանչեր և Ճանչե-լու ալ փոյթ չունէր : Մինչև վաճառականն նաւուն Ճամբայ ելնելն ե-պետս կզգին երթալու , յոգնեկները պարտէզը կ'աշխատէր , խակ պի-շերները , երբ իր սիրական Պատուր իշխանուհւոյն մնաձելու սրտէզք մը չունէր , հատաչներով , յաւերտ և արտասուաց մէջ կանցնէր : Զինքն այն տեղ թողուց , և դառնանք Պատուր իշխանուհւոյն զոր իր վրանին տակ քաջացած ձգեցինք :

Իշխանուհին բաւական ժամանակ քաջացաւ , և երբ արթնցաւ՝ Քա-մարալզաման իշխանն իր հետ չբերելուն զարմանքը տարաւ : Իր կինները հանչէց և հարցուց թէ արդեօք դիտէն թէ իշխանն ուր է : Ան մի-ջոցին որ կինները կը յայտնէին թէ անոր դուրս ելնելը տեսեր են , իշ-խանուհին իր գօտին տեսնելով՝ դիտեց որ սրտի քաջութիւն և իր հմայիկն առնուեր է : Անելիքիա էր որ Քամարալզաման առած է զայն և անշուշտ պիտի գնէ : Մինչև իրկուն մեծ անհամբերութեամբ անոր սպասեց , և չէր կրնար հասկնալ թէ ինչ պատճառաւ այնչափ կ'ուշանայ : Երբ տեսաւ որ առտուկ մութը կտխեց , և իշխանը չէր ե-լեւեր , անպատճառ արտմութեան մէջ ընկաւ : Հազար անգամ անիծեց հմայիկն և զայն շնորհողն , և եթէ ախտածութիւնը գինքը չբռնէր՝ նոյն իսկ իր մօրը դէմ ալ անէծք պիտի կարդար , քանի որ իրեն այսպիսի սղէսարեր պարգև մը տուեր էր : Ա՛յս պարագան՝ որ այնքան ցաւալի էր՝ որչափ որ կարող չէր իշխանուհին ըմբռնել թէ ինչ կողմէ հմայիկը պատճառ եղած է իշխանէն բաժնուելուն , գինքը առտուկ վշտացուց , բայց չշատացուց , ընդ հակառակն աւելորդ որոշեց մ'ըրաւ որ կա-նայի սեռէն չտառուկ չէ :

Մինակ իշխանուհին և կինները գիտէին որ Քամարալզաման անեղ-ծութեամբ եղեր է , վասն զի նոյն միջոցին իր սպասաւորները կը հանդչէին կամ իրենց վրանին տակ կը նստէին : Իշխանուհին վախնալով որ գինքը կը մատնեն , եթէ այս դէպքն իմանան , իր ցաւը մեղմեց և հրամայեց իր սպասուհիներուն որ իրենց խօսքով կամ ընթացքով չերեւցայ որ կաս-կած մը տան այս մասին : Ցետոյ իր զգեստը թողուց և Քամարալզա-

մանի մէկ հաղուստը հագաւ, որուն այնչափ կը նմանէր որ իր մարդիկը կարծեցին թէ իշխանն է՝ երբ հեռուեալ օրը զանի տեսան որ հրամայից առնէն բան ժողվել և Ճամբայ երթալ: Երբ առնն ինչ պատրաստ եղաւ, իր կիներէն մէկը պահապարակը նստեցուց, ինքը ձի հեծաւ և Ճամբայ ընկան:

Յանաքէն ու ծոլէն քանի մ՝առիս Ճամբորդութիւն բնելէն ետև՝ իշխանուհին, որ Քաղեսան կղզին երթալու համար Քամարալզաման անունն առեր էր, Եպենոս կղզոյն մայրաքաղքին մօտեցաւ, որուն իշխող Թագաւորն է Արմանոս: Իշխանուհւոյն քանի մը ապաստաորներն առաջուց յանաքն եկան որ իրենն բնակարան մը վնտռեն, և բոլոր քաղքին մէջ ձայն եղաւ որ եկող նաւուն մէջ Քամարալզաման իշխանը կայ, որ երկարատև ուղևորութենէ մը կը դառնայ և թէ օդին դէշութեան պատճառաւ կղզին մնտեցեր է. այս լսելը մինչև Թագաւորին ականջը հասաւ:

Արմանոս Թագաւորն՝ իր պալատականներով՝ իշխանուհին դիմաւորելոյ. նաւէն երկնալով որոշուած բնակարանն երթալու միջոցին անոր Հանդիպեցաւ: Թագաւորն՝ լսելը զրայի բարեկամ վերհասելի մ՝որդին՝ ընդունեց զանի, իր պալատը տարաւ բնակեցուց, բոլոր մարդերովն, և ինաւ յանձն չտալ իշխանուհւոյն Թախանձանաց վերջանալով Թողլոր երթայ առանձին բնակարան իջևանի: Ասկէ զատ ամէն երեւակայելի պատիւ անոր մատուցց, և երեք օր կարգե զուարճութեամբ զանի մեծարեց:

Երեք օրէն ետքն Արմանոս Թագաւորը տեսնելով որ իշխանուհին, զոր Քամարալզաման իշխանին տեղը դրեր էր, նաև մնալու և իր ուղևորութիւնը շարունակելու դիտաւորութեան վրայ կը խօսէր, և մինչդեռ ինքն այսպիսի վայելչակազմ բարեդէմ ուշիմ իշխանի մը վերայ կ՝զմայլէր, զանի առանձին կոչեց և ըսաւ.

«Իշխան, կը տեսնես որ ծերացեր եմ և երկար տարի ապրելու յոյս չունիմ, կը ցանկամ որ իմ Թագաւորութիւնս իրը ժառանգութիւն Թողլու՝ որդի մը չունիմ: Աստուած ինձի աղջիկ մը միայն տուաւ և այն չափ գեղեցիկ է զոր միտակ քեզի պէս բարեդէմ, ազնուատոհմ և կատարեալ իշխանի մը յարմար կը դատեմ: Փոխանակ հայրենիք դառնալ

մնալու, իմ Թագուհի զանի ընդունէ ձեռքես. կամաւ կը հրաժարիմ այսօր իսկ, մեզի հետ կեցիր: Կը փափաքիմ որ այսուհետև քիչ մը հանդարտամբերար տարիներ անցնելէն ետև, և մեծ պիտի բլլայ ուրախութիւնս եթէ քեզի պէս արժանաւորը յաջորդի մը Թողում իմ կառավարութեանս:»

Եպենոս կղզոյն Թագաւորին՝ իր աղջիկը Պատուր իշխանուհւոյն տալու առաջարկութիւնը, զոր չէր կրնար ընդունիլ զանի որ կին էր, նոյնպէս զանի Թագաւոր կարգելու փափաքն՝ անյուսալի շփոթութեան մէջ ձգեցին զանի: Եթէ յայտներ թէ ինքը Քամարալզաման իշխանը չէր՝ այլ իր կինն, անարժան գործ մ՝ըրած պիտի բլլար Թագաւորը խաբելով՝ քանի որ արդէն հաւատեր էր թէ ինքն էր այն իշխանն, և մինչև այն օրը նոյն անձին պէս վարուեր էր: Իսկ անոր ինդիրն ալ մերժելու կը վախնար, վասն զի Թագաւորը մեծ հեռանդ կը յայտներ այս ամուսնութիւնն ընելու, և Թերևս անոր բարեսիրութիւնն սխալելութեան և ատելութեան փոխուէր և նոյն իսկ իր կեանքը վտանգի մէջ դներ: Ասկէ զատ՝ չգիտէր նաև եթէ Քամարալզաման իշխանն իր հօրը Շահզաման Թագաւորին քովը պիտի դանէր:

Ա յս նկատումներն և իր ամուսնոյն Թագաւորութիւն մը շահելու իղձն, եթէ երբեք զանի դանէր, յորդորեցին իշխանուհին Արմանոս Թագաւորին առաջարկութիւնն ընդունելու: Ա յսպէս քանի մը վայրկեան անխօս անցնելէն ետև՝ իշխանուհին պատասխանեց, մինչդեռ ներսերը կը կարմրէին և Թագաւորը կարծեր Թէ առիկոտութենէ է:

«Վեհափառ տէր, չափազանց շնորհապարտ եմ որ իմ վրաս աղէկ կը մտածես և իս պատուելէն զատ՝ մեծ շնորհ մ՝ալ ընել կ՝ուզես, որուն արժանի չեմ, Թէև չեմ համարձակիր մերժելու: Բայց, վեհափառ տէր, յարեց նա, այսպիսի տմուտնական գաշն մը կ՝ընդունիմ միայն սա պայմանաւ որ ձեր խորհրդով ինձ օգնէք և ինչ որ ընեմ կանխաւ ձեր հաւանութիւնն ինձի տաք:»

Ա յս կերպով ամուսնութիւնն որոշուելէն ետև՝ արարողութիւնը մեծ օրուան մնաց, և Պատուր իշխանուհին այս առթիւ իր պաշտօնակալներուն յայտնեց անցած դարձածն, որպէս զի չզարմանան, և հաւատան որ իշխանուհին իր հաւանութիւնը տուեր էր: Նոյն խնդրոյն վրայ իր

կանանց ալ խօսեցաւ և ապացուցեց որ այս գաղտնիքը լաւ պահէն ։

Եպենոսի կղզւոյն Թագաւորն՝ այսպիսի փեսայ մը ձեռք ձգելուն վրայ ուրախ՝ հետևեալ օրն իր ժողովը գումարեց և խնայուց որ իր աղջիկը Քամարալզաման իշխանին կնութեան պիտի տայ, և իշխանին ալ իր հրամանատը քովը նստեր էր. ըսաւ նաև թէ իր թագն անոր կ'ընծայէր և կը պատուիրեր որ իրը իրենց թագաւորը ճանչնան ու անոր սէնաք եղած յարգանքը մատուցանեն ։ Այս ըսելով իր գահէն խոնջաւ, Պատուր իշխանուհին անոր վրայ նստեցուց, և ինքն անոր տեղը նստելով իշխանուհին ամենուն կողմէն հաւատարմութեան երդումն ընդունեց, նոյնպէս ներկայ գանուող ամենէն հզօր նախարարներուն յարգական նուէրները ։

Երբ ժողովը վերջացաւ՝ բոլոր քաղքին մէջնոր թագաւորին գահակալութիւնը հրատարակուեցաւ. քանի մը զուարճութիւններ ընելու սահմանուեցան և թագաւորութեան ամէն կողմը սուրհանդակներ ղրկեցին որպէս զի ու և նոյն արարողութիւնները կատարուին ։

Բոլոր իրկուն՝ պալատին մէջ հանդէս կար, և Հայաստէնըփուս (հոդուոց կեանք) իշխանուհին (այսպէս կը կոչուէր Եպենոս կղզւոյն իշխանուհին) Պատուր իշխանուհւոյն բերին, զոր ամէնքը մարդ կարծէին, թագաւորական ճշմարիտ շքեղութեամբ ։ Արարողութիւնները վերջանալէն ետև՝ զանազան առանձին թողուցին որ պահկին ։

Հետևեալ առտու՝ միևչդեռ Պատուր իշխանուհին՝ ընդհանուր ժողովի մը մէջ՝ բոլոր պալատականաց շնորհաւորութիւնները կ'ընդունէր իր ամուսնութեան և նոր գահակալութեան առթիւ, Արմանոս թագաւորն և թագուհին նոր հարսին սենեակը գային և հարց ու փորձ ըրին թէ ինչպէս անցուց գիշերը ։ Նոր հարսը՝ պատասխան տալու տեղ՝ աչքերը վար առաւ, և իր դէմքին վրայ սիրած արամութենէ հասկցան որ դժգոհ է ։

Հայաստէնըփուս իշխանուհին մխիթարելու համար, Արմանոս թագաւորն անոր ըսաւ. «Աղջիկս, պէտք չէ որ այս բանիս վրայ ցաւիս. Քամարալզաման իշխանն՝ երբ մեր երկիրն եկաւ՝ իր նպատակն էր շուտ մ'իր հօրը՝ Շահզաման թագաւորին երթալ։ Թէև իրաւամբ գոհ ըլ-

լալու միջոցով մը զանի վար դրինք, սակայն պէտք չէ մոռնալ որ յանկարծ իր հայրն և իր ընտանիքին մէկը թերևս երբեք տեսնելու յոյսէն զրկուի մնալուն կը վշտանայ ։ Ուստի պէտք է համբերել, որովհետև այս զգացումները քիչ մը խաղաղելէն ետև՝ պիտի փութայ իր ամուսնական պարտաւորութիւնները կատարելու ։

Պատուր իշխանուհին՝ Քամարալզաման անուամբ, Եպենոս կղզւոյն թագաւորը, բոլոր օրն անցուց ոչ միայն իր պալատականներուն հնարաւորական այցելութիւնները ընդունելու, այլ նաև իր պալատին կանանոր զօրաց հանդէսն և ուրիշ շատ մ'արքայական գործերը կատարելու՝ այնպիսի արժանապատուութեամբ և յաջողակութեամբ որ բոլոր հանդիսականներուն գոհունակութեան արժանի եղաւ ։

Գիշեր էր երբ Հայաստէնըփուս թագուհւոյն սենեակը մտաւ, և անոր ընդունելութեան անբնական կերպերէն հասկցաւ որ նախորդ գիշերը կը յիշէր ։ Անոր հետ երկար խօսակցութիւն մ'ունենալով՝ ջանաց վիշտը փարատելու, և իր բոլոր խելքը բանեցուց (որմէ շատ ունէր) հանդարտելու համար որ լիսպէս կը սիրէ գինքը ։ Վերջապէս ժամանակ տուաւ անոր պառկելու, և նոյն պահուն, սկսաւ իր աղօթքն ընել, բայց այս աղօթքն այնքան երկար տևեց որ Հայաստէնըփուս թագուհին քնացաւ ։ Ան առեն աղօթքը դադրեցուց և առանց ձայն հանելու անոր քովը պառկեցաւ, շատ յաւելով այսպիսի անյարմար դեր մը խաղալուն, նոյնպէս իր սիրական Քամարալզամանը կորսնցնելուն, որուն համար կը հատաչէր անդադար ։ Հետևեալ առտու՝ այդուն անկողնէն ելաւ, միևչդեռ Հայաստէնըփուս կը նոջէր, և արքունի զգեստով ժողովին գնաց ։

Արմանոս թագաւորը նոյն օրը նորէն եկաւ իր աղջիկը տեսնելու և զանի արտաքուստ մէջ դաւաւ ։ Ասոր վրայ հասկցաւ աղջկանը արտմութեան պատճառն ։ Ուստի Պատուր իշխանուհւոյն այս արհամարհանքն սրտմնելով՝ որոշեն բան շարժառիթն անկարող էր երևակայելու, «Աղջիկս, ըսաւ անոր, միևչև յառաջիկայ գիշեր համբերութեամբ սպասէ, ինչպէս որ ամուսնոյդ իմ գահիս վրայ նստեցուցի, նոյնպէս կարող եմ զանի վար առնուլ և վտնտել ամբաստան, եթէ քեզի պարտաւոր եղած գոհունակութիւնը չընծայէ ։ Ինչպէս բարկացած եմ

տեսնելով իր անարժան վարմունքն՝ որ չեմ դիտեր եթէ պիտի շատա-
նամ այս թեթեւ պատիժը տալով։ Զէ թէ քեզի, այլ իմ անձիս կ՚ընէ
այսպիսի ծանր նախատինք մը։»

Նոյն օրը Պատուր իշխանուհին շատ ուշ դնաց Հայաէ՚ընըփուսի սե-
նեակը։ Նախորդ պիշերուան պէս անոր հետ խօսեցաւ և իր աղօթքն
ընել ուզեց պատկելու միջոցին. բայց Հայաէ՚ընըփուս չթողուց և ստի-
պեց որ նստի։

«Ինչ, ըսաւ, կը տեսնեմ որ նորէն այս պիշեր առջի երկու պիշեր-
ներուն պէս հետս վարուիլ կ՚ուզես։ Ըսէ ինձի, կ՚աղաչեմ, ինչ կերը-
պով կրնայ անհաճոյ ըլլալ քեզ ինձի պէս իշխանուհի մը, որ ոչ միայն
քեզ կը սիրէ, այլ կը պաշտէ քեզ և ինքզինքն իրեն դասակից իշխա-
նուհիներէն աւելնէն երջանիկը կը համարի որ քեզի պէս սիրելիր է-
րիկ մ՚ունի։ Եթէ իմ տեղս ուրիշ մէկն ըլլար՝ և չէ թէ թշնամա-
նուէր, այլ եթէ այսպէս զգալի կերպով նախատուէր, վրէժ լուծելու
պիտի եղնէր, քեզ-քու սեւ բաղդիդ թողլով. բայց եթէ սիրածիս պէս
քեզ չսիրէի, դարձեալ բարի, և նոյն իսկ անտարբեր անձերու
դժբաղդութեան պէտք ողորմող ըլլալով՝ պիտի փութայի քեզ յայտնելու
որ իմ հայրս քու վարմունքիդ շատ սրտոտած է, և թէ վաղուան օրս
կ՚սպասէ իր արդար բարկութեան նշանները քեզ ղրկելու, եթէ
այսպէս շարունակես։ Կ՚աղաչեմ, նայէ որ յանահատութեան մէջ
չձգես իշխանուհի մ՚որ քեզ չկրնար չսիրել։»

Ա յս խօսքերն անբացատրելի շփոթութեան մէջ թողուցին Պատուր
իշխանուհին։ Կասկած չունէր Հայաէ՚ընըփուսի անկեղծութեան վը-
րայ, արդէն Աբդանոս թագաւորին պաղ ընթացքն իր նկատմամբ
տեսնելով՝ որչափ շատ գժգոհ ըլլալը հասկցեր էր։ Ա յս իր վարմուն-
քը մէկ կերպով միայն կրնար արդարացնել, այսինքն իր կին ըլլալը
Հայաէ՚ընըփուսի յայտնելով։ Բայց, թէև դուշակեց որ վերջապէս այս
միջոցը դործածելու պիտի ստիպուի, սակայն ա՚նստոյգ ըլլալով թէ
արդեօք իր ընելիք յայտարարութիւնն աղէկի՞ թէ դէշի պիտի առնու,
պինդը դողդղ հաներ։ Երբ վերջապէս լաւ մը նկատեց որ, եթէ Քա-
մարալզաման իշխանը կենդանի էր, հարկաւ Եպենոս կղզին պիտի դար
Ջահղաման թագաւորին երկիրն երթալու համար, թէ պէտք էր որ

անոր համար ինքզինքը պահպանէ և թէ առանց Հայաէ՚ընըփուս իշ-
խանուհւոյն բացուելու, չէր կրնար ապահով ապրիլ, վերջապէս որո-
շեց իր դաղտնիքը յայտնել։

Ա յն միջոցին որ Պատուր իշխանուհին չփոթած կերեր էր, և Հա-
յաէ՚ընըփուս անհամբեր՝ նորէն խօսելու կը պատրաստուէր, Պատուր
իշխանուհին զանի կեցուց և ըսաւ. «Սիրասուշ և չքնաղ իշխանուհիս,
մեղապարտ եմ, և ինքզինքս կը դատապարտեմ, բայց յուսամ որ ինձ
պիտի ներես և անբասիր ընթերլիք դաղտնիքս պիտի պահես։»

Նոյն միջոցին Պատուր իշխանուհին իր կուրծքը բացաւ. «Նայէ,
իշխանուհիս, յարեց նա, նայէ անդամ՚մը եթէ իշխանուհի մ՚որ քեզի
պէս կին մ՚է, քու ներողամտութեանդ արժանի չէ՞. վստահ եմ որ
արտովին պիտի ներես ինձ, եթէ իմ պատմութիւնս, մանաւանդ այն
վշտալի դէպքը պատմեմ քեզ որով այս դերը խաղալու ստիպուած
եմ։»

Երբ Պատուր իշխանուհին ինքզինքը լսելին յայտնեց Եպենոս
կղզւոյն իշխանուհիին, նորէն պաղատեց վինքն որ դաղտնիքը պահէ և
այնպէս ձեւացնէ թէ իրօք իր երիկն է, մինչև որ Քամարալզաման իշ-
խանը՝ ղոր քիչ առնէն սպասելու կը յուսար, վերադառնայ։

«Իշխանուհի, վրայ բերաւ Եպենոս կղզւոյն իշխանուհին, այլան-
դակ ձախադպիր մ՚ունեցեր ես որ այդպէս երջանիկ ամուսնութիւն և
աքանչելի փոխադարձ սէր մը վայելելէն ետև՝ կարճ տեւեր է այդ վի-
ճակդ։ Կը բաղձամ քեզի հետ որ Աստուած շուտով ձեզի միացնէ։
Սակայն վստահ եղիր որ ինձի ըսած դաղտնիքդ խղճահարութեամբ
պիտի պահեմ։ Մեծ հաճոյք պիտի զդամ գիտենալով որ ես միայն դի-
տեմ՝ինչ ըլլալդ, Եպենոսի մեծ թագաւորութեան մէջ, երբ սկսածիդ
պէս արժանի կերպով պիտի կատարեես։ Քեզնէ սէր կը խնդրեի և
այժմ կը յայտնեմ որ աշխարհիս ամենէն երջանիկ անձը պիտի ըլլամ ե-
թէ բարեկամութիւնդ ինձ չպակսաս։» Ա յս խօսքերն ետքն՝ երկու
իշխանուհիները կամովին համբուրեցին զիրար, և զանազան նշանների-
ով իրենց փոխադարձ բարեկամութիւնը յայտնելէն ետև՝ անկողին
մտան։

Քաղքին սովորութեան համեմատ՝ հարկ էր հրապարակաւ յայտնել ամէն մարդու սպառման նշանն։ Երկու իշխանուհիներն այս դժուարութեան առաջն առնելու ճարը դտան. Այսպէս՝ Հայաստէրփուս իշխանուհւոյն կիները հետևեալ առտու խաբուեցան և Արմանոս թագաւորն, իր կինը թագուհին և բոլոր պալատականները խարեցին։ Այս կերպով Պատուր իշխանուհին հանդարտութեամբ կառավարելու շարունակեց, ի գոհացնալու Թիւն թագաւորին և բոլոր հպատակաց։

Մինչդեռ Եպենոս կղզին պարծերն այս վիճակին մէջ էին, Պատուր իշխանուհւոյն, Հայաստէրփուս իշխանուհւոյն, Արմանոս թագաւորին և թագուհւոյն, նոյնպէս ամբողջ պալատականաց և ժողովրդոց մէջ, ինչպէս որ Ձեր վեհափառութիւնը կրնայ հասկնալ, շարունակեց Ճէհերազատ Շահրիարի խօսելով, քանի որ պալտիզպանին միշտ կառապաններուն քաղաքը կը գնային, այն պարտիզպանին տունն՝ ուր պատսպարան մը գտեր էր։

Օր մը՝ շատ կանուխ՝ երբ իշխանը պարտիզին մէջ աշխատելու կը պատրաստուէր՝ իր սովորութեանը համեմատ, բարեմիտ պարտիզպանը պզտիկ ըսելով. «Այսօր կառապանները մեծ տօն ունին, և որովհետև ժողովներու և հանդէսներու մէջ անցնելու համար չեն աշխատիր, չեն ուզեր նաև որ մահմէտականները աշխատին. իսկ մահմէտականները ալ անոնց հետ բարեկամութեամբ վարուելու համար, կ'ախորժին անոնց հանդէսներուն ներկայ գտնուիլ, որոնք տեսնուելու արժանի են։ Ուստի այսօր պէտք է որ հանդիստ ըլես։ Քեզ այս տեղ կը թողում, և որովհետև Եպենոս կղզին ճամբորդութիւն ընող վաճառականաց նաւը մօտ օրերս ճամբայ պիտի ելնէ, երեմտ պիտի քանի մը բան ծրարներ տեսնելու որ տեղեկանամ թէ ո՛ր օրը պիտի նաւարկէ նաւն, և նոյն միջոցին, քու ճամբորդութիւնդ պիտի պատրաստեմ։» Պարտիզպանն իր ամենէն դեղցիկ զգեստը հագաւ և դուրս ելաւ։

Երբ Քամարալզաման իշխանը մինակ մնաց, բնաւ քաղքին մէջ կատարուող հասարակաց խրախճանութեան մասնակից չեղաւ. այս անոր ծանրութիւնն աւելի բուռն կերպով յիշեցուց իրեն իր սիրական իշխանուհին։ Լուիկ մնջիկ կը հառաչէր և կ'ողբար պարտիզին մէջ պտըտելով, երբ երկու թռչուններու ծառի մը վրայ հանած ձայնէն ստիպուեցաւ

դլուխը վերցնելու և լսելու։

Քամարալզաման զարմանօք տեսաւ որ այս երկու թռչունները կռուելով իրարու հետ կը ծեծկուէին, և քիչ ատենէն անոնցմէ մէկը ծանր ոտքն ընկաւ մեռած։ Յաղթող թռչունը նորէն թռաւ և աներևոյթ եղաւ։

Նոյն պահուն՝ երկու ուրիշ մեծագոյն թռչուններ՝ որ հեռուէն այս կռիւը տեսեր էին, ուրիշ կողմէ մ'ելան, մին՝ մեռած թռչունին դլխին քով, միւսն՝ ոտքին քով կեցաւ, քիչ մ'ատեն անոր նայեցան դլուխնին շարժելով որմէ իրենց ցաւը կը յայտնէին, և իրենց ճիրաններով փոս մը փորեցին և զայն թաղեցին։

Երբ երկու թռչուններն իրենց փորած փոսը հողով լեցուցին՝ թռան, և քիչ մ'եաքը դարձան, իրենց կտուցով բռնած բերելով մին թևէն՝ միւսն ոտքէն, սպանիչ թռչունն՝ որ ահռելի աղաղակներ և սոսկալի ճիչեր կ'ընէր խոյս տալու համար։ Իր կատաղութեան պոհ ըրած թռչունին դերեզմանին վրայ դրին զայն, և այն տեղ՝ իր սպանութեան վրէժն առնելու համար կտուցի հարուածներով զանի սպանեցին։ Վերջապէս անոր փորը բացին, մէջէն աղիքը հանեցին, և մարմինը նոյն տեղը թողլով թռան դացին։

Քամարալզաման հիացած մնաց այս զարմանալի տեսարանին վրայ։ Մօտեցաւ այս տեսարանս անցնող ծառին, և դրած աղիքներուն վրայ աչք մը դնելով կարմիր բան մը տեսաւ վրէժխնդիր թռչունները պատած աղիքներուն մէջ։ Ստամոքսը դեռևէն առաւ, և տեսած կարմիր բանը քաշելով տեսաւ որ իր սիրական Պատուր իշխանուհւոյն հմայելին էր որ իրեն այնքան ցաւ, վիշտ և տառապանք պատճառեր էր, թռչունը զայն գողնալէն վեր։

«Անգութ, գոչեց նա թռչունը նայելով, չարիք ընելու կ'ախորժէիր, և ինձ ըրածիդ վրայ այնչափ պէտք չէ որ գանգատիմ։ Բայց ինձ որչափ դէշ թիւն որ ըրիր, նոյնչափ բարիք կը մաղթեմ անոնց որ իմ վրէժս առին իրենց նմանին մեռու վրէժ առնելով։»

Անկարելի է Քամարալզաման իշխանին անհնարին ուրախութիւնը բացատրել։ «Սիրական իշխանուհիս, գոչեց նորէն, այս բարեբաղդ ժամն, որ քու անկեղծ հմայելիդ ինձ կը դարձնէ, անշուշտ բարեգու-

շակ նշան մ՚է, որով կը դուշակեմ թէ քեզ ալիսի պահեմ, և կարե-
լի է իմ ակնկալութենէս աւելի շուտ: Օրհնեմ ըլլայ Աստուած որ
ինձ այս երջանկութիւնը կը յաւերժէ և իմ ամենէն մեծ փափաքս կա-
տարելու յոյս կտայ ինձ:»

Ա յս խօսքերն ասպատելով՝ Քամարալզաման հմայեկը պահպա-
փաթթեց և ուշի ուշով թևէն կապեց: Իր չափազանց տրտմութեան
մէջ՝ դրեթէ ամէն գիշեր կը տանջուէր և չէր քնանար: Ա յս բարե-
բաղդ դիպուածէն հոգը հանգստացնելէ՝ հետևեալ օրն՝ երբ լուս-
յաւ և իր աշխատութեան ղեկտը հագաւ, դնաց պարտիզպանին
հրամանն առնելու. պարտիզպանը խնդրեց որ անպտուղ ծառ մը կարէ
և անոր արմատները խլէ:

Քամարալզաման տապար մ՚առաւ և գործի սկսաւ: Արմատին մէկ
ճիւղը կարելու առնն՝ կարծր բանի մը հարուած մը տուաւ և մեծ աղ-
մուկ մը հանեց: Հողը մէկդի ընելով՝ պղնձէ մեծ տախտակ մը գտաւ,
որուն տակ տասն աստիճանով սանդուղ մը տեսաւ: Շուտ մը վար ի-
ջաւ, և երբ սանդղին ոտքը գտաւ, նկատ մը տեսաւ որ երկու երեք
քառակուսի կանդուն տարածութիւն ունէր, ուր պղնձէ յիսուն տան
կար չորս դին շարուած, և խուփերով: Իրարմէ հեռու զանոնք բացաւ
և ամենն ալ ոսկի փոշիով լեցուն գտաւ: Նկղէն դուրս ելաւ, յետոյ
ծայր ուրախ այսպիսի ձոխ գանձ մը գտնելուն, տախտակը սանդղին
վրայ դրաւ և ծառն արմատէն խլեց լմնցուց, պարտիզպանին վերա-
դարձին սպասելով:

Պարտիզպանը հետևեալ օրն իմացեր էր որ Նպինոս կղզին ամէն
տարի երեւելութիւն ընող նաւը քիչ օրէն ձամբայ պիտի ելնէր, բայց
չէրցեր էր որոշ օրը հասկնալ, և գործը միւս օրուան ձգուեր էր: Դու-
բէն շուկայ իջեր էր և՝ ի գարձին երեսէն յայտնի էր որ Քամարալզա-
մանի ուրախութիւն ընող լուր մ՚ունի հաղորդելու:

«Որդեակ իմ, ըսաւ անոր, (վասն զի ալևոր ըլլալուն՝ այսպէս զա-
նի կոչելու արտօնութիւն ունէր) ուրախացիր և պատրաստուէ երեք օ-
րէն ճամբայ ելնելու. նաւն այն օրը պիտի առագաստ բանայ իր ուղե-
ւորութիւնն ընելու և արդէն նաւապետին հետ խօսեր որոշեր եմ քու
ուղևորութեանդ խնդիրը:

— Ա յս իմ պտուած վիճակիս մէջ, վրայ բերաւ Քամարալզաման,
այդ լուրէն աւելի ախորժելի լուր մը չէիր կրնար հաղորդել ինձ: Ա-
սոր փոխարէն ես ալ քեզի լուր մը տալու եմ որ անշուշտ քեզ ուրա-
խութիւն պիտի պատճառէ: Ինձի հետ գալու ծանրութիւնն առ, և
պիտի տեսնես թէ Աստուած ինձ մեծ հարստութիւն կը պարգևէ
քեզ:»

Քամարալզաման ծառը խլած կողմը տարաւ պարտիզպանին և նկղին
մէջ իջեցուց. ամէնքներուն մէջ պտուած ոսկին անոր ցոյց տալէն ե-
տև՝ ըսաւ թէ չափազանց ուրախ է որ Աստուած վերջապէս կը վար-
ձատրէ աւազիրութիւնն և այնքան տարիէ վեր իրեն համար քաշած
նեղութիւնները:

«Ի՞նչ ըսել կ՚ուզես, վրայ բերաւ պարտիզպանը. միթէ կարծես թէ
այս գանձն ես պիտի տեսկանեմ: Բոլորն ալ քուկդ է և ես անոր
վրայ իրաւունք մը չունիմ: Զորս տարիէ վեր որ հայրս մեռած է,
շարունակ այս պարտիզին հողերը շարժեցի և ոչ ինչ գտայ. ասկից կը
հետևի որ քուկդ է, որովհետև Աստուած քեզ տահմաներ է գայն
գտնելու. քեզի կը պատկանի այն քան ինձի, ես որ իմ գերեզմանիս
ծայրն եմ և բանէ մը պէտք չունիմ: Աստուած ժամանակին քեզ կը
պարգևէ գայն, քանի որ քու տէրութեան երկիրները դառնալու վրայ
ես և ըստ արժանւոյն պիտի գործածես այս գանձը:»

Քամարալզաման իշխանը վհատութեան կողմէ պարտիզպանէն
վար չմնայ և այս մասին մեծ վէճ մ՚ունենայան: Վերջապէս ստեղ որ
այս գանձէն բան մը չպիտի առնու թէ որ կէսը իրը չընդունի: Պար-
տիզպանը համձնայ և իւրաքանչիւրը քան և հինգ ատա:

Ա յս բաժանումն ընելէն ետև՝ պարտիզպանը Քամարալզաման իշ-
խանին ըսաւ.

«Որդեակ, այս բաւական չէ, պէտք է այս հարստութիւնը նաւը
փոխադրել և դաղտուկ պահել, այնպէս որ ոչոք իմանայ, թէ ոչ զա-
նանք կորսնցնելու վտանգին մէջ կ՚իյնաս: Նպինոս կղզին ձիթապտուղ
չկայ և ասկից որչափ որ տանին այն տեղ կը ծախուի: Ինչպէս որ դի-
տես, պարտիզիս մէջ բաւական մեծ պլատ մ՚ունիմ, պէտք է որ յի-
սուն տապատ առնուս կէսով ոսկին լեցնես և անոր վրայ ձիթապտուղ

տեղաւորես , և յետոյ զանոնք նաւը կը փոխադրենք երբ ձմրայ եր-
նես :»

Քամարալըզաման այս ընտիր խորհուրդին հետևեցաւ և բոլոր օրը յիսուն սապատ պատրաստելու զբաղեցաւ , և որովհետև կը վախնար որ իր թևը կապած հմայեկը չիմայ , զգուշութեամբ այն սապատները մկունն մէջ դրաւ և նշան մ'ըրաւ որ ճանչէ : Երբ սապատները պատրաստուեցան , պիշերը մօտենալուն՝ պարտիզպանին հետ քաշուեցաւ , և խօսակցելով պատմեց անոր երկու թռչուններուն դէպքն , ո-
րով Պատուր իշխանուհւոյն հմայեկը ձեռք ձգեր էր . ասոր վրայ պարտիզպանը շատ զարմացաւ և ուրախ եղաւ :

Պարտիզպանը դէշ դիշեր մ'անցուց , կամ իր ծերութեան կամ նոյն օրը շատ յոգնելուն պատճառաւ . հետևեալ օրն իր անհանգստութիւնն աւելի սաստկացաւ , և երրորդ առտու բոլորովին ծանրացաւ :

Երբ լուսցաւ՝ նաւապետն անձամբ եկաւ շատ մը նաւաստիներով և պարտիզին դուռը զարկաւ : Հարցուցին ծերունիին թէ ո՞վ է ճամբոր-
դը :

«Ես ինքս եմ , պատասխանեց իշխանն . ինձի համար պարտիզպանը նաւդ բռնեց , բայց հիւանդ ըլլալուն չկրնար ձեզ տեսնել և խօսիլ . քայց ներս մտիք , խնդրեմ , և սա ձիթապտղի ամանները լեցուրուս հետ տարէք . ես ալ ձեր հետևէն կը հասնիմ պարտիզպանին մնաս բա-
րև ըսելէն ետև :»

Նաւաստիներն ամաններն ու լեցնելն աւելի տարին Քամարալըզամա-
նին ըսելով . «Ճուտ մը պաղ մի գտնդաղիր , հովը յաջողէ և քեզի ի՛նպաստ առատասոնները բանալու :

Երբ նաւապետն ու նաւաստիները մեկնեցան , Քամարալըզաման պար-
տիզպանին խուցը մտաւ , անոր հրաժարական բարևը տալու և ըրած բարեաց համար շնորհակալ ըլլալու . բայց զանի հոգեվարք դաւ , և մահուան ժամուն՝ ըստ սովորութեան մահմետականաց՝ հապա թէ ա-
նոր կրօնական խոստովանութիւնն ընել տալու ժամանակ ունեցաւ , որ հոգին փչեց :

Քամարալըզաման իշխանը նաւ մտնելու ատիպաւած ըլլալով կրցածին չափ շտապով ըրաւ մեռելին վերջին պարտաւորութիւնները հատուցա-

նելու : Անոր մարմինը լուաց , թաղեց՝ պարտիզին մէջ փոս մը փորելէն ետև) վասն պի , մահմետականներն այս կոստալաւ քաղքին մէջ ազա-
տութիւն չունենալով՝ հասարակաց գերեզմանատունէ զուրկ էին) , ինքն անձամբ հողին մէջ դրաւ զանի և երեկոյեան դէմ դարձը լցնցոյց : Առանց ժամանակ կորուսելու ճամբայ ելաւ . նոյն իսկ պարտիզին բանա-
լին հետևն առաւ , որպէս զի աւելի շուտով հասնի , և մինչը դրաւ զայն կալուածատէրին յանձնել , եթէ դանէ , կամ հաւատարիմ անձի մը տայ , վկաներու առջև , որպէս զի անոր ձեռքը յանձնէ : Բայց , նաւահանգիստը հասնելով՝ իմացաւ որ նաւը խարիսին արդէն քաշեր և անհետացեր եղեր էր : Նոյնպէս ըսին որ երեք ժամ առաջ մեկներ էր և ճամբայ եղեր է :

Քամարալըզաման իշխանն՝ ինչպէս դիւրին է դատել , յետին ծայր տրտմութեան մէջ ընկաւ տեսնելով որ ստիպուեցաւ միայն երկիր մը , ուր բնաւ ծանօթութիւն մ'ունեցած չէր և չէր ուզեր ունենալ , և տարի մ'ալ սպասել , որ կորուսած աւիթը ձեռք ձգէ : Զինքն ամենէն աւելի վշտացնողը Պատուր իշխանուհւոյն հմայեկէն զրկուիլն էր և կարծեր թէ ձեռքէն եղած է : Սակայն ուրիշ ճար չգտաւ ալ եղած պարտէզը դառնալ . ուստի զանի կալուածատէրէն վարձու բռնեց , մշակելու սկսաւ , իր դժբաղդութիւնն ու սև բաղդն ողբալով : Որով-
հետև պարտէզն առանձին մշակելու խնջոյքները չէր կրնար առնել , ամ-
սականով մնոյ մը բռնեց , և որպէս զի՝ անժառանգ պարտիզպանին մահուամբը՝ պանձէն միւս կէսը չկորնչի , ոսկեփոշին ուրիշ յիսուն հատ առնի մէջ դրաւ , վրան ձիթապտուղ տեղաւորեց՝ լեռն հետ ժամանակին նաւը տանելու համար :

Քամարալըզաման իշխանը նեղութեամբ , ցաւով և անհամբերու-
թեամբ ուրիշ տարի մ'ալ սպասելու տանեը , նաւը յաջող հովով մ'իր ճամբան կը շարունակէր , և յաջողութեամբ Եպենոս կղզին հասաւ :

Որովհետև պալատը ծովեզրն էր , նոր թագաւորը , կամ Պատուր իշխանուհին , որ նաւուն՝ իր գրոշակները պարզած նաւահանգիստ մտնելը տեսաւ , հարցուց թէ ի՞նչ նաւ էր . ըսին անոր թէ ամէն տա-
րի Կապաշակից կղզիէն կգար մի և նոյն եղանակին , և թէ սովորաբար ապրանքով բեռնաւորուած էր :

Իշխանուհին՝ Քամարալզաման իշխանին յիշատակով միշտ զբաղած, այն իր փառաւոր վիճակին մէջ, մտածեց որ կարելի է Քամարալզաման նոյն նաւը մնած է և ուզեց զանի դիմաւորել, չէ թէ ինքզինքը ճանչցունելու (վասն զի կը զուշակէր որ զինքը չպիտի ճանչէ), այլ զանի դիտելու և սիրաց եղած միջոցները ձեռք առնելու որ փոխադարձ կերպով իրարու ծանօթանան: Ինքն անձամբ նաւուն ապրանքը գնելու և իրեն ամենէն յարմար և թանկագինները ընտրելու համար, հրամայեց որ իրեն ձի մը բերին: Նաւահանգիստը գնաց, իր մօտ ծառայող շատ մը պաշտօնակալներով, և նոյն միջոցին որ նաւապետը նաւէն կ'երթեր, հասաւ: Ուսաի զանի կանչել տուաւ և հարցուց թէ ինչպէս կրնայ, երբ մկնած է, ինչ յաջող կամ ձախորդ արկածի հանդիպած է, եթէ ամենաւսկան օտարական մը չկայ իր ուղևորներուն մէջ, և թէ իր նաւին բեռն ինչ է:

Նաւապետն այս հարցումներուն պատասխան տուաւ, իսկ Ճամբորդներուն գալով՝ հաւատաց որ առեղ երթևեկող վաճառականներ են, թէ զանազան երկիրներէ Ճոխ կերպասներ կը բերէ, նոյնպէս անդոյն և գունաւոր կտաւներ, անդամանդներ, մուշկ, յամպար, քափուր, հաներ, գեղորայք, ձիթապտուղ և ուրիշ տեսակ տեսակ բաներ:

Պատուր իշխանուհին խանդագին կը սիրէր ձիթապտուղն: Երբ առաջ անունը լսեց: «Բոլոր ձիթապտուղներէ ես կ'առնում, ըսաւ նաւապետին. իսկոյն նաւէն դուրս հանել տուր որ սակարկութիւն ընենք: Նոյ միւս ապրանքներուն գալով՝ թոյլ տուր վաճառականներուն որ իրենց ունեցած աղուր բաներն ուրիշին տոյժ չտուած ինձի ցուցնեն:

— Վեհափառ տէր, վրայ բերաւ նաւապետն՝ որ կարծեր թէ դիմացինն Եպիտոս կղզւոյն թագաւորն է, ինչպէս որ իր հագած հագուստէն իրօք այնպէս կ'երեւէր, յիսուն հատ մեծկակ ամաններ կան, քսոյ այս ապրանքն ես միայն վաճառականի մ'են: Իրեն թոյլ տուի երթալու օրս և շատ ապասիցի. բայց տեսնելով որ կ'ուշանար, և այս յապաղումէն յոյնղ հովը կորուսելու կը վախնայի, համբերութիւնս հատաւ և Ճամբայ ելայ: — Փոյթ չէ, դու զանազը ցամաքը հանել տուր, ըսաւ իշխանուհին, դարձեալ կրնաս ինձի հետ սակարկել և ծախել:»

Նաւապետն իր նաւակը դրկեց որ նաւէն ամանները առնելով դարձաւ ցամաքն: Իշխանուհին հարցուց թէ Եպիտոս կղզւոյն մէջ յիսուն ամաններուն քանի՞ կրնար արժել:

«Վեհափառ տէր, պատասխանեց նաւապետը, վաճառականը շատ աղքատ է. Ձեր վեհափառութիւնը մեծ շնորհ մ'ըրած պիտի ըլլայ անոր եթէ բոլորին համար հազար արծաթի դահեկան տայ:

— Որպէս զի լիովին գոհ ըլլայ, վրայ բերաւ իշխանուհին, և քանի որ այնչափ աղքատ է կ'ըսես, հազար ոսկի պիտի վճարեմ և ձեռքովը անոր յանձնելու ջանադիր կ'ըլլաս:» Ուսաի հրամայեց որ այն դումարը հատուցանեն, և իր ներկայութեանը՝ բոլոր ամանները կրել տալէն ետև՝ պալատը դարձաւ:

Որովհետև գիշերը կը մօտենար, Պատուր իշխանուհին նախ ներքին պալատը քաշուեցաւ, Հայաստէնըզիտաս իշխանուհւոյն սենեակը գնաց և յիսուն աման ձիթապտուղը հոն բերել տուաւ: Անոնցմէ մէկը բացաւ որպէս զի ինքը ձեռքով ճաշակել տայ անկից և պնակի մը մէջ պարպեց: Մեծ եղաւ իր զարմանքն երբ ձիթապտղին հետ խառնուած ոսկիի փոշի տեսաւ:

«Այս ինչ դիպուած է, ինչ հրաշք է» գոչեց նա: Նոյնպէս միւս ամաններն ալ՝ Հայաստէնըզիտաս կանոյց ձեռքը պարպել տուաւ, և իր հիացումը կ'աւելնար քանի կը տեսնէր որ ամէն մէկ աման ոսկիով ու ձիթապտղով խառն է: Բայց երբ կարդն եկաւ այն ամանին, որուն մէջ Քամարալզաման հմայեկը դրեր էր, և զայն տեսաւ, այնչափ մեծ եղաւ իր զարմանքն որ մարեցաւ ընկաւ:

Հայաստէնըզիտաս իշխանուհին և իր կիները Պատուր իշխանուհիին օդնեցին և անոր խելքը գլուխը բերին երեսին անդադար ջուր սրսկելով: Երբ ինքզինքին եկաւ, հմայեկն առաւ և կրկին պահեց: Բայց ոչովհետև իշխանուհւոյն կանոյց առջևը չէր կրնար բան մ'ըսել, քանի որ չէին պիտեր որ ծպտեր է, և պահելու ժամանակն ալ հասեր էր, զանազ Ճամբեց. «Իշխանուհի, ըսաւ Հայաստէնըզիտասի երբ առանձին մնացին, իմ արդէն պատմած պատմութենէս հասկցար անշուշտ որ սա հմայեկը տեսնելուս մարեցայ: Իմն է այն, որ մեզ, Քամարալզաման իշխանն ու իս իրարմէ բաժնեց: Ինչպէս որ մեր վշտալի բաժան-

մանն պատճառ եղաւ, նոյնպէս, յուսամ, մեր մեծապատիւ միութեան ապահովութեան պատճառ եղաւ:»

Հետեւեալ օրը լուսնալուն՝ Պատուր իշխանուհին նաւապետը կանչել տուաւ: Երբ եկաւ, «Ինձի բացատրէ, ըսաւ նա, թէ ինչ էր այն վտանգաւոր՝ որուն առած ձիերապատուհերդ դնելդ երեկ: Կարծեմ թէ ըսիր որ կապաշտպանդ կղզին թաղուցիր ժամանակին նաւը չհասնելուն. կրնա՞ս ըսել ինձի թէ հո՞ն ինչ կ'ընէր:

— Վեհափառ տէր, պատասխանեց նաւապետը, կրնամ հաստատել ձեզ այս մասին իբր ականատես վկայ: Իր ուղեւորութեան վրայ խիստ տարօրէն պարտիզպանի մը հետ խօսք բռներ էի, որ ինդրեց երթալ գինքը պարտէզը դանել. այն տեղ այն օտարականն անոր իշխանութեան տակ կ'աշխատէր, և ասոր վրայ ըսի Ձեր վեհափառութեան որ աղքատ է: Ես ինքս պարտէզը գացի որպէս զի մեր չուն անոր խմցնեմ և միասին ճաշեցնենք:

— Եթէ այդ այդպէս է, վրայ բերաւ Պատուր իշխանուհին, պէտք է որ այսօր իսկ ճամբայ ելնես, այն կապաշտիկ քաղաքն երթան և ինձի բերես այն պարտիզպան տղան, որ իմ պարտասանս է. տպա թէ ոչ, ահա խնդ կտամ քեզ որ ոչ միայն քու և նաւը մնասդ վաճառականներուն ապրանքը պիտի դրաւեմ, այլև քու և անոնց կեանքը պիտի վերցնեմ եթէ իմ հրամանս չկատարես: Այժմէն պիտի երթան՝ իմ պատուէրիս համեմատ մերթեցնողդ կինքել, և այն տանն միայն պիտի բացուին երբ ինդրած մարդս ինձի բերես: Ա՛յս էր ահա քեզի ըսելիքս. դնա, և իմ հրամանս կատարէ:»

Նաւապետն այս հրամանին պատասխան մը չտուաւ, թէև անոր գործադրութեանը թէ իր և թէ վաճառականաց գործերը պիտի վնասուէին: Նոյն պատուէրն անոնց խնայուց և անոնք ալ փութացին իր ուղեւորութեան համար պէտք եղած պաշարն ու ջուրն անվնաս պատրաստել և նաւը առնել: Ա՛յս պատրաստութիւնն այնչափ շուտով կատարուցին որ նաւապետը նոյն օրն իսկ ճամբայ ելաւ:

Նաւը չայթող ճամբորդութիւն մ'ունեցաւ, և նաւապետն այնչափ ճարպիկութեամբ վարեց նաւն որ Կապաշտիկ քաղաքը հասաւ: Երբ պէտք եղածին չափ մօտեցաւ, երկաթ ձգեց, այլ երբ նաւն այնպէս

կը կենար շարժուն՝ իր նաւակը մոտաւ և ցամաքն ելաւ՝ Քամարալզամանի պարտիզին քիչ մը հեռու, վեց անվներ նաւ ասպիներով:

Նոյն միջոցին Քամարալզաման չէր տեղը. Զինապետնի իշխանուհիէն այնչափ աճեն հեռու մնալը գինքն ըստ սովորականին կը նեղէր, և կ'անիծէր այն վայրկեանն ու՝ հետզհետէ շարժեալ՝ իշխանուհիին դօսիին դպաւ, թողլմէ գինեց: Ա՛յսպէս քիչ ժամերը կ'անցնէին՝ երբ լսեց որ պարտիզին դուռը կը զարնեն: Ա՛ես մը հապճեպ գնաց բանալու շուտով և այն ինչ բացաւ, որ աւանդ բան մ'լսելու, նաւապետն ու նաւասպիները գինքը բռնեցին, բռնի նաւակը տարին և դէպ ի նաւակը քշեցին, նաև որ ելան՝ խնդան առաջապահները բացին և իրենց ճամբան շարունակեցին:

Քամարալզաման՝ որ միշտ այն տեղն լուռ կեցեր էր, նոյնպէս նաւապետն ու նաւորդները, Հարցուց նաւապետին, զոր չէր ճանչեր, թէ ի՞նչ պատճառ այսպէս բուռն կերպով գինքը ձերբակալ ընելով նաւը բերին:

«Միթէ Եպենոս կղզւոյն թագաւորին պարտական չէս, Հարցուց նաւապետը:

— Ես պարտք ունենամ Եպենոս կղզւոյն թագաւորին, վրայ բերաւ Քամարալզաման զարմանօք: Ես գինքը չեմ ճանչեր, երբէք հետը գործ ըրած չեմ, և իր տէրութեան մէջ երբէք ոտք կոխած չեմ:

— Դու իսկ լաւ գիտնալ պէտք ես այդ բանը, պատասխանեց նաւապետը: Դու անձամբ պիտի խօսիս անոր հետ. ուստի այս տեղ կեցիր և համբերէ:»

Նաւն որչափ չայթողութեամբ կապաշտիկ կղզին գնաց Քամարալզաման իշխանն առնելու, նոյնչափ անվնաս հասաւ Եպենոս կղզին: Թէև գիշեր էր արդէն երբ նաւահանգիստն երկաթ նետեց, սակայն նաւապետը փութացաւ գնալ և Քամարալզամանը պալատը տանելու, ուր ինդրեց որ գինքը թագաւորին առջևը հանեն:

Պատուր իշխանուհին՝ որ արդէն կանանոցը քաշուեր էր, այն ինչ նաւին վերադարձն ու Քամարալզամանին պալատն իմացաւ որ դուրս եկաւ անոր հետ տեսնուելու: Նախ՝ Քամարալզաման իշխանին վրայ ակնարկ մը նետեց, այն իշխանին՝ որուն համար այնքան արտասուք

թափեր էր իրենց բաժանումն վեր, և անոր անշահ հպատակին տակ պինքը ձանչեց։ Ոսկ իշխանն՝ որ թագաւորի մ՚առջև կը դողար, ինչպէս որ կը կարծեր, երևակայական պարագ մ՚ունենալուն, մարքին անդամ չէր անցներ որ եւսեդացին վճռաւած էակը նոյն ինքն Եպենոս կղզւոյն սուտ թագաւորն էր։ Եթէ իշխանուհին իր ներքին յուզման համեմատ շարժէր, պէտք էր որ անոր դիրկն իյնար և զայն համբուրեր, բայց ինքզինքը բռնեց, որովհետև հասկցաւ որ իրենց օգուտը կը պահանջէ քիչ մ՚ատեն ևս այս շինծու դերը խաղալ։ Ուստի ներքին դանդաղ պաշտօնակալի մը յանձնեց իշխանին և պատուիրեց որ անոր վրայ մինչև հետևեալ օրը պէտք եղած հոգն ու խնամքը տանի։

Երբ Պատուր իշխանուհին Քամարալզաման իշխանին հանդստութեան համար պէտք եղած հոգը տարաւ, նաւապետին գործաւ և իսկոյն իր շնորհակալութիւնը յայտնելու համար, ուրիշ պաշտօնակալի մը պատուէր տուաւ որ երթայ ապրանքներուն վրայէն կնիքը քակէ, յետոյ նաւապետին կարևոր ծառայութիւնը ձանչնալով մեծապէս անդամնդեայ մատնի մը բաշխեց անոր, որով կնիքը լիուլի վարձատրած եղաւ ուղևորութեան ծախսը դոյելով։ Նոյնպէս ըսաւ որ ձիթապտղաներուն համար ստացած հազար ոսկին իրեն քովը պահէ, և թէ ինչն ներսն համար ստացած հազար ոսկին իրեն քովը պահէ, և թէ ինչն եկող ապրանքին սիրոյ հետ այն գումարին նկատմամբ պիտի յարմարի և վճարէ։

Վերջապէս Պատուր իշխանուհին Հայաստէրքֆուս իշխանուհւոյն սենեակը մտաւ, իր ուրախութիւնն անոր հաղորդելէ, խղդրելով սակայն որ գործը գաղտնի պահէ. յայտնեց թէ ինչ չարմար միջոցներ մտածեր է ինքզինքը Քամարալզաման իշխանին ներկայ հանելէն առաջ, և թէ ինչպէս իշխանին ամ ըլլալը պիտի ծանուցանէ։

«Ախչափ մեծ է տարբերութիւնն, ըսաւ նա, պարտիզպանի և մեծ իշխանի մը մէջ, որ վանդակաւոր բան է մէկ վայրկեանի մէջ աստիճանէ մը բարձրացոյն աստիճանի մը հասնիլ, թէև արդարացի է որ այս պատուոյն հասնի։» Եպենոս կղզւոյն իշխանուհին չօժարակամ և հաւատարմօրէն անոր աջակից գտնուելու խոստացաւ և խնդրեց որ ինչ փափաք որ ունի յայտնէ իրեն որպէս զի կատարէ։

Հետևեալ օրը՝ Զինաստանի իշխանուհին, Եպենոս կղզւոյն թագաւորին անունով, հպատաստին և իշխանութեամբը Քամարալզաման իշխանը բանտէն ազատել և Էմիրի կամ կուսակալի պետ հպատակել տալէն ետև՝ ժողովին հրաւիրեց զանի, և բոլոր ներկայ մեծերուն ուշադրութիւնն իր վրայ գրաւեց իր աղուոր կերպարանքով և վհատած ընթացքով։

Նոյն իսկ Պատուր իշխանուհին՝ առաջուան պէս այնպէս սիրալիր գտնելուն զանի զմայլեցաւ, և ասով աւելի սիրտ առաւ ժողովին մէջ անոր դովեսան ընելու։ Իր հրամանաւ Քամարալզաման իշխանն էմիրներուն կարգը նստեցուց ետև՝

«Նախարարք, ըսաւ նա միւս էմիրներուն դառնալով, Քամարալզաման իշխանը՝ զոր ձեզի պաշտօնակից կընեմ այսօր, ձեր մէջ բավմելու անարժան չէ. իմ ճամբորդութեանս մէջ գինքը բաւական ճանչցայ և կրնամ երաշխաւորել ձեզ անոր նկատմամբ. վստահ եմ որ գինքը պիտի ծանօթացնէ թէ իր արիութեամբն և ուրիշ գեղեցիկ յատկութիւններովն և թէ իր հանճարին մեծութեամբը։»

Քամարալզաման չափազանց զարմացաւ երբ լսեց որ Եպենոս կղզւոյն թագաւորն, (որուն համար երբէք չէր կարծեր թէ կրնայ մ՚է, թող թէ իր սիրական իշխանուհին) գինքն անուանեց և հաստատեց թէ կը ճանչէ, և որովհետև սույդ էր որ աեղ մ՚անոր հանդիպած չէր, իր զարմանքն աւելի մեծ եղաւ իր վրայ ըսած գովեստները լսելով։

Սակայն՝ այս գովեստներն, որ վհատաւ բերնէ մ՚ելան, բնաւ գինքը չշփոթեցուցին. այնպիսի համեստութեամբ մ՚ընդունեց զանոնք որ ցոյց թէ արժանի էր անոնց և թէ բնաւ չէր պարծենար։ Թագաւորին գահին առջև երկրպագութիւն բրաւ, և ապա երթալով. «Տէր իմ, ըսաւ, խօսքով չեմ կրնար Ձեր վհատաւթեան շնորհակալ ըլլալ ձեր բրած պատուոյն համար, մանաւանդ իր երախտեաց համար։ Իմ ձեռքս եկածը պիտի ընեմ անոնց արժանի ըլլալու։»

Երբ ժողովականներն ելան, իշխանը պաշտօնակալի մ՚առաջնորդութեամբ մեծ ապարանք մը դնաց, զոր Պատուր իշխանուհին յատկապէս պարզարել տուեր էր արդէն իրեն համար։ Այն տեղ պաշտօնատարներ և ծառաներ գտաւ որ պատրաստ էին իր հրամանները կատարելու, նոյնպէս ախոռ մ՚որ պատուական ձիերով լեցուն էր. այս ամէնն՝ էմիրի

պաշտօնը զոր ստացեր էր՝ արժանապէս կատարելու համար էր. իսկ երբ իր գահլիճը մտաւ, իր անտեսը մտաւոք մը ներկայացուց իրեն ոսկիով լի, որ իր ծախուց համար դործածէ: Սակայն որչափ որ չէր կրնար ըմբռնել թէ այս մեծ երջանկութիւնն ալ է ընդդէմ, նոյնչափ ի՛սքանչանար. և երբեք չէր երեւակայեր որ Զինաստանի իշխանուհին է անոնց հեղինակը:

Երկու երեք օրէն ետքը՝ Պատուր իշխանուհին, Քամարալզամանի իշխանին իր քովը դալու աւելի ազատութիւն և պատիւ տալու համար, դանձապետի պաշտօնով զանի պատուեց, քանի որ այս պաշտօնը նոր պարապ մնացեր էր: Այս պաշտօնն այնքան ուղղութեամբ կատարեց, ամէն մարդ պարտաւորելով, որ ոչ միայն պալատականաց բարեկամութիւնը ստացաւ, այլև բոլոր ժողովրդեան սիրտը շահեցաւ իր արդարասիրութեամբն և առատաձեռնութեամբը:

Քամարալզաման օտար թագաւորի մը, ինչպէս որ կը կարծէր, նոյնպէս բոլոր ժողովրդեան համարումն օր ըստ օրէ վայելելով՝ ամէն երջանիկ մարդը պիտի համարէր ինքզինքն, եթէ իր իշխանուհին ունենար: Իր երջանկութեան մէջ, անդադար կը վշտանար որ անոր չէր առնուր այնպիսի երկրի մը մէջ, ուր կը թուէր թէ իրենց ցաւալի բաժանումն վեր իր ժամանակին անցուցած ըլլար: Թերևս կասկածի մ՚երթար եթէ Պատուր իշխանուհին Քամարալզաման անունը պահէր, ինչպէս որ կը կրէր անոր հադուստին հետ, բայց աթոռն եբնելով՝ սոյն անունը փոխեր և ինքզինքն Արմանոս կոչեր էր, ի պատիւ նախորդ թագաւորին: Ուստի պինդը կրասերն Արմանոս անուանիլ կը ճանչէին և միևնակ քանի մը պալատականներ կային որ Քամարալզամանի անունը կը յիշէին, ինչպէս որ կը կոչուէր երբ Եպենոս կղզւոյն պալատը հասաւ: Քամարալզամանի առաքինի բաւական չէր ընտելացած անոնց հետ որպէս զի այս պարագան խնամոյ, բայց վերջապէս օրին մէկը պիտի խնամար:

Որովհետև Պատուր իշխանուհին կը վախնար որ այս բանս չպատահի, և շատ պոհ էր որ Քամարալզաման միևնակ իրեն երախտագէտ մնայ, որոշեց իր և անոր ցաւոց վերջ տալ: Եւ արդարև դիտեր էր որ ամէն անգամ որ անոր հետ կը խօսակցէր իր պաշտօնին վերաբերեալ

դործոց վրայ, տեղն տեղն հառաչներ կը հանէր որոց նպատակը հարկաւ լինքն էր: Պատուր իշխանուհին ալ այնպիսի բռնադատեալ վիճակի մէջ կ՚ապրէր որմէ ազատիլ՝ ուզեր անյապաղ: Ասկէ զատ՝ մեծերուն բարեկամութիւնը, ժողովրդին եռանդն ու սէրը կը նպաստէին Եպենոս կղզւոյն թագն անարդել անոր դլուխը դնելու:

Այն ինչ Պատուր իշխանուհին այս որոշումն ըրաւ Հայաստէրնփուսի խորհրդածութեամբ, որ Քամարալզաման իշխանն առանձին կոչեց նոյն օրն և անոր ըսաւ.

«Քամարալզաման, քեզի հետ կարևոր խնդրոյ մը վրայ պիտի խօսիմ և խորհուրդդ պիտի հարցնեմ: Որովհետև այս խօսակցութեան համար պիշերը յարմարագոյն կը սեպեմ, այս իրիկուն մեզի եկուր և ոտնդն խնայ տուր որ քեզի չսպասեն, քեզի պէտք եղած անկողինը կը հոդամ:»

Քամարալզաման որոշեալ ժամուն անվրէպ պալատը դտնուեցաւ, և Պատուր իշխանուհիին հետ կտնանոցը մնաւ. և որովհետև ներքինապետը կը պատրաստուէր անոր հետևելու, իշխանուհին ըսաւ որ իրմէ պէտք չունի և միևնակ դուռը դոց պահէ. յետոյ Հայաստէրնփուսի սենեկին տարբեր սենեակ մը տարաւ, ուր սովոր էր քնանալու:

Երբ իշխանն ու իշխանուհին սենեակը մնան, ուր անկողին մը կար, իշխանուհին դուռը դոցեց, փոքրիկ տուփ մը հմայեկը հանեց և Քամարալզամանի ներկայելով ըսաւ. «Ըատ տեղեկ վեր՝ աստղահմայ մը պարգևեց ինձ այս հմայեկն, որովհետև ամէն բանի մէջ ճարտար ես, կրնաս ինձի ըսել թէ ինչ բանի կը ծառայէ այն:»

Քամարալզաման հմայեկն առաւ և մանի մը քով դնաց զայն քննելու համար: Երբ զայն ճանչեց՝ իշխանուհւոյն հանդոյք պատճառող ղաղմանդրով մը դոչեց.

«Վե՛հ տիրուհի, կը հարցնես թէ այս հմայեկն ինչ բանի կը ծառայէ: Աւաղ, կարող է ինձ միշտ և մանի պատճառել, եթէ այն ամենաչքնաղ և սիրատուն իշխանուհին չդտնեմ որուն կը պատկանի այս հմայեկն և որ անոր կախարհան պատճառ եղաւ: Ծաղօրէն դիպուածով մը կորսնցի իմ իշխանուհիս, որուն նկարագիրն անշուշտ սիրտ պիտի շարժէ, և պիտի խղճայ ինձի պէս տարաբաղդ ամուսնոյ և սի-

բահարի մը վրայ ; եթէ պատմելիքս լսելու համբերութիւն ունենաս :

— Ուրիշ անգամ պիտի պատմեմ տամ այդ արկածը , վրայ բերաւ իշխանուհին . բայց ուրախ եմ լսելու քեզ որ այդ մասին քիչ մը տեղեկութիւն ունիմ . քիչ մը սպասէ , հիմակ պիտի գառնամ :»

Ա յս ըսելով՝ Պատուր իշխանուհին դահլիճ մը մտաւ , իր արքայական ապարոյրը հանեց , քիչ ժամանակի մէջ՝ իր կնական կարն ու հագուստը հագաւ , բաժանման օրն ունեցած զօսին կապեց և այսպէս սենեակը մտաւ :

Քամարալզաման իշխանն իր սիրական իշխանուհին խնդուն ճանչեց , անոր վազեց , և գինքը գորովալից գրկելով .

«Ա՜հ , դուչեց , որչափ շնորհապարտ եմ Թագաւորին որ ինձի այս ա- խորժելի խաղը խաղցոյ : — Մի՛ յուսար որ Թագաւորը պիտի նորէն տեսնես , վրայ բերաւ իշխանուհին գինքը գրկելով արտասուագին . իս տեսնելով Թագաւորը կը տեսնես : Նստիր որ այս հանելուկը քեզի մեկնեմ :»

Ուսի նստան , և իշխանուհին իշխանին պատմեց Թէ ինչպէս վերջին անգամ իրենց եղած օթևանէն ճամբայ ելնելու որոշում ըրաւ պատրաստ տեղ սպասելէն ետև , ինչպէս այս որոշումը գործադրեց մինչև Եպենոս կղզին հասնիլն , ուր սովորեր էր Հայաստէնըվիս իշխանուհուն հետ կարգուելու , և այս առնութեան առթիւ՝ Արմանոս Թագաւորին ընծայած Թագն ընդունելու , ինչպէս իշխանուհին որուն արժանիքը չափազանց գոհեց՝ բարեսրտութեամբ իր կին ըլլալը գաղտնի պահելու խոստացեր էր , և վերջապէս հմայեկին իր գնած մէկ ձի- Թագաւորաղ և ոսկի պարտնակող տանկի մը մէջ գտեր էր , որուն վրայ նաւապետը գրկեր էր որ գինքը կրազաշխից կղզիէն առնու բերէ :

Երբ Պատուր իշխանուհին խօսքը լսեցոյց , ինքն ալ ուզեց իմանալ Թէ ինչ կերպով հմայեկին իրենց բաժանման պատճառ եղեր էր . իշխանը գործը պատմեց և երբ լսեցաւ , անորմէ սրանչացոյ շնորհալի կերպով մը , որ անդիօրէն այնքան երկար առեն գինքը տանջեր էր : Ասոր վրայ իշխանուհին մեր յաւաչ բերած պատճառները յիշեց , և որովհետև ժամանակն ուշ էր , պառկելու գացին :

Հետևեալ օրը՝ լուսալուսն պէս՝ Պատուր իշխանուհին և Քամարալզամանն իշխանն եղան : Սակայն իշխանուհին արքայական զգեստը հանեց և կանացի հագուստը դրաւ . երբ այսպէս հագուեցաւ , ներքինապետին Արմանոս Թագաւորին գրկեց որպէս զի զանի իր սենեակը հրաւիրէ :

Երբ Արմանոս Թագաւորն եկաւ , մեծ եզաւ իր զարմանքը տեսնելով իրեն անծանօթ տիկին մը և մեծ պանձապետն , որուն ներքին չէր կանանոցը մտնել , և ոչ իսկ որ և է նախարարի մը : Նստելով Արմանոս հարցուց Թէ ո՞ւր է Թագաւորը :

«Վ ե՛հ տիար տէր , պատասխանեց իշխանուհին , երեկ ես էի Թագաւորն , և այսօր միայն Զինաստանի իշխանուհին , Շահզաման Թագաւորին հարազատ որդւոյն կողակիցն եմ : Եթէ Ձեր վեհափառութիւնը կը հաճի մեր պատմութիւնը մտիկ ընելու , յուսամ որ չվեղաբերը իս այսպիսի անմեղ խաղ մը խաղալուս :» Արմանոս Թագաւորը մտիկ ընելու հաճութիւն ցոյց և անոր պատմութեան սկիզբէն մինչև վերջը միտ դրաւ :

Երբ լսեցոյ՝ իշխանուհին յարեց . «Վ ե՛հ տիար տէր , Թէև՝ ըստ մեր կրօնի՝ մարդիկ շատ կիներ առնելու արտօնութիւն ունին և այս բանին համար կանայք կը գժկամանկին , սակայն եթէ հաճիս քու Հայաստէնըվիս սպղնիկդ Քամարալզաման իշխանին կնութեան տալ , ես սրտովին կը յանձնեմ անոր Թագուհոյ աստիճանս , որ իրաւամբ անոր կը պատկանի , և երկրորդ աստիճանի մէջ մնալու գոհ կ՚ըլլամ : Եթէ այս իրաւունքն ալ չունենար , գարձեալ վեհանձնօրէն իմ գաղտնիքս պահելուն համար՝ շնորհագէտ սրտով անոր պիտի ատանդէի : Եթէ Ձեր վեհափառութիւնը գործն անոր հատնութեան ձգէ , արդէն տեղեակ ըլլալուն՝ հաւատամ եմ որ շատ գոհ պիտի ըլլայ սպղնիկդ :»

Արմանոս Թագաւորը Պատուր իշխանուհուն այս պատմութեանը զարհուրանալով մտիկ ըրաւ , և երբ աւարտեց .

«Որդեակ իմ , ըսաւ Քամարալզաման իշխանին դէպ անոր դառնալով , քանի որ Պատուր իշխանուհին , քու կողակիցդ , զոր միտեղ ցոյսոր խաբկանաք մ՚որմէ չեմ գանգատիր , իրր փեսաս կը նկատէի , կը հաւատամ Թէ կ՚ուզէ որ սպղնիկս հետ քու սիրոդ մնամակցի , կը ձեռց միայն լինձ իմանալ Թէ կը փափաքիս անոր հետ կարգուիլ և ընդունիլ այն Թագը զոր Պատուր իշխանուհին գլխոյ կրելու արժանի էր ,

եթէ քու սիրոյդ համար անկից չհրաժարիր :

— Վեհափառ տէր, պատասխանեց Քամարալզաման իշխանն, որչափ որ կը տենչամ իմ թագաւոր հայրս տեսնելու, Ձեր վեհափառութեան և Հայաստէնըփուս իշխանութեան այնքան շնորհապարտ եմ որ չեմ կրնար անոր բան մը մերժել :»

Քամարալզաման մեծ շքեղութեամբ թագաւոր հռչակուելով նոյն օրն ամուսնացաւ և Հայաստէնըփուս իշխանութեան պեղկոմ թիւնէ, խելքէն և սիրէն շատ գոհ եղաւ :

Երիւ թագուհիները գաշնակից ու նոյն բարեկամութեան և միութեան մէջ ապրեցան, գոհ ըլլալով որ Քամարալզաման իշխանը ու և նոյն աչքով կը նայի երկուքին ալ, փոխոխակի իր սէրն և անկողինը տալով :

Ու և նոյն տարին՝ դրեթէ նոյն ժամանակին՝ իւրաքանչիւրը զաւակ մը տուաւ Քամարալզամանին, և երկու իշխաններուն ծնունդը մեծ հանդէսներով հռչակուեցաւ : Քամարալզաման առաջնոյն ՁԷմշիա անունը տուաւ, որուն ծնունդ տուաւ Պատուր թագուհին, և Հայաստէնըփուս թագուհւոյն ծնած զաւակին Էսէտ անուանեց :

Երկու իշխանները ու և նոյն խնամքով կրթեցին, երբ տարիքնին առին ու և նոյն խնամակալն, արհեստից և դիտութեանց համար նոյն ուսուցիչներն ունեցան, ու և նոյն հրահանգով վարժեցան : Ի մանկութենէ իւրաքանչիւրին համար ունեցած բարեկամութիւնին այս ընտանեկան միաբանութեան շարժառիթն էր, որ օր ըստ օրէ աստիճանացաւ :

Եւ արդարև, երբոր բանական մեծցան և ամէն մէկը պատուն ընակելու հասակն ունեցան, այնչափ սերտու կապուեր էին որ աղաչեցին իրենց Քամարալզաման հայրն որ միևնոյն տունը մը շինէ իրենց : Իրենց այս խնդիրը կատարուեցաւ, և այսպէս ու և նոյն պարտէզները, ու և նոյն ձիերն ու կառքերը, ու և նոյն սենեակն ու սեղանն ունեցան : Քիչ քիչ Քամարալզաման անոնց ուղղամտութեան և կարողութեան վրայ այնչափ շատ վստահութիւն ունեցաւ, որ երբ տասն ութ տարեկան եղան, հեռվհեռէ ժողովին նախագահելու պաշտօնն անոնց կը յանձնէր երբոր ինքը քանի մ'օրուան համար որսորդութեան կ'երթար :

Որովհետև երկու իշխաններն ալ պեղեցիկ էին և վայելչակազմ, երկու թագուհիներն անհատատալի պորով մ'ունէին անոնց վրայ, սակայն Պատուր իշխանուհին Էսէտի համար աւելի համակրութիւն ունէր քան թէ իր յատուկ որդւոյն ՁԷմշիայի համար, և Հայաստէնըփուս աւելի կը սիրէր ՁԷմշիան քան Էսէտ որ իր որդին էր :

Նախ թագուհիները կարծելին թէ այս սէրը կը ծագէր իւրաքանչիւրուն համար ունեցած համակրութենէն, բայց քանի որ իշխաններն կը մեծնային, քիչ քիչ զօրաւոր հակումի փոխուեցաւ և այս հակումն ալ բուռն սէր մը դարձաւ երբ իշխաններն այնպիսի շէն շնորհքով երևցան, որ բոլորովին թագուհիները կաթացան կրնաք : Ա յս տափանալ վատութիւնն իրենց աչքին չյայտնէր էր, ուստի ամէն ձիով թափելնին այս մոլեգնին սիրոյ դէմ դնելու, սակայն ամէն օր անոնց հետ ընտանեբար տեսնուելով, և՝ մանկութենէ անոնց վրայ գլխացելու և զանոնք դգուելու սովորած ըլլալով անհնար կ'երևէր իրենց այս սովորութենէ ետ կենալ, և հետևապէս այնպիսի կրակ մ'իրենց սրտին մէջ վառեց որ քուն, կերակուր և ամէն բան մոռցան : Իրենց և նոյն իսկ իշխաններուն գժբաղդութենէ, այս նորատի իշխանները վարժած ըլլալով թագուհիներուն ընտանեկան վարմունքին՝ այս զգուելի սիրոյ վրայ քնաւ կասկած մը չունեցան :

Որովհետև երկու թագուհիներն իրարու հաղորդեր էին իրենց դաղտնի սէրն, և չէին համարձակեր բերնով յայտնել զայն՝ իւրաքանչիւրն իր սիրած իշխանաղնին, որոշեցին որ առնսակով մը ծանուցանեն. ուստի այս ինաստակոր խորհուրդն ի գործ դնելու համար, Քամարալզաման թագաւորին որսի երթալն օգուտ քաղեցին :

Քամարալզամանի մեկնած օրը՝ ՁԷմշիա իշխանը ժողովին նախագահեց և մինչև կէսօրէն ետքը ժամն երեքին գատաստանական գործերը կարգադրեց : Ծրագրվէն երեքնուկն՝ պալատը մնալու միջոցին՝ նեղքինի մը զանի առանձին կանչեց և Հայաստէնըփուսի կողմն առնսակ մը ներկայացուց : ՁԷմշիա առաւ զայն և քաղցրութեամբ կարդաց : «Ինչ, նենգաւորը մարդ, ըսաւ նեղքինին առնսակը կարդալէն ետև՝ թուղթը քաշելով, այսչափ հաւատարմութիւն ունիս քու տիրոջդ և թագաւորիդ :» Ա յս խօսքերն ըսելով անոր գլուխը կտրեց :

Ա յս գործէն եաքը՝ ՃԷմշիա՝ բարկութենէ մոլորած՝ դնաց իր մայրը, Պատուր Թագուհին տեսնելու, այնպիսի դէմքով մ՚որմէ իր զայրոյթը կ՚երեւէր. տոմսակն անոր ցցուց, որմէ ստացած ըլլալն ու իմաստը յայտնեց անոր: Փոխանակ մխիթարելու, Պատուր Թագուհին սաստիկ բարկութեան բղաւ և անոր ըսաւ.

«Որդեակ իմ, ըսածդ զրպարտութիւն և ստութիւն մ՚է. Հայաստէնըփոս Թագուհին հաւատաս է, և կը զարմանամ թէ ինչ յանդգնութեամբ այսպէս կը խօսիս անոր վրայ:» Իշխանը մօրն այս խօսքերուն վրայ բարկացաւ և պոռաց.

«Ամէնքնիդ ալ չարութեան կողմէ իրարմէ վար չէք մնար, եթէ հօրս պարտաւոր եղած յարգանքս իս չզլսէր, այս օրս Հայաստէնըփոս Թագուհւոյն վերջին օրը կ՚ըլլար:»

Պատուր Թագուհին՝ իր ՃԷմշիա որդւոյն օրհնակէն՝ քաջ կրնար դատել որ Էսէտ իշխանը՝ միւսին չափ առաքինի, աւելի նպաստաւոր կերպով չափի ընդունէր իր ընելիք նոյն տեսակ յայտարարութիւնը: Սակայն իր զգուելի խորհրդէն ետ չկեցաւ, և կրկին ալ հետեւեալ օրը դրեց տոմսակ մը և պատաւ կնկան մը ձեռօք պալատը ղրկեց:

Պառաւ կինը յարմար առեն մը գտաւ և Էսէտ իշխանը նոյն օրն ըստ կարգի նախապահած ժողովէն երեսլոն՝ ձեռքը յանձնեց: Իշխանն առաւ տոմսակն և կարդալու առեն այնքան սաստիկ բարկութեան բղաւ, որ դեռ դիրը չվճռուցած սուրը քաշեց և պատառ ըստ արժանւոյն պատժեց: Ցետոյ Հայաստէնըփոս՝ իր մօրը սենեակը վազեց՝ տոմսակ՝ ի ձեռին. ուզեց զայն ցոյց տալ, սակայն մայրն անոր խօսելու անգամ ժամանակ չտուաւ.

«Գիտեմ՝ ինչ պիտի ըսես ինձ, պոռաց նա, և դու ալ ՃԷմշիա եղբօրդ պէս աներես ես: Կորիր դնա, և այսուհետեւ իմ առջեւս մ՚երեւիր բնաւ:»

Էսէտ այս անակնկալ խօսքերուն վրայ շփոթեցաւ, և այնքան զայրացաւ որ քիչ մնաց աղէտալի կերպով պիտի վրէժ առնուր, սակայն ինքզինքը զսպեց և առանց պատասխան տալու քաշուեցաւ, որպէս զի իր մեծանձնութեան անարժան խօսք մը բերնէն չհանէ: Որովհետեւ ՃԷմշիա իշխանն առջի օր առացած տոմսակը պաղատի պահերէր, և

թէ հասկցեր էր իր մօրը խօսքերէն որ ինքն ալ Պատուր Թագուհւոյն չափ յանդգնաւոր է, դնաց և անուշ թեամբ յանդիմանեց եղբօրը պաղատանագրութիւնն և անոր հետ վշտակից եղաւ:

Երկու Թագուհիները՝ տեսնելով երկու իշխաններուն առաքինութիւնն՝ որով հարկ էր որ պատասխանային՝ յուսահատեցան, բնութեան և մայրական զգացմունքերը մէկդի թողլն և իրենց որդիքը կորուսանելու միջոցներուն վրայ խորհրդակցեցան: Նախ իրենց կանանց հաւատացուցին որ իշխաններն ուզբը են դիրենք բռնաբարել, և սուտ արտասուքներ, և անոնց զլխին անէծք թափելով այս գաղը պատրաստեցին, մի և նոյն անկողինը պատկելով, որպէս թէ ամէն դիմադրութիւն ընելէն եաքն՝ անձնատուր և շուարեալ մնացեր են:

Հետեւեալ օրը՝ Քամարալզաման Թագուհին՝ որէն պառնալով՝ շատ զարմացաւ երկու Թագուհիները միասին պատկած տեսնելով, որոնք կ՚ողբային և այնպիսի տուտ ցաւ կը յայտնէին որ Թագուհին սիրտն եւս: Շուտապաւ հարցուց անոնց թէ ի՞նչ փորձանք եկաւ:

Ա յս հարցման վրայ՝ կեղծաւոր Թագուհիներն իրենց ողբն ու կոծն աւելցուցին, և երբ Թագուհին նորէն պնդեց որ եղելութիւնն իմանայ, Պատուր Թագուհին բերանը բացաւ և ըսաւ.

«Վեհափառ տէր, մեր արդարացի վիշտն այնքան ծանր է որ ձեր որդւոյ կողմէն մեզի եղած դազանական անմարդութեան նախատինքն ընդունելէն եաքն ալ չեմ որ ասելիք ունք: Ձեր բացակայութենէ առիթ բռնեցած յանդգնեցան մեր պատիւը բռնաբարել, իրենց ցանկութիւնն լրացնելու: Թող Ձեր վեհափառութիւնը չտխրի մեզ տեսնելէ աւելի խօսելու. մեր վիշտը տեսնելով կրնայ հասկնալ անցած դարձածը:»

Թագուհին երկու իշխանները կանչել տուաւ, և անտարակոյս իր ձեռօքը զանոնք պիտի սպաննէր, եթէ հին Թագուհին Արմինոս, որ ներկայ էր, անոր թեւը չբռնէր: «Որդեակ իմ, ըսաւ, ի՞նչ է դիտաւորութիւնդ: Մի՞թէ կ՚ուզես քու յաւուկ արիւնովդ թաթաւել ձեռքդ ու պալատդ: Ուրիշ միջոցներ կան զանոնք պատժելու, եթէ իրօք իշխանները յանցաւոր են:» Այսպէս ջանաց Քամարալզամանին զայրոյթը մեղմելու, և աղաչեց որ նախ լաւ մը քննէ հասկնայ թէ անոնց վրայ

գրուած յանցանքն իրօք դործած են :

Քամանարապետին իր որդւոյ դահիճը չըլլալու համար թէև ինքզինքը զսպեց , բայց՝ զանոնք ձերբակալ ընել տալէն ետև , Պիօնտար անտէն ելիր մը կանչել տուաւ իրկունն , և ապսպրեց որ քաղքէն դուրս , հեռաւոր ուզած տեղը տանի զանոնք և դլուխնին կտրէ , հետը բերելով անոնց հագուստն , իբր նշան որ իր հրամանը դործադրեր է :

Պիօնտար բոլոր պիշերը ձամբայ քաշեց , և հետևեալ օրը ձիէն վար ինկնելով՝ իշխաններուն յայտնեց՝ արտաստւալի աչքը իր ընդունած հրամանը :

«Իշխաններ , ըսաւ անոնց , անդումի է այս հրամանն , և չափազանց վիշտ կ'ըզդամ այս հրամանին դործադրուելուս համար . ես բանի մը կարող ըլլայի այս պարտաւոր զանց առնուլ :

— Քու պարտքդ կատարէ , վրայ բերին իշխանները , քանի պիտինք որ մեր մահուան պատճառը չես . սրտովին կը ներեինք քեզ :»

«Ա յս խօսքերն ըսելով՝ իշխանները պիրտ գրկեցին և իրենց վերջին բարևը տուին այնչափ դորովանօք որ երկար ատեն իրարմէ չկրցան բաժնուիլ : Ետև իշխանն առաջինը պատրաստուեցաւ մահուան հարուածն ընդունելու :

«Պիօնտար , իջնէ սկսե , ըսաւ անոր , որպէս դի իմ սիրելի ՀԷմիլիա եղբօրս մահը տեսնելու ցաւը չունենամ :» ՀԷմիլիա դէմ կեցաւ , և Պիօնտար՝ առնլի առաւ արտասուք թափել սկսաւ այս կուսին ականատես ըլլալով , որմէ կը հասկցուէր թէ իրենց բարեկամութիւնն որչափ անկեղծ էր և կատարեալ :

Վերջապէս այս սրտաշարժ վէճը վերջացաւ ին , և Պիօնտարն աղաչեցին որ գիրենք կապէ և այնպիսի դիրքի մը մէջ դնէ որ մէկ հարուածով կարող ըլլայ երկուքին ալ սպաննել : «Խնդրենք , ու մերժեր այս ծանրութիւնն երկու սարսափազդու եղբարց , որ՝ իրենց ծննդենէ վեր , ինչպէս անմեղութեան , նոյնպէս ուրիշ բաներու մէջ ալ և նոյն կեանքն ունեցած են :»

Պիօնտար երկու եղբարց խնդիրը կատարեց . զանոնք կապեց , և երբ այնպիսի դիրքի մը մէջ դրաւ որ ստոյգ էր թէ մէկ հարուածով երկուքին գլուխն ալ պիտի կարէ , հարցուց թէ մեռնելէն առաջ բան մ'ունին հաղորդելու : «Բան մը միայն կը խնդրենք , պատասխան տուին երկու եղբարք , այս է , երբ դառնաս հաւատաս մեր հայրն որ անմեղ կը մեռնինք , մեր մահուան պատճառը գինքը չենք համարիր : Եւ արդարև , դիտենք որ մեր վրայ դրուած յանցանքին ձշմարտութեան վրայ քաջ տեղեակ չէ :»

Պիօնտար խոստացաւ անոնց խնդիրը կատարելու անպատճառ , և այն միջոցին թուրը քաշեց : Իր ձին՝ որ մօտակայ ծառի մը կապուած էր , այս դործէն և թուրին փայլէն զարհուրելով՝ սանձը կոտրեց , խոյս տուաւ և բոլոր ուժովն սկսաւ արտերուն մէջ վազվզել :

Մեծապէս և դեղազարդ ձի մ'ըլլալով՝ Պիօնտար չէր ուզեր զայն կորսնցնել : Ուստի այս դիտաւորին վրայ չփոթելով՝ փոխանակ իշխաններուն գլուխը կտրելու , թուրը մկրտի նետեց և ձիուն եաւէն վազեց որ բռնէ :

Ձին՝ որ կորովի էր՝ Պիօնտարի առջև քանի մ'անդամ շրջան ըրաւ , և մինչև անոտաւը տանելով զանի , անոր մէջ մտաւ . Պիօնտար եաւէն սլանեց և ձիուն վրնջումն քնացող առիւծ մ'արթնցուց . առիւծը վազեց , և փոխանակ ձիուն պիտելու , շիտակ Պիօնտարի վրայ քալեց , երբ հեռուէն զանի տեսաւ :

Պիօնտար ալ իր ձին մոռցաւ , և իր կեանքն աղատելու ջանաց , առիւծին յարձակումն խոյս տալով , թէև առիւծն աչքն իր վրայ սեւած ծառերուն մէջէն իր եաւէն կ'երթար :

«Ա յս վտանգին մէջ Աստուած չէր գրկեր ինձ այս պատուհասը , կ'ըսէր իւրովի , եթէ սպանելու համար ինձի տրուած իշխաններն անպատրաստ ըլլային , և մանաւանդ , թուրս չունիմ որ ինքզինքս պաշտպանեմ :»

Միևդեռ Պիօնտար հեռուն կը դիտէր , երկու իշխաններն՝ մահուան արհաւիրքէն , ջրի համար կը պապակէին , թէև իրենց հօրը անդումի հրամանը կրելու վճռականօրէն յանձն առեր էին : ՀԷմիլիա իշխանն իր եղբօրը հասկցուց որ աղբիւրի մը մօտ են , և առաջարկեց որ կապերը քակեն և երթան խմեն :

«Եղբայր իմ , վրայ բերաւ Էսէտ իշխանը , քանի որ քիչ ժամանակ ունինք ապրելու , հարկ չկայ մեր պապակն անցնել . կրնանք քիչ մ'ևս

Հարեներէ ։»

Ա յս առաջարկութեան մէտ չդնելով՝ Ճէմշիտ կռկռերը քաշեց և իր եղբայրն ալ ականջ արձակեց . երկուքին ալ աչքերը դարձան , և իրենց ծարաւն անդնելէն ետև՝ առիւծին մռնչիւնը և ահագին աղաղակներ լսեցին անտառին մէջ՝ ուր մներ էին ձին և Պիծտաք ։ Ճէմշիտ Պիծտաքին տուրն իսկոյն առաւ ։ «Եղբայր իմ , ըսաւ Էսէտին , Ջշուառ Պիծտաքին օգնութեան հասնինք , կարելի է ժամանակին հասնելով պինքը վտանգէն ազատենք ։»

Երկու իշխանները ժամանակ չկորսուցին , և հասան Ճիշտ այն միջոցին որ առիւծը Պիծտաքը զեռին տապալեր էր ։ Առիւծը՝ սեւնելով որ Ճէմշիտ իշխանը դէպ իր վրայ կը քալէր սուրը վերցուցած , պիծտաքը թողուց և շիտակ անոր վրայ վազեց կատաղօրէն . իշխանն անվեհեր կանգ առաւ և այնչափ ուժգին և Ճարպիկութեամբ հարուած մը իջեցուց որ զեռինը տապատա փռեց ։

Երբ Պիծտաք տեսաւ որ երկու իշխաններուն պարտաւոր է իր կեանքն , անոնց ոտքն ընկաւ և շնորհակալեղաւ այնպիսի լեզուաւ որ մէջ իր անքաւ երախտագիտութիւնը կը յայտնուէր ։

«Իշխաններ , ըսաւ անոնց ոտք ելնելով և անոնց ձեռքը համբուրելով արտասուաղին , քանի որ դուք այսպէս վեհանձնօրէն իմ կեանքս ազատեցիք , ես ալ ձեր կեանքն անվետս պիտի պահեմ , և երբէք ըսել չպիտի տամ որ Պիծտաք էմիրն այս բարերարութիւնն ապերախտութեամբ վճարեց ։

— Մեր մտադրած ծառայութիւնը , վրայ բերին իշխանները , պէտք չէ արդիլելու քեզի տրուած հրամանը . նախ բունեցք ձիդ , և գտնեցք մեզ ձգած տեղը ։»

Դիւրաւ ձին բունեցին՝ որուն կատղութիւնն մարեր էր և կանգ առեր էր ։ Բայց երբ աղբիւրին մօտենան , որչափ որ աղաչեցին Պիծտաք էմիրն որ գիրենք սպաննէ , չկարողցան ։

«Ա յս միայն կը համարձակիմ խնդրել ձեզմէ , ըսաւ անոնց , որ շնորհ ընէք իմ հազուստս առնուլ հագնիլ և ձերինն ինձ տալով կատղելի եղածին չափ հեռուտր երկիր մը փախչիք որպէս զի թագաւորը քնաւ ձեր անունը չլսէ ։»

Իշխաններն ատիպտեցան անոր կամքը կատարելու . իրենց հագուստը տուին , իրենն առին հագան և ասպ Պիծտաք քաշն ունեցած ասկին ու արծաթեն անոնց պարգևելէն ետև՝ մնաք բարև ըսաւ դնաց ։

Երբ Պիծտաք էմիրն իշխաններէն բաժնուեցաւ , անտառէն անցաւ , առիւծին արիան մէջ անոնց զգեստը թաթխեց և իր Ճամբան շարունակեց մինչև Եպենոս կղզւոյն մայրաքաղաքն ։ Երբ հասաւ՝ քաղաքացիներն թագաւորը հարցուց թէ արդեօք տուած հրամանը կատարւե՞ց ։ «Վ ևհապետ տէր , պատասխանեց Պիծտաք երկու իշխաններուն զգեստները ցոյց տալով , ահաւասիկ իմ վկայութիւնս ։

— Ըսէ նէ , կրկնեց թագաւորը , թէ ինչպէսըպատ ընդունեցան իրենց արտած պատիժը ։ — Վ ևհապետ տէր , կրկնեց էմիրն , այն պատիժը հիանալի արիութեամբ և Աստուծոյ վճիռներուն հպատակելու ոգւով ընդունեցան , որմէ կը տեսնուէր թէ իրենց կրծքին մէջ անկեղծ էին . նա մնաւանդ՝ Ձեր վեհապետութեան մեծ յարգանք և մեհուան վճռոյն անհատաստալի հլութիւն ցոյց տուին ։ «Անմեղ կը մեռնինք , կ'ըսէին անոնք , բայց չենք դանդատիր ։ Աստուծոյ կամքին կ'ընդունինք մեր մահն և մեր թագաւոր հօր կը ներենք . քանի պատնէշ որ Ճշմարտութեան լաւ տեղակ չէ ։»

Քաղաքացիներուն սիրտը շարժեցաւ էմիրին այս խօսքերէն . երկու իշխաններուն զգեստին դրպանին մէջ խօթեց ձեռքը՝ Ճէմշիտի զգեստէն սկսելով ։ Անոր մէջ տոմնակ մը գտաւ և բացաւ կարդաց ։ Այն ինչ հասկցաւ որ Հայաստանդրփուս թագուհին գրեր է զայն , ոչ միայն անոր ձեռքի գիրէն , այլնաև անոր մէջ գտնուած մագերու կծիկէ մը , որ սարսուռ զգաց ։ Էսէտի հագուստին դրպանն ալ խառնեց դողդողալով , և գտաւ իշխանուհիին տոմնակը գտնելով յանկարծակի եկաւ և մարեցաւ ընկաւ ։

Երբէք ցաւ քաղաքացիներուն ցաւին պէս եղած չէ , ինչպէս որ անոր նշանները ցոյց երբոր մարմրուքն անցաւ ։

«Ո՞նչ ըրիր , բարբարիկ հայր , գոչեց նա , դու ինքնին սպաննեցիր քու զաւակներդ ։ Անմեղ զաւակներ , իրենց խնամատութիւնը , համեստութիւնը , հնազանդութիւնը , հլութիւնն , աւաքինութիւնը , միթէ բաւական չէրն զանոնք պաշտպանելու և անբասիր հանելու ։ Կոյր

Հայր, միթէ արժանի՞ եմ արեւ տեսնել, այսպիսի քաոսնեղի ձիր մը դործելէն ետքն։ Ես իմ՛ձեռօքս այս պարտէզի վիճակին մէջ ընկայ, և իմ պատիժս ահա Աստուծմէ դատ, որովհետև կանանչ դէմ իմ՛բնաձին տեսնելուինս չպահեցի։ Ձեր յանցանքը չափի լուսմ՛ ձեր ա՛բեամբն, ինչպէս որ արժանի էք, պարտէզի կիները. ոչ իմ բարեխօսթեանս անարժան էք։ Բայց կրակ թափի դլխս եթէ երբէք ձեր երեսը նորէն տեսնեմ։»

Քամահրալզաման թագաւորը կրծռասէր մարդ ըլլալով իր երդումը պահեց։ Մի և նոյն օրն երկու թագուհիները զատ սենեակ մը փակել և հսկել տուաւ և կեանքին մէջ նորէն անունդ չլսեցաւ։

Մինչդեռ Քամահրալզաման թագաւորն իր երկու որդւոց կորուստին վրայ այսպէս կը վշտանար, որոց մահուան պատճառն եղեր էր անխորհուրդ բարկութեան մը ժամանակ, երկու իշխաններն անապատները կը թափառէին, մարդաբնակ տեղերէ խոյս տալով որպէս զի մէկը զիրենք չտեսնէ. միայն խոտ և վայրի պտուղ կ՛ուտէին և անձրևի անջրհ ջուր կը խմէին, զոր ժայռերու խոռոչներու մէջ կը գտնէին։ Իսկ դիշերը վայրի անասուններէ պահպանուելու համար իրարմէ հեռու կը քնանային և կը հսկէին։

Ամէն մ՛առաւօտ լերան մը ստորոտը հասան, որ սև քարէ և անհսկելի էր, ինչպէս որ իրենց կ՛երևէր։ Սակայն բայ Ճամբայ մը տեսան, այնչափ անձուկ և դժուարելի որ չհամարձակեցան այն Ճամբան մտնելու։ Աւելի լաւ շաւիղ մը գտնելու յուսով՝ լերան բոլորտիքը դարձան և հինդ օր շարունակ քալեցին. սակայն պարապ եղաւ իրենց ջանքն, և ստիպուեցան իրենց չհատնած Ճամբան դառնալ։ Բայց այնչափ տաժանելի էր որ երկար ատեն խորհուրդ ըրին թէ արդեօք այն Ճամբէն երթա՞ն թէ ոչ։ Վերջապէս անկից զարկին և վերս եկան։

Երկու իշխանները քանի յաւաչ կ՛երթային, այնչափ բարձր և սեպաձև կը գտնէին այս լեռն, այնպէս որ քանի մ՛անդամ միտք ըրին վար իջնել և այն Ճամբան չշարունակել։ Երբ մէկը յոդնէր՝ և միւսն այս բանս պիտէր, կանչ կ՛առնուր և միասին շունչ կ՛առնէին։ Երբեմն երկու քսին ալ այնքան կը յոդնէին որ ուժասպառ կը մնային. այն ատեն վեր երթալու չէին փափաքեր, այլ յոգնութենէ և ձանձրոյթէ մեռնիլ։

Իսկ քիչ մ՛ատենէն՝ նոր պտ առնելով կը քաջալերուէին և իրենց Ճամբան կը շարունակէին։

Թէև ամէն փոյթ, Ճիգ և արիութիւն՝ ի գործ դրին՝ կարող չեղան բոլոր օրուան մէջ լերան գագաթը Հասնիլ։ Գիշերը կոխեց, և Էսէտ իշխանն այնքան յոգներ դարձեր էր որ բոլորովին կանկ առաւ։ «Եղբայր իմ, ըսաւ ՃԷմշիտ իշխանին, ալ Ճարս Հատաւ, Հոգիս պիտի փչեմ։ — Եկուր որչափ կ՛ուզես Հանդչինք, վրայ բերաւ ՃԷմշիտ ա՛նոր Հետ կանկ առնելով, և սիրտ առ։ Կը տեսնես որ քիչ մնաց գագաթը Հասնելու և լուսինն ալ մեզի կ՛օդնէ։»

Էսէտ՝ կէս ժամ՛ամբողջ Հանդիստ առնելէն ետև՝ նոր Ճիգ մ՛ըրաւ. վերջապէս լերան գագաթը Հասան, ուր նորէն կանգ մ՛առին։ ՃԷմ շիտ առաջ ելաւ և յաւաչ անցնելով՝ քիչ մը Հեռուն ծառ մը տեսաւ։ Մինչև այն ծառը դնաց և դիտեց որ խոշոր նռուերով բեռնաւորուած նռենի մ՛էր և անոր ոտքն ալ աղբիւր մը կար։ Իսկոյն այս լուրն Էսէտին Հաղորդեց և զանի առնելով աղբիւրին մօտ՝ ծառին տակը տարաւ։ Ամէն մէկը քիչ մ՛ոգի առաւ և շունչ նռուտ մ՛ուտելով, յետոյ քնացան։

Հետևեալ օրն՝ երբ իշխանները արթնցան, «Օհն, Ճամբայ ելնենք, եղբայր իմ, ըսաւ ՃԷմշիտ Էսէտին, շարունակենք մեր շաւիղը. կը նայիմ որ լեռն այս կողմէն աւելի դիւրին է քան թէ միւս և միտակ պիտի իջնենք։» Բայց Էսէտ այնքան յոգներ էր առջի օրն, որ ինքզինքը գտնելու Համար քիչէն քիչ երեք օր պէտք էր։ Այս օրերն խոտակերելով անցուցին իրենց մարդ ապօրէն սիրոյն վրայ, որոց պատճառու այս թշուառ վիճակին մէջ ընկեր էին։ «Բայց, ի՛ըսէին, քանի որ Աստուած այսպէս յոյսի կերպով պաշտպանեց մեզ, պէտք է որ մեր աղէտից գլխս ծունկը Համբերութեամբ և առնոյ վերջացուցած յուսով միխիթարուինք։»

Երեք օր անցնելէն ետև՝ երկու եղբարք նորէն Ճամբայ ընկան, և որովհետև լեռն այս կողմէն շիտակ էր, հինդ օրուան մէջ Հասան ալիւ դաշտը Հասան։ Վերջապէս մեծ քաղաք մը տեսան ուրախութեամբ։

«Եղբայր իմ, ըսաւ այն ատեն ՃԷմշիտ Էսէտին, միթէ չ՞ս Հա-

ւանիր որ քաղքէն դուրս հեռու տեղ մը կենաս դու , և ես երթամ հասկնամ թէ որ երկիրն ենք և նորէն դառնամ : Ասկէ զատ՝ հետս պէտք է որ ուտելիք բերեմ . աւելի աղէկ է որ երկու քսիս ալ մէկ տեղ չմտնենք քաղաքը , կարելի է որ վտանգի մը կը հանդիպինք :

— Եղբայր իմ , վրայ բերաւ Էսէտ , կը հաւանիմ խորհուրդիդ . խիստ խնամուն և խոհական խորհուրդ մ՚է այդ . բայց եթէ հարկ է որ մեզմէ մէկը բաժնուի , երբեք չպիտի հաճիմ որ բաժնուողը դու ըլլաս , և պիտի ներես ինձ որ ես երթամ : Ի՛նչ մեծ վիշտ պիտի զգամ եթէ քեզի փորձանք մը պատահի :

— Բայց , սիրելի եղբայր , պատասխանեց Ճէմշիտ , ինձի համար ինչ վախ որ ունիս , ես ալ պարտաւոր եմ քեզի համար ունենալ : Կ՚ազաչեմ , թողուր որ գնացածս ընեմ և համբերութեամբ ինձի սպասէ : — Երբեք չպիտի թողում քեզ , պատասխանեց Էսէտ , և եթէ ինձ բան մը պատահի , գոնէ պիտի միխիթարուիմ մնացելով որ դու ապահով վիճակի մէջ ես :» Ճէմշիտ ստիպուեցաւ հաւանութիւն տալու , և լռեցան ոտքը՝ ծառերուն տակ սպասելց :

Էսէտ իշխանը Ճէմշիտի քովը գտնուած քսակէն ստակ առաւ և գէպ՚ի քաղաքը գիմեց : Այն ինչ առաջին փողոցին մէջ քանի մը քայլ առաւ , որ պատկառելի ծերունիի մը քովն գնաց , որ աղէկ հագուստեր էր և ձեռքը գաւազան մ՚ունէր : Որովհետև այս ծերունին աղնիւ մարդ մը կարծեց և չէր յուսար որ գինքը կը խաբէ , անոր ըսաւ . «Տէր իմ , կ՚աղաչեմ , ցոյս բնձ շուխան :» Ծերունին ժպտելով իշխանին երեսը նայեցաւ . «Որդեակ իմ , ըսաւ անոր , կ՚երևի թէ օտարական մ՚ես , թէ ոչ այդ հարցմունքդ չէիր ըներ ինձ : — Այո , տէր իմ , օտարական մ՚եմ , պատասխան տուաւ Էսէտ : — Ուրեմն , բարի եկար , պատասխանեց ծերունին . մեծ պատիւ է մեր քաղքին որ քեզի պէս բարեզէմ երիտասարդ մ՚եկաւ զայն տեսնելու : Ըսէ ինձ շուկան ինչ բան ունիս :

— Տէր իմ , պատասխանեց Էսէտ , երկու ամիսէ վեր իմ նորատի եղբայրս և ես հետաւոր քաղքէ մ՚եկանք , և շարունակ Ճամբայ քալելով այսօր հասանք : Եղբայրս այս երկար ուղևորութենէ յոգնելով ննջան ոտքը կեցաւ և ես եկայ անոր և ինձի համար ուտելիք գնելու :

— Որդեակ իմ , պատասխան տուաւ ծերունին , քու և եղբօրդ սիրոյն համար ուրախ եմ որ յաջողած ժամանակին հասար : Այսօր շատ մը բարեկամներու մեծ հայկերոյթ մը տուի , որմէ բաւական կերակուր մնայ և ոչ ոք անմնայ դալու : Ինձի հետ եկուր և ես քեզի ուտելիք կտամ , և երբ ուտես , դարձեալ թէ եղբօրդ և թէ քեզի հասնելիք կտամ , քանի մ՚օրուան պաշար տալ : Ուսի տակդ շուկան վտանգելու մ՚երթաս : Ճամբորդները պէտք է որ խնայողութիւն ընեն : Ասկէ զատ՝ կերակուրդ ուտելու առեն՝ մեր քաղքին վրայ քեզի պզտ և պզտ տեղեկութիւններ կրնամ տալ : Ինձի պէս մարդ մ՚որ արժանի կերպով շատ մը պատուաւոր պաշտօններ կատարած է , պէտք է որ աստղ տեղեկութիւններ ունենայ : Պէտք է նաև ուրախ ըլլաս որ՝ փոխանակ ուրիշի՝ ինձի դիմեցիր , որովհետև՝ խօսքը մեր մէջ մնայ , մեր քաղաքացիներն ինձի չեն նմանիր . իրաւ որ շատ անպատմ մարդիկ ունինք այս տեղ : Ուրեմն եկուր , քեզի պիտի ցոյց տամ թէ ինչ տարբերութիւն կայ՝ ինձի պէս՝ պարկեշտ մարդոց և այնպիսիներու մէջ որոնք կը պարծին թէ պարկեշտ են , թէև իրօք ասոր հակառակն են :

— Չափազանց շնորհակալ եմ , վրայ բերաւ Էսէտ իշխանը , քու բարեսիրութեանդ . ինքզինքս բոլորովին քեզի կը յանձնեմ , և ուզած տեղդ երթալու պատրաստ եմ :»

Ծերունին՝ Էսէտի հետ քալելու առեն՝ քթին տակէն կը խնդար , և որպէս զի Էսէտ իր ծիծաղը չդիտէ , այլ և այլ բաներու վրայ անոր հետ կը խօսակցէր անոր վստահութիւնը լիովին գրաւելու համար :

«Պէտք է խոստովանիլ , կ՚ըսէր անոր , որ շատ բարեբաղդ ես առաջ ինձի դիմելդ : Օրհնեալ է Աստուած որ ինձի հանդիպեցար . մեր տունը հանգիստ կտեսնէ՝ պիտի հասկնաս թէ ինչու համար այս խօսքս կ՚ըսեմ :»

Վերջապէս ծերունին տունը հասաւ և Էսէտը մտցուց մեծ սրահ մը ուր վառած կրակի մը բոլորտիքը նստած քառասուն ծերունի մարդ տեսաւ , որոնք այն կրակը կը պաշտէին :

Այս տեսարանին վրայ՝ Էսէտ իշխանը սոսկաց որ անխելք մարդիկ՝ փոխանակ Աբարչին՝ արարածին պաշտօն կը մատուցանեն , ինչպէս որ ահ ու դողի մէջ ընկաւ այնպէս խաբուելուն և դարձեալ վայր մը

պանուելուն վրայ :

Մինչդեռ Էսէա իր զարմանքէն անշարժ կեցեր էր , խորամանկ ձե-
րունին քաւստուն ձեր մարդիկը բարևեց : «Ջերմեռանդ հրեայ շահներ ,
բաւ անուշ , ահաւասիկ երջանիկ օր մը ձեզի համար : Ո՞ւր է Կաղ-
պան , յարեց նա . ըսէք որ հոս գայ :»

Բարձր ձայնով արտասանուած այս խօսքերուն վրայ , սև դերի մ՚որ
վարի սրահէն զանոնք լսեց՝ երեսան ելաւ , և այս սև մարդն էր Կաղ-
պան , որ այն ինչ ողբալի մարդը սեաւ , իսկոյն հասկցաւ թէ ինչը-
համար կանչուեր էր : Անոր վրայ վազեց , ապտակ մը տալով զանի
դեմքը տապալեց և հիանալի արագութեամբ անոր թևերը կապեց :
Երբ այս գործողութիւնը լմնցուց .

«Աւ այս մարդն և վար տար , բաւ ձերունին , և ապսպրէ իմ
Պօստան և Կաւամ՝ աղջիկներուս որ ամէն օր զանի դանակոծեն , տա-
տու իրկուն լոկ հայ մը տալով իրը մնունդ , մինչև որ նաւը Կապոյտ
Ծովին և Արակի լեռն երթալու ձամբայ երթէ , այս մնունդը բաւական է
իրեն ապրուստին համար . ախորժելի ողջակէզ մը պիտի ընենք զանի
մեր չաստուածին :»

Հազիւ թէ ձերունին այս անգութ հրամանը տուաւ որ Կաղպան է-
ակաը տանջելով բռնեց , վարի սրահն իջևցուց և շատ մը գուներէ
անցնելէն ետև՝ քանի տասնհատ ունեցող զնդան մը տարաւ , և անոր
ոտքերը խիստ խոշոր և ծանր շղթայի մը կապեց : Երբ այս գործողու-
թիւնը վերջացուց՝ գնաց ձերունին աղջկանց լմնց տալու , բայց ձե-
րունին արդէն անոնց քովը էր և կ՚ըսէր .

«Աղջիկներս , վար իջէք և ձեծ տուէք նորեկ օտարականին՝ ձեր
պիտցած կերպովն , և բնաւ մի խնայէք . ահա տիեզ մը ձեզ յայտնե-
լու համար որ հաւատարիմ հրեայ շահներ էք :»

Պօստան և Կաւամ՝ տան մահմետականաց դէմ անհնարին տեղու-
թիւն տածելով , ուրախութեամբ ընդունեցան այս հրամանն : Անմիջա-
պէս դնդանն իջան , Էսէային հագուստները հանեցին և այնքան ձեծե-
ցին զանի որ խեղճ Էսէան արիւնլուայ և կիսամեռ ընկաւ : Այս գաղա-
նական գործէն ետքն , անոր քով հայ մը և գաւաթ մը ջուր դրին ու
քաշուեցան գացին :

Էսէա՝ շատ ժամանակ ետքն ինքզինքը գտաւ , և հեղեղի պէս արտա-
սուք թափեց , իր թշուառութեան վրայ ողբալով , սակայն սիրտիրալ
միանգամայն որ այս գժբաղդութիւնն իր ձէմշիտ եղբօրը չէր հասած :

Իսկ ձէմշիտ իշխանը մինչև իրիւն իր Էսէա եղբօրը սպասեց ան-
համբեր լերան ստորոտն : Երբ գիտեց որ երեկոյեան երիս , երեք ,
չորս ժամ անցած և եղբայրը չերևցաւ , յուսահատութիւնը զինքը պա-
շարեց : Բոլոր գիշերն այս կսկծալի անձկութեան մէջ անցուց , և այն
ինչ լուսցաւ որ ճամբայ ելաւ դէպ՚ի քաղաքն երթալու : Նախ մեծ ե-
կաւ զարմանքը տեսնելով որ նոյն քաղքին մէջ սահաւաթիւ են մահմէ-
տականներն : Իր առջևն եղնող առաջին մահմետականը կեցուց և
խնդրեց որ իրեն ըսէ թէ այն քաղքին անունն ինչ է : Խնացաւ որ Մո-
պերու քաղաքն էր այն , և այսպէս կը կոչուէր . որովհետև հրապաշտ
մողերն ատելի բազմութիւն էին , և մահմետականները սահաւաթիւ :
Հարցուց նաև թէ Եպենոս կղզին անկից ո՞րչափ հեռու էր , և իրեն
ա պատասխանը տուին թէ , ծովով չորս ամիսուան ճամբայ է , իսկ
ցամաքէն մէկ տարուան : Իր խօսակից մահմետականը յանկարծ քովէն
հեռացաւ , անոր երիս հարցումներուն պատասխան տալէն ետև , և
իր ճամբան շարունակից , որովհետև գործը տխրագնական էր :

Ձէմշիտ՝ որ իր եղբօրը հետ վեց շաբաթուան մէջ Եպենոս կղզիէն
ելեր էր , չէր կրնար հասկնալ թէ ինչպէս այնչափ ճամբայ կարճն են
քիչ ժամանակի մէջ , թերևս հրաշքով էր , և կամ իրենց բռնած լեռ-
նային ճամբան ամենէն կարճ ճամբան էր , և գժուարին ըլլալուն բա-
նուկ չէր : Քաղաքը պարսիլու առնն՝ գերձակի մը կրպակին առջև
կանգ առաւ , և դիտեց անոր հագուստէն որ մահմետական մ՚է , ինչ-
պէս որ իր առաջին խօսակիցն ալ նոյն նշանէն ճանչցեր էր : Անոր բա-
րև տալէն ետև՝ քովը նստաւ , և պատմեց անոր իր տառապանաց
պատճառը :

Երբ ձէմշիտ իշխանը խօսքը լմնցուց , գերձակը պատասխան
տուաւ . «Եթէ եղբայրդ մողի մը ձեռքն ընկած է , յոյս մի ունենար
զանի նորէն տեսնելու . ի՞նչ սպառ կորսուած է , և կը յորդորեմ քեզ
միխիթարիլ և նոյնպիսի փորձանքէ մ՚ինքզինքդ պահպանելու աշխա-
տիլ : Ըսած , եթէ կը հաճիս , իմ քովս կեցիր , մողերուն խաբէու-

թիւնները քեզի բացատրեմ որ անոնցմէ ազատ մնաս երբոր դուրս ելլես:» Ճէմշիտ՝ թէեւ սաստիկ վշտացաւ իր էսէտ եղբայրը կորսնցնելուն, դերձակին առաջարկութիւնն ընդունեց և անոր բարեսրտութեան շնորհակալութիւն եղաւ:

Ճէմշիտ իշխանն՝ ամէս մ'ամբողջ դերձակին հետ դուրս կ'ելլէր: Վերջապէս օր մ'առաձին բաղնիք երթալու միտքը դրաւ: Ի դարձին՝ առաջի փողոցէ մ'անցնելու ատեն, տիկնոջ մը հանդիպեցաւ որ դէպ ի բնակարան կ'երթար:

Տիկինն՝ այս վայելչակազմ և բարեկիրթ դուռը եկողը երիտասարդը տեսնելուն՝ երեսին քօղը վերցուց և հարցուց անոր ծնողքին դէմքը և անուշադրեր ընելով թէ ուր կը դիմէ: Ճէմշիտ կնոջն պեղեցկութեան զարմացաւ, և պատասխանեց.

«Տիկին, իմ կամքս առնդ կ'երթամ, այս ընարութիւնը քեզի կը թողում:

— Տէր իմ, պատասխան տուաւ տիկինն ախորժելի ժպիտով մը, իմ կարգիս կրնամ իրենց տունը չեն տանիր մարդիկն, այլ իրենք անոնց տունը կ'երթան:»

Ճէմշիտ՝ այս անակնկալ պատասխանին վրայ շփոթեցաւ: Չէր համարձակեր իր տան տիրոջը տունը տանիլ այն կինն, որովհետև պիտի դայթակղէր, և կարելի է անոր պաշտպանութիւնն ալ կորնչիներ այնպիսի քաղքի մը մէջ ուր շատ զգուշութիւններ ընել պէտք էր: Քաղքին ծակ ու ծուկ տեղերը չգիտնալով չէր կարող բան մ'որոշել, և առանկ աղտոր բաղդ մը ձեռքին հանել: Ա.յս տարտամ վիճակին մէջ՝ դործը դիպուածին ձգեց, և տիկնոջ պատասխան չտալով՝ անոր տունն ընկաւ, և կինն ալ եռանդն գնաց:

Ճէմշիտ իշխանն երկար տաճն փողոցէ փողոց՝ քարուղիէ քարուղի և հրապարակէ հրապարակ պտըտցուց կինն, որչափ որ երկուքնին ալ քալելէն յոգներ էին, երբ փողոց մը մտաւ որուն ծայրը բաւական աղտոր տան մը պոյ դուռը կար, ամէն մէկ կողմն նստարան մը դրուած: Ճէմշիտ մէկուն վրայ նստաւ քիչ շունչ առնելու համար, կինն ալ՝ որ աւելի յոգներ էր, միւսին վրայ բազմեցաւ:

Երբ տիկինը նստաւ. «Ուրեմն տունդ այս է, բաւ Ճէմշիտ իշխանն: — Ինչպէս որ ըսիր, տիկին, բաւ իշխանն: — Ուրեմն ինչո՞ւ համար դուռը չես բանար, պատասխանեց տիկինն, ինչո՞ւ համար կ'սպասես: — Իմ գեղանի տիկինս, պատասխանեց Ճէմշիտ, բանալին քովս չէ. գերիս տաւ, որուն գործ մը յանձներ էի և դեռ դարձած չլսեմ ըլլայ: Նոյնպէս ազատելուն անոր որ գործը լմնցնելէն ետև՝ աղտոր հայկերոյթի մը պատրաստ, կը վախնամ որ աւելի երկար պիտի սպասենք:»

Իր տուփանքը դոհ ընելու համար իշխանը մեծ արդիլք մը տեսնելով, թէեւ կ'սպասէր զվջալու, այս տուն ըսելու տիպարեր էր, յուսալով որ տիկինը պիտի հաւատայ և թէ բարկութենէ պիտի բռնադատուի գինքը մէկդի թողուլ և ուրիշ տեղ բաղդ փնտռելու երթալ. բայց սխալեցաւ:

«Ինչ աներես է սպասաւորդ որ այսպէս սպասել կտայ մեզ, վրայ բերաւ տիկինն. ես անձամբ պէտք եղածին պէս գինքը պիտի պատժեմ եթէ դու չպատժես զանոնալուն: Սակայն անվայել է ինձ մարդու մը հետ առանձին դրան մ'առջև սպասել:»

Ա.յս ըսելով՝ տաք երես և քար մ'առաւ նիզը կտրելու համար, որ վայտէ էր, քաղքին սովորութեան համաձայն: Ճէմշիտ տիկնոջ այս գիտաւորութեան վրայ դող եղնելով ուզեց գէմ կենալ: «Տիկին, բաւ, ինչ ընելու միտք ունիս: Կ'աղաչեմ, պահ մ'ևս սպասէ:

— Ինչո՞ւ համար կը վախնաս, պատասխանեց կինը. մի'թէ քովդ չէ՞ տունը: Փայտէ նիզ մը կտրելը դժուար դործ մը չէ, և նոր մը շինելն ալ դիւրին է:» Ա.յս ըսելով փականքը կոտրեց, և երբ դուռը բացուեցաւ, ինքը ներս մտաւ առաջ քալեց:

Ճէմշիտ կարծեց թէ իր վերջին օրը հասաւ երբ դրան բացուիլը տեսաւ: Վարանեցաւ թէ արդեօք ներս մտնէ՞ թէ ոչ խոյս տայ, պահլիք վտանգէն ազատելու համար, և արդէն կծիկը դնելու կը պատրաստուէր, երբ կինը դարձաւ և տեսաւ որ ներս չէր մտներ:

«Ինչ ունիս, ինչո՞ւ համար տունդ չես մտներ, բաւ անոր: — Վատ պի, տիկին, պատասխանեց իշխանը, կը նայիմ թէ արդեօք ծառայ կ'երևի, կը վախնամ որ պատրաստ բան մը չտնիմ քեզի մեծարելու: — Եկուր, եկուր, կրկնեց նա, այս տեղ աւելի աղէկ է քան թէ

դուբսը, մինչև որ սպասաւորդ դառնայ։»

Ճէմշիտ իշխանն ակամայ մնաւ ընդարձակ և ազնուր սալայատակ ունեցող գաւթի մը։ Գաւթէն թէ ինքն և թէ ախիկին սանդղէ մը վեր ելան վերնայարկ մ'ուր մեծ սրահ մ'ազնուր զարդարուած տեսան. սրահին մէջ սեղան մը կար ընտիր կերակուրով, ուրիշ սեղանի մը վրայ ալ ազնուր պատուղներ և դինիի շիշերով մատան մը կար։

Երբ Ճէմշիտ այս պատրաստութիւնները տեսաւ, անկասկած մնայ որ պիտի կորսուի։ «Բանդ բուսաս, խեղճ Ճէմշիտ, ըսաւ ինքն իրեն, շատ չանդրիը դուս ալ Էսէտ եղբօրդ քով պիտի երթաս։» Իսկ՝ ընդհակառակն՝ ախիկին այս տեսարանին վրայ զմայլելով «Ի՞նչպէս կը վախնայիր, ասէր իմ, որ բան մը պատրաստ չգտնես։ Հիմակ հասկցար որ սպասաւորդ կարծածդեդ աւելի բաներ ըրեր է։ Սակայն, եթէ չեմ սխալիր, այս հայիւրոյիը չէ թէ ինձի այսուրիշ կնկան մը համար պատրաստուած պիտի ըլլայ։ Բայց փոյթ չէ, թողայն ալ դայ, խօսք կսամ որ չպիտի նախանձիմ իրմէ։ Ա՛յս շնորհը միայն կը խնդրեմ որ ներես ինձ անոր և քեզ սպասաւորելու։»

Ճէմշիտ խնդուքը չկրցաւ բունել ախիկոջ կատակին վրայ, թէև շատ վշտահար էր։ «Տիկին, ըսաւ, դինքը վշտացնող բոլորովին տարբեր բանի վրայ խորհելով, կը հաւատամ որ լիովին կը սխալիս. այս իմ սուրբհան սեղանս է, և ուրիշ բան մը չկայ։» Որովհետև ուրիշի համար պատրաստուած սեղան մը նստելու կը վարանէր, ուզեց բազմցնել վրայ նստիլ, բայց կինը չթողուց։ «Ի՞նչ կ'ընես, ըսաւ անոր, անշուշտ անօթի ես բանկիքէն եղնելովդ, սեղանը նստինք. եկուր, ուտենք, խմենք և զուարճանանք։»

Ճէմշիտ կնկան կամքը կատարելու սիրտ ուներ։ Սեղան նստան և սկսան ուտել խմել։ Բաւական ուտելէն ետև՝ ախիկինը բաժակ և շիշ մը առաւ, գինի լեցուց և ինքը Ճէմշիտին կնոջ առջև խմեց։ Երբ խմեց, նոյն բաժակը նորէն լեցուց և Ճէմշիտին ներկայացուց, և այս ալ անոր կնոջ բաժակը պարպեց։

Ճէմշիտ իր այս արկածին վրայ որչափ որ հոգ կ'ընէր, նոյնչափ կը զարմանար որ ատեն ատէր չէր երևեր, մանաւանդ թէ այսպիսի ձեռ և մեքենայ շահած տուն մը սպասաւոր մը չունէր։

«Իմ երջանկութիւնս տարօրինակ պիտի ըլլայ, կ'ըսէր ինքնուին, եթէ այս խաղը վերջանալէն ետև տան տէրը դառնար։» Մինչդեռ այս տեսակ մտմտուքով համակուած էր, ախիկինը շարունակ կ'ուտէր, ատեն ատեն գինի կը խմէր և ընկերն ալ կ'ստիպէր որ իր օրինակին հետևի։ Պատուղ ուտելու վրայ էին, երբ տան տէրն եկաւ։

Մոզայ Թափաւորին ախոռապետն էր այն, և Պահատէր կը կոչէր։ Ա՛յն տունն իրն էր, բայց ուրիշ մ'ալ ունէր ուր տարուբարար կը բնակէր։ Երբ քանի մը բարեկամներու հետ տանձին ուտել խմել ուզէր՝ այս բնակարանը կգար, իր տունէն պէտք եղածը բերել կտար, ինչպէս որ նոյն օրն ալ ծառաները բերեր էին, և Ճէմշիտ ու ախիկինը գալէն առաջ դուրս ելեր էին։

Պահատէր ծպտեալ և առանց սպասաւորի եկաւ, ինչպէս որ սովորաբար կգար, և բարեկամացը հետ որոշած ժամէն քիչ մ'առաջ փութաղեր էր։ Շատ զարմացաւ իր տանը դուռը բունի բացուած տեսնելով։ Անձայն ներս մտաւ, և լսելով որ սրահին մէջ կը խօսին և կ'ըզբօսանան՝ կամացուկ մը պատին քովէն սահեցաւ անցաւ, և գլուխը կէս մը անկելով՝ ներս նայեցաւ որ հասկնայ թէ խօսողներն որո՞նք են։ Երբ տեսաւ որ իր բարեկամաց համար պատրաստուած սեղանը նստեր էին երիտասարդ մը և ախիկին մը, և թէ այս պէսպէս իր կարծածին չափ ծանր բան մը չէր, միտքը զրաւ քիչ մը խնդալ։

Տիկինն՝ որ քիչ մը կռնակը զարձուցեր էր, չէր կրնար ախոռապետը տեսնել. բայց Ճէմշիտ առաջ տեսաւ զանի, այն միջոցին որ դինիին դառնը ձեռքն էր։ Ա՛յս տեսարին վրայ գոյնը փոխեց, աչքերը Պահատէրի վրայ անկեց, և Պահատէր նշան ըրաւ որ ձայն չհանէ և գայ իրեն հետ խօսի։

Ճէմշիտ պինդ խմից ու ոտք ելաւ. «Ո՞ւր կ'երթաս, հարցուց անոր ախիկինը։ — Տիկին, ըսաւ անոր իշխանը, խնդրեմ, քիչ մը սպասէ, վայրկենէ մը պիտի դառնամ. պզտիկ պէտք մ'ունիմ, և հարկ է որ դուրս ելնեմ։» Ուսաւ գնաց Պահատէրը դուռ, որ վերնարանը կ'բացուէր, որպէս զի պաշտնի անոր հետ խօսի։

Երբ Պահատէր և Ճէմշիտ իշխանը բակը հասան, Պահատէր հարցուց անոր թէ ինչ դիպուածով այն կնկան հետ իր տունն եկեր է և

ինչը համար դրան փականքը կոտրեր է :

«Տէր իմ, ըսաւ Ջէմշիտ, անշուշտ շատ յանցաւոր կ'երեւիմ քու աչքիդ, բայց եթէ համբերութեամբ ինձի մանիկ ընելու ջորհ ընես, յուսամ որ իս անմեղ սիտի գտնես :» Իր խօսքը շարունակից և եղածին պէս գործն անոր պատմից, առանց բան մը ծածկելու. և արդէս դի ախոռապետը լսելին համոզուի որ տան մը փականքը կոտրելու անար- ժան գործն ինքն ըրած չէ, յայտնից նաև թէ ինքն իշխանապետն մ'է, և թէ ինչ պատճառաւ Մոզերտն քաղաքը կը գտնուի :

Պահաստէր՝ որ 'ի բնէ օտարականները կը սիրէր, շատ ուրախացաւ որ Ջէմշիտի կարդի իշխանի մը բարեկ ընելու առիթն ունի : Եւ իրա- ւի, անոր կերպարանքը, պարկեշտ ձեւերը, մարդավար ու ընտիր ոճը տեսնելով՝ համկցաւ որ Ջէմշիտ անկեղծ օրէն կը խօսի :

«Իշխան, ըսաւ անոր, չափազանց ուրախ եմ որ այսպիսի ծաղրալի պարագայով մը քեզի բարեկ ընելու առիթը կը տեսնեմ : Ոչ միայն քու ինձմէդ քեզ ուզածը վրդովել, այլև սիտի աշխատիմ քեզ դոհ ընել ևս- վին : Ա յս մասին իմ կարծիքս յայտնելէն առաջ՝ կը փութամ ըսելու որ Թաղաւորին ախոռապետն եմ և Պահաստէր կը կոչուիմ : Ազարան մը ունիմ որ իմ սովորական բնակութեան տեղս է, և այս տունս ալ ընտ- րած եմ քանի մը բարեկամաց հետ տունն տունն դրօսնելու համար : Քու սիրտդ հատացուցիր որ դերի մ'ունիս, և արդէս դի տասը չտարնապես և ինքզինքդ արդարացնելու համար չշփոթիս, ահա կը կրկնեմ որ ի'ուզեմ քու դերիդ ըլլալ, և պատճառը հիմակ սիտի յայտ- նեմ : Ուստի դնա տեղդ նստիր և դրօսանքդ շարունակէ, և երբ քիչ տոնեսէն վերադառնամ և դերիի հազուստով քու առջևդ երթեմ, ինձի ազէկ մը լաս, և եթէ զարմիս ալ հոգ չէ. քեզ սիտի ծառայեմ սե- զանին վրայ մինչև կէս գիշեր : Իմ տունս սիտի պահկիը դու և սի- կինդ, և վաղն առտու պատուով իր տեղը կը դրկես : Ա յսու հետև սի- տի չկամիմ քեզի աւելի կարևոր ծառայութիւններ մատուցանել : Ու- րեմն դնա, և ժամնակ մի կորուսներ :» Ջէմշիտ ուզեց մեկնիլ, բայց ախոռապետը չթողուց և ստիպեց որ երեսայ իր կնկան քովը նստի :

Ա յն ինչ Ջէմշիտ սրահը մտաւ, որ ախոռապետին հրաշալի բան քեհյաճիներէն եկան : Քաղաքավար կերպով ողջունեց ու ներսին իրեն եթէ այն օրը դիրենք չկրնար ընդունիլ, և յայտնից թէ սիտի իրաւունք տան իրեն եթէ առաջին առթիւ պատճառն իմանան : Երբ բարեկամները դուրս եկան, ախոռապետը դնաց դերիին հազուստ մը հագաւ :

Ջէմշիտ իշխանը սիրիմջ քովը դնաց ուրախ սրտիւ, որովհետև դի- պուածով այնպիսի տուն մը մտեր էր որ ամբիւ և վհանձն մարդու մը ստացուածքն էր : Նորէն սեղան նստելով. «Տիկին, ըսաւ անոր, նե- րում կը խնդրեմ քեզմէ որ դերիս բացակայ դամաւելուն անբաղաբաւար եմ և սիրոս ստասիկ նեղացած է. ապիրատը փոխարէնը սիտի հատու- ցանէ. սիտի հասկցնեմ անոր որ ուրիշ անդամ այսչափ երկար ժամա- նակ դուրս չմնայ :

— Ասոր վրայ հոգ մի ըներ, վրայ բերաւ տիկինը. մեսի դլխին եւ- թէ յանցաւոր է : Ալ մի մտածեր անոր վրայ, և չանանք մեր զրօսանքը վայելելու :»

Ա յսպէս իրենց կերտխոսը շարունակելին այնչափ զուարճալեամբ որչափ որ Ջէմշիտ առաջուան պէս հոգ չունէր կնկան անհանգս- ցեան վրայ, որ պարտաւոր չէր դուրս բանի բանալ, եթէ տունը Ջէմշիտին անդամ ըլլար : Ինքն ալ կնկան չափ զուարճալիւն ցոյց, իրարու առնակ առնակ կատակներ ըսին, աւելի դինի քան կերակուր ճաշակելով, մինչև որ Պահաստէր դերիի հազուստով ներս մտաւ :

Պահաստէր իրը դերի երևցաւ, սասիկ նեղանալով որ իր տէրն ըն- կերուհի մ'ունէր և ինքն այնքան ուշացան կը գտնուար : Ուստի դնաին ընկաւ, հազը սպաւ անոր ներողամտութիւնը հայցելու համար, և երբ ոտք եղաւ, կանդնան կեցաւ՝ ձեռքերն իրարու կապած և աչիկը, և սպասից որ իր տէրն իրեն բան մը հրամայէ :

«Անդամ դերի, ըսաւ անոր Ջէմշիտ ցասկոտ աչքով և ձայնով մը, ըսէ տիմ թէ քեզմէ աւելի անդամ ծառայ մը կայ : Ո'ւր էիր որ այս ժամուս տուն կը գտնուես :

— Տէր իմ, վրայ բերաւ Պահաստէր, ներողութիւնդ կը խնդրեմ. ապսպրածներդ կատարեցի, չէի կարծեր որ այսչափ շուտ սիտի դաս :

— Ա պուշ ես, վրայ բերաւ Ջէմշիտ, ապերնիդով սիտի կոտրեմ որ ուրիշ անդամ ստա չվատես և պարտքդ կատարես :» Ուստի ոտք եղաւ, դատաղան մ'առաւ, և բաւական թեթև կերպով քանի մը հարուած ի-

ջեցաց անոր . յետոյ նորէն սեղան նստաւ :

Տիկինն այս պատմէն զոհ չեղաւ . ինքն ալ ատք եղաւ , վասն ա-
ռաւ , և այնչափ անխնայ ծեծից Պահատէրն որ աչքերէն արտասուք ե-
կաւ : Ճէմշիտ՝ կնկան այս ազատութենէ գոյժ ծիծաղելով , և տեսնելով
որ Թադաւորին մէկ սպասուհականն այսպէս կը դահավիժէ , սպառայ
տեղ կը պատառ որ բանական է , կինը շարունակ կը զարնէր : «Թող որ
ծեծեմ , կ'ըսէր նա , կ'ուզեմ սիրտս պաղչիլ և անոր սորվեցնել որ այ-
տուհետև այսպէս չըշահայ :» Կինը կը շարունակէր միշտ այնպիսի
կատաղութեամբ , որ Ճէմշիտ տխրութեան տեղէն երթալ , փայտը ձեռ-
քէն առնուլ , թէև դժուարաւ ձեռքէն խլեց : Կինը՝ տեսնելով որ ալ
չկրնար Պահատէրը ծեծել , իր տեղը նստաւ և անոր դլխին հազար
տեսակ նախատինք տեղաց :

Պահատէր արտասուքը սրբեց և ոտքի վրայ կեցաւ որպէս զի պա-
տուհիներէն դիմի լեցնէ : Երբ դիտեց որ ալ չեն խմեր և չեն ուղեր , սե-
ղանը վերցուց , սրահը սրբեց և ամէն բան կարգի դրաւ . իսկ երբ մու-
ճը կոխեց՝ մոմերը վառեց : Քանի տատ դերձն ներս մտնէր կամ դուրս
երթար , սիրկինը զանի կը յանդիմանէր , կ'սպառնար , կը նախատէր ,
թէև միւս կողմէն Ճէմշիտ կը դժկամակէր , որովհետև զանի խնայել
կ'ուզէր և չէր իշխեր բան մ'ըսելու : Երբ պատկելու ժամը հասաւ ,
Պահատէր բազմոցին վրայ անկողին մը պատրաստեց , և ուրիշ սենեակ
մը քաշուեցաւ , ուր շատով քունը կոխեց շատ յոդնած ըլլալուն :

Ճէմշիտ և սիրկինը կէս ժամէն առելի խօսակցեցան , և պատկելէն
առաջ՝ սիրկինը դուրս երթալ ուզեց : Վերնասրահէն անցնելու առեն ,
լսելով որ Պահատէր արդէն կը խրխռայ և սրահը թուր մը կախուած
տեսեր էր . «Տէր իմ , ըսաւ Ճէմշիտին ներս մտնելով , կ'աղաչեմ ,
իմ սիրոյս համար ինձի ծառայութիւն մ'ըրէ : — Ինչ հրաման ունիս ,
հարցուց Ճէմշիտ : — Ծնորհ ըրէ սա թուրն առնուլ , պատասխանեց
նա , և դնա գերիիդ դլուխը կտրէ :»

Ճէմշիտ այս առաջարկութեան վրայ չափազանց զարմացաւ , և
հասկցաւ որ կինին ղօրութենէն է : Ուստի ըսաւ . «Տիկին , մէկդի
թողուենք իմ դերիս , չարժէր որ անոր վրայ այդչափ խորհիս . պատ-
ժեցի , դուն ալ պատժեցիր կինքն . միւս կողմն՝ իրաւ շատ զոհ եմ , և

այսօրուան պէս միշտ յանցանք չգործեր :

— Ես այդ խօսքերով չեմ համոզուիր , վրայ բերաւ սիրկինը զայրա-
գին . կ'ուզեմ որ այն անօրէնը մեռնի , և եթէ քու ձեռքովդ չմեռնի ,
իմ ձեռքս պիտի դանէ իր մահն :» Այս խօսքերս ըսելով՝ ձեռքը
տարին տարաւ , պատեհանէն դուրս քաշեց և իր անօրէն խորհուրդը
կատարելու համար դուրս փախաւ :

Ճէմշիտ վերնասրահին վրայ զանի բռնեց և ըսաւ . «Տիկին , պէտք
է քեզ զոհ ընել , քանի որ կը բաղձաս . շատ պիտի ցաւիմ եթէ իմէն
ալ մէկը դերիիս կեանքը վերցնէ :» Երբ սիրկինը տեսը յանձնեց .
«Նկուր , ինձի հետևէ , յարեց նա , և ձայն չհանենք որ չարթնայ :»
Պահատէրի պատռած սենեակը մտան , բայց փոխանակ անոր զարնե-
լու , Ճէմշիտ կնկան զարկաւ և դլուխը կտրեց , որ Պահատէրի վրայ
ընկաւ :

Կնկան դլուխն սեղանատեղին քունը պիտի վրդովէր անշուշտ իր
վրայ ընկնելովը , եթէ տեսին հարուածին ազմուկը դիմացը չարթնցու-
ներ : Զարմացաւ միայն երբ Ճէմշիտ տեսաւ՝ արիւնոտաթաւ սրով և
կնկան մարմինը դետինն ընկած՝ անդլուխ , և անոր հարցուց թէ ինչ
կը նշանակէ այս բանս : Ճէմշիտ դործն եղածին պէս պատմեց և վեր-
ջապէս ըսաւ . «Որպէս զի կատաղի կինը քու դլուխդ չկտրէ , նախեցայ
որ ուրիշ Ճար չկայ , այլ միայն անոր դլուխը կտրել :

— Տէր իմ , վրայ բերաւ Պահատէր երախտապարտութեամբ , քու
առատաձեռնութիւնդ ունեցող մարդիկ չեն կրնար այսպիսի
անօրէնն դործերու հանդուրժել : Դու իմ աղատիչս ես , և որչափ շնոր-
հակալ ըլլամ քիչ է :» Ուստի զանի դրկեց՝ իր անբաւ շնորհապարտու-
թիւնը յայտնելու համար և ապա ըսաւ . «Զլուացած պէտք է այս դի-
ակը ասկից վերցնել ասանիկ :» Ճէմշիտ պէմ կեցաւ և ըսաւ թէ իրեն
կ'կրնայ տանիլ , որովհետև ինքը սպաներ է : «Քեզի պէս օտարական
մարդ մը չկրնար յայդնիլ այս դործին մէջ , պատասխանեց Պահատէր :
Թող որ ես պիտացած ընեմ , և դու հանդարտ նստիր այս տեղ : Եթէ
արևը չեզած չդառնամ , հասկցիր որ դիշերապահ ղօրքն իս բռնած
է . և այս պատճառաւ բոլոր աստն ու կարասին քեզ պիտի կտակեմ ,
և դու հոս կը բնակիս :»

Պահատէր կառքը դրեցին և Ջէմշիտի յանձնեցին եան՝ հինգ մարդիներ ալ հետ պարիսի մը մէջ դրաւ, պարիսը շալակը զարկաւ և փողոցէ փողոց քալելով ծովին ճամբան բռնեց: Արդէն ծովուն մօտ հինգ էր, ուստիկանութեան գաւառապետը տեսաւ որ անձայն կը շրջէր: Գաւառապետը մարդիկը Պահատէրը ձերբակալ ըրին, պարիսը բացին և ոսկեզօծ հինգ մարգիներն ու իր դրամին մեծ մասը գտան: Գաւառապետը ճանչցաւ ախոռապետն, թէև ծպտեր էր և իր տունը տարաւ, և որովհետև մեծ բարձր պաշտօնին պատճառաւ չէր կրնար սպասնել զանի, առանց թագաւորին հաւանութեան, հետևեալ առտու առաւ և զանի թագաւորին ներկայացուց: Երբ սրբոյն գաւառապետը բերնէն այս ճշիրն իմացաւ, որով ախոռապետին յանցաւոր ըլլալը նշանները կ'իմացուէր, անոր դէմ նախատինք ժայռ քեց: «Ըրիմն այսպէս, դուխց նա, իմ հպատակներս կը ջարդես որպէս դի կողոպտես, և բռնութիւնդ ծածկելու համար մեծ մարդիներ ծովը կը նետես: Խելօք ասէ՛ք և կախեցէ՛ք այս մարդը:»

Ոչխարի որ անմեղ էր Պահատէր, մահուան վճիռը կարելի եղած համբերութեամբ ընդունեց և ինքզինքն արդարացնելու համար բերնէն խօսք մը չհանեց: Գաւառապետը զանի տարաւ, և երբ կախաղանը կը պատրաստէին, մանեակի հանեց որ քաղքին մէջ հրատարակէ այս արդարութեան գործն, և կէսօրին ախոռապետին կախաղան հանուելը:

Ջէմշիտ իշխանը պարապ տեղ ախոռապետը սպասելէն եաև՝ անհնարին սրտատրոփի մէջ ընկաւ, երբ այն աղաղակը լսեց գտնուած տունէն: «Եթէ, ըսաւ ինքնիվին, այնպիսի անզգամ հինգ մահուան համար մէկը սպաննել սէտ է, չէ թէ ախոռապետն, այլ ես սէտ է որ սպաննեն, և չսիսոն թագաւո՛ր անմեղ մարդ մը յանցաւորին տեղ պատժուի:» Առանց վարանելու անմիջապէս դուրս ելաւ և գլխաւորութիւնն ընկալիք հրապարակը դնաց, բոլոր ժողովուրդին հետ որ ամէն կողմէն դէպ ի հոն կը վազէր:

Երբ Ջէմշիտ տեսաւ գաւառապետն որ Պահատէրը կախաղանը կը տանէր, դնաց անոր ներկայացաւ և ըսաւ. «Ցէր իմ, հինգ քեզ յայտնեցաւ և հաւատալու որ կախաղան տարած ախոռապետդ անպարտ է

այն հինգ մահուանէն: Ես գործեցի այն ոճիրն, եթէ ոճիր մ'է գարշելի կին մը սպաննելը որ ի'ուզէր ախոռապետին գլուխը կտրել, և ահա պարծին է ասիկա:»

Երբ Ջէմշիտ իշխանը գաւառապետին պատմեց թէ ինչպէս բանին քէնը հնչեցուն այն հինգ հանդիսաւը, ինչպէս ախոռապետին առանձին տունը մտեր է, և թէ հիչեր անցան մինչև որ սահպատեր էր հինգ գլուխը կտրելու, ախոռապետին ալ ազատելու համար, գաւառապետը գլխաւորութիւնն ետ ձգեց և ախոռապետին հետ Ջէմշիտը թագաւորին առջևը հանեց:

Թագաւորը նոյն ինքն Ջէմշիտի բերնէն իմանալ ուզեց գործն, և Ջէմշիտ ալ իր և ախոռապետին անմեղութիւնն աւելի աղէկ երևան հանելու համար, այս առիթը բռնեց իր և էսէտ եղբօրը պատմութիւնն ընելու, սկիզբէն մինչև իրենց գալուստն այն քաղաքն և մինչև ներկայ դէպքը:

Երբ իշխանը խօսքն աւարտեց. «Իշխան, ըսաւ անոր թագաւորը, շատ ի'ուրախանամ որ այս առիթս քեզ ճանչցայ, ոչ միայն ինչպէս քու՝ նոյնպէս ախոռապետիս կեանքը քեզ կը բաշխեմ, (որ գոնէ լի քեզ ցոյց տուած մարդասիրութեան համար, ուստի և իր աշխատութեան մէջ կը հաստատեմ) այլեւս քեզ իմ վեզիրս ի'անուանեմ, որպէս զի հօրդ անիրաւ, բայց արդարանալի վարմունքը քեզի դէմ մոռցընել տամ: Բայց էսէտ եղբօրդ գալով քեզ հրաման կուտամ որ զանիք դանելու համար բոլոր իշխանութիւնդ ի'գործ դնես:»

Ջէմշիտ Մոզայ քաղքի թագաւորին իր շնորհակալութիւնը յայտնեցնելէն և վեզիրութեան բարձր պաշտօնը առանալէն եաև՝ առին լի միջոց ի'գործ դրաւ իր եղբայրը գտնելու համար: Մտածեցին որ բոլոր քաղքին մէջ հրատարակեն թէ ով որ էսէտն իրեն բերէ կամ անոր վրայ լուր մը հաղորդէ, մեծ վարձք մը պիտի շնորհէ: Նոյնպէս այլ և այլ կողմեր մարդիկ ղրկեց, բայց թէև այսքան ջանք և ճիգ ըրաւ, գտնել եղբօրը վրայ լուր մը չստացաւ:

Սակայն էսէտ՝ չարաճիճ ծերունին ճարպիկութեամբը միշտ զնդանին մէջ ղեղծայական պահուած էր. իսկ Պօստան ու Կամամի և նոյն անպիտանութեամբ զանի կը տանջէին: Հրապարակներուն հանդիսաւոր տօ-

նին օրը մտեցած։ Արանի լեռն ուղևորութիւն ընող նաը պատրաստ ըլլին, ջերմեռանդ կրակապաշտ Պէհրամ անուն նաւապետին խնամքը նաը վաճառքով բեռնաւորելին, և երբ ձմեռայ եղանակը համար կազմուած պատրաստ եղաւ, Պէհրամ Էսէտը նաը տարաւ, կէս լեցուն մնուածով մը, որուն ապահովները տեղ տեղ բաւական բաց էին, որպէս զի Էսէտի ընչաւորութիւնը չկորի, և մնացեալը նաւուն խորշն լեցուցին։

Նաւն առագաստները չպարզած՝ ձէմշիտ մեծ վէգերն, խնամալով որ հրապարակները սովոր են ամէն տարի մահմետական մը գտնել կրակին լերան վրայ, մտածելով որ կարելի է իր եղբայրն անոնց ձեռքն ընկած, և այս արհնաւոր արարողութեան սահմանուած է, ուստի ուղեց նաւուն այցելութիւն մ՚ընել։ Անձամբ նաը գնաց և բոլոր նաւորդներն և անցորդները կամրջին վրայ հանել տուաւ, մինչդեռ իր ապառաւորները նաւուն ծակը ծուկը կը մանէին Էսէտը գտնելու համար, բայց Էսէտ խիստ ծածուկ տեղ մը պահուած էր։

Ա՛յն այցելութենէ ետքը՝ նաը նաւահանգստին եկաւ, և երբ բաց ծովը հասաւ, Պէհրամ հրաման տուաւ որ Էսէտը մատուիէն դուրս հանեն, շղթայի կապէն որ աւելի ապահով ըլլայ, վասն զի կը վախնար որ յանահատութենէ լինչքինքը ծովը չնետէ, ողջակիզ ըլլալէն խալրնելու համար։

Քանի մ՚օր նաւարկելէն ետև, հովէն՝ որ առաջ յաջող էր, դարձաւ և այնքան սաստկացաւ որ ահռելի փոթորիկ մը հանեց։ Նաւն իր ճամբան կորսնցուց. Պէհրամ և իր նաւուղիղը չդիտէին թէ ուր կը գտնուէին, և կը վախնային որ ապառաժի մը հանդիպելով՝ նաը չխորտակի։ Փոթորկին սաստիկ ժամանակը ցնանքը տեսան, և Պէհրան հասկցաւ որ Մարկիանէ Թագուհւոյն մայրաքաղքին նաւահանգիստն է այն, և ասոր համար սաստիկ ցաւ զգաց։

Եւ արդարև Մարկիանէ Թագուհին, որ մահմետական էր, կրակապաշտից անհաշտ թշնամութիւն ունէր։ Ոչ միայն չէր ներեր որ կրակապաշտ մ՚իր երկիրը բնակի, այլև արգիլեր էր որ անոնց նաւերն իր ափերուն եղերքը մօտենայ։

Սակայն Պէհրան նաւապետն ակամայ ստիպուած էր Մարկիանէ

Թագուհւոյն նաւահանգիստը մտնել, որպէս զի իր նաը ծովեզրի վրայ գտնուած սոսկալի ժայռերուն դէմ զարնելով չխորտակի։ Ա՛յս անհնարին վտանգը տեսնելով՝ իր նաւուղիղին և նաւաստիներուն հետ խորհուրդ ըրաւ։

«Տղաք, ըսաւ, կը տեսնէք թէ ինչ ծանր վտանգի մէջ ընկած ենք։ Երկու ճամբայ կայ բռնելիք. կամ պէտք է որ ալեաց մէջ ընկղմինք, և կամ Մարկիանէ Թագուհւոյն նաւահանգիստն ապահովինք. բայց այս Թագուհւոյն մեր կրօնքին և անոր հաստատելոյ դէմ ունեցած ոխերիմ տեսլութիւնը ձեզի յայտնի է։ Անտարակոյս մեր նաւը պիտի բռնել, և անխնայ մեզ պիտի սպանել տայ։ Գտնման մը միայն կայ, որով թերևս ազատինք այս փորձանքէն, պէտք է որ մեր նաը դանուղ մահմետականին շղթան քակենք և պերճի հպատակ հաղորդենք։ Երբ Մարկիանէ Թագուհին իմ իր առջևը հանել տայ և հարցնէ թէ ինչ առուտուր կ՚ընեմ, պիտի պատասխանեմ թէ գերիներու վաճառական եմ, թէ բոլոր գերիներս ծախքս և միանակ հատ մը պահեր եմ, որպէս զի իմ դրամիս ընեմ, որովհետև կարդալ գիտեմ։ Ա՛յն ատեն Թագուհին գերին տեսնել պիտի ուզէ, և որովհետև վայելչագեմ է և անոր կրօնակից, կարելի է որ թենէն պիտի առաջարկէ անշուշտ որ զայն իրեն ծախեմ, և անոր սիրոյն համար պիտի Թողուր որ իր նաւահանգիստը մտնէք՝ միտքը՝ որ յաջող հով մը գտնէք։ Եթէ ասկից աւելի յարմար միջոց մը գիտէք, ըսէք, և ձեր խորհրդին կը հետևիմ։» Նաւուղիղն և նաւաստիներն այս առաջարկութեան հաւանեցան և անոր գործադրութիւնը խնդրեցին։

Պէհրամ Էսէտին շղթաները քակել տուաւ, գերիի պէս մատուր հագցուց, իրը նաւին գրագիրը, զոր այս անուամբ Մարկիանէ Թագուհւոյն ներկայացնելու միտք ունէր։ Ա՛յսպէս ամէն բան կարգադրելէն ետև՝ նաը նաւահանգիստը մտաւ և երկաթ նետեց։

Մարկիանէ Թագուհւոյն պատարը ծովեզրին վրայ էր, այնպէս որ պարսէզը մինչև ծովափը կ՚երկնար։ Ուստի երբ տեսաւ որ նաւն երկաթ նետեց, խնդութեան մարգ գրկեց նաւապետին որ գայ իրեն տեսնէ, և իր հետաքրքրութիւնն աւելի շուտով գոհ ընելու համար, վար իջաւ և պարսիզին մէջ անոր սպասեց։

Պէհրամ՝ որ արդէն դիտէր թէ պիտի կանչուի, շուտ մ՚էսէա իշխանին հետ նաւակը մտաւ, պատուիրելով անոր որ ըսէ թէ իր պէրին և պրաղին է, յանձքը հասաւ և Թագուհւոյն ներկայացաւ: Նաւապետը Մարկիանէ Թագուհւոյն ոտքն ընկաւ, ըսաւ թէ անոր նաւահանգիստը մտնելու հարկադրուեր է, և յետոյ իմացուց որ պերավաճառ է, թէ Էսէա՝ զոր իր հետը բերեր էր, մէկ հատիկ պերլին է՝ զոր իրը պրաղիը կը պահէ:

Մարկիանէ Թագուհին՝ Էսէայ սեռնելուն՝ աչքին զարկեր էր, և շատ ուրախացաւ խմնալով որ պերլի է: Զանի դնելու մտադրելով՝ ինչ պին որ ուզուի, հարցուց Էսէային թէ անունն ինչ է:

«Սեծդ Թագուհի, պատասխանեց Էսէա արտասուալին, մինչէ Ձեր վեհափառութիւնը նախորդ անունս կը հարցնէ, թէ ոչ արդի անունս: — Ինչ, պատասխան տուաւ Թագուհին, միթէ երկու անուն ունիս: — Ասիղ, այո, երկու անուն ունիմ, կրկնեց Էսէա: Առաջ մը Էսէա կը կոչուէի (շատ երջանիկ) և այսօր Մօղար կը կոչուիմ (ողջակէզ ըլլալու սահմանուած):»

Մարկիանէ Թագուհին՝ որ այս պատասխանին բուն իմաստը չէր կրնար բմբռնել, անոր պերութեան վիճակին յարմարցուց, և նոյն պատճառն ալ՝ որ շատ խելացի երիտասարդ մ՚է: «Քանի որ պրաղիը ես, ըսաւ անոր, տարակոյս չունիմ որ քաջ կը գտնես. ինդրեմ, ցցուր ինձի պերլ:»

Էսէա՝ որ իր պօտին անցուցած կաղամար ու Թուղթ ունէր պէհրամի հաղորդութեամբ, վասն զի այս պարագաները չէր մոռցած, որպէս զի իր ուզածը Թագուհւոյն հաղորդէ, քիչ մը մէկդի քաշուեցաւ, և սա առածները գրեց, որ իր Թշուառութեան վերաբերութիւն ունէին:

«Կայսրը կը խորշի այն փոսէն՝ ուր հեռաւոյն ականայ կ՚ելլայ: — Տղէսը բարձր պաշտօնեաներու կը հանդի այնպիսի խօսքերով որ բան մը չեն նշանակեր, իսկ պիտանը հողին վրայ կը նստի իր Ճարտասանութեամբը: — Մահմետականն իր բոլոր հարստութեամբը Թշուառութեան մէջ է, անհաւատն իր բարօրութեան մէջ կը բարձրանայ: — Պարելի չէ յուսալ որ գործերը փոխուին. Ամենակարողին վճռովն այս

վիճակին մէջ կը մնան:»

Էսէա այս Թուղթը Մարկիանէ Թագուհւոյն ներկայացուց, որ առածներուն բարոյական իմաստին, նոյնպէս պերլին աղօթութեան վրայ զմայլեցաւ. այս բանական եղաւ իր սիրտը բորբոքել և Ճշմարիտ պէհովմը շարժել: Ան ինչ Թուղթը կարդայ որ Պէհրամի դառնալով ըսաւ. «Ընտրէ. կամ այս պերլին ինձի ծախէ և կամ ընծայ ըրէ. կարելի է աւելի շահաւոր եղեռն եթէ վերջին միջոցն ընտրես:»

Պէհրամ լրջօրէն պատասխանեց թէ բան մը չուզեր ընտրել, թէ իր պերլէն պէտք ունի և թէ միայն զանի պահել:

Մարկիանէ Թագուհին՝ այս յանդգնութեան վրայ զայրանալով չուզեց աւելի խօսիլ Պէհրամին հետ. Էսէային Թելէն բռնեց, իր աւջեւէն քալեցուց և իր պալատը առնելով մարդ դրկեց Պէհրամին և իմաց տուաւ որ բոլոր ապրանքը գրաւել և նաւահանգստին մէջ նաւը կրակի պիտի տայ, եթէ պիշերը հոն անցնէ: Պէհրամ իր նաւը դառնալու և ճամբայ ելնելու համար ամէն բան առ հարկի պատրաստել տուաւ, թէև փոթորիկը դեռ բոլորովին դադրած չէր:

Մարկիանէ Թագուհին՝ իր պալատը մտնելով ընթրիքը պատրաստելու ապսպրեցէն ետև՝ Էսէան իր սենեակը տարաւ իր քովը նստեցուց: Էսէա առջի բերան դէմ կեցաւ, ըսելով թէ այս պատիւը չվայելեր դերլի մը:

«Դերլի՛ մը, պատասխանեց Թագուհին. վայրկեան մ՚առաջ դերլի էիր, ալ դերլի չես. քեղի կ՚ըսեմ որ իմ քովս նստիս և պատմութիւնդ ինձի պատմես. որովհետև դիրդ ցցոյ տալու համար դրածէդ, և այն վաճառականին լրբութենէ կը դուշակեմ որ տարօրինակ պիտի ըլլայ պատմութիւնդ:»

Էսէա իշխանը հնազանդեցաւ, և երբ նստաւ. «Հզօր Թագուհի, ըսաւ անոր, Ձեր վեհափառութիւնը չխոտորի. իրօք տարօրինակ է իմ պատմութիւնս, և ձեր երևակայածէն աւելի: Քաշած տղէտքս ու անհատաւալի տանջանքս, ինձի համար պահուած մահն՝ որպէս վեհանձնութեամբդ իս ազատեցիր, պիտի յայտնեն ձեզ ինձ ըրած բարեութեանդ մեծութիւնը զոր բնաւ չպիտի մոռնամ: Բայց այս կիսին վրայ խօսելէն առաջ, որ սակաւ կը պատճառէ, պիտի ներէք ինձ

որ սկիզբէն պատմեմ իմ տառապանքս ։»

Ա յս յառաջաբանէն ետքն՝ որ Մարիխանէ Թադուհւոյն հետաքրքրութիւնն աւելցուց, Էսէտա սկսաւ իր և ՃԷմիլիա եղբօրն արքայական տոհմին վրայ խօսիլ. յայտնեց իրենց վսեմագարմ բարեկամութիւնն, իրենց խորին մօր դաստիարակութիւնն, որ ամենազգուելի առեւտրութեան մը փոխուելուց, և իրենց այլանդակ ճակատագրին զրկիչն եղաւ ։ Ցետոյ նկարագրեց իրենց հօրը բարերութիւնն, և վերջապէս իր եղբօրը կորուստն և իր երկարատև և վշտալի բանտարկութիւնն, ուսկէ ազատեր էր միայն Կրակի լեռը զոհ ըլլալու համար ։

Երբ Էսէտա իր խօսքը լմնցուց, Մարկիանէ Թագուհին, հրապարտաներուն դէմ ևս քան զևս զայրանալով ըսաւ. «Իշխան, թէև կրակապաշտից դէմ միշտ առելութիւն ունեցած եմ, բայց դարձեալ հետերնին մարդասիրութեամբ կը վարուէի, բայց քեզի դէմ այսպէս բարբարոսական վարմունք մը ցուցնելէն, և քեզ իրենց կրակին մէջ այրելու դիտաւորութիւնն իմանալէն ետև՝ հիմայէն անհաշտելի պատերազմ մը կը հրատարակեմ անոնց դէմ ։»

Ա յս նիւթիս վրայ աւելի խօսիլ ի՛ուզէր, բայց կերակուրը բերին և Էսէտային հետ սեղան նստաւ, անոր տեսքէն և խօսքէն զմայլած, և արդէն այրած ըլլալով սիրով մը զոր առաջին առթիւ անոր յայտնելու միտքը դրեր էր ։

«Իշխան, ըսաւ, պէտք է որ այն անագորոյն կրակապաշտներուն քեզի տուած անպիտան կերակուրներուն և ծոմապահութեան վրէժն առնուս. անունդի պէտք ունիս այնչափ տառապանքէ ետքն ։» Եւ այս ու ասոր նման խօսքեր ըսելով՝ անոր առջևը կերակուր կը դնէր և ուռւէ ետև բաժակը կը լեցնէր ։ Ճաշն երկար տևեց, և իշխանը տարբածէն աւելի գինի խմեց ։

Երբ սեղանը վերցուցին, Էսէտա դուրս ելնել ուզեց, և այնպիսի միջոց մ՚ընտրեց որ Թագուհին անոր դուրս ելնելը չտեսաւ ։ Թոյն չաւ, և պարտիզին դուռը բաց գտնելով՝ ներս մտաւ ։ Այն տեղ տեսաւ դեղեցիկ բաներէն հրապուրուելով բաւական տեղն ժուռ եկաւ ։ Վերջապէս մինչև շատրուանը գնաց, որ պարտիզին ամենէն աղտոտ

զարդն էր. անոր մէջ ձեռքերն ու երեսը լուայ զովանալու համար, և ուզելով դալարիին վրայ հանգչիլ, որ աւազանին չորս կողմը կը պատէր, այն տեղ քունը տարաւ ։

Այն միջոցին պիշերը կը մօտենար, և Պէհրան, որ կը վախնար Մարկիանէ Թագուհւոյն տալիք տալ իր ապատնալիքը գործադրելու, արգէն նաւուն երկաթը քաշեր, շատ ցաւելով Էսէտա կորուսնելուն և զանի ոչ ջանիդ ընելու յայտ՝ի դերև եղնելուն ։ Սակայն կը ջանար միխթարուիլ տեսնելով որ փոխարիկը գտեր էր և յամաքէն փչող հովը հեռանալու կը նպաստեր ։ Այն ինչ նաւահանգստէն դուրս ելաւ իր նաւակին օդնութեամբը, դեռ նաւը չառած զգայ.

«Տղաք, ըսաւ անոր մէջ գտնուղ նաւաստիներուն, սպասեցէք, վեր մ՚երթանք. սահմանները պիտի բերել տամ որ երթաք ջուր բերէք, և ես ալ ծովեղերքը պիտի սպասեմ ձեզի ։» Նաւաստիները ներսը մխրճելնին ըսելով թէ այն կողմերը ջուր չկանուիր. բայց Պէհրամ Թագուհւոյն հետ պարտիզին մէջ խօսելու առնն շատրուանը տեսեր էր, ուստի նաւաստիներուն ըսաւ. «Գացէք սպասելին պարտիզին մօտերէքը, պատէն անցէք, որ շատ բարձր չէ, և պարտիզին մէջ տեղ գտնուած աւազանին մէջ բաւական ջուր կը գտնէք տակառները լեցնելու ։»

Նաւաստիները Պէհրամին նշանակած տեղը գացին մօտեցան նաւակով. ամէն մէկը տակառ մ՚առաւ ուսը, նաւէն ելաւ և շատ գիւրաւ պատէն անցնելնին տակեց ։ Երբ աւազանին մօտեցան, պատկած մարդ մը նշմարելով դէպ՚ի անոր գացին և տեսան որ Էսէտա է ։ Այն առեն նաւաստիները խումբ խումբ զատուեցան, այնպէս որ՝ մինչդեռ մէկ քանին տակառները ջուր կը լեցնէին շշուկ չհանելով, ուրիշներն ալ Էսէտային բոլորտիքն առեր կը պահէին որ եթէ արթննայ խոհոյն բռնեն տանին ։ Թայց Էսէտա խոր քուն էր և նաւորդները ժամանակ ունեցան տակառները լեցնելու և կոնակնին առնելու. այն առեն ոմանք ալ Էսէտը բռնեցին, և սթափելու ժամանակ չտալով գրկեցին, պատէն անցուցին զանի, և նաւակ դնելով շիտակ նաւը տարին անդադար թիք քաշելով ։ Երբ նաւին մօտեցան. «Նաւապետ, պոռացին ուրախութեան աղաղակներով, թմբուկներդ և սրնդեներդ խաղալ տուր, ահա գերիդ նորէն բերինք ։»

Պէհրան որ չէր կրնար հասկնալ թէ ինչպէս Էսէտ իր նաւաստիներուն ձեռքն ընկեր է, և մանր ըլլալուն՝ չէր կրնար տեսնել զանի նաւակին մէջ՝ անհամբեր սպասեց որ նաուն երևին, որպէս զի հարցնէ թէ ինչ ըսել կ'ուզեն։ Բայց երբ Էսէտ իր աչաց առջև տեսաւ, չկրցաւ իր ուրախութիւնը զսպել, և առանց հարցնելու թէ ինչպէս այս դեղեցիկ օրսը ձեռք ձգեր են, իսկոյն շղթայի զարնել տուաւ, յետոյ նաւակը քաշելէն ետև նաուն մէջ, բոլոր առաջնորդները բանալ տուաւ և դէպ 'ի Կրակի լեռը դիմեց։

Սակայն Մարկիանէ Թագուհին մեծ սիրտնաղի մէջէր. առաջ հոգ չըրաւ տեսնելով որ Էսէտ իշխանը դուրս ելեր է, կարծելով թէ անմիջապէս կը դառնայ. ուստի անհամբեր սպասէց։ Բայց երբ քիչ մ'առաջեն անցնելով՝ տեսաւ որ եկող դարձող չկայ, սկսաւ վրդովիլ։ Հրամման տուաւ կ'իներուն որ երթան նային թէ ինր է. դարձին փնտռելու զանի, սակայն չկրցան գտնել. գիշեր եղաւ, Ճրագով ամէն տեղ փնտռելու եղան նորէն, բայց գարձեալ անօգուտ տեղը։

Ա'յն տուն Մարկիանէ Թագուհին մեծ հնչհնուքի մէջ ճնայ և սրտին նեղութենէն ինքն անձամբ եկաւ չահերով որ Էսէտը փնտռէ. երբ տեսաւ որ պարտիզին դուռը բաց է, ներս մտաւ և իր կիներով ամէն կողմը դարձաւ. շատրուանին քովէն անցնելու ատեն, դալարիին վրայ հողաթմբի մը նշմարեց, դեռևէն վերցնել տուաւ, և գիտեց որ իշխանին է։ Ա'յս պարագային զան՝ տեսաւ որ աւազանին եղերը ջուր թափած է, և ամէից կասկած ընկաւ միտքն որ Թերևս Պէհրան եկած ու յափշտակած է զանի։ Իսկոյն մարդ ղրկեց որ իմանան թէ արդեօք տակաւին նաւահանգիստն է. և երբ իմացաւ որ մերը չկոխած ձամբ բաց եղեր է, թէ ծովեղերը քիչ մը կեցեր՝ նաւակով ջուր առնելու եկեր են նաւաստիներն, անոնցմէ իմաց տուաւ՝ միշտ առաջին հրամանին ձամբայ ելնելու պատրաստ դտնուղ վեց պատերազմական նաւերու ծովապետին, որ հետևեալ օրն ինքն անձամբ ժամը մէկին նաւ պիտի մտնէ և պիտի ձամբորդէ։

Ծովապետն իսկոյն պէտք եղած պատրաստութիւնն ըրաւ. նաւապետները, միւս պաշտօնակալները, նաւաստիները, զինուորները դուս մարեց և Թագուհւոյն հրամայած ժամուն ամէնքը նաւերը հասան։

Թագուհին ալ նաւ մտաւ և երբ իր նաւատորմը նաւահանգստէն դուրս ելաւ առաջնորդները պարգած, իր դիտաւորութիւնը ծովապետին յայտնեց։

«Կ'ուզեմ որ, ըսաւ, բոլոր առաջնորդները բանաս և երկուքերուն նաւահանգստէն ելնող նաուն եռանէն երթաս։ Եթէ այն նաւը բռնես՝ քեզի պիտի բաշխեմ, եթէ չբռնես՝ գլխիդ պիտի կարեմ։»

Վեց նաւերը Պէհրանի նաուն եռանէն ընկան երկու օր ամբողջ և բան մը չտեսան։ Երրորդ օրը՝ լուսնալուս մօտ՝ զանի հեռուէն նշմարեցին, և կէսօրին անոր չորս կողմն առին, այնպէս որ չէր կրնար փախչիլ։

Ա'յն ինչ անպատճառ Պէհրամ վեց նաւերը տեսաւ, իսկոյն դուշակեց որ Մարկիանէ Թագուհւոյն նաւատորմը գինքը կը հալածէ, և այն միջոցին Էսէտը կը դանահոծէր. վասն զի Մոզայ քաղքէն իր նաւը մնանելէն ի վեր առէն օր մի և նոյն ձեռը կտար Էսէտին. սակայն այս նոր դէպքին վրայ ձեռը սասկացաւ։ Մեծ եղաւ շփոթութիւնն երբ գիտեց որ քիչ առնէն պիտի պաշարուի։ Եթէ Էսէտը պահէր՝ իր յանցանքը պիտի երևան հանէր, եթէ սպանէր՝ կը վախնար որ այս սպանութեան նշանը կը մնար։ Ուստի անոր շղթանները քակել տուաւ, զանի նաուն խօրէն հանել և իր առջևը բերել տուաւ. «Քու պատճառուդ է որ իս կը հալածեն» ըսաւ անոր։ Եւ այս խօսքերն ընդոմէջ զանի ծովը նետեց։

Էսէտ իշխանն որ լողալ գիտէր, ուրտով և ձեռքով աշխատեցաւ մեծ արիութեամբ, և ալիքներու նպաստաւոր շնորհիւը՝ կարող եղաւ դիմանալ և ցամաքն երթալ։ Երբ ծովեղերը հասաւ, առաջին գործն եղաւ շնորհակալ ըլլալ Աստուծոյ որ այսպիսի մեծ վտանգէ մը գինքն ազատեց և չմոռցաւ որ հրաշագործութեան ձեռքը մնայ։ Ցնծայ հոգւովը հանեց, անոր ջուրը քամեց, ժայռի մը վրայ փռեց, և թէ արևուն տաքութենէն և թէ նոյն իսկ ապառաժին կերմութենէ լաթերը չորցան։

Սակայն իր թշուառութեան վրայ ողբալով քիչ մը հանգիստ ըրաւ, և չգիտեր թէ ո'ր երկիրը կը գտնուի և ո'ր պիտի երթայ։ Վերջապէս իր ղեկտը հաստ և քաշեց՝ ծովէն չհեռանալով մինչև որ չիտակ

Ճամբայ մը դատ և շարունակեց։ Տան օբէն ասելի յատակ գլեց, այնպիսի երկրի մը վրայ ուր բնակիչ չկար, այլ միայն վայրի գոմուղներ և դեսերուն ափունքն այլ և այլ բոյսեր կը գտնէր և անոնք ի՛մպրեր։ Վերջապէս քաղաք մը հասաւ և անոնց որ Մոզայն է, ուր այնչափ աղէտ կրեր էր և իր ճէմիլիա եղբայրն ալ վէպիր էր։ Մեծ եղաւ իր ուրախութիւնը, բայց միտքը դրաւ որ չմօտենայ, այլ մահմետական մը դտնէ և իրցուն անոր յայտնէ. վասն զի կը յիշէր որ առաջին անգամ գալուն՝ քանի մը մահմետականներ անոնց էր։ Որովհետև առեղն ուշ էր, խանութները գոց և փողոցները մարդ չկային անոնք, որոշեց դերեզմանոցն օթևանիլ, որ քաղքին մօտ էր՝ և շիրմի ձեռով գերեզմաններ կային։ Աղխ անգին փնտռելով՝ շիրիմ մը դատ որուն դուռը բաց էր, ներս մտաւ՝ գիշերն այն տեղ անցնելու մտօք։

Հիմակ Պէհրամի նաւուն դառնանք։ Մարկիանէ Թադուհին նաւատորմը քիչ առնէն Պէհրամը մօտէն պաշարեց, Էսէտը ծովը նետեցին հոն։ Թադուհւոյն հեծած նաւն անոր մօտեցաւ, և որովհետև Պէհրամ անոր դէմ դնելու անկարող էր, առագաստները ծալել տուաւ, խնայելու համար որ անձնատուր կ'ըլլայ։

Մարկիանէ Թադուհին անձամբ Պէհրամի նաւն անցաւ և հարցուց թէ ո՞ւր է այն գրագիրը զոր իր պալատէն յափշտակելու յանդգներ էր։ «Թագուհիս, պատասխանեց Պէհրամ, Ձեր վեհափառութեան առջև երդում կ'ընեմ որ այն գերին նաւիս մէջ չէ, կրնաք խուզարկել տալ և իմ անմեղութիւնս փորձով իմանալ։»

Մարկիանէ Թադուհին նաւուն ամէն կողմը խուզարկել տուաւ, բայց ինչպէս որ խանգարին կը փափաքէր, չիրցաւ գտնել այն անձը՝ զոր ոչ միայն կը սիրէր, այլև իրեն յատուկ վեհանձնական գործ մ'ընել կ'ուզէր։ Մազ մնաց Պէհրամն իր ձեռօքը սպանէր, բայց ինքզինքը զսպեց և բանական հանգրեց անոր նաւն ու բեռը գրաւել և գինքն՝ իր բոլոր նաւասպներով նաւարկն իջեցնել տալով գյանաքը հանել։

Պէհրամ՝ իր նաւորդներուն հետ՝ Մոզայ քաղաքը հասաւ ճիշտ այն գիշերն որ Էսէտ գերեզմանատունն օթևաններ և շիրմին մէջ քաշուեր էր։ Որովհետև քաղքին դուռը գոց էր՝ Պէհրամ ուխտուեցաւ դերեզմանատան մէջ պատսպարան մը գտնել, որպէս զի մինչև առաւ-

ռաքե։

Գիշերվաղարար Պէհրամ Էսէտին դանուած շիրմէն անցաւ։ Ներս մտաւ և մարդ մը տեսաւ որ գլուխը գետտովը ծածկած պառկեր էր։ Էսէտ ոտքն ձայն լսելով արթնցաւ, գլուխը վերուց և հարցուց թէ ով է։

Պէհրամ խնդրեց ճանչցուց զանի. «Հա, հա, ըսաւ, ուրեմն դու հոս ես, դու որ՝ ի սպառ իմ կործանումանս պատճառ եղար. այս տարի գոհ չեղար, բայց իմ ձեռքիս տակն ես և գալ տարուան համար պատրաստուէ։» Այս լսելով անոր վրայ ընկաւ, թաշխնեակն անոր բերանը խօթեց որպէս զի չգոռայ, և նաւատակներուն ձեռօք զանի կաշկանդել տուաւ։

Հետևեալ օրը՝ քաղքին դուռը բացուելուն Պէհրամ՝ ծածուկ ճամբաներէ ուր գետ մարդ չկար, Էսէտը ձերունիին տունը տարաւ, այն ձերունիին որ գինքն անօրէն հնարքներով ծուղակը ձգեր էր։ Երբ տան հասան, իր առջի գիշերանն իջեցնել տուաւ զանի և ձերունիին իմացուց իր վերադարձին պատճառը և ուղևորութեանը ձախողելն։ Անգղամ ձերունին նորէն ապստղեց իր երկու աղջկանց որ եթէ կարելի է առաջուանէ ասելի տանջին տարաբաղդ իշխանը։

Էսէտ չափազանց զարմացաւ երբ ինքզինքը գտաւ այն տեղն ուր արգելն անհնարին տառապանք կրեր էր, և քանի գիտնալով որ դարձեալ գիշերի չարչարեն գինքն այն տանջանքներով որոնք կարծեր էր թէ ընդ միշտ ազատած է, իր սեւ բաղդին վրայ կլար, երբ Պօստանը տեսաւ որ գտաղան մը ձեռքը ներս մտաւ, և հետը հայ մ'ու կոյժ մը ջուր բերաւ։ Այս քաբսիրա աղջիկը տեսնելուն զող եղաւ, մտածելով որ տարի մ'ամբողջ գիշերի քաշէ գարձեալ ամենօրեայ տանջանքներ, որպէս զի վերջէն քամնելի կերպով իր կեանքը վախճան տուի։

Պօստան՝ առջի բանտարկութեան ժամանակ գործածած անգթութեամբ վարուեցաւ թշուառ Էսէտ իշխանին հետ։ Սակայն Էսէտի դէմն ու ժպրն, աղերսագին թախանձանքն և թախիծ արտասուքներն այնքան կսկծալի էին որ Պօստանին սիրտը կակղացաւ և սկսաւ երիտասարդին հետ արտասուք թափել։

«Տէր իմ, ըսաւ անոր ոտները ծածկելով, կրկին և կրկին ներում կ'

խնդրեմ քեզ այսպէս անդթօրէն չարչարելուս : Մինչև յայսօր չկրցայ հօր մ՚անհնազանդիլը որ քեզի դէմ սաստիկ զայրացեր և արհամարհ ծառաւած է . բայց վերջապէս կ՚սաւմ և կը զարշիմ այս անդթութենէ : Ալեքսեարուէ , ազէտդ վերջացան , և սիրտ չունիմ քու յանցանքդ որոց մեծութիւնը կը ճանչնամ , քառել , քեզի հետ անուշութեամբ վարուելով : Մինչև յայսօր ես հեթանոսի պէս կը նայէի , այսուհետև մահմետականի տեղ դիր իս : Արդէն ինձի ծառայող աղախին մը քանի մը հրահանգներ տուաւ ինձ ձեր կրօնին վրայ , յատաւկ որ անոր սկսածը դուն աւարտելու կը հաճիս : Իմ ուղիղ դիտաւորութիւնս յայտնելու համար , ահա ներսումկը ինդրեմ ճշմարիտ Աստուծմէն որ քեզ չարաչար տանջանքներով վշտացուցի , և վստահ եմ որ միտքս կը բանայ քու կատարեալ ապաւութենդ ձեռք ձգելու հնարքը մը գտնելու :»

Այս խօսքերն Էսէտին մեծ սիսիանք տուին , իր պոհութիւնն Աստուծոյ յայտնեց Պօստանի սիրտը շարժելուն , հնարհակալ եղաւ անոր բարի խորհրդոց համար , սէրք եղածն ըսաւ որ իր հաւատքին մէջ զանի աւելի հաստատէ , և այս մասին այլ և այլ հրահանգներ տալէն զատ՝ պատմեց նաև թէ իրեն սէս բարձր իշխանատուն մ՚ինչ փորձանքներու հանդիպեր է : Երբ Էսէտ դիտեց որ Պօստան իր դիտաւորութեան մէջ հաստատուն է , հարցուց թէ ինչ պիտի ընէ որպէս զի իր Կաիամ քոյրը խորհուրդը չիմանայ և դինքը չարչարելու չգայ : «Այս մասին հանդարտ եղիր , պատասխանեց , ես այնպիսի միջոց մը պիտի գործածեմ որ սէրք չգիտնայ քու քովդ գալու :»

Եւ յիրաւի , Պօստան հնարք գտաւ և ամէն անպատճառն որ Կաիամ ընդհանն իմանալ ուզէր , ի՚պարդիլէր : Իսկ ինքը առէպ կը սեսնէր Էսէտ իշխանին , և ոչ միայն չէր հայ ու ջուր , այլ դինի և աղուոր կերակուրներ կը տանէր անոր , և այս ամենքն իրեն պատճառ երկու մահմետական ազգախինները կը պատրաստէին : Երբեմն ալ իշխանին սեղանակից կ՚ըլլար և ձեռքէն եկածը կ՚ընէր զանի մխիթարելու համար :

Քանի մ՚օր եաքը՝ Պօստան տան դուռը կիպեր էր երբ մատեաւիի մը ձայնը լսեց որ բան մը կ՚իմացնէր : Որովհետև մատեաւիին ըսածը չէր լսեր՝ շատ հետու ըլլալուն , և քիչ քիչ կը մօտենար տան տանջէն անցնելու համար , Պօստան ներս մտաւ և դուռը կէս բաց պահելով ,

սեսաւ որ մատեաւիին ձեմիտ վէզիրին տանջէն կը քալէր , որուն բոլորտիքը շատ մը պատճառաւորներ տաեր էին :

Մատեաւիին դադնէն քանի մը քայլ հետու էր , երբ սա աղաղակը ձղեց .

«Ընտիր և անուանի վէզիրն՝ որ սհա անձամբ հոս է , իր սիրական եղբայրը կը փնտռէ , որմէ տարիէ մ՚ի վեր բաժնուեր է : Եթէ մէկն իր տունը պահած է զանի , կամ թէ պիտի թէ ուր է , Ղորէյն վեհմութիւնը կը հրամայէ որ իրեն բերէ կամ անոր վրայ լուր մը տայ , և կը խոստանայ զանի լաւ մը վաձառութիւնս : Եթէ մէկը զանի պահէ և ետքէն երևան գայ , Ղորէյն վեհմութիւնը կը յայտնէ որ այնպիսին ախտ սպանդել տայ անով տեղով և բնակութիւնն ալ պիտի հիմնի ի վեր տապալէ :»

Պօստան այս խօսքերը լսելուն՝ շուտ մը դուռը գոցեց և զնգանը գնաց Էսէտը տեսնելու : «Իշխան , ըսաւ անոր ուրախութեամբ , տաուապանայդ վախճանը հասաւ , եսևէս եկուր , շուտ ըրէ :» Էսէտ՝ որուն շղթաները տակի օրէն քակեր էր , երաւ և մինչև փողոցը գնաց Պօստանի հետ , ուր սա պոռաց . «Ահաւասիկ իշխանն , ահաւասիկ :»

Վէզիրն՝ որ այն կողմէն դեռ մեկնած չէր , դլխով գարձաց : Էսէտ իսկոյն ճանչնց իր եղբայրն , անոր վազեց և զանի գրկից : Ճեմիտ ալ , որ իր եղբայրը ճանչնց , կամովին անոր փարեցաւ , իր պաշտօնակիցներն մէկմէկ ձին տուաւ որ հեծնէ և առաջ փառ առաջ պատրաստ տարաւ . յետոյ թագաւորին ներկայացաւ զանի , թագաւորն ալ իրեն վէզիրութիւնն կարգն անցուց :

Պօստան՝ որ իր հօրը տունը դառնալ չէր ուզած , քանի որ հիմն ի վեր տապալեր էին նոյն օրն իսկ , Էսէտին եսևէն գացեր էր մինչև պալատն ու թագուհւոյն սենեակը գրիտեր էր : Իր հայրն և պէհրամ , նոյնպէս տասնց ընտանիքը թագաւորին առջևը հանեցին և դլխատուելու դատապարտուեցան : Ամէնքն անոր ոտքն ընկան ներողութիւն խնդրելին : «Մինչև որ կրակապաշտութիւնը չմոռնաք և մահմետական կրօնին չդառնաք՝ բնաւ շնորհ չկայ ձեզի համար :» Կրօնքնին փոխելով իրենց կեանքն ազատեցին , նոյնպէս Կաիամ՝ Պօստանի քոյրն ու բոլոր ընտանիքը :

Պէհրամ մահմէտական կրօնն ընդունելուն վրայ, Ջէմշիտ՝ որ անոր հորաւսրը վոխարինել կ'ուզէը, իր պաշտօնակիցներուն կարգն անցուց, և իր տունը բնակեցուց: Պէհրամ քանի մ'օրէն խնայտ իր բարեկամ Ջէմշիտի և անոր կնկան եղբօրը պատուհասն և առաջարկեց անոնց նաև մը պատրաստել իրենց հօրը Քամարալզամանի թագաւորին երկիրը գտնելու համար: «Անտարակոյս ձեր անմեղութիւնն տեղեկացած է և ձեզ տեսնելու կը փափաքի անհամբեր: Եթէ ձեր հայրը նոյն սիրալիրութիւնն ալ կ'ունենայ, նաւէն երեսէն առաջ դիրքին պիտի ըլլայ զայն փարատել, և եթէ նոյն անիրաւ մտքին մէջ յարատևէ, մինակ վերստին ետ դառնալու ծանրութիւնը պիտի ունենանք:»

Երկու եղբարք Պէհրամի առաջարկութիւնն ընդունեցան, իրենց պիտաւորութիւնը թագաւորին յայտնեցին. այս ալ համեցաւ, և հրաման տուին որ նաւ մը պատրաստեն: Պէհրամ մեծ ջանքով պէտք եղածը կարգադրեց, և երբ ձմեռայ երեսելու համար ամէն բան կազմ ու պատրաստ եղաւ, իշխանները դայլին առաջ մը թագաւորին մնաս բարեւ ընելու, նաւը մտնելին առաջ: Ան միջոցին որ իրենց հրաժեշտութիւնները կը յայտնէին թագաւորին մարդասիրութեան համար, քաղքին մէջ մեծ վրվրուկ մ'եղաւ, և այն պահուն պաշտօնակալ մ'եկաւ յայտնելու թէ մեծ բանակ մը դէպ'ի քաղաքը կուգայ և ոչոք պիտի թէ ինչ բանակ է:

Ան պայմը թագաւորին մեծ յուզմունք պատճառելուն, Ջէմշիտ ասոնց ըսաւ. «Վեհափառ աէր, թէև ձեզի յանձնելու ևկայ իմ վէպիրութեան բարձր պաշտօնս, որով իս պատուեր եմիք, սակայն դարձեալ պատրաստ եմ ձեզ ծառայելու, և ի'պաշխեմ, հրաման տայիք ինձ որ երթամ նայիմ թէ ովէ այն թշնամին որ առանց պատերազմ հրաժարակելու, շիտակ մայրաքաղքիս վրայ կը քալէ:» Թագաւորն պատասխեց որ երթայ, և Ջէմշիտ քանի մը պաշտօնակիցներով ճամբայ ելաւ:

Ջէմշիտ իշխանը շատ չանցաւ՝ բանակին հետուէն նշմարեց, որ իրենց շատ զօրաւոր երեսյաւ և շարունակ յառաջ կը քալէր: Բանակին առջևէն եկող առաջնորդները սիրով ընդունեցան իշխանն և պինդ իշխանուհւոյն ներկայացուցին: Իշխանուհին բանակովը կեցաւ որ Ջէմշիտի հետ խօսի: Իշխանն ակնածութեամբ անոր բարև տուաւ, և

հարցուց թէ արդեօք իրը բարեկամ կրնար թէ իրը թշնամի, և եթէ թշնամաբար կը յառաջանայ, ինչ դանդաո ունի իր սիրոյը թագաւորին դէմ:

«Իրը բարեկամ կուգամ, պատասխանեց իշխանուհին, և բնաւ դժգոհութիւն մը չունիմ Մոգայ թագաւորին դէմ: Իր և իմ ազգութիւնս աչքալիսի վիճակի մէջն որ անկարելի է մեզ իրարու դէմ կռիւ մ'ունենալ: Միայն իմ արշաւանքիս նպատակն է Էսէտ անուն դերի մը ձեռքէ պահպանել. այս դերին՝ Պէհրամ անուն ամենայիրը մարդ մը քաղքիս դաղցաւ, և յուսամ որ ձեր թագաւորն իմ պահանջման պիտի կատարէ, երբ խնդայ որ Մարկիանէ թագուհին եմ:

— Մեծաղօր թագուհի, վրայ բերաւ Ջէմշիտ իշխանն, այնչափ հռանդագին վիճաւած անձդ իմ եղբայրս է: Զանի կրնաս երթ և դայ: Եկէք, ես անձամբ եղբայրս ձեզի յանձնելու պատիւը պիտի ունենամ և անցած դացած դէպքերը ձեզի պիտի պատմեմ: Իմ թագաւոր ձեզ տեսնելով չափազանց պիտի ցնծայ:»

Երբ Մարկիանէ թագուհւոյն զօրքերն իր հրամանատ նոյն տեղը բանակեցան, Ջէմշիտ իշխանն անոր հետ միասին քաղաքը դնաց և թագաւորին ներկայացաւ. թագաւորն՝ ըստ արժանւոյն զանի ընդունեցաւ, և Էսէտ իշխանն՝ որ ներկայ էր և զանի Ջանչէց, իր յարգանքն անոր մատոյց: Թագուհին զանի տեսնելուն իր ուրախութիւնը յայտնելու առեն՝ սուրհանդակներ եկան և թագաւորին իմաց տուին թէ առաջնեկն ալ մի աղային բանակ մը քաղքին մուտ կոշնն կ'երևէր:

Մոգայ թագաւորն առաջին անդամն ալ զարհուրեցաւ երբ իմացաւ որ ալ մեծ բանակ մը քաղքին վրայ կը քալէ, և արդարև բաղմաթիւ էին զօրքերը քանի որ սոսկալի փոշի մը կը հանէին հետուէն որ տակի սէս երկինքը կը ծածկէր: «Ջէմշիտ, դոչաց թագաւորն, այս ինչ փորձանք է, ահա նոր բանակ մ'ալ մեզ Ջնշելու կուգայ:»

Ջէմշիտ թագաւորին միտքը հանգչեցաւ. տակի ձին հեծաւ և տանձարձակ այս նոր բանակին առաջն առաւ: Իր առջևն երեսղ զօրականներէն խնդրեց որ զօրապետին հետ խօսի. և անմիջապէս պինդը թագաւորի մ'առջև տարին, զոր կրած թագէն Ջանչէց: Ան ինչ հետուէն տեսաւ զանի որ ձիէն վար իջաւ, և երբ մոտեցաւ, երեսն 'ի

վար երկիրը պապաւ և Հարցուց թէ իր Թագաւորէն ինչ կուզէ ։

«Իմ անունս Աիսաքար է , պատասխանեց Թագաւորն , և ես Զինոյ ազգին եմ ։ Քալէ տան կղզւոյն Թագաւորի որդի , Քամարալզաման իշխանի հետ կարգեր էի իմ Պատուր աղջիկս , և շատ տարիէ վեր փախած ունիմ անոր վրայ լուր մ՚առնելու , և այս պատճառաւ ուխտ Թիւնս Թողլով եկայ ։ Ա՛յս իշխանին հրաման տուեր էի որ երթայ իր հայրը տեսնէ , այն պայմանաւ որ տարուէ տարի գայ իս տեսնէ իմ աղջկանս հետ ։ Սակայն քանի քանի տարիէ վեր անոր վրայ տեղեկութիւն մը չառեր եմ ։ Վաշտապին հօր մը մեծ բարիք ըրած պիտի ըլլայ Թագաւորդ , եթէ իր պիտացածն այս մանուն ինձի յայտնէ ։»

Ճէմշիտ իշխանն , որ այս խօսքերէն իր պատը ճանչցաւ , դարձուցին պապաւ անոր ձեռքն և պատասխան տալով ըսաւ . «Վեհափառ տէր , իմ համաձակութեանս պիտի ներէք , եթէ խնդրեմ ձեզ որ իրը իմ պապիս իմ յարգանքս կը մատուցանեմ ձեզ ։ Քամարալզամանին որդին եմ , իմ հայրս Պալնոս կղզւոյն Թագաւորն է այսօր , և Պատուր Թագուհին իմ մայրս է . անատրակոյս եմ որ կատարեալ առողջութիւն կը վայելէն իրենց ախտութեան մէջ ։»

Զինոյ Թագաւորն իր Թոռը տեսնելուն աստիկ ուրախանալով խնդուն կանչուն համբուրեց զնի , և այս յաջող ու անակնկալ հանդիպումն երկուքին ալ աչքերն արտասուօք լեցուց ։ Ապա Զինոյ Թագաւորը հարցուց Թէ ինչպատճառաւ այն օտար երկիրը կը գտնուի ։ Իշխանն իր եղբօրն Էսէլէն պատմութիւնը մանր մանուկ ։ Երբ խօսքն առարաւ . «Որդեակ , պատասխանեց Զինոյ Թագաւորն , անուղղի է որ քեզի պէս անմեղ իշխաններ աւելի երկար ժամանակ նեղուին ։ Պիտի մտածեցէք , քեզ և եղբայրդ Քամարալզամանին պիտի տանիմ և ձեզ պիտի հաշտեցնեմ ։ Դարձիր տուն և եղբօրդ յայտնէ իմ գալուստս ։»

Երբ Զինոյ Թագաւորը Ճէմշիտին հանդիպած տեղը հասատուեց քանալին , իշխանն ալ Պողոյ Թագաւորին դնոյ պատասխան տանելու , որովհետև անհամբեր կ՚սպասէր ։ Թագաւորը չափազանց զարմացաւ իմանալով որ Զինոտանին սկէս հզօր Թագաւոր մ՚այսպիսի երկար և տաժանելի ուղեւորութիւն մ՚ընէ՝ ու միայն իր աղջիկը տեսնելու տեղ-

ջով , և այս Թագաւորն ալ իր մայրաքաղքին մօտ գտնուի . խնդրեց հրամաններ տուաւ որ պինքը մեծ պատուով ընդունին , և ինքն ալ պատրաստուեցաւ որ երթայ զնի ընդունի ։

Նոյն պահուն՝ քաղքին մէկ ուրիշ կողմէն Թանձր փոշի մ՚երեւցաւ , և շատ չանցաւ իմաց տուին որ եկածն երրորդ բանակ մ՚էր ։ Ասոր վրայ Թագաւորը սարսափեցաւ մնալու և ճէմշիտն ազաչեց որ երթայ իմանայ Թէ այս երրորդ բանակին ղեկաւարն ինչ է ։

Ճէմշիտ Ճամբայ ելաւ և այս անգամ Էսէտան ալ անոր ընկերացաւ ։ Տեսան որ Քամարալզաման իրենց հօրը բանակին էր այն , որ եկեր էր պիրենք վնասելու ։ Աիւչանի սաստիկ վիշտ յայտներ էր իր որդիքը կոտուսելուն վրայ որ Սիսնաար էմիրը վերջապէս , յայտներ էր անոր Թէ ինչ կերպով անունց կեանքը խնայեր էր . ասոր վրայ Քամարալզաման ուրշիր էր Ճամբայ ելնել և ամէն աշխարհ գառնալ զանոնք գտնելու համար ։

Ա՛յս վշտահար հայրն երկու իշխանները գրկեց ուրախութեան առատ արտասուք Թափելով , որունք ախորժելի կերպով երկար տևեցին վեր Թափած վշտոյ արտասուքը յանգիցուցին ։ Ա՛յն ինչ իշխաններն ըսին Թէ Զինոտանի Թագաւոր անուն նոյն օրը հասեր է , որ անունց միացաւ և գնոյ որ զնի բանակը տեսնէ ։ Քիչ մ՚առաջ գայեր էին երբ չորրորդ բանակ մ՚ալ տեսան , որ կարգով կը յառաջանայլին և կարծես Թէ Պարսկաստանի կողմէն կուգային ։

Քամարալզաման իր որդւոց ըսաւ որ երթան նային Թէ ինչ բանակ է այն ։ Իսկոյն մեկնեցան , և երբ հասան , բանակին հրամանատար Թագաւորին առջևն եկան ։ Խորին յարգանաք զնի բարևելէն ետև՝ հարցուցին անոր Թէ ինչ մտքով Պողոյ Թագաւորին մայրաքաղքին այնչափ մօտեցեր էր ։

Մեծ վէզիրն՝ որ ներկայ էր , ըսաւ . «Ա՛յն Թագաւորն օրուն հիմնակ խօսեցաք , Քալէտանի կղզեայ Թագաւորն է , որ այս կերպով երկար տևեցնէ վեր կը ձգտասպարհորդէ՝ իր որդին Քամարալզամանը գտնելու համար . եթէ անոր վրայ լուր մ՚ունիք , խիստ մեծ հաճոյք պիտի պատճառէք անոր եթէ իմացնէք ։»

Իշխաններն այսչափ միայն լսին որ քիչ տևեցնէն պատասխան մը պի-

ոի բերեն, և սանձարձակ եկան Քամարալըզամանի խնայ տալու որ վերջին եկող բանակը Շահզաման Թագաւորին բանակին էր և թէ իր Հայրը Թագաւորն անձամբ այն տեղ կը գտնուի :

Զարմանքն, հիացումն, ուրախութիւնն, առանց Հրամանի իր հօրմէն հեռանալուն համար ղացած վիշտը Քամարալըզաման Թագաւորին մոքին վրայ այնքան մեծ տպաւորութիւն մ'ըրին, որ մարեցաւ ընկաւ երբ խնդ թէ իր հօրը շատ մօտ կը գտնուի. 'ի վերջէ սթափեցաւ, ձէմշիտ և Էսէտ իշխաններուն յանձնելով, և երբ իր գործը գտաւ, գնաց Շահզաման Թագաւորին տոքն րնակելու :

Երթէք այսպիսի սրտաշարժ տեսութիւն մը հօր և որդւոյ մէջ տեսնուած չէր : Շահզաման բարեսիրաբար Քամարալըզաման Թագաւորէն պանդաւեցաւ որ այնպիսի անդութ կերպով իրմէ հեռացրը գացեր էր. և Քամարալըզաման ձշմարիտ յայտնել մը յայտնեց սիրոյ պատճառաւ այնպիսի մեծ յանցանք մը գործելուն :

Երբ Թագաւորներն և Մարկիանէ Թագուհին Մոգայ Թագաւորին պալատն երեք օր մնացին, ուր վառաւոր խնջոյքներ եղան :

Ա յս երեք օրերն ալ նշանաւոր եղան, վասն զի Էսէտ իշխանը Մարկիանէ Թագուհւոյն հետ ամուսնացաւ և ձէմշիտ Պօտամի հետ, իր եղբօրմ Էսէտին ըրած ծառայութեան 'ի վարձատրութիւն : Ի վերջէ երեք Թագաւորներն ու Մարկիանէ Թագուհին, Էսէտին հետ՝ իւրաքանչիւրն իր աէրութեան երկիրը դարձան : Իսկ ձէմշիտ իշխանն՝ որ շատ սիրելի եղեր էր Մոգայ Թագաւորին, որ արդէն ծերացած էր, նոյն աէրութեան Թագաւոր կարգեցաւ, և ձէմշիտ ալ բոլոր ձիրը Թափեց որպէս զի կրակապաշտութիւնը ջնջէ և մահմէտական կրօնն իր աէրութեան մէջ հաստատէ :

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆՈՒՐԼԷՏՏԻՆԻ ԵՒ ԳԵՂԱՆԻ ԳԱՐՍԿՈՒՀՈՑ

Պասրա քաղաքն երկար տարին ամիրապետներուն Հարիատաւ աէրութեան մը մայրաքաղաքն եղաւ : Հարուն-ալ-Բաշիտ ամիրապետին օրոնք այն աէրութիւնը կառավարող Թագաւորին անունն էր Զինէպի. և երկու քոյրն ալ Հօրենչրօր որդիք էին : Զինէպի յարմար չէր գտած իր երկիրներուն վարչութիւնը մէկ վէզիրի յանձնել, ուստի երկու հատ ընտրեր էր, Գաման և Սաֆար : Գաման քաղցրաբարոյ, մարդասէր և առատաձիրտ էր, և քան կարի բարիք ընելու կ'աշխատէր իրեն հետ յարաբերութիւն ունեցողներուն, առանց արդարութեան վնաս տալու, քանի որ ինքն էր գտաւոր : Ուստի Պասրայի արքունիքը, քաղաքն, և բոլոր աէրութեան մէջ մարդ մը չկար որ զանիկ չյարգէր և անոր արժանի պատիւները չհատուցանէր :

Իսկ Սաֆարը բոլորովին տարբեր բնաւորութիւն մ'ունէր, միշտ տրտում էր, և անխաիր՝ թէ մեծ և թէ պզտիկ իրմէ կը խորշէին : Ասկէ զատ՝ իր ունեցած անբաւ հարստութիւնը վայելելու տեղ՝ յետին ծայր ժլատութեամբ կը պահէր, և իրեն խնամեան պիտոյքէն անդամ ինքզինքը կը զրկէր : Ամենուն անտանելի էր, և ամէն մարդ անոր հասմար պէշկը խոսէր : Սակայն գինքն ամենէն շատ ատելի ընող բանն էր Գամանի պէմ'ունեցած ոխն, և այս պատճառէն բոլոր ըրածները ծառամկնելով միշտ Թագաւորին առջև զանի կը բամբասէր :

Օր մը՝ ժողովէն ետքը՝ Պասրայի Թագաւորը քիչ մը հանգիստ կ'առնուր և իր խորհրդին շատ մ'անդամներուն և երկու վէզիրներուն հետ կը խոսակցէր : Խօսակցութիւնն աղախիններուն վրայ դարձաւ, որոնք մեր մէջը ծախու կ'առնուին և օրինաւոր կանանց կարգը կ'անցնին : Ոմանք կ'ըսէին որ բաւական է որ գնուած աղախին մը գեղեցիկ և վայելչահասակ ըլլայ, մարդս այն առեն փոյթ չըներ եթէ ընտանեկան շահու կամ ուրիշ շահաւէտ նկատումներով առ հարկի ամուսնացած ըլլայ ուրիշ կանանց հետ որոնք միշտ շատ գեղեցիկ չեն ըլլար և մարմնոյ ուրիշ առաւելութիւններէ զուրկ են :

Ոմանք կը սպրդէին, և Գալան ալ այս կարգէն էր, թէ բաւական չէ որ աղախին մը պեղեցկութիւն և մարմնական ձիրքերու կոզմէ նշանաւոր ըլլայ, այլ հարկ է նաև որ խելք, իմաստութիւն, համեստութիւն, շնորհ ունենայ, և եթէ հնար է, այլ և այլ ընտիր ծանօթութիւններ: Ասոր պատճառն այս է, կ'ըսէին, որ մեծամեծ գործերու պարապող մարդիկ, բոլոր օրը տաժանելի զբաղմունքներով յոգնելէն ետև, պէտք է որ՝ ի զարձին տունն, այնպիսի ընկերուհի մը գտնեն ուր թօսակցութիւնն օգտակար, ախորժելի և զուարճալի ըլլայ: Վասն զի վերջապէս, կ'ըսէին, անդան կնդգտնիներու կարգն անցնել է աղախին մ'ունենալ մի միայն անոր երեսը նայիլու և նոյն իսկ անասունները յաւուրց յանկութիւն մը գոհ ընելու համար:

Թագաւորն այս վերջիններուն համամիտ գտնուելուս, և այս համամտութեան ի նշան հրամայեց Գալանի որ իրեն աղախին մը գնէ պեղեցկութեան կոզմէ կատարեալ, և արդէն նշանակուած ամէն ընտիր ընտիր ձիրքեր ունենալէն զատ՝ շատ գիտուն ըլլայ:

Սակայն նախանձեցաւ Թագաւորին առ Գալան բրած պատուոյն վրայ, և ինքն այս կարծիքին ներհակ ըլլալով «Վեհափառ տէր, ըսաւ, ձեր ուզած աղախնին պէս կատարեալ աղախին մը գտնել գժուարին գիտի ըլլայ: Եթէ գտնուի, թէև բնաւ չեմ կարծեր, աժան գնած գիտի ըլլայ եթէ տաս հազար ոսկիի խակ գնէ:

— Սակայ, պատասխան տուաւ Թագաւորը, կը կարծես անշուշտ որ այս գումարը շատ մեծ է, կընայ մեծ ըլլալ քեզի համար, բայց ինձի համար աչքիս չէ:» Եւ նոյն միջոցին Թագաւորն իր գանձապետին հրամայեց որ տաս հազար ոսկին Գալանի տունը դրկէ:

Երբ Գալան իր տունը դարձաւ, աղախնիներու առաւտուր ընդունելոյ միջնորդները կանչել տուաւ, և ապագրեց անոնց որ եթէ իրեն նպատակ ըսածին պէս աղախին մը գտնեն գան իրեն խնայ տան: Միջնորդները՝ թէ իրենց շահուն և թէ Գալան վէզիրը պարապեցնելու համար՝ խօսք տուին ամէն ձիգ թափել որպէս զի իր փափաքածին պէս աղախին մը գտնեն: Օր չէր անցներ որ աղախին մը չբերէին անոր, բայց միշտ անոնց վրայ պակասութիւն մը կը գտնէր:

Օր մը կանուխ Գալան՝ Թագաւորին պալատն երթալու առեն՝ միջնորդ մ'անոր ձին բռնեց եռանդագին և խնդրեց թէ պարսիկ վաճառականն մ'որ առջի օրն ուշ հասեր էր քաղաքն, արդէն տեսած աղախիններէն պեր՝ի վեր պեղեցկութեամբ աղախին մ'ունի ծախելու:

«Թակ իր խելքին և ուսմանց մասին, յարեց միջնորդը, վաճառականը կ'ապահովէ թէ աշխարհիս ամէն խելացի ու պիտուն մարդոց հետ կրնայ գլուխ երթալ:»

Գալան այս լուրն առնուլ ուրախացաւ, յուսալով որ Թագաւորին կամքը պիտի կատարէ, և ապագրեց միջնորդին որ աղախինը բերէ պալատն՝ի գարձին, և ինքը ճամբան շարունակեց:

Միջնորդն որոշեալ ժամուն վէզիրին ապարանքը դնաց. խակ Գալան պեղանի աղախինն՝ իր ախոյեանութենէ այնքան վեր գտաւ, որ նոյն պահուն խակ պեղեցկութեան անուանեց զայն: Որովհետև ինքը շատ ուշիմ և պիտուն էր, աղախնին հետ ունեցած խօսակցութենէ հասկըցաւ որ Թագաւորին փափաքին համեմատ՝ անոր չէր կարող ձեռք ձգել: Ուստի միջնորդին հարցուց թէ պարսիկ վաճառականն ինչ պէս մ'ուզէ իր աղախինին համար:

«Տէր իմ, պատասխանեց միջնորդը, վաճառականը մեկ խօսք ունեցող մարդ մ'է, կը սիրէ թէ՝ իրը վերջին պէս, տաս հազար ոսկիի կրնայ տալ: Մինչև անդամ երբեմն ըրաւ թէ՝ աղախնին կրթութեան համար վատնուած ինամքին, հոգերին և ժամանակին զատ՝ նոյն գումարին չափ պրեմէ ծախս ըրած է, թէ մարմնամարզութեան, թէ մուքի մշակութեան, թէ հագուստի և ապրուստի համար: Որովհետև զայն ծախու առնողն Թագաւորի մ'արժանի աղջիկ մը համարեր է, ի մանկութենէ ոչ մէկ բան թոյլ պէտք գիտի ըլլայ: Ամէն տեսակ նուագարան կ'ածէ, երգ ու պար գիտէ, ամենէն ճարտար պրակտիկներէն լաւագոյն կը պրէ, ոտանաւորներ կը յօրինէ, վայ վերջապէս պիտք մ'որ կարդացած չըլլայ: Երբեք լսուած բան չէ որ աղախին մ'անոր չափ բարեկիրթ և ուսեալ ըլլայ:»

Գալան վէզիրն՝ որ միջնորդէն քաջ կը ճանչէր պեղանի պարսկուհոյն արժանիքը, քանի որ միջնորդը լոկ վաճառականին վկայութեան վրայ կը խօսէր, չուզեց սակարկութենն ուրիշ օրուան թողուլ: Իր սպասաւորներէն մէկը զրկեց որ վաճառականը կանչէ, միջնորդին

հարցնելով Թէ ուր կը գտնուի նա։

Երբ պարսիկ վաճառականն եկաւ. «Ես քու աղախինդ ինձի համար չպիտի դնեմ, բայց անոր մեծ վէպերն, այլ Թագաւորին համար. բայց պէտք է որ առելի յարմար պին մը պահանջես քան ինչ որ այժմ ինդրեցիր եղեր ես։

— Տէր իմ, պատասխանեց վաճառականը, մեծ ուրախ պիտի համարէի անձիս Եթէ ինձի պէս վաճառականի մը հնարին ըլլար իրր պարգև ընծայել աղախինս Թագաւորին։ Ես միայն սոյն աղախինն ինչպէս որ է կրնամ և ուսեալ ընելու համար ըրած ծախքս կը լնդունիմ։ Այսչափ միայն կ'ըսեմ որ Աստուծոյն վերհսկութեանն գայն դնելով մեծ ծախքեր գոհ պիտի ըլլայ։»

Գոհան վէպերն առելի ևս սակարկել չուզեց. հրամայեց որ խնդրած դումարը վաճառականին համրեն, իր երթալէն առաջ։

«Տէր իմ, ըսաւ վէպերն, քանի որ աղախինս Թագաւորին սահմանուած է, ներէ ինձ ըսելու որ միտքս այս տեղ բերելու համար ըրած երկար ուղեւորութենէ շատ յոգնած է։ Թէև պետկիսթեան կոչմունն անհնարին է, սակայն զարձեալ շատ վրայ պիտի գայ եթէ հնարք ընես տասն հինգ օրի չափ առնդ պահելու, ոչ աք եղած խնամքը ասլով։ Այս ժամանակէն ետքն՝ երբ Թագաւորին ներկայես զանի, այնչափ շատ պիտի գովէ և պատուէ քեզ այս բանիս համար որ քաջայոյս եմ Թէ խլնէ հնարհաւալ պիտի ըլլաս։ Պիտի տեսնես որ արուեստ քիչ մը խանգարեց երեսին գոյնը, բայց երկու երեք անդամ բաղնիք երթալէն ետքն՝ անոր չարմար դաստած հագուստդ և պիտի տեսնես որ պիտի փոխուի և յետոյ ծայր պիտի պեղեցկանայ։»

Գոհան՝ վաճառականին խորհուրդն՝ իր օրինաւոր ընդունեց և որոշեց անոր հետևելու։ Ամառուան սենեակի մը տուաւ պեղպէմ պարսկուհուն, որ իր հնկանը սենեկին կից էր, և ազաչեց որ իր քովը պահէ, անոր հետ ուսէ իր կերակուրն և վնդեն իրր Թագաւորին սահմանուած կին մը նկատէ։ Նոյնպես ազաչեց իր կինն որ փառաւոր և անոր չարմար դաստ հագուստներ շինել տայ։ Գեղեցիկ պարսկուհուն քովէն հեռանալէն առաջ.

«Գեղն պատրաստած երջանկութենէս առելի մեծ երջանկութեան մը

չէիր կրնար անունչալ, ըսաւ, ինչպէս որ դու ինքնին կրնաս դատել։ Թագաւորին համար քեզ գնեցի, անեղիմիտ եմ որ քեզ ստանալով շատ առելի գոհ պիտի ըլլայ քան Թէ ես ինձ ըրած չանձնարարութիւնը կատարելով։ Այսպէս պարտ կը սեպեմ քեզ խնայելու Թէ որքի մ'ունիմ, որ Թէև ուշիմ է, բայց նորահասակ, Թէև ամիս և ձեռներից ըլլալուն՝ անտրամ զղայլ կինասլու կը պատուիրեմ քեզ, երբ քովի մօտենայ։» Գեղազեղմ պարկուհին իր շնորհակալութիւն յայտնեց այս խրատին համար, և երբ վստահացուց որ այս պատուէրին պիտի հետևի, վէպերը ձգեց գնաց։

Նուրէտտինի այսպէս կ'անուանէր Գոհան վէպերին որքին, ազատութիւն ունէր իր մորը սենեակը մտնելու, որուն հետ ճաշ ընելու սովոր էր։ Մարմնով վայելչակազմ, գեղահասակ և հաճելի և յանդուգն էր. և որովհետև չափազանց խելք և խօսելու դիւրութիւն ունէր, կարող էր իր պիտոյքներն ուզածին պէս հասնցնել։ Գեղանի պարսկուհին սեսաւ, և առջի սեսութենէ, Թէև խնայատ որ իր հայրը զանի Թագաւորին համար ծախսեր ասած էր, ինչպէս որ ինքնին հայրը յայտներ էր, պարձեալ ինքզինքը չնեղեց և աղախնին սէր կապեց։ Խնդրեց անոր պեղեցկութենէն պարզեսլ, և յետոյ անոր հետ խօսակցութիւն սկսաւ, որուն ընթացքին Նուրէտտինի՝ որոշեց զանի Թագաւորին ձեռքէն կորզել։

Իսկ պեղանի պարսկուհին ալ շատ սիրուն դատ Նուրէտտինը։ «Վէպերը մեծ պատուիրատու, կը խորհէր ինքնուրին, իս գնեցիր որպէս զի Պասրայի Թագաւորին տայ։ Ինքնինքս շատ երջանիկ պիտի համարէի, եթէ իս իր որդուն տար։»

Նուրէտտինն այնպիսի պեղեցիկ օրիորդ մ'ամէն օր տեսնելու առիթներ ունենալով՝ չհամոց այս տեսակ յոյներ օգուտ քաղել, անոր հետ խօսիլ, ինդալ և ծիծաղիլ։ Սիրեցաւ որ մայրը չբռնադատեր, աղջկան քովէն չէր հեռանար։ «Որդեակ իմ, կ'ըսէր անոր, քեզի պէս երիտասարդի մը չվայլեր որ միշտ կանանց սենեակը նստի։ Գնա, և աշխատէ օր մը քու հօրդ բարձր պատուոյն յաջողելու արժանի ըլլալ։»

Որովհետև երկար առնէ վեր պեղեցիկ պարսկուհին բաղնիք դացած չէր, իր երկար ճանապարհորդութեան պատճառաւ, հինգ վեց օր ետքը՝ Գոհան վէպերին կինը յատկապէս վէպերին բաղնիքը վաճառ

առաւ, և իր կիներուն հետ նորեկ աղախինը ղրկեց, ապսպրելով որ իրեն պէս լաւ զանի, և բաղնիքէն ելնելուն արգէն շինել առած փառաւոր հագուստ մը հագուեցնեն. վէպերին կինն այս աղախնին համար չափէն աւելի խնամք տանելով իր ամուսնոյն աչքը մնալ կ'ուզէր, միանգամայն կը ջանար հասկցնել որ անոր հաճելի ըլլալու համար ոչ ինչ չպակսեր:

Գեղջկի պարկուհին բաղնիքէն ելնելուն, հազար անգամ աւելի գեղեցիկ երեսցաւ քան ինչ որ էր երբ Գաւան վէպերը զգնի դնեց, և եկաւ անոր կնոջ առջեւն եղաւ. վէպերուհին հաղիւ կրցաւ զանի ճանչնալ:

Գեղջկի պարկուհին շնորհալի կերպով անոր ձեռքը պագաւ և ըսաւ. «Տիկին, չգիտեմ թէ ինչպէս կը դանես իս այս պատրաստուիլ առած զգեստովդ: Քու սպասուհիներդ՝ որ կը հասասան թէ այս հագուստներն այնքան կը վայլեն ինձ որ անճանաչելի դարձեր եմ, շռայլաբար թէ՛ ուզեն. ես քու դատողութեանդ կը վստահիմ: Սակայն եթէ իրենց ըսածը ճշմարիտ է, դարձեալ քեզի շնորհապարտ ըլլալ պէտք եմ այսպէս շէն շնորհքով երեւելուս:

— Աղջիկս, վրայ բերաւ վէպերին կինն ուրախութեամբ, պէտք չէ որ շողոքորթութիւն սեպես իմ սպասաւոր հիներուս ըսածն. ես անոնց մէջ աղէկ կրնամ զանազանել, և մէկզի թողլով հագուստդ որ քեզի աքանչելի կերպով կը վայլէ, բաղնիքէն ելնելովդ առջի գեղեցկութենդ այնքան գեր ի վեր կ'երեւիս որ ես անգամ չեմ ճանչեր քեզ: Եթէ բաղնիքը դեռ տաք ըլլար, ես ալ կը փափաքէի երթալ լուացուիլ. այսպիսի տարիք մ'ունիմ որ այսուհետև պէտք է որ սահել երթամ:

— Տիկին, ըսաւ գեղջկի պարկուհին, չեմ կրնար պատասխանել այն քաղաքավարական խօսքերուն որոց արժանի չեմ: Իսկ բաղնիքը զմայլելի էր, և թէ որ երթալու դիտաւորութիւն ունիս, ժամանակ մի կորսնցներ ալ կրնան ըսածս հաստատել:»

Վէպերուհին կինը դիտելով որ բաւական առնակ վեր բաղնիք պացած չէ, ուզեց այս առթիւն օգուտ քաղել: Ան փափաքին իր սպասուհիներուն յայտնեց, և ասոնք ալ ամէն պէտք եղած բաներն առին իրենց տիրուհին լուալու համար: Գեղջկի պարկուհին իր սենեակը քաշուե-

ցաւ, և վէպերին կինը՝ բաղնիք չզացած՝ երկու պզտիկ գերձներու ապսպրեց որ անոր սենեկին մօտ նստին, ապսպրելով որ եթէ Նարբոնացին գայ, ներս մտնելու չթողուն:

Երբ Գաւան վէպերին կինը բաղնիքէն ելաւ և գեղջկի պարկուհին վերահաս խուզը կը զգուեցուց, Նարբոնացին տուն եկաւ, և իր մայրը սովորական սենեակը չգտնելուն, գեղջկի աղախնոյն բնակարանը գնաց և նախասենեկին մէջ երկու գեռահասակ գերձներ գտաւ: Հարցուց ա-նոնց թէ ո՞ր է մայրը. գերձները պատասխան տուին թէ բաղնիքն է: «Հապա գեղջկի պարկուհին, վրայ բերաւ Նարբոնացին, ովքե՞ր բաղնիքն է: — Ա՛խ՝ բաղնիքէն ելաւ, ըսին գերձներն, և իր խուզն է. բայց մայրդ պատուիրեց որ քեզի ներս չձգենք:»

Գեղջկի պարկուհոյն սենեակը վարագոյրով մը զոցուած էր: Նարբոնացին ներս մտնելու համար յառաջ անցաւ, և երկու գերձներն անոր առջեւը կտցան որ արգիլեն: Նարբոնացին երկուքին ալ թևէն գունեց, նախասենեկէն դուրս հանեց և դուռն անոնց վրայ զոցեց: Գերձներն խելօք բաղնիք գացին վայնասուն մը թողլով և իրենց տիրուհոյն լալով լսուն տուին թէ Նարբոնացին գեղջկի պարկուհոյն սենեակը մտեր է և թէ գիրենք վռնտեր է:

Ա յսպիսի մեծ յանդգնութեան մը լուրը խիստ կսկծալի ցաւ մը պատճառեց վէպերին կնկան: Խնդրեց կիսկատար թողուց բաղնիքն, և շտապաւ հագուեցաւ: Բայց հագուելէն և գեղջկի պարկուհոյն սենեակը հասնելէն առաջ՝ Նարբոնացին դուրս ելեր և փախուստ տուեր էր:

Գեղջկի պարկուհին՝ վէպերին կինը սենեակն մտնելուն, որ լալագին և ինքզինքէն ելած կնկան մը պէս կլար. «Տիկին, ըսաւ անոր, արդեօք կրնամ հարցնել թէ ինչ պատճառաւ այնչափ տրտում ես. ինչ փորձանք հասաւ քեզի բաղնիքն որ այսչափ շուտով դուրս եկնելու շտապեցար:

— Ինչ, դուժեց վէպերին կինն, ինչպէս հանդարտ սրտով այդ հարցումը կ'ընես ինձ, քանի որ Նարբոնացին որպիս խուզդ մտաւ և քեզի հետ առանձին մնայ: Մեծ ամէն աւելի մեծ դժբաղդութիւն մը կրնայ հասնիլ ինձի և անոր:

— Սաղաւեմ, տիկին, պատասխանեց դեղձանի պարսկուհին, ինչ դժբաղդ թիւն կրնայ ըլլալ քեզի և Նուբէտաւինին համար Նուբէտաւինի ըրած գործը:

— Ինչպէս, պատասխանեց վէպերին կինը, միթէ ամուսնս չըսաւ որ քեզ թագաւորին համար ծախու առաւ, և միթէ չգիտես իրմէ որ Նուբէտաւինը քովէ մօտիկներու զգուշանաս:

— Այս պատուէրը չմոռցայ, տիկին, վասն զի ըսաւ դեղձանի պարսկուհին. բայց Նուբէտաւին ևս լսած է թէ իր վէպերը հայրը դիտաւորութիւնը փոխեր է և թէ փոխանակ իմ առնելուն սէս՝ թագաւորին համար պահելու, իմ անձս անոր պարգև ըրեր է: Ես ալ առնող խօսքին հաւատացի, տիկին, և աղախին մը դանտելովս, ղրկուեցայ նմա՝ մանկութենէ վարժած եմ, ուստի կրնաս դատել որ չկրցայ և պարտաւոր չէի անոր կամաց հակառակիլ: Այս ալ բաւ՝ որ անոր համար սատիկ հակում մ՚ունենալուս՝ միշտ ազատ ապրելու կատաղի ջանք ալ չդաւեր, աւելի յօժարակամ անոր հաւատացի: Ընկերուհի կը մնայի թագուհուդ, աւելի յօժարակամ անոր հաւատացի: Ընկերուհի կը մնայի թագուհուդ, և կրնայ ըլլալ որ ինքզինքս երջանիկ սիրոյ համարիմ քոյդը կեանքս Նուբէտաւինի հետ անցնելով:»

Գեղձանի պարսկուհին այս խօսքին վրայ. «Երանի՛ թէ, բաւ վէպերին կինն, որ ըսածդ ճշմարիտ ըլլայ. մեծ ուրախութիւն պիտի զգամ եթէ ատոր երթէ, բայց հաւատա ինձ որ Նուբէտաւին խաբեբայ մ՚է. քեզ խարած պիտի ըլլայ և կարելի չէ որ իր հայրն ըսած պարգևն ըրած ըլլայ անոր: Աբչախ գժբաղդ է որովհետև, և ես աբչախ անբաղդ եմ, նայնպէս աբչախ աւելի մեծ գժբաղդ թիւն մ՚է իմանալ նոյս համար, քանի որ թէ ինքն և թէ ես այս փորձանքին պատճառ եղած ենք: Իմ ապրուստս և ազատութիւնս բաւական չափ ըլլան ինծի զայն ներողութիւնը առնելու և որդուս ներողութիւնը առնելու. Հայրն իր արդար զայրոյթին զոհ պիտի լինի զանի երբ քեզ բռնաբարութիւնն իմանայ:» Այս խօսքերն առնելով վէպերին կինը դառնապէս լացաւ, և իր դերձներն, որ կը զոդային իրենց սիրուհոյն չափ Նուբէտաւինի կինոջ համար, անոր օրհնութիւն հետևելով լալու սկսան:

Գեղձանի վէպերը քիչ մ՚ետքը հասաւ, և շատ զարմացաւ իր կինն ու

աղախինները լալագին և դեղձանի պարսկուհին ախտը տեսնելով: Այս քանիս պատճառը հարցուց, և փոխանակ պատասխան տալու՝ իր կինն ու աղախինները իրենց վայրաստնին տատակացուցին: Այս լուրեան վրայ զարմանքն աւելցաւ և իր կնոջն դառնալով՝ «Կ՚ուզեմ իմանալ անպատճառ, ըսաւ անոր, թէ ինչ պատճառ կրնաք ունենալ թէ պէտք է որ ինձի ճշմարտութիւնը չսյտնէք:»

Վէպերին կինը սոսկալեցաւ իր էրկին զոհ ընելու. «Նախ խօսք տուր ինձի, ասէր իմ, ըսաւ նա, որ չարիք մը չպիտի ընես իմ ըսածիս վրայ. կը հաւատամ նախ որ այս մասին ես յանդգնար չեմ:» Եւ առանց վէպերին պատասխանին սպասելու, «Երբ կամացդ հետ բաշխելի էի, շարունակեց նա, որվհետ առն եկաւ և այս գործատեղիս միջոցէն օգուտ քաղեց դեղձանի պարսկուհոյն հաւատացնելու թէ միտքդ զանի թագաւորին տալ չէ, և թէ զանի իրեն ընծայեր ես: Այսպիսի անարժան խաբէութենէ ետքն որվհետ ինչ ըրած չեմ ուզեր աւելի ընել, և կը խոստամ որ դու ինքնին դուշակես: Ահա քու և անոր սիրոյդ համար զոհացած ցաւերուս պատճառն այս է, և բնաւ չերթամ քու ներողութիւնդ անոր համար խնդրելու:»

Կարելի չէ բացատրել թէ որչափ մեծ եղաւ Գիսան վէպերին զայրոյթն երբ իր Նուբէտաւին որդուն լսրտութիւնն իմացաւ: «Ա՛հ, դու չես նա ինքզինքը ծեծելով անխնայ՝ ձեռքերը խածնելով և մօրուքը պեուելով, ուրիշն այսպէս, խշտաւ որդի, արև աներեւոյթ անարժան որդի, հայրդ իր բարձրպատիւ պատուոյ աստիճանէն անպատիւը կը դահավիժես, զանի՝ ի կորուստ կը մատնես, և դու ալ անոր հետ կը կորուսիս: Թագաւորն իմ և քու կեանքդ բառնալով զոհ ըլլալ այս նախատանաց վրէժը լուծելու համար, որ ուղղակի իր անձին կը պատչի:»

Վէպերին կինը ջանաց զանի սիրտ ելլալ և ըսաւ. «Մի տրտմիր այդչափ. իմ զոհարեղէններուս մէկ մասը ծախելով կրնամ տասս հազար ոսկի ձեռք ձգել. ուրիշ աղախին մը կը գնես որ աւելի դեղձանի և թագաւորին արժանի սիրոյ ըլլայ:

— Է՛հ, միթէ կարծես թէ տասս հազար ոսկին կորուստիդ համար կը տրտմիմ. խնդիրն այս կորուստին վրայ չէ, և ոչ իսկ իմ բոլոր գ-

յիշս կորսուեան վրայ, որ բնաւ փոյթս չէ, այլ իմ պատիւս կորուսեալ համար կը լայ եմ, որ աշխարհիս ամէն հարստութիւններէ աւելի թանկագին է աչքիս:

— Սակայն ինձի ի՛նչպէս, ամէ՛ր իմ, պատասխանեց սիլվինն, որ առակով դարմանելու բան մը մեծ կարեւորութիւն մը չտեսնէ:»

Ա՛յս խորհուրդը Գալան վէպիրին խիստ բանաւոր երեւելուն իրա՛ստւմը քիչ մը մեղմեց և որոշեց անոր հետեւելու, սակայն իր Դուրէ-տան որդւոյն դէմ ունեցած բարկութիւնը չդադրեցաւ բնաւ ին:

Դուրէ-տանն բոլոր օրն երեան չելաւ, և ոչ իսկ համարձակեցաւ ի-րեն տարեկից բարեկամներուն տունն ապաւէն մը փնտռել, որպէս զի հայրն այն տեղ փնտռել չտայ: Քաղքէն դուրս ելաւ և պարտիզի մը մէջ պահուեցաւ, ուր բնաւ պայած չէր և այն տեղ ինքն անծանօթ էր: Շատ ուշ դարձաւ տունը, առոյգ ըլլալով որ Հայրը սենեակը քաշուած է, և իր մօրը սպասուհիները դուրս բանալով՝ առանց ձայն հանելու ներս առին զինքը: Հետեւեալ օրը՝ Հայրը չարթնցած՝ տունէն ելաւ, և մէկ ամիս շարունակ մի և նոյն զբօսութիւնները դործածելէ՝ թէեւ սաստիկ զայրացած էր: Եւ իրօք, սպասուհիները բայե՛ր ի բաց կ'ըսէին անոր թէ Հայրը նոյն բարկութեան մէջ է և կը սպասէ թէ զինքը տիսի տեսնէ եթէ իր առջեւն ելնէ:

Վէպիրին կինը տիսէր իր սպասուհիներուն միջոցաւ որ Դուրէ-տանն ամէն օր տուն կդար. բայց չէր համարձակեր իր ամուսինն աղաչել որ անոր նեղէ: Վերջապէս սիրտ ըրաւ և օր մ'անոր ըսաւ.

«Տէր իմ, մինչեւ յայսօր չէիմեցի որդւոյդ վրայ քեզի խօսիլ: Կը պաղատիմ, չնարհ ըրէ ինձ ըսելու թէ ի՞նչ պիտի ընես զանի: Որդի մը իր հօրն առջեւ այնքան յանցաւոր չկրնար ըլլալ որ է Դուրէ-տանը քու առջեւդ: Իրաւ է որ պեղանի պարկուհւոյն պէս ազախինի մը թագա-դատորին ներկայացնելու պատիւն և դոհունակութենէ քեզ զրկեց, բայց գարձեալ, ի՞նչ է դիտաւորութիւնդ: Արդեօք անպատճառ պիտի սպանես զինքն: Առջի դժբաղդութեան տեղ՝ ուրիշ ծանրագոյն դժբաղդութիւն մը պիտի բերես, որ թերեւս մոռնդ անգամ չանցնիր: Մինչ չէս վախնար որ աշխարհս, պիտես ի՞նչ վայրահաչ է, պիտի ուզէ իմանալ թէ ինչո՞ւ համար որդիդ քեզնէ հեռու ի՛ատրի, և քուն պատճառը պիտի պահէ, թէեւ դու դազանի պահելու կը չհամաս: Եթէ այսպիսի բան մը պատահի, այն ատեն քու վախցած դժբաղդութիւնդ ղլխիդ պիտի դայ:

— Տիկին, վրայ բերաւ վէպիրն, ըսածդ շատ իրաւացի է. բայց երբէք չպիտի կարենամ Դուրէ-տանի ներել, մինչեւ որ ժամանի եղա-ծին պէս զինքը չվիրաւորեմ:

— Բաւական պիտի վիրաւորուի, պատասխանեց սիլվինն, եթէ միայն եղածն ընես: Որդիդ ամէն դիշեր տուն կդայ՝ երբ դու անհնակիդ քաշուիս. իր խօսքը կը պահի և դու չարթնցած՝ կը ձգէ ի՛նքնայ: Ա՛յս իրիկուն անոր պատէ, և այնպէս մը ձեւացուր որ զինքը պիտի սպաննես. այն ատեն ես անոր օգնութեան կդամ, և հասկցնելով ա-նոր որ իմ աղաչանքիս պիջանելով անոր կեանքը կը բաշխես, ի՛նձ պիտի զինքն որ պեղանի պարսկուհին իրեն կին ուզէ առնու՝ ինչ պայմանաւ որ ի՛նպես: Դուրէ-տանն զանի կը սիրէ, և պիտի՛ նաև որ պեղանի պարսկուհին զանի չտաներ:»

Գալան այս խորհրդին յօժարակամ հետեւիլ ուզեց. ուստի Դուրէ-տանին դուրս բանալէն առաջ՝ երբ ըստ սովորականին տուն եկաւ, վէ-պիրը դրան հետեւ պահուեցաւ և երբ բացին, անոր վրայ ընկաւ և զա-նի իր ուզին տակ առաւ: Դուրէ-տանն գլուխը դարձուց և իր Հայրը ճանչցաւ, որ դաշոյն ի ձեռն անոր գլուխը կտրելու պատրաստ էր:

Նոյն պահուն Դուրէ-տանին մայրը վրայ հասաւ, և վէպիրին թեւէն բռնելով. «Ի՞նչ կ'ընես, ամէ՛ր իմ, պոռաց նա: — Թո՛ղ որ սա անար-ժան որդին սպաննեմ, պատասխանեց վէպիրն: — Ա՛հ, ամէ՛ր իմ, վը-րայ բերաւ մայրն, աւելի լաւ ունիմ որ իս սպաննես, չպիտի համարձակիմ երբէք որ ձեռքերդ քու յատուկ արիւնով մէջ թաթխես:» Դուրէ-տանն այս վայրկենին օգուտ քաղելով. «Հայր իմ, դուշեց նա արտասուա-պին, քու գութդ ու ներողամիտդ կը հայցեմ. չնարհ ըրէ ներելու ինձ, յանուն այն էակին որմէ քու ներումդ կ'սպասես այն օրն որ ա-մէնքնիս ալ անոր առջեւը պիտի երթնինք:»

Գալան թողուց որ դաշոյնը ձեռքէն խլեն առնուն, և երբ զայն առին, Դուրէ-տանն հօրն ոտքն ընկաւ և զանոնք պաղատ՝ հասկցնելու համար որ իր ըրած նախատինքին վրայ սրտովին կը զղջայ: «Նու-

քէտանին, ըսաւ անոր հայերը, մօրդ շնորհակալ եղիր, անոր սիրոյն հա-
մար քեզ կը ներեմ: Գեղանի պարկեշտ էին ալ քեզի տալու կը հաճէի,
քայց սա պակ մնաւ որ խօսք տաս ինձի թէ իբր աղախին պա-
հես զանի, այլ իբր կին, այսինքն զանի չափաւ ծախես, և ոչ իսկ ա-
նոնմէ պիտի զատ խա բնաւին: Որովհետև խնամատուն կին մ'է և քեզ-
նէ շատ աւելի ուշիմ և հասկցող է, համոզուած եմ որ քու երեսա-
տարդական եռանդդ պիտի մնայի, որ կարելի է քու կորուստդ պատ-
ճառէ:»

Դատբետանին չէր համարձակիր յայտնել որ Հայերն իրեն այսքան նե-
րողամտութիւնցուցին: Կարելի եղաւ չափ իր երախտագիտութիւնն
անոր յայտնել և անոր խնդրած երդումը տալով բրաւ: Գեղանի
պարեհաչին և նրբը շատ պոհ եղան իրարմէ, և վէպիրն ալ անանց մի-
տութեան վրայ ուրախացաւ:

Գաւան վէպիրը չսպասեց որ Թագաւորը դնելիք աղախնին խօսքը
քանայ, այլ նրբին անձամբ փութացաւ բանալ անոր թէ ինչպէս պժգութու-
թիւններ կը սեռնէ Ղորին վերհսկողութեան յանձնարարուած ըլլալուն
արժանանալ կատարելու. վերջապէս այդչափ վարպետութեամբ վա-
րուեցաւ Թագաւորին հետ, որ անդրդ այօրէն Թագաւորը խնդիրը մոռ-
ցաւ: Սակայն Սամոյ արդէն անցած զարձածէն քիչ մը բան խնայեր
էր, բայց Գաւան այնքան շատ կը վախնէր Թագաւորին ջորհն ու
վատահութիւնն, որ մինչ վէպիրը չհամարձակեցաւ անոր խօսելու:

Տարի մը կար որ այս վատուկ գործը վէպիրին առջի բերան կարծա-
ձէն աւելի յաջողելիք մ'անոնցմէ էր, երբ օր մը բաղնիք գնաց և սա-
պողական գործէ մը բանտապետ տոք տոք դուռ եկաւ. օդն որ քիչ
մը ցրտկէկ էր, անոր զարկաւ և կուրծքին հատամ մը պատճառեց, և
հարկադրեցաւ անկողին հիւանդ պառկիլ սաստիկ տենդով մը: Հիւան-
դութիւնը սաստկացաւ, և տեսնելով որ իր կինոջ վախճանը մօտ է,
Դատբետանին այսպէս խօսեցաւ.

«Ընկեր, ըսաւ անոր, չկրնամ թէ Աստուծոյ ինձի պարգևած
հարստութիւններն աղէկի գործածեցի թէ ոչ. կը տեսնես որ անոնք
քնաւ օգուտ մը չտնկին իս մահուանէ ազատելու համար: Ներեցէք
ինձի այս միայն կը խնդրեմ քեզմէ որ պեղանի պարկեշտ հոգն նկատ-

մամբ ինձ ըրած խաստութիւնդ չմոռնաս: Գոհ կը մեռնիմ, և վստահ եմ
որ խնդիրս պիտի կատարես:»

Այս խօսքերը Գաւան վէպիրին վերջին խօսքերն եղան: Քիչ մ'ետքը
հոգին փչեց և բոլոր տունն, արքունիքն ու քաղաքը մեծ սուգի մէջ
ձգեց: Թագաւորն իր խնամատուն, հոգածուն և հաստատիմ պաշտօ-
նեան ողբաց, և քաղաքացիք իբր իրենց պաշտպանին ու բարերարին անոր
վրայ լացին: Երբէք Պարսից մէջ անոր եղած յարգութեան պէս պատուաւոր յուղարկաւորութիւն մ'եղած չէր: Վէպիրներն, ե-
րիտասարդ և առ հասարակ բոլոր արքունի ներքինները փութացին ա-
նոր դագաղն իրենց ուսերուն վրայ բառնալու, հետևեցան, մինչև
գերեզմանատունը. թէ հարուստ և թէ աղքատ խմբուեցին անոր թաղ-
ման ուղեկից եղան արտասուագին:

Դատբետանին ըրած մեծ կարեւորին վրայ պղպջած խորունկ տրտմու-
թեան նշանները յայտնեց. շատ օրեր առանց մարդ տեսնելու միայնակ
նստաւ: Վերջապէս օր մը հրաման ըրաւ որ իր մտերիմ բարեկամին
մէկը ներս առնուն: Այս բարեկամը Ջանոյ զանի միսիմարելն, և ո-
րովհետև Դատբետանին տրամադիր էր խօսքը մանիկ ընելու, ըսաւ անոր
թէ հօրը յիշատակին պէտք եղած պատիւը վճարելէն, և պատշաճու-
թեան ամէն պահանջումներն 'ի գործ դնելէն ետև՝ ժամանակ էր որ
դուս ելնէ, իր բարեկամները տեսնէ, և իր արժանիքին և տա-
րեն առած աստիճանը պահէ:

«Ընտ թեան և նորն խոկ քաղաքային օրինաց պէտ մեղանչած կ'ըլլա-
յինք, յարեց նա, եթէ՝ մեր մահուանէ ետև՝ որովհետև սիրոյ պատ-
հանչած պատուոյ որ թիւններն անկատար թողլ ինք, որոնք անպատ-
ասխան տեղ կ'անցնէինք: Բայց անդամ մ'որ այս պատեհը կը կատա-
րենք և անպատուհաս կը մնանք, պարտաւոր ենք առջի կեանքը վարել և
ամենուն ապրած կեցութիւնը մոռցնով հետ կենակցիլ: Ուրեմն արտասո-
սրէ և քու զգաստութեանդ գործիր, որ պատուհաս տեղը ամենուն
խնդութիւն կը պատճառէ:»

Այս բարեկամին խորհուրդը շատ բանաւոր էր, և Դատբետանին ի-
րեն հասած աղէտից առաջն առած պիտի լլար եթէ բարեկամին ը-
սած կանոնաւոր կենակցութեան հետևէր: Սակայն գիւրաս հանդ-

ըլուցաւ իր բարեկամին, և մինչև անդամ՝ անոր պարկներ տուաւ, և երբ մեկնիլ ուզեց, ազաչեց որ հետևեալ օրը նորէն գայ և իրենց յաւտուն բարեկամներէն մէկ քանին իր հետը բերէ։ Քիչ քիչ, իրեն տաքկից անձերէ տաս հոգւով ընկերութիւն մը կազմեց, և անոնց հետ շարունակ կերուխումի և հանդիսութեան մէջ կ՚անցնէր իր տունն։ Օր չէր ըլլար որ ամէն մէկուն պարդև մը տալով չճամրէր։

Երբեմն իր բարեկամաց հաճոյք տալու համար Նուրէտտին պեղանի պարակուհին կանչել կուտար. այս ալ անոր հնադանդելու կը հաճէր, սակայն այս տարօրէն շռայլութեան չէր հաւներ։ Իր կարծիքն այս մասին բայց՝ ի բաց անոր կը յայտնէր։

«Աներկիւղ եմ, կ՚ըսէր անոր, որ հայրդ վէզիրը քեզի անբաւ հարստութիւն ձգած է, բայց որչափ շատ ըլլայ, խնդրեմ, մի դժարիր եթէ ազախնդ քեզ ըսէ թէ այդ հարստութիւնը շուտով կ՚սպառի եթէ այս կերպագով վարես։ Երբեմն նեռւելի է բարեկամներու հետ պզօտնալ և զմայք մեծարել, բայց եթէ այս շռայլութիւնն ամենօրեայ պատնայ, մարդ չիտին թշուառութեան դուռը կը հասնի։ Քու սահմանդ և հանգստիդ համար լաւագոյն կ՚ըլլար եթէ վախճանեալ հօրդ օրինակին հետևէիր և անոր փառաց առիթ առողջարձր պաշտօններու հասնելու ջանայիր ըլլայիր։»

Նուրէտտին պեղանի պարակուհին մտիկ կ՚ընէր խնդալով, և երբ խօսքն աւարտէր. «Նազելիս, կ՚ըսէր նա ծիծաղը շարունակելով, թողունք մեկզի այդ քարոզն, և զուարճանալու նայինք։ Իմ հանգուցեալ հայրս իս միշտ մեծ բանտութեան տակ պահէց. ուրախ եմ որ կը վայելեմ այն աղատութիւնն որուն կը տենչայի հօրս մահուանէ առաջ։ Գոնե ժամանակ ունիմ բան մը չանտանաւոր կենացդ հետևելու. իմ հասակիս մարդ մը պէտք է որ երիտասարդութեան փայլքը ձաշակէ։»

Նուրէտտինի գործերն աւելի խանդարելու պլխաւոր մէկ պատճառն ալ սա էր որ իր անտեսին հետ բնաւ չէր ուզեր հաշիւ տեսնել։ Ամէն անգամուն որ անտեսն իր տումարով ներկայանար. «Գնա, գնա, կ՚ըսէր անոր, քեզի վստահութիւն ունիմ, միմակ հոգ տար որ կերը ջուրն անպակաս ըլլայ։»

Ամէն Նուրէտտինի բարեկամները շատ մէր էին սեղանի պատ և առիթ մը չէին հաներ ձեռքէ որպէս զի անոր սիրտ թենէ օգուտ քաղին։ Անդադար կը շողոքորթէին, կը գովէին զանի և անոր ամենէն աննշան գործերը կը գրատագէին, մանաւանդ անոր ունեցած բաներէն վինչև երկինք կը բարձրացնէին և աւել շահատր կ՚երևնէին։

«Տէր իմ, կ՚ըսէր անոր մէկն, այս ինչ աեղն ունեցած հաղէդ կ՚անցնելի անցած օր. անոր մէջի տան պէս շքեղօրէն զարդարուած բան մը չկայ. հետաքրքիր դրախտ մ՚է անոր կից պարտէզը։ — Զարմանայ ուրախ եմ որ քեզի հաճելի է այն, կը յարէր Նուրէտտին. դրիչը, մելան և թուղթ բերէք ինձ, և չեմ ուզեր որ ալ անոր խօսքն ընեն, ահա քեզի կը բաշխեմ զայն։

Եթէ ուրիշ մ՚իր առևտրէն, բանկիքներէն, օմեևաններէն մէկը գովէր, որոնք իր առաջնածքն էին և մեծական եկամուտ մը կը բերէին, իսկոյն անոր պարգև կ՚ընէր զայն։ Գեղանի պարակուհին այս ընթացքին իրեն եղած ջնան անոր կ՚իմացնէր, բայց մտիկ ընելու տեղ, ունեցածն առաջին առթիվ՝ վատնելու չէր վարաներ։

Վերջապէս Նուրէտտին բոլոր տարին ուրիշ գործ չըրաւ, այլ միայն ուտել խմել, պարապ ժամանակ անցնել, զբօսնուլ, իր նախորդներուն և հօրը ձգած և մեծ խնամքով վաստակած մեծ հարստութիւնները վատնել։ Հապա թէ տարի մ՚անցեր էր որ օր մը սեղանդ դրուած սրահին դուռը զարկին։ Իր սպասաւորները զրկեր և ինքն առանձին մնացեր էր բարեկամներուն հետ որպէս զի աւելի ազատօրէն խօսի։

Նուրէտտինի բարեկամներէն մէկն երթալ և դուռը բանալ ուզեց, բայց Նուրէտտին անոր առաջն առաւ և ինքն անձամբ դուռը բանալու դնաց (իր անտեսն էր եկողն). և Նուրէտտին անոր ընդիմելն իմանալու համար քիչ մը սրահէն դուրս ելաւ և դուռը կէս մը գոցեց։

Դուռը բանալ ուզող բարեկամն՝ որ անտեսը սեսեր էր, հետաքրքիր ըլլալով հասկնալու թէ անտեսն ինչ պիտի ըսէ իր տիրոջ, դնաց դրան և վարագուրին մէջ սեղը կեցաւ և անտեսին սա խօսքերը մտիկ ըրաւ։

«Տէր իմ, ըսաւ նա իր տիրոջ, կրկին և կրկին ներում կը խնդրեմ որ ձեր զբաղումիւնը կը վրդովեմ։ Բայց կարծեմ թէ ձեղի ըսելիքս

այնչափ մեծ կարևորութիւն ունի որ այս հանդիպակառութիւնն առնուա անհրաժեշտ համարեցի: Իմ վերջին հաշիւներս կարգադրելի համար, և տեսայ որ երկար ժամանակէ վեր գործակալս և քեզի շատ անգամ ըսածս ահա հատաւ, այսինքն, ահը իմ, ծախքդ լմնցնելու համար ինձի տուած դրամներէդ և ոչ մէկ մ՚ունիմ: Ինձի յանկարծ եղած միւս տուներուդ ալ հատան. և քու ապաբակատանոցդ և անոնք որ ձեզի այլ և այլ հաստատներ պարտական էին, այնչափ ահեղ և ցոյց տուին ինձ որ ուրիշներուն ձեռքն յանձներ ես ինչ որ ձեզինէ առեր էին, որ ձեր անուանէն անոնցմէ բան մը չեմ կրնար պահանջել: Ահա ասիկ իմ հաշիւներս, քննեցէք զանոնք. և եթէ կը փափաքիք որ իմ ծառայութիւնս շարունակեմ, ուրիշ դրամներ տուէք ինձ, ապա թէ ոչ հրաժան տուէք որ ձգեմ երթամ:» Նաբէտուհին այս խօսքերէն այնքան զարհուրցաւ որ պատասխան տալու համար բառ մը չգտաւ:

Ահ բարեկամն որ ահագին դրեր և ամէն բան ըսեր էր՝ խոկոյն ներս մտաւ և իր լուծները միւս բարեկամոջ հաղորդեց: «Արդ՝ ձեզի կը մնայ, բաւ անոնց, օգուտ քաղել այս ողբարաբութենէ, իսկ իմ՝ սա, ահա ձեզի կը յայտնեմ որ այսօր վերջին օրն է որ իս Նաբէտուհիի տունը պիտի տեսնէք: — Եթէ այդպէս է, կրկնեցին միւսները, ալ անոր տունը գործ չունինք, ինչպէս և դու. մեզ այստեղ ալ չպիտի տեսնէ:»

Ողջ պահուն Նաբէտուհին ներս մտաւ, և թէև Ջանայ ուրախ դէմքով երևիլ օրպէս զի իր հիւրերուն խղճմտութիւնը չզրկուէ, սակայն չկրցաւ կեղծել և բարեկամները հասկցան որ իրենց արդէն իսկ ըսածը ճշմարիտ է: Ահ ինչ Նաբէտուհին իր տեղը նստաւ, որ ուրիշ մ՚իր տեղին եկաւ:

«Տէր իմ, ըսաւ անոր, կը ցաւիմ որ չեմ կրնար աւելի ևս ընդհատութեան մէջ մնալ, կ՚ազաչեմ, հրաման տուր ինձ որ երթամ: — Ինչ տեսիլական դրած ունիս որ այսչափ կանուխ մեզ կը թողուս, հարցուց Նաբէտուհին: — Տէր իմ, պատասխանեց, կինս այսօր ծնաւ, պիտես արդէն որ այսպիսի պարագայի մը մէջ երկան մը ներկայ ըլլալը կարևոր է:» Ահ այս ըսաւ, ակնածելի խոնարհութիւնն մ՚ըրաւ և ձգեց գնաց: Պահ մ՚ետքն ուրիշ մէկը՝ նոր պատրուակ մը գտնելով եկաւ

ներկայ: Միւսներն ալ իրարմէ ետև նոյն բանն ըրին, միայն որ առաջ բարեկամներէն և ոչ մէկը մնաց, որոնք շարունակ Նաբէտուհիի սեղանակից եղեր էին:

Նաբէտուհին բնաւ չկասկածեցաւ թէ իր բարեկամներն որոշեր են ալ վերջը չհրամարել: Գիտցին պարսկուհւոյն սեռական որ առաջին բրած յայտարարութենեն մնացին անոր հետ միայն խօսելու, և ճշմարիտ ցաւ ցոյց իր գործոյ ներկայ անհարգութենեն համար:

«Տէր իմ, ըսաւ անոր պեղանի պարսկուհին, դուք ինձ ըսեր որ միևնոյն ցայսօր քու խելքիդ փչածն ըրիր, և ահա հիմակ կը տեսնես պատահած դժբաղդութիւնն: Երբ դուշակիչն որ անվրէպ այս տեսարը վախճանը պիտի հաստի, չէի սխալեր: Իմ ցաւս այս է որ այս ձախորդութենեն ծանրութիւնը դեռ չես զգար: Երբ քեզ խորհուրդ տայի, Ջուարճանաք, կ՚ըսէիր ինձ, և այս ալ որ առնչ վայելինք՝ միևնոյն դեռ բաղդը մեզ նպաստաւոր է, թերևս այս բարեբաղդութենին երկար չտևեր: Բայց ես իրաւամբ պատասխան կուտայի քեզ որ միշ խոհական վարքով միայն կրնանք մեր յաջող բաղդը վայելել. զուր ինձ մնալ չըրիր, և ես ալ առիթս ունայն անցնել որ ուզածդ ընես:

— Կը խոստովանիմ, պատասխանեց Նաբէտուհին, որ քու հիանալի լսմաստութեամդ ինձ ետուած խորհուրդդ չանսալուս յանցաւոր եմ, բայց եթէ իմ բոլոր ինչքս վատնեցի, չես նկատեր որ երկար ժամանակ հետ ինձի ծախսի ընտիր բարեկամաց հետ վատնեցի: Բարեկիրթ և երախտագէտ անձինք են, և տապր եմ որ իս երեսի վրայ չեն ձգեր:

— Տէր իմ, պատասխանեց պեղանի պարսկուհին, եթէ քակ բարեկամդ երախտագիտութեան վրայ դրած ես բոլոր յոյսդ, հատուն ինձ, արհնեմ է այդ յոյսդ, և վերջին զուր անձամբ պիտի խոստովանիս թէ ըսածս ճշմարիտ է:

— Ձքեզ պատրաստել պարսկուհի, ըսաւ Նաբէտուհին իրր պատասխան, ես քեզմէ աւելի կրնամ դատել որ ինձի պիտի օգնեն. պիտի երթամ վաղը զանոնք տեսնելու, դեռ ինձի չեկած, ըսաւ տեղապահին, և պիտի նայես որ մեծիկ դուռմարով մը պիտի գտնամ, որով ամէնքն ալ ինձ նպաստելու են: Իմ կենցաղավարութենս պիտի փոխեմ, ինչպէս որ որոշեր եմ, և այն դուռմարով առաւտուրի պիտի սկսիմ:»

Հետեւեալ օրը՝ Նուբէտաին փութայ իր տան բարեկամաց առնին երթալու, որոնք մի և նոյն փողոցը կը բնակէին, առջևն եղած առաջին գուռը զարկաւ, ուր ամենէն հարուստներէն մին կը բնակէր: Գերի մնկաւ և բանալէն առաջ՝ հարցուց թէ զարնողն ով է:

«Ըսէ տիրոջդ, պատասխանեց Նուբէտաին, որ վախճանեալ Գահան վէզիրին որդին՝ Նուբէտաինն է:» Սպասաւորը գուռը բացաւ, սրահ մը հրամցուց և իր տիրոջը դանուած սենեակը մտնելով խնդրեց անոր որ Նուբէտաին ընդունելու եկեր է: «Նուբէտաին, բաւ սէրն այնպիսի արհամարհոտ և բարձր ձայնով մ՚որ նոյն ինքն Նուբէտաին լսեց նոյն ձայնը սասանիկ զարմանքով: Գնա, ըսէ անոր որ տունը չեմ, և ամէն անպատճառ որ պայ իս վտառէ, ոչ և նոյն պատասխանը տար: Գերին դարձաւ և պատասխանեց Նուբէտաինի թէ սխալմամբ կարծեր է որ իր տէրը տունն է, բայց դուրս եղեր է:

Նուբէտաին զուրս եկաւ ամօթահար. «Ա՜հ, նենգաւոր, անպիտան մարդը, պատմեց նա: Դեռ երէկ կը պնդէր որ իրմէ լաւագոյն բարեկամ մը չունիմ, և ահա այսօր այսպէս անարժան կերպով կը վարուի ինձի հետ:» Ցետոյ դնաց ուրիշ բարեկամի մը դուռը զարկաւ և այս բարեկամին կողմէն ալ առաջինին տուած պատասխանը ստացաւ: Նոյն պատասխանն առաւ նաև երրորդէն, մինչև ատեներորդը, թէև ամենքնին ալ իրենց տունը կը գտնուէին:

Ահա այն ատեն Նուբէտաին կամաց կամաց ինքզինքին եկաւ և իր անպարկեշտելի սխալմունքը ճանչցաւ, որովհետև դիւրաւ հասատցեր էր թէ իր տան բարեկամներն իրեն անձին սերտիւ կապուած են և քանի որ անոնց ձոխ ընթրիքներ և առատաձեռն պարգևներ կ՚ընծայէր բարեկամութեան չերմ նշաններ կը յայտնեն:

«Ճաւ իրաւ է, ըսաւ ինքնիրեն և աչքերն արտասուալի, որ ինձի պէս երջանիկ մարդ մ՚ինչպէս որ ատեն մ՚էի, պատուհերով լեցուն ծառի մը կը նմանի, որչափ ատեն որ ծառին վրայ պտուղ գտնուի, ամէն մարդ անոր չորս կողմն կը ժողվուի և կը քաղէ. երբ պտուղն հատնի, կը հեռանան և զայն մինակ կը թողուն:» Որչափ ժամանակ որ դուրս մնաց՝ ինքզինքը զսպեց, բայց երբ տուն դարձաւ, բողոքովին տրտմութեան մէջ ընկաւ և գեղանի պարսկուհոյն յայտնեց:

Ան ինչ գեղանի պարսկուհին վշտակիր Նուրէտտինը տեսաւ, կասկածեցաւ որ իր ամուսնին ախտալաւ օդնութիւնը գտած չէ իր բարեկամներէն: «Լաւ ուրեմն, բաւ անոր, հիմակ ալ համոզուեցայ իմ գուշակութեանս ճշմարտութեան վրայ:

— Ա՜հ, սիրականդ իմ, գոչեց Նուրէտտին, շատ քաջ գուշակեր ես: Բարեկամներէս և ոչ մէկն իս ճանչել, տեսնել և հետս խօսիլ ուզեց: Երբէք չէի յուսար որ այսպէս անխնայ սիրտ վարուին ինձի հետ այնպիսի մարդիկ որոց այնքան երախտիք ըրած և ինքզինքս անոնց համար կործանած եմ: Ինքզինքէս երես եմ և կը վախնամ որ անարժան պորձ մը չգործեմ, այս աղբրիկի և յուսահատ վիճակիս մէջ, եթէ քու խնամատար խրատներովդ ինձի չօդնես:

— Տէր իմ, պատասխանեց գեղանի պարսկուհին, այս քու ձախորդութեանդ գտնելն ուրիշ բան չկրնար ըլլալ, այլ միայն աղախիններդ ու կարասիդ ծախել, և անով ապրիլ, մինչև որ Աստուած մեզի ուրիշ միջոց մը ցուցնէ այս թշուառութենէ ազատելու համար:»

Այս գաղափարը շատ ծանր եղաւ Նուրէտտինին, բայց իր վիճակին մէջ ուրիշ ինչ կրնար գտնել: Նախ իր գերիները ծախեց, որոնք անօգուտ բաներ էին, քանի որ սէրտ եղածէն աւելի ծախուց գուռ մը սիրտ ըլլային իրեն համար: Առեն մ՚անկից քաղած ստակովն ապրեցաւ, և երբ այս ալ հատաւ, իր կարասիները շուտան հանեց, և իրենց գնէն շատ վար ծախեց, թէև անոնց մէջ մեծագին կահեր կային և ահագին գումարներ կորեր էին: Այս կերպով քանի մը երկար առեն ալ ապրեցաւ, բայց ի վերջէ, այս աղբիւրն ալ սպառելով իր անհնարին տրամադրութիւնը գեղանի պարսկուհոյն յայտնեց:

Նուրէտտին՝ այս խնամատարն անձէն չէր յուսար առած պատասխանը: «Տէր իմ, ըսաւ գեղանի պարսկուհին, ես քու աղախինդ եմ և գիտես որ հանդուցեալ հայրդ իս տան հաղար ոսկիի գնեց: Քաջ գիտեմ որ այն առենէն վեր գինս չէ, բայց գարձեալ համոզուած եմ որ անոր մօտ գնով մը կրնամ ծախուիլ: Խնդրեմ, մի վարաներ ինձ շուկայ հանելու և ծախելու. ձեռք ձգած գրամովդ, որ մեծ գումար մը պիտի ըլլայ, կ՚երթաս քաղաք մը վաճառականութիւն կ՚ընես և անձանօթ կը մնաս: Հետևապէս, ապրելու միջոց մը կը գտնես, եթէ

ոչ Հոխոռթեամբ , ղէթ երջանիկ և զոհ ըլլալու չափ :

— Ա՛հ , չքնաղագեղ պարսկուհի , զոչեց Նուրէտտին , ինչպէ՜ս կարելի է որ մոքէդ այդպիսի բան մ՚անցնես : Մինչ այնչափ քիչ կը սիրեմ քեզ որ այս վտտութեան կը յորդորես իս : Մինչ կրնամ այս անարժան գործն ընել առանց երդումս դժելու , այն երդումը զոր Հօրս գերեզմանը քեզ երբէք չճանչնալու դիտմամբ : Լաւագոյն ունիմ մոռնալ քան դրուժան ըլլալ և քեզմէ զատուիլ , քեզ որ՝ չեմ ըսեր իմ անձիս չափ , այլ աւելի ևս կը սիրեմ : Ա՛յսպիսի անաեղի առաջարկութիւն մ՚ընել կրնա՞ս , կ՚իմանամ որ դու չես սիրեր իս՝ որչափ որ ես քեզ կը սիրեմ :

— Տէր իմ , պատասխանեց գեղանի պարսկուհին , վասն զի եմ որ ըստածիդ չափ իս կը սիրես , և Աստուած միայն դիտէ եթէ իմ սէրս քեզի վար կը ճնայ , և եթէ ուշացի ծանր եկաւ ինձ այս առաջարկութիւնն ընել քեզ , որ քեզ այնքան կը վիրաւորէ : Սակայն յառաջ բերած պատճառդ ջրելու համար , այսչափ միայն կ՚ըսեմ որ հարկն օրէնք չունի : Քեզ այն աստիճանի կը սիրեմ որ անկից աւելի կարելի չէ որ իս սիրես , և կրնամ հաստատել որ նոյն կերպով քեզ սիրելէն չվերջ դադրիմ , ուր ալրոջ ձեռքն որ անցնիմ : Նա մանաւանդ իմ ուրախութիւնս աւելի մեծ պիտի ըլլայ եթէ կարող ըլլամ նորէն քեզ միանալու՝ երբ քու զործերդ նորէն որ իս վերադնես , ինչպէս որ կը յուսամ : Ուրախ , խիստ անպուճ հարկ մ՚է այս եթէ քեզի և եթէ ինձի համար , բայց , ինչ օղուտ , եթէ դու և եթէ ես թշուառութենէ ազատելու համար ուրիշ միջոց մը չեմ տեսներ :»

Նուրէտտին՝ որ գեղանի պարսկուհւոյն խօսքերուն ճշմարտութիւնը քաջ գիտէր , և անուանարկ չքաւորութենէ մ՚ազատելու համար ուրիշ հնար մը չունէր , սոսկալեաց անոր առաջարկած միջոցն ի գործ դնել : Ուստի գեղանի պարսկուհին առաւ և ազախինները շուտ տարաւ անպատրաստ արամութեամբ : Հաճի Հասան անուն միջնորդի մը դիմեց և անոր բսաւ .

«Հաճի Հասան , ահաւասիկ այս աղախինը ծախել կ՚ուզեմ . նայէ , կ՚ազատեմ , ինչ գին կը կարես :»

Հաճի Հասան՝ Նուրէտտինն ու գեղանի պարսկուհին սենեակ մը մտցուց , և այն ինչ աղախինն իր երեսի քօղը վերցուց որ Հաճի Հասան հիանալով Նուրէտտինի բսաւ .

«Տէր իմ , արդեօք կը սխալիմ . միթէ քու հօրդ տաս հազար ոսկով գնած աղախինն այս չէ :» Նուրէտտին հաստատեց թէ նոյն ինքն է , և Հաճի Հասան յոյս տալով անոր որ շատ սուղ կրնայ ծախուիլ այն , խոստացաւ իր բոլոր վարպետութիւնը բանեցնել որ կարելի եղածին չափ բարձր գնով ծախուի :

Հաճի Հասան և Նուրէտտին խօսելէն զատ էին , և Հաճի Հասան գեղանի պարսկուհին ներքը փակեց : Ցետոյ գնաց վաճառականները փնտռելու , բայց ամէնքն ալ յոյն , թամար , ափրիկեցի և ուրիշ գիներ գնելու ղրկած ըլլալով տակաւին ապատուր որ գործերնին լմնցնեն : Ա՛յն ինչ լմնցուցին և գրեթէ ամէնքը հաւաքուեցան . «Իմ բարի ազգերս , ըսաւ անոնց այնպիսի զուարթութեամբ մ՚որ իր գէմքին և շարժուձեւերուն վրայ կ՚երեւէր , ամէն ինչ որ կերը է՝ կաղին չէ , ինչ որ երկար է՝ ծուռ չէ , ինչ որ կարմիր է՝ միշտ սիս չէ , և ամէն հատկութիւնները թամբ չեն : Ըսել կ՚ուզեմ թէ ձեր կեանքին մէջ շատ ազախիններ տեսեր ու գներ էք , բայց տեսած չէք բնաւ աղախին մ՚որ իմ տյոյ տալիքիս հետ բաղդատուի : Աղախիններուն մարգարիտն է այն . եկէք , եաւէս եկէք որ ձեզի ցուցնեմ : Ա՛ւելի՜ որ դուք ըսէք առաջ թէ ինչ գնով ածուրդի հանեմ :»

Վաճառականները Հաճի Հասանի եաւէն զացին , և Հաճի Հասան գեղանի պարսկուհւոյն գանուած սենեկին դուռը բացաւ : Հիանալով տեսան զանի , և ամէնքը միաբերան խոստովանեցան որ չորս հազար ոսկիէն վար գին մը չկրնար արտիլ՝ ի սկզբան : Ցետոյ սենեկէն դուրս եկան , և Հաճի Հասանն ալ , որ անոնց հետ եկաւ դուռը գոցելէն ետև , բարձր ձայնով զոչաց առանց հեռանալու . «Չորս հազար ոսկիի ածուրդն է պարսիկ աղախինը :»

Տակաւին վաճառականներէն և ոչ մէկը գինն աւելցուցեր էր , և իրարու հետ կը բանակցէին թէ մինչև ո՞ր սիտի հասցնեն գինն , երբ Սաւուլ վեզիրն երեւցաւ : Որովհետև Նուրէտտինը տեսաւ շուտ . «Կ՚երևի թէ , ըսաւ ինքնուին , Նուրէտտին նորէն կարասի մը ծախելու (քանզի արդէն գիտէը որ կահեր կը ծախէ) և աղախին մը գնելու եկած է :» Ուստի առաջ կ՚անցնի , և Հաճի Հասան երկրորդ անգամ

ըսուայ . «Ձորս հաղար ոսկի պարսիկ աղախինը :»

Ա.յս բարձր գինէն՝ Սաւոյ Հասկցաւ որ աղախինը չնաշխարհիկ պեղեցկութիւն մը պիտի ունենայ , և անմիջապէս սաստիկ փափաք մը ունեցաւ զանի տեսնելու : Իր ձին շիտակ դէպ ՚ի Հաճի Հասանի կողմը քշեց , որուն բոլորտիքն առեր էին վաճառականները , և անոր ըսաւ . «Դուռը բաց , և այն աղախինն ինձի ցոյց :» Սոխրութեան հակառակ է աղախին մը ցոյց մանաւանդ անձի մը , քանի որ վաճառականները զանի տեսեր էին և անոր վրայ կը սակարկէին : Բայց վաճառականները չհամարձակեցան իրենց իրաւունքն առաջ քշել վեզիրին իշխանութեան դէմ , և Հաճի Հասան տիպարեցաւ դուռը բանալ և նշան ընել պեղպարսկուհւոյն որ մօտենայ , որպէս զի Սաւոյ վեզիրն առանց ձիւնէն իջնելու զանի տեսնէ :

Սաւոյ անբացատրելի հիացման մէջ ընկաւ երբ այնպիսի կարգէ դուրս պեղեցկութիւն մը տեսաւ : Աբդէն միջնորդին հետ դործ ըրեր և անոր անունն իրեն ծանօթ էր : Ըսաւ , «Հաճի Հասան , ըսաւ անոր , միթէ չորս հաղար ոսկիի աճուրդի հանած չէս այս աղախինն :»

— Այ՛ , տէր իմ , պատասխանեց միջնորդը . սա տեսած վաճառականներդ քիչ մ՚առաջ որոշեցին որ չորս հաղար ոսկիի հանեմ . ի՚սկապէս որ աճուրդին առէլցնեն և վերջին գինն որոշեն : — Ըսած գինդ ես կատմ , վրայ բերաւ Սաւոյ , եթէ առէլցնող չըլլայ :» Նոյն պատհուն վեզիրը վաճառականներուն այնպիսի աչքով մը նայեցաւ որմէ կը հասկցուէր թէ չուզեր որ առէլի գին մը տան : Վեզիրն այնքան ահարկու էր ամենուն , որ բերան բանալու զդուշացան , և ոչ իսկ դանդաղ ըրին իրենց իրաւանց դէմ շարժելուն համար :

Երբ Սաւոյ վեզիրը քիչ մ՚առեն սպասելէն ետև տեսաւ որ վաճառականներէն և ոչ մէկն աղախնին գինը չառէլցներ . «Դա ուրեմն , ինչպէս կ՚ըսատես , հարցուց Հաճի Հասանին : Գնա աղախնին տէրը դտիր և անոր հետ չորս հաղար ոսկիի գինը կարգէ , կամ հասկցիր թէ ինչ է :» Տակաւին անտեղեակ էր որ աղախինը Նուրէտտինին էր :

Հաճի Հասան՝ որ արդէն սենեկին դուռը դոցեր էր , դնաց Նուրէտտինի հետ բանակցելու . «Տէր իմ , ըսաւ անոր , կը ցաւիմ որ պէշ լուր մ՚ունիմ քեզի տալու . աղախնիդ ոչ ինչ գնով պիտի ծախուի :

— Ինչ պատճառաւ , պատասխանեց Նուրէտտին : — Տէր իմ , յարեց Հաճի Հասան , նախ գործը շատ յաջող կերթայարաք մ՚առաւ : Վաճառականներն այն ինչ աղախնիդ տեսան որ ապարդեցին ինձ չորս հաղար ոսկիի աճուրդի հանել : Ես ալ նոյն գինը պոռացի . և իսկոյն Սաւոյ վեզիրն եկաւ , և իր ներկայութիւնը վաճառականներուն բերանը դոցեց , մինչդեռ առանք տրամադիր էին մինչև տասհաղար ոսկի զարնել , ինչպէս որ բարեյիշատակ հայրդ գներ էր : Սաւոյ միտակ չըրաւ հաղար ոսկի ի՚ուղէ տալ , և այս անիրաւ գինը քեզի եկայ յայտնելու ամանայ : Աղախինը միշտ քու սպրանքդ է , և քեզ կը յորդորեմ որ այս գնով չծախես : Դուռ , ինչպէս բոլոր աշխարհ , կը ճանչէք վեզիրն , ոչ միայն աղախինն այս տրուած գինն շատ աւելի ի՚արժէ , այլև կասկածելի է որ այս դումարն ալ վճարէ՝ խիստ անզգամ մարդ մ՚ըլլալուն :

— Հաճի Հասան , պատասխանեց Նուրէտտին , շնորհակալ եմ քեզ՝ տուած խորհրդիդ համար . վատահ եղիր որ իմ աղախինս տանս ձիշնամին չպիտի ծախեմ : Սակի շատ կարօտ եմ , բայց աւելի աղէկ ունիմ յեսին չքաւորութեան մէջ մնալ քան թէ աղախինս անոր յանձնել : Քեզնէ բան մը միայն կը խնդրեմ . դուռ որ ասկէ տմերութեան և հնարք պատես , ըսէ միայն ինձի թէ ինչ ընելու պէտք է այս սակարկութիւնն արդիլելու համար :

— Տէր իմ , պատասխանեց Հաճի Հասան , շատ դիւրին միջոց մը կայ . այնպէս ձևացուր թէ աղախնիդ դէմ բարկացեր և երդում ըներ էիր զանի ծախելու , բայց միտդդ ծախել չէր , այլ միայն երդումդ կատարել : Ասոր բանը կը գոյութի , և Սաւոյ չկրնար քեզ յանդիմանել : Ուստի ևս , և այն միջոցին որ Սաւոյին պիտի ներկայացնեմ աղախինդ , իբր թէ քու հաւատութեամբդ՝ սակարկութիւնը յարմարած ըլլայ , աղախինդ ձեռքէն առ , և քանի մը հարուած տալով տուր : — Շնորհակալ եմ քեզ , ըսաւ անոր Նուրէտտին . պիտի տեսնես որ խորհրդիդ ճշտիւ պիտի հետևիմ :»

Հաճի Հասան սենեակը դարձաւ , բացաւ զան և ներս մտաւ . երկու խօսքով հասկցուց դեղանի պարսկուհւոյն որ ըլլալիք բաներուն վրայ պիտի չվհատի , անոր թևէն բռնեց և Սաւոյ վեզիրին տարաւ , որ

միշտ դրան առջև կ'սպասէր. «Տէր իմ, ըսաւ նեղիայացնելով աղախինն, ահաւասիկ աղախինը, քուկդ է, առ նայիմ:»

Ան ինչ Հաճի Հասան այս խօսքերն ըսաւ, որ Նուբէտանին պեղանի պարակուհւոյն ձեռքէն բռնեց, դէպ իրեն քաշեց՝ անոր ապահակ մը տալով, և անոր ըսաւ այնպիսի բարձր ձայնով որ ամէնքը լսեն: «Անենթես, եկուր նայիմ և առնս գործիդ: Քու անշահ բնաւորութեանդ պատճառաւ երդում ընելու սովորութիւն էի քեզ շուկայ հանելու, բայց չէ թէ ծախելու: Տակաւին քեզնէ պէտք ունիմ, և երբ յետին կարօտութեան մէջ ընկնիմ, այն ատեն կրնամ քեզ ձեռքէ հանել:»

Սամօյ վէզիրը Նուբէտանիի այս ընթացքին վրայ սաստիկ բարկացաւ: «Անպիտան անասուն, գոչեց նա, միթէ կարծես թէ կրնամ հաւատացնել ինձ որ այս աղախնէդ զատ բան մ'ունիս:» Նոյն միջոցին իր ձին դէպ անոր քշեց դեղանի պարակուհին բռնի առնելու համար: Նուբէտանին՝ Սամօյ վէզիրին երած նախատինքէն սաստիկ զրդռելով՝ դեղանի պարակուհին ձեռքէն ձգեց՝ ըսելով որ այն տեղ իրեն սպասէ, և ինքը ձիուն սանձէն բռնելով՝ երկաք չորս քայլ ետ քշեց, ըսելով. «Անպատճառ ծերուկ, հոգիդ բերնէդ կը հանեի հիմակ թէ որ այս տեղ ներկայ գտնուողներէն չկոտրէի:»

Որովհետև ամէն մարդ Սամօյ վէզիրը կ'սպասէր, զրեթէ ամէնքը պիտի ուրախանային եթէ Նուբէտանին զանի աղէկ մը կոխէր: Նշանները՝ անոր հակառակորդին որ ուզածին պէս կրնայ իր վրէժն անոր առնուլ և թէ ոչ ոք իրենց կռուին խառնուելու միտք ունի:

Սամօյ չսպասեց Նուբէտանիի ձեռքէն ձիուն սանձը խլել, բայց Նուբէտանին՝ որ ուժեղ և զօրաւոր երիտասարդ մ'էր, հանդիսականներուն քաջալերական ընթացքէն սիրտ առաւ, ձիէն վար՝ պետակին մէջ տեղը նետեց, սաստիկ հարուածեց զանի և պլուխը ջարդեց ներսէն արիւնեց: Սամօյին հետ գտնուող տասը զերի՝ ուղեցին Թուրքը քաշել և Նուբէտանիի վրայ յարձակիլ, բայց վաճառականները մէջ տեղն ընկան և արգիլեցին: «Ինչ է ձեր միտքն, ըսին անոնց: Միթէ չէք դիտեր որ եթէ մէկը վէզիր է, միւսը վէզիրի որդի է: Թողուցէք որ իրենց կռիւն իրենք լմնցնեն. կարելի է որ օրին մէկը հաշտուին, և եթէ Նուբէտանիը սպաննէք, միթէ կը կարծէք թէ ձեր

առէրն, որչափ որ զօրաւոր է, ձեզ սպառժէ կարենայ աղատել:» Նուբէտանին Սամօյը ծեծելէն ձանձրացաւ, պետակին մէջ տեղը ձգեց զանի, դեղանի պարակուհին առաւ և իր տունը դարձաւ, այն միջոցին որ անոր ըրած գործը գովելով ուրախութեան աղաղակներ կ'արձակէին:

Սամօյ՝ որ հարուածներէն վիրաւորուեր էր, իր սպասաւորներուն օգնութեամբը շատ դժուարաւ ոտք ելաւ, և իր վրան պլուխը տղմով և արիւնով ծածկուած տեսնելով՝ սաստիկ կատղեցաւ: Իր երիս սպասաւորներուն ուսին վրայ կռթնցաւ, և այս վիճակին մէջ՝ շիտակ պալատը դնաց՝ բազմութեան առջևէն անցնելով, և իր չէհոտութիւնն աղքան մեծ եղաւ, որչափ որ կը դիտէր որ ոչ ոք իրեն ցաւակից կ'ըլլար: Երբ թագաւորին սենեկին տակն հասաւ, սկսաւ պոռալ և ողբալի կերպով մ'անորմէ դատաստան խնդրել: Թագաւորը զանի կանչել տուաւ, և երբ երևցաւ, հարցուց անոր թէ ով գինքն այն խղճալի վիճակին մէջ ձգեր է:

«Տէր իմ, գոչեց Սամօյ, բանական է որ մէկը Ձեր վեհափառութեան շնորհը վայելէ և իր նախիրնան խորհրդոց մնանակից գտնուի որպէս զի այսպէս վատօրէն պատահած ըլլայ, ինչպէս որ կը տեսնէք:

— Թողունք մէկդի ասերդ խօսքերը, վրայ բերաւ Թագաւորը, միտակ ըսէ ինձ թէ գործն ինչպէս անցաւ, և ով է քեզ այսպէս նախատողը: Գիտեմ ինչպէս պատժել պէտք է զանի, եթէ իրօք անիրաւ է:

— Վեհափառ տէր, ըսաւ այն ատեն Սամօյ ամէն բան իրեն նպաստաւոր կերպով պատմելով, աղախիններու շուկան գացեր էի, որպէս զի խոհարարուհի մը գտնեմ պէտք ունեցածս. շուկան հասայ և տեսայ որ մուհտեսիկ մը՝ աղախին մը ածուրդը հաներ էր չորս հազար ոսկիի: Աղախինը բերել տուի, և այս աղախնին պէս ոչ տեսայ եմ ես ոչ պիտի տեսնեմ երբեք: Ան ինչ չափազանց գոհունակութեամբ տեսայ զանի որ հարցուցի թէ որքան է, և խնայեցի որ գնան զին որպէս զի Նուբէտանին կը ծախէր զանի: Ձեր վեհափառութիւնը կը յիշէ անշուշտ որ այս վերջերս տասը հազար ոսկի տուի, երկու երկաք տարի առաջ, և ապագրեց անոր որ նոյն գումարով աղախին մը գնէ.

Աղախինը գնաց էր, բայց փոխանակ Ձեր վհատութեան բերելու՝ իր որդւոյն պարգեւեր էր՝ ձեզ անոր արժանի չտեսնելով: Հօլը մահուանէ վեր՝ որդին կերաւ, խմեց և բոլոր ունեցածը վատնեց, և մինակ այս աղախինը մնացեր էր, զոր ծախել ի՛ւզէր և իրօք իր կոշտին ծախու հաներ էին: Ես ալ Նուբէտաէնը կանչելով՝ առանց հօրը յանցանքը, կամ լաւ ևս ըսեմ, նենգութիւնն երեսին պարնելու՝ «Նուբէտաէն, ըսի անոր խիստ պարկեշտ կերպով մը, վաճառականներն, ինչպէս որ իմացայ, քու աղախնիդ մէկէն չորս հազար ոսկի պէտ կուգային: Տարաբաղդ չունիմ ոը՝ իրաւու հետ մրցելով՝ աւելի շատ պիտի բարձրացնէին գինն. եկուր ինձի տուր աղախինդ չորս հազար ոսկիի, միայն ունիմ ծախու առնելով իմ տիրոջս՝ վհատեալս պարգեւել, և քեզի համար ալ բարեխօսել: Ասով շատ աւելի շահաւոր կ՛երեւես քան թէ վաճառականաց տալիք գինով:

Փոխանակ ինձի միամտօրէն պատասխանելու՝ ինչպէս որ ես ըրի, անոնք դառնաբար երեսս կը նայէր. «Անդամ ծերունի, ըսաւ ինձի, իմ աղախինս վար գնով հրեի մը տալու աւելի աղէկ ունիմ, քան թէ քեզի ծախելու: — Բայց, Նուբէտաէն, ըսի նորէն առանց բարկանալու՝ թէև իրաւունք ալ ունէի, չես նկատեր որ այսպէս խօսելով Թագաւորը կը նախատես, որ հայրդ մարդ ըրաւ, ինչպէս նաև ինք:» Ա՛յս յանդիմանութեամբս, փոխանակ հանդարտելու, աւելի զայրացաւ. անմիջապէս վրաս ընկաւ կատաղաբար, առանց իմ հասակս, և ոչ իսկ աստիճանս յարգելու, իս ձիէն վար նետեց, ուզածին չափ ծեծեց և իս այս վիճակին մէջ ձգեց, ինչպէս որ Ձեր վհատութիւնը կը տեսնէք: Կը պաղատիմ, վհատաւ ա՛ր, որ քաջնկատիք թէ ձեր շահուն համար այսպիսի նշանաւոր նախատինք մը կրեցի:»

Ա՛յս խօսքերն աւարտելով՝ գլուխը ծռեց և մկուսի գարձաւ որպէս զի յորդ արտօսք թափէ:

Թագաւորն՝ այս չարահնար խօսքերէն խաբուելով և Նուբէտաէնի դէմ գրգռուելով՝ իր բարկութեան նշանները ցցուց. ուստի իր պահապան զօրաց դարձաւ և Հարիւրապետին բսաւ. «Քաւստն վհատաւ առ հեռդ, և Նուբէտաէնի առնն աւարի տալէն և հինն՝ ի վեր առպաքել տալէն եաւ՝ գինքն ալ բռնէ՝ իր աղախնին հետ ինձի բեր:»

Հարիւրապետը դեռ Թագաւորին խօսքէն դուրս չէր ելած, որ ներքին պահակ մ՛առջևէն վազեց: Ա՛յս պահակը Սանճխար կը կոչուէր, սակն մը Գաման վէպերին գերին եղած էր, և անոր միջոցաւ Թագաւորին պալատը մտած և յառաջ գացած էր:

Սանճխար իր վաղնի տիրոջ համար միշտ երախտագէտ և Նուբէտաէնի համար միշտ հաւատարիմ էր, վասն զի անոր ծնունդը տեսեր, և՝ ի վաղուց պատէր Սաւոյի տաճարին Գաման ընտանիքին դէմ. ուստի Թագաւորին հրամանը լսելուն՝ գող ելաւ:

«Նուբէտաէնի գործն, ըսաւ ինքն իրեն, չիրնար Սաւոյի պատմածին չափ դաժան ըլլալ. Թագաւորին ականջը լեցուց, և Թագաւորն ալ Նուբէտաէնը պիտի սպաննել տայ և չպիտի Թողու որ ինքզինքն արդարացնէ:» Սանճխար այնքան փութայ որ ժամանակին հասաւ Նուբէտաէնին խնայ տալու Թագաւորին պալատն անցած դարձածն, և յորդորելու որ դեղանի պարսկուհւոյն հետ փախչի: Ա՛յսպէս մը դուռը զարկաւ որ Նուբէտաէն սախտեցաւ անձամբ գալ և խնդրոյն դուռը բանալ, վասն զի բաւական առեներ վեր սպասաւոր չունէր: «Սիրելի տէր իմ, ըսաւ անոր Սանճխար, այսօր հետևեալ Պասրայի մէջ կեանքդ միշտ վտանգի մէջ է, երթը և անմիջապէս փախիր:

— Ինչո՞ւ համար, վրայ բերաւ Նուբէտաէն, ձվ ի՛արդիւք իս այսպէս խոյս տալու: — Փախիր, ըսի քեզ, պատասխանեց Սանճխար, և աղախինդ ալ մէկտեղ տար: Երկու խօսքով գործը պատմեմ. Սաւոյ Թագաւորին խնայտց, իր ուզած կերպովը, անոր և քու մէջ անցածն. և պահապան զօրաց հարիւրապետն իմ եաւէս կգայ քառասուն զինուորի հետ որպէս զի քեզ և աղախինդ առնու տանի: Առ սա քառասուն ոսկին և անոր պատապարան մը գտիր, աւելի կասյն եթէ քովս գրամ ունենայի: Ներէ ինձ եթէ չեմ կրնար աւելի սպասել, պահանջ քեզ կը Թողում, Թէ քու և Թէ իմ շահուս համար, արագիհետ պէտք չէ որ հարիւրապետն իս այս տեղ տեսնէ:» Սանճխար հազիւ ժամանակ տուաւ Նուբէտաէնի երկմէ շտրհակալ ըլլալու և ձգեց գնաց:

Նուբէտաէն վազեց դեղանի պարսկուհւոյն յայտնեց Թէ առ հարկի անմիջապէս այն տեղէն հեռանալու պատրաստուր են. ուստի աղախինը մինակ իր երեսին քօղը ձգեց՝ և տունէն դուրս ելան: Ոչ միայն քաղ-

քին ամառս հեռանալու բարեբաղդութիւնն ունենայի, այլ նաև Եփրաթի բերանը հասնելու, որ հեռու չէր, և նաև մի մտան որ երկաթ քաշելու վրայ էր:

Եւ արդարև՝ երբ Հասան՝ նաւապետին անցորդներուն մէջ տեղ կեցած՝ հարցուց. «Տղաք, ամէնքիդ հնո՞ւ էք: Չկնէ մէկը տակալին պարծ մ՚ունի՞, կամ քաղաքը բան մը մոռցա՞ւ:» Ա՛յս հարցումին ամէնքը պատասխան տալին որ մարդ դուրս ճնայած չէ, և թէ ուզած առնը կրնայ առաջնասները պարզել: Ա՛յն ինչ Նուրէտտինն նաև մնաւ որ հարցուց թէ ուր կ՚երթան. շատ ուրախացաւ լսելով որ Պաղտատ է նաև ուղղութիւնը: Նաւապետն երկաթը քաշել տուաւ, Ջամբազ եկաւ, և նաւը Պասրայէն խիստ յաջող հովով մը հեռացաւ:

Այնչափ Նուրէտտինն այսպէս Թագաւորին երեսէն խոյս կուտար դէպի պարսկաստան հետ, Պասրայի մէջ այլ և այլ պէտքեր կ՚անցնէին:

Հարիւրապետը Նուրէտտինի տունը հասաւ և դուռը զարիւաւ: Տեսնելով որ ոչ ոք կը բանայ, զայն կոտրել տուաւ և իր զինուորներն խիկայն խմբովին ներս մտան. տան ամէն ծակ ու ծուկը որոնեցին և չգտան ոչ Նուրէտտինն և ոչ աղախինը: Հարիւրապետը հարց ու փորձ ըրաւ դրացիներուն թէ արդեօք Նուրէտտինը տեսա՞ն: Եթէ տեսած ալ ըլլային, դարձեալ բերան չպիտի տային զանի, վասն զի ամէնուն սիրելին էր և չէին ուզեր որ անոր գլուա մը Հասանի: Երբ տունը կը թալլէին և կը քանդէին, հարիւրապետան այս լուրը Թագաւորին տարաւ: «Ըստ մը վնասուն գտնեն զանոնք ուր որ են, բայց Թագաւորը, կ՚ուզեմ որ ձեռքս յանձնուին:»

Հարիւրապետը նորէն խուզարկութեան ելաւ, և Թագաւորը մեծ զայրոյթով Սաղայ վէզիրին իր քովէն Ջամբեց: «Գնա, ըսաւ անոր, առնդ դարձիր և բնաւ հոգ մի ըներ, Նուրէտտինը պիտի պատժեմ, և իր լրբութեան համար քու վրէժդ պիտի լուծեմ:»

Ամէն հնարք՝ ի գործ դնելու համար, Թագաւորը հրամայեց որ մեհենաւիրներ Հասանն բոլոր քաղաքն, և Հաղար ոսկի խոստացաւ Նուրէտտինն ու իր աղախինը բերողին, սպառնալով խստիւ պատժել այն մարդն որ զանոնք կը պահէ և ձեռք չտար: Բայց որչափ որ ամէն ձիով և փոխ ըրին՝ չկրցան անոնց վրայ լուր մ՚առնել, և Սաղայ վէզիրը միայն սա միխիթարութիւնն ունեցաւ որ Թագաւորն իր կոչմը կը բունէր:

Սակայն Նուրէտտինն և գեղանի պարսկուհին իրենց Ջամբան ամենայն յաջողութեամբ կը շարունակէին և յաւաջ կ՚երթային: Վերջապէս Պաղտատ հասան, և այն ինչ Նաւապետն՝ որ ուրախ էր իր ուղեւորութեան վախճանը տեսնելուն՝ քաղաքն հեռուէն նշմարեց. «Տղաք, դուշեց նաւորդներուն խօսելով, յիմայէք, ահաւասիկ ձեր առջեւն է այն մեծ և հրաշալի քաղաքն՝ ուր աշխարհիս ամէն կողմէն մարդիկ կը յաճախեն: Ա՛յն տեղ անհամար ժողովուրդներ պիտի տեսնէք, և ոչ ձմերային դառնաշունչ ցուրտը պիտի զգաք և ոչ ամառուան սաստիկ տաքերն. այլ միշտաև և ծաղկալից դարուն մը պիտի վայելէք՝ աշխան զմայլելի պատուհերով:»

Երբ Նաւը քաղքին մօտ երկաթ նետեց, Ջամբորդներն ելան և ամէն մէկն իր բնակարանը գնաց: Նուրէտտինն իր ուղեւորութեան համար հինգ ոսկի առաւ և ինքն ալ գեղանի պարսկուհւոյն հետ նաւէն ելաւ: Բայց Պաղտատ եկած չէլլալով բնաւ, չգիտեր թէ ո՛ր պիտակ էր օթևան վնտռել: Տիգրիսի եզերք դանդաղ պարտէզներն երկար ատեն ժուռ եկան, և ուրիշ բարեսատնի մը քովէն անցան որ աղուոր և երկար պատուի մը փակուած էր: Երբ անոր ծայրը հասան, աղուոր սայտակ ունեցող երկար փողոցի մը դարձան և բարեսատնին դուռը տեսան, որուն քով պղնձեայ աղրիւր մը կար:

Գուռն՝ որ փակուած էր, դոց գտան. բայց վերնադաւթի մ՚ունէր, որուն մէկ կողմը բաղմոց մը կար: «Հեշտալի վայր մ՚է սա, ըսաւ Նուրէտտինն գեղանի պարսկուհւոյն. պիշերը մնաս է, և նաւէն չեղած Ջաղ ըլլանք. գէշ չըլլար եթէ պիշերն այս տեղ անցնենք, և վաղն առտու օթևան մը գտնելու ժամանակ կ՚ունենանք: Քու կարծիքդ ինչ է:

— Արդէն պիտես, պատասխանեց գեղանի պարսկուհին, որ քու ուզածդ իմ ուզածս է. աւելի առաջ չերթանք, եթէ այս է փափաքդ:» Երկուքնին ալ աղրիւրին Ջուր խմեցին, և բաղմոցին մէկուն վրայ կացան, և այն տեղ քիչ մ՚առնն խօսակցեցան: Ի վերջ քուներնին կոխեց, և աղրիւրին անուշ կարկաչովը քնացան:

Պարահէն ամիրապետինն էր, որուն մէջ տեղը տաղտուկ մը կար, նկարուց տաղտուկ անուանէ, վասն զի անոր էական զարդը պարսկական ոճով և Պարսկաստանի պատկերհաններու ձեւօք քաշուած շատ մը պատկերներն էր, զոր ամիրապետը յատկապէս բերել տուեր էր։ Ա՛յս տաղտուկին մէջ դանուած ընդարձակ և շքեղ սրահն ուխտուէն պատուհանէ լուսաւորուած էր, և ամէն մէկուն մէջ Ճար մը կար. իսկ այս ութսուն Ճարերը կը վառէին այն տանն միայն երբ ամիրապետը կզար պիշերն այն տեղ անցնելու, և օդն այնչափ հանդարտ էր որ հովի ամենաթեթեւ շունչն անգամ չէր փչեր։ Այն պատուհանները լուսաւորող Ճիւն մը դաշտին կողմէն խիստ հեռուէն և քաղքին միւս կողմէն կ'երեւէր։

Ա՛յս պարահէին մէջ դռնապան մը միայն կը բնակէր, և այս ալ հինգ պաշտօնեաներու մ'էր Շէյխ Խալրահիմ անուանի, և ամիրապետին իրը վարձատրութիւն այս պաշտօնս անոր յանձներ էր։ Ամիրապետը մանաւանդ ապստղներ էր անոր որ ամէն տեսակ մարդիկ ներս չընդունի, և մանաւանդ գրան առջև դանուած երկու բազմոցներուն վրայ մարդ չնստեցնէ, որպէս զի միշտ մաքուր մնան, և անոնք որ այն տեղ կզան կը նստին, պատրէ։

Դռնապանը զործի մը պատճառաւ դուրս ելնելու անհրաժեշտութիւն էր, և տակաւին չէր դարձեր։ Վերջապէս եկաւ և բաւական լոյս էր դեռ տեսնելու համար որ երկու հոգի դրսի բազմոցին մէկուն վրայ պառկիլը են, իրենց երեսը լաթի մը ծածկելով որպէս զի մժեղները վնասք չհասցնեն։ «Լաւ, ըսաւ Շէյխ Խալրահիմ ինքն իրեն, այս մարդիկն ահա ամիրապետին հրամանին դէմ կը զործեն, պէտի հակցնեմ անոնց որ պէտք է անոր հրամանը յարգեն։»

Ուսաի դուրը բացաւ անձայն, և պահ մ'ետքը թևերը սեղմած և հասս պատրան մը ձեռքը բռնած եկաւ։ Իր բոլոր ուժովը անոնցմէ մէկը պիտի զարնէր, բայց յանկարծ կանգ առաւ։ «Շէյխ Խալրահիմ, ըսաւ նա ինքնիրեն, զանազ զարնելու եկեր ես, և չես մտածեր որ կարելի է օտարականներ են, որ տեղ չունին և ամիրապետին հրամանին անտեղեակ են. աւելի լաւ է որ նախ հասկնաս թէ ասոնք ինչ մարդիկ են։» Մեծ զղուշութեամբ երեսնին ծածկած լաթը վերցուց և

յետոյ ծայր հիացաւ վայելչադէմ պատանի մը և դեղանի նորապսակ կին մը տեսնելով։ Ոտքին թեթեւ մը քաշելով Նուրէտտինն արթնցուց։ Նուրէտտին խոհոյն գլուխը վերցուց երբ իր ոտքին քով տեսաւ սպիտակ երիսին մօրուսով ծերունին, ելաւ նստաւ և ծունդի վրայ եկաւ, և անոր ձեռքը բռնեց համբուրեց։

«Քարի հայր, ըսաւ անոր, Աստուած քեզ պահպանէ. միթէ բանի մը պէտք ունիս։

— Որդեակ իմ, պատասխանեց Շէյխ Խալրահիմ, զուարճալի է, ձեզ տեղ անցնել, մինչև որ լուսնայ։

— Այս տեղը յարմար չէ, պատասխանեց Խալրահիմ, եկուր, ներս մտիր, տեղի հանդիստ վայր մը ցուցնեմ քեզի պառկելու համար, և պարտիզին տեսքն որ շատ աղուր է, քեզ պիտի զուարճացնէ քանի որ տակաւին լոյս է։

— Եւ միթէ այս պարտէզը քնկիդ է, հարցուց Նուրէտտին։

— Ճշմարիտն իմն է, վրայ բերաւ Խալրահիմ ժպտելով. իմ հօրմէս ինայած ժառանգութիւն մ'է, ներս մտիր, ըսի քեզ, շատ պիտի ախորժիս զայն տեսնելու։»

Նուրէտտին ոտք ելաւ, դռնապանին յայտնելով թէ անչափ շնորհակալ է անոր հիւրասիրութեան համար, և դեղանի պարտիզուհւոյն հետ պարտէզը մտաւ։ Շէյխ Խալրահիմ դուռը դոցեց և անոնց առջևէն քաշելով այնպիսի վայր մը տարաւ զանոնք ուսկից մէկ նայուածքով կարող էին նշմարելու պարտիզին դիրքը, մեծութիւնն ու աղեղութիւնը։

Նուրէտտին բաւական աղեղ պարտէզներ տեսեր էր՝ի Պասրա, բայց անոր նմանն երբէք տեսած չունէր։ Երբ ամէն բան ուշադրութեամբ քննեց քանի մը ծառուղիներու մէջէն ժուռ գալէն ետև՝ իրեն ընկերացող դռնապանին դարձաւ և հարցուց անոր թէ անունն ինչ է։ Այն ինչ յայտնեց թէ ինքը Շէյխ Խալրահիմ կ'անուանի.

«Շէյխ Խալրահիմ, ըսաւ անոր, պէտք է խոստովանիլ որ հրաշադեղ պարտէզ մ'է այս, Աստուած պահպանէ զայն քեզի համար եր-

կաը ժամանակ : Զսփսզանց չնորհակալ ենք քեզ որ ձաձեցար տեսնե-
լու արժանի այսպիսի տեղ մը մեզ պատրաստել : Արդար է որ կերթալով մը
մեր երախտապարտութիւնը քեզի յայտնենք : Ահա , առ քեզի երկու
ոսկի . կ'ազատիմ , մեզի քիչ մ'ուտելիք ձարես , որպէս զի միասին
ճաշակենք :»

Այս երկու ոսկին տեսնելուն՝ Շէյխ Խալահիմ՝ որ այս միտապը
շատ կը սիրէր , մօրուքին ասիկէն ինդայց , զանոնք առաւ և մինակ
թողլով Նուրէտտինն ու գեղջկի պարտկուհին , որպէս զի ապահովածն
երթայ առնու . «Ասոնք բարեմիտ մարդկիներ կ'երևին , ըսաւ խորովի
մեծ ուրախութեամբ . մեծ ճաա մ'եղած պիտի ըլլար ինձ եթէ ան-
խոհեմաբար զանոնք ծեծէի և դուրս վռնտէի : Թագաւորն պէս պէս
ախի կերակրեմ զանոնք առած ատակին տասներորդ մասովն և մնացածն
ալ՝ իրր նեղութեանս վարձք՝ ինձի պիտի մնայ :»

Երբ Շէյխ Խալահիմ ընթրելքը թէ իրեն և թէ իր հիւրերուն հա-
մար՝ դնելու մսօք զուրս ելաւ , Նուրէտտին և գեղջկի պարտկուհին
պարապէդը մեն ենան , և մէջտեղ գտնուած պատկերներու թանգարա-
նը մտան : Դահ անոր սքանչելի շինութեան , մեծութեան և բարձրու-
թեան վրայ զմայլեցան , և անոր բոլորտիքը շրջելով քննելէն ետև՝
մարմարէ սանդղէ մը վեր ելան և գրան առջևը հասան , բայց դուռը
գոց գտան :

Նուրէտտին և գեղջկի պարտկուհին նոր լմներ էին սանդղէն երբ
Շէյխ Խալահիմ ուտելիքով վերադարձաւ :

«Շէյխ Խալահիմ , ըսաւ անոր Նուրէտտին զարմանօք , միթէ չը-
սիր ինձ որ այս պարտէզը քուկդ է : — Այո , այդպէս ըսի , պատաս-
խանեց Շէյխ Խալահիմ , և նոյնը կը կրկնեմ : Բայց ինչո՞ւ համար այդ
հարցումդ կ'ընես ինձ : — Հապա սա հոյակապ տաղաւարն ալ քուկդ
է» հարցուց Նուրէտտին : Շէյխ Խալահիմ այս հարցումն չէր սպասեր
և առոր վրայ քիչ մը շփոթեցաւ : «Եթէ ըսեմ թէ իմս չէ , ըսաւ մտո-
վին Շէյխ Խալահիմ , խելօք պիտի հարկանեն թէ ինչպէս կ'ըլլայ որ
պարտիզին աէրն ես ըլլամ և տաղաւարին աէրն ուրիշ մ'ըլլայ :» Ո-
րովհետև այնպէս սուտ ըսեր էր եթէ պարտէզն իրն է , ուզեց նաև
հաստատել թէ տաղաւարն ալ իր ստացուածքն է :

— Արդեօք իմ , պատասխանեց անոր , տաղաւարը չկրնար ըլլալ ա-
ռանց պարտիզին . երկուքն ալ իմն են : — Քանի որ քուկդ են , վրայ
բերաւ Նուրէտտին , կը համձիս մեզ այս գիշեր հիւրընկալել , ետևի ը-
րէ ուրիշ տաղաւարին ներսը պատրաստել մեզ . գրանէն նայելով կրնամ
դատել որ ներքնակողմը տաբօրինակ շքեղութիւն մը պիտի ունենայ :»

Շէյխ Խալահիմ անվայել բան մ'ըրած կ'ըլլար եթէ Նուրէտտինի
խնդիրը մերժէր , անոր ըրած բարեկամական ցոյցերէն ետքը : Նոյնպէս
դիտեց որ ըստ սովորականին ամբրատիտը պինդը կանչել չէր տուած ,
և թէ այն իրկուն չպիտի դար . ուստի կարող էր խոկ իր հիւրերուն
սեղանը տաղաւարին մէջ պատրաստել , և ինքն ալ անոնց հետ սեղա-
նակից ըլլալ : Իր ըրած կերակուրները սանդղէն առաջին աստիճանին
վրայ դրաւ , և բնական սենեկէն բռնակին առնելու դնաց : Ցետոյ կանո-
թեզ մ'առած եկաւ և դուռը բացաւ :

Նուրէտտին և գեղջկի պարտկուհին սրահը մտան և այնքան հրա-
շալի գտան , որ չէին կրնար անոր գեղեցկութեան և շքեղութեան
վրայ հիանալէն : Եւ արդարև , Թող պատկերները , բազմոցները փա-
ռաւոր էին , և առնէն մէկ պատուհանէն կախուած ձարերուն հետ ար-
ծաթէ թռչնիկ մը կար , վրան մոմ մը անկուած , և Նուրէտտին այս ամէն
առարկաները տեսնելով յիշեց այն փառաւոր կեանքն զոր կը վարէր և
հառաչեց :

Սակայն Շէյխ Խալահիմ ուտելիքը բերաւ , բազմոցի մը վրայ սե-
ղանը պատրաստեց , և երբ ամէն բան կարմու պատրաստ եղաւ , Նու-
րէտտին , գեղջկի պարտկուհին և ինքը նստան և միասին ընթրիք ը-
րին : Երբ լմնցան և ձեռքերնին լուացին , Նուրէտտին պատուհան մը
բացաւ և գեղջկի պարտկուհին իր քովը կանչեց : «Մօտեցիր , ըսաւ
անոր , և լուսնկային զմայլէ ինձի հետ այս պարտիզին գեղեցիկ տես-
րանին վրայ . ասկից աւելի չքնաղ բան մը չկրնար ըլլալ :» Գեղջկի
պարտկուհին մօտեցաւ , և միասին այս տեսքը վայելեցին , մինչդեռ
Շէյխ Խալահիմ սեղանը կը վերցնէր :

Երբ Շէյխ Խալահիմ գործը լմնցուցեալ իր հիւրերուն քովն եկաւ ,
Նուրէտտին հարցուց թէ արդեօք ըմպելի մը չունի իրենց մեծարելու
համար : «Ինչ ըմպելի կ'ուզէիր , վրայ բերաւ Շէյխ Խալահիմ : Մի-

Թէ օշարակ կ'ուզես, դողորմի աեսակէն ունիմ. բայց քալ պիտես, որպեսզի, որ ընթրիքէն ետքն օշարակ չեն խմեր:

— Քալ պիտիմ, պատասխան տուաւ Նուբէտտին. օշարակ չէ խնդրածս, այլ ուրիշ ըմպելի մը. կը զարմանամ որ միտքս չես բռներ:

— Ուրիշն ուզածդ պինի է, պատասխանեց Շէյխ Խպրահիմ:

— Աղէկ գուշակեցիր, ըսաւ Նուբէտտին. Եթէ ունիս, շնորհ ըրէ շիշ մը բերելու: Վիճակս որ ընթրիքէն ետքը պինի կը խմեն որպէս զի ժամանակն անցնի մինչև մեր հանդստանալու ժամը:

— Աստուած չընէ որ տունս պինի պահեմ, պոչեց Շէյխ Խպրահիմ, և ոչխակ պտռւած տեղը մօտեցաւ: Ինձի պէս մարդ մ'որ չորս անդամ ուխտի գացեր եմ Մէքքէ, ցնծոտ պինելէն հրաժարած եմ:

— Սակայն մեծ հաճոյք պիտի պատճառես մեզ եթէ պինի գտնես, վրայ բերաւ Նուբէտտին, և եթէ ծանրութիւն չըլլար, քեզի միջոց մը պիտի սորվեցնեմ, որով պինեցուն կը մնաես և ոչ ձեռքդ պինելին կը մօտեցնես:

— Այլ պայմանաւ խնդիրդ կատարելու չեմ դժկամակիր, պատասխանեց Խպրահիմ, ըսէ միայն ինձ թէ ի՞նչ պէտք է ընել:

— Գարեխիլին գրան քովը կապուած էշը տեսա՞ն, ըսաւ այն ատեն Նուբէտտին. Ի՛նչպէս թէ քուկդ է այն, և ի՞նչ հարկին կը զործածես. էշն առ՝ կողովները վրէն մօտաւոր պինեցուցը գնա, և որչափ կ'ուզես այնչափ մօտեցիր. անյապդ մ'որ տեսնես, քիչ մը ատակ տուր ձեռքին և խնդրէ որ էշին հետ մինչև պինեցուցն երթայ, երկու կայժ պինի առնու, մէկ կայժը մէկ կողովին մէջ, միւսը մէկալին մէջ տեղաւորէ, և ատակը վճարելէն ետև՝ էշը քեզի դարձնէ պինիով: Ցետոյ առջևէդ ատանակը կը քշես մինչև հոս, և մենք մեր ձեռօքը կը հանենք կայժերը կողովներէն, այնպէս որ քու յօժարութեանդ դէմ բան մ'ըրած չես ըլլար:»

Շէյխ Խպրահիմի վրայ մեծ տպաւորութիւն ըրին երկու ոսկիները զոր Նուբէտտին նորէն տուաւ անոր: «Ա՛հ, որդեակ իմ, պոչեց նա երբ Նուբէտտին խօսքը լմնցուց, ծրչալի խելացի ես: Երբէք միտքս այսպիսի հնար մը չէրնար անցներ որպէս զի հանդարտ խղճով ըսածդ

ընեմ:» Ուստի դուրս ելաւ որ անոր ապսպրածը կատարէ և շատ չանցաւ կատարեց: Երբ վերադարձաւ, Նուբէտտին վար իջաւ, կոյժերն առաւ սրահը բերաւ:

Շէյխ Խպրահիմ աւանտին առած տեղը տարաւ, և երբ վերադարձաւ, «Շէյխ Խպրահիմ, ըսաւ անոր Նուբէտտին, մեծապէս շնորհակալ ենք քեզ առած ծանրութեանդ համար, բայց դեռ ևս պակասութիւն մ'ունինք:— Ի՞նչ է, վրայ բերաւ Շէյխ Խպրահիմ, ի՞նչ կրնամ ընել տակաւին ձեզ գոհ ընելու համար: — Խաժակ չունինք, պատասխան տուաւ Նուբէտտին, և եթէ քիչ մ'ալ պատղ բերես, աւելի գոհ կ'ըլլանք: — Հէրիք է որ հրամայես, պատասխան տուաւ Շէյխ Խպրահիմ, բոլոր խնդրածդ բերելու պատրաստ եմ:»

Շէյխ Խպրահիմ վար իջաւ և քիչ տանէն սեղան մը պատրաստեց, որուն վրայ յախճապակի անօթներու մէջ պատուղներ դրաւ, նոյնպէս ոսկի և արծաթ թասեր: Յետոյ հարցուց թէ արդեօք ուրիշ բանի պէտք ունի՞ն, և երբ ըսին եթէ բանի մը կարօտ չեն, ձեռք գնաց, թէև թախանձանօք աղաչելին որ մնայ:

Նուբէտտին և դեղանի պարակուհին սեղան նստան և նախ մէյմէկ բաժակ պարսկերէն, պինին պատուական գոտն: «Լաւ ուրիմն, դեղացուհի, ըսաւ Նուբէտտին իր պարսկուհւոյն, մինչ յետին ծայր երջանկիկ չքնաք որ պիտաճալ այսպիսի ախորժելի և չքնաղ վայր մը հասանք: Զուարճանանք, և մեր ուղևորութեան ժամանակ քաշածնիս մոռնանք: Մինչ ասկէ աւելի բարեբաղդ կրնամ ըլլալ, քանի որ քեզ մէկ կողմն և բաժակը միւս կողմն ունիմ:» Նորէն շատ մը բաժակներ պարպեցին, ախորժանօք խօսակցելով, և իւրաքանչիւրն իր երգն երգելով:

Որովհետև երկուքին ալ շատ աղուր ձայն ունէին, մանաւանդ դեղանի պարակուհին, իրենց երգը Շէյխ Խպրահիմի ականջը հաճոյ, և երկար ատեն դադարակ և մեծ հաճոյքով մտիկ ըրաւ: Վերջապէս լինքլինքը ցցուց գլուխը դռնէն ներս մտցնելով. «Կեցցես, տէր իմ, ըսաւ Նուբէտտին՝ կարծելով թէ պինած արդէն, չափազանց ուրախ եմ քեզ այս վիճակիս մէջ տեսնելուս:

— Ա՛հ, Շէյխ Խպրահիմ, պոչեց Նուբէտտին դէպ անոր դառնա-

լով, որչափ քարի մարդ ես և քանի՛ չնորհապարտ եմ քեզ։ Ձենք հանարձակիր առաջարկել քեզ որ բաժակ մը գինի ճաշակես. բայց կրնաս ներս մտնել։ Եկուր, մօտեցիր, և գոնէ մեզի ընկերանալու պատիւ ըրէ։ — Շարունակեցէք, շարունակեցէք, վրայ բերաւ Ճէյմս Խպրահիմ, գոհ պիտի ըլլամ ձեր աղաղը երգերը մանկի ընելով։» Եւ այս խօսքերն ըսելով անոնց եղաւ։

Գեղջկի պարսկուհին տեսաւ որ Ճէյմս Խպրահիմ դրանդին վրայ կեցեր էր, և Նուրէտտինի իմացուց։ «Տէր իմ, ըսաւ, կը տեսնես որ գինիչին կը գարշի, սակայն եթէ ինձ օգնես՝ կրնամ անոր բաժակ մը խմել տալ եթէ ըսածս ընես։ — Ինչ պիտի ըսես, Հալըմշ Նուրէտտին, հրամայէ, պատրաստ եմ ինդիրդ կատարելու։ — Խոպբ իրմէ որ գայ մեզի հետ նստի, ըսաւ անոր. քիչ մ՚ետքը բաժակը լեցուր, և անոր տուր որ խմէ. եթէ մերժէ, դուն խմէ. յետոյ այնպէս ձևացուր որ կը քնանաս, մնացածն ինձի թող, ես պիտեմ ինչ պիտի ընեմ։»

Նուրէտտինն հասկցաւ գեղջկի պարսկուհւոյն միտքը, Ճէյմս Խպրահիմը կանչեց որ խակոյն դրան վրայ երևցաւ։ «Ճէյմս Խպրահիմ, ըսաւ անոր, մենք քու հիւրերդ ենք, և մեզ մեծ բարերարութեամբ ընդունեցար. ինչո՞ւ կը մերժես քու ներկայութեամբդ մեզ պատուելու։ Ուզածդ խնդրենք որ, չէ թէ մեզի հետ խմես, այլ միայն շնորհ ընես որ քեզ տեսնենք։»

Ճէյմս Խպրահիմ շատով համոզուեցաւ. ներս մտաւ և բազմեցաւ ծայրը նստաւ որ դրան մօտ էր։ «Աչս տեղ հանդիստ չես և քեզ տեսնելու պատիւը չունիմ ասանկ, ըսաւ այն տեսնն Նուրէտտինն, ի՛նչ պատճառ, աւելի մօտ եկուր և սիրովդ պիտի ընդունիմ քեզ։ — Ուրեմն ձեր կամքը կը կատարեմ» ըսաւ Ճէյմս Խպրահիմ։ Ուստի մօտեցաւ, և այնպիսի դիրքի մէջ քովդ դնտուեցաւ վրայ ժպտելով՝ գեղջկի պարսկուհիէն քիչ մը հեռու նստաւ։ Նուրէտտին խնդրեց որ իր կինն երգ մ՚երգէ՝ Ճէյմս Խպրահիմի ըրած պատուոյն փոխարէն, և պարսկուհին ալ այնպիսի երգ մ՚երգեց որ ծեծուելին յափշտակուեցաւ։

Երբ գեղջկի պարսկուհին իր երգն աւարտեց, Նուրէտտինն բաժակ մը գինի լեցուց և գայն Ճէյմս Խպրահիմի ներկայացուց։ «Ճէյմս Խպրա-

հիմ, ըսաւ անոր, մեր կենացդ համար բաժակ մը գինի պարպէ, ի՛մացեմ։ — Տէր իմ, պատասխանեց նա ես քաշուելով որպէս թէ գինին տեսնելուն անպատիւը քաւմնէր, ի՛նչպէս եմ, ներես ինձ, արդէն ըսի որ շատոնց գինի խմելու սովորութենէ հրաժարեր եմ։ — Գոնէ որ մեր կենացդ խմելու բայէ՛ ի բաց կը մերժես, ըսաւ Նուրէտտինն, ներէ ինձ որ ես քու կենացդ խմեմ։»

Մինչդեռ Նուրէտտինն կը խմէր, գեղջկի պարսկուհին ինձորի մը կէսը կարեց, և Ճէյմս Խպրահիմի տալով. «Գինի խմել չուզեցիր, ըսաւ անոր, չեմ կարծեր որ այս պատուական ինձորէն ալ ուտելու մերժես։» Ճէյմս Խպրահիմ չկրցաւ մերժել անոր գեղեցիկ ձեռքէն գայն առնելու, ուստի դրուխը շարժելով ընդունեց և բերանը տարաւ։ Ասոր վրայ տիկինը քանի մ՚անուշ խօսքեր ըսաւ անոր, սակայն Նուրէտտինն բազնցուն վրայ ընկաւ և քառնալ ձևացաւ։ Անմիջապէս գեղջկի պարսկուհին դեպ՚ի Ճէյմս Խպրահիմի մօտեցաւ, և խիստ ցած ձայնով անոր ըսաւ. «Կը տեսնես, ամէն անպատուն որ միասին կը զուարճանանք՝ այսպէս կը վարուի, հապա թէ քանի մը բաժակ գինի կը խմէ որ կը քնանայ և ես միտակ կը թողու. բայց յուսամ որ անոր քնացած ատենն ինձի ընկերանալու կը հաճիս։»

Գեղջկի պարսկուհին բաժակ մ՚առաւ՝ գինի լեցուց և Ճէյմս Խպրահիմի տալով «Առ նայիմ, ըսաւ անոր, և իմ կենացս խմէ, ես ալ քու կենացդ պիտի խմեմ։» Ճէյմս Խպրահիմ առաջ մեծ ընդդիմութիւն յայտնեց, և աղաչեց որ վրան չիյնայ, բայց տիկինն այնքան պնդեց որ իր թախանձանքէն և հրապուրներէն յաղթուելով ծերուկին բաժակն առաւ և միանգամ տակը խմեց։

Բարի ծերուկին սովոր էր գաղտնադողի տնկել, բայց իրեն անծանօթ ձեռներ առջև խմելու ի՛նչպէս. շատերուն պէս ինքն ալ գինեասանը կ՚երեսնար ծածուկ, և ամենեն Նուրէտտինի պատրաստած զրուսշուքիները չէր կատարած գինին դնելու համար։ Անհրկիղ գայրը էր գինեասան մ՚որ իրեն ծանօթ էր, և գինի աւելի էր մուրին չնորհիւն, և այսպէս իրեն պահեր էր այն գրամը զոր Հարիւր Նուրէտտինի խորհրդին համեմատ՝ տրիշի մը պիտի տար եթէ գինին անոր ձեռքը բերելու ըլլար։

Մինչդեռ Շէյխ Խալահիմ խմելէն ետև՝ ինձորին կէսն ուտելու վրայ էր, պեղանի պարսկուհին ուրիշ բաժակ մ՚ալ լեցուց, և ծերուհին առաջուան պէս դժուարութիւն չցոյց ղայն խմելու համար, իսկ երրորդ բաժակն ինքնայօրոր խմեց։ Վերջապէս չորրորդ բաժակը պարպելու վրայ էր երբ Նուրէտտին սուտ քունը դարձուց, եւ նստաւ, և անոր երեսը նայեցաւ քահ քահ խնդալով։ «Հա՛, հա՛, Շէյխ Խալահիմ, ըսաւ անոր, ահա քեզ բռնեցի. ըսեր էիր ինձ որ պինի խմելէն հրաժարեր ես, և կը նայիմ որ դարձեալ կը խմես։»

Շէյխ Խալահիմ այս խաղին չէր սպասեր, և երեսն ամօթէն կարմրեցաւ քիչ մը. սակայն դարձեալ իր գաւաթը պարպեց, և երբ լմընցուց. «Տէր իմ, ըսաւ խնդալով, եթէ ըրածս մեղք է, մեղաւորն ես չեմ, այլ սիկինը. կարելի՞ բան էր անոր չնորհալի առաջարկութիւնը մերժել։»

Գեղանի պարսկուհին, որ Նուրէտտինի հետ խօսքը մէկ ըրեր էր, Շէյխ Խալահիմի կողմը բռնեց. «Շէյխ Խալահիմ, ըսաւ անոր, թող ուղածն ըսէ, և դու քու գործիդ նայէ. կեր, խմէ և ուրախ լեր։» Քանի մը վայրկեան ետքը, Նուրէտտին իր բաժակը լմընցնելէն ետև՝ պեղանի պարսկուհին բաժակն ալ լեցուց։ Երբ Շէյխ Խալահիմ գիտեց որ Նուրէտտին իր բաժակը չէ կրնար, գաւաթ մ՚առաւ և անոր ներկայացուց. «Հաւատա ինձի, ըսաւ, մինչ կարծես թէ քեզի չափ չեմ կարող խմել։»

Շէյխ Խալահիմ այս խօսքերն ըսելուն՝ Նուրէտտին և պեղանի պարսկուհին քրքրուկ մ՚ել ձգեցին. այն ատեն Նուրէտտին անոր գաւաթը լեցուց և իրենց կերն ու խումը շարունակեցին, մինչև որ կէս գիշեր անցաւ։ Այն միջոցին պեղանի պարսկուհին դիտեց որ սրտին մինակ կանխեղմ մը կը լուսաւորէր։ «Շէյխ Խալահիմ, ըսաւ բարեմիտ ծերունին, կանխեղ մը միայն բերիր հետդ, և կը տեսնես թէ որչափ աղէտ մտեր կան։ Ո՛աղաչեմ, շնորհ ըրէ զանոնք վաճառելու որ իրարու երես կարենանք տեսնել։»

Շէյխ Խալահիմ, որուն գլուխը կինիէն տաքցած ըլլալով նոր համբաճակութիւն մ՚իր վրայ եկեր էր, Նուրէտտինի հետ ունեցած խոհակցութիւնը չուզեց ընդմիջել, և պեղանի սիկինջ ըսաւ. «Դու վաճառ ես, քեզի պէս նորատի կնկան մը կը վայլէ այս բանս, բայց նայէ որ միայն հինգ կամ վեց մամ վաճես, այսչափ բաւական է, բան մը պիտեմ որ այսպէս կ՚ըսեմ։» Գեղանի պարսկուհին ոտք ելաւ, գնաց մամ մ՚առաւ, սեղանին վրայի ճրագէն վառեց, և առաջ Շէյխ Խալահիմի խօսքին մանիկ դնելու, ուխտաւն հաս մանուկն ամբողջ վառեց։

Քիչ մը ետքը՝ սինչդեռ Շէյխ Խալահիմ ուրիշ բան մը կը պատմէր պեղանի պարսկուհուն, Նուրէտտին ալ իր կողմէն ազատեց գինուն որ քանի մը ճարեր վառէ։ Շէյխ Խալահիմ չդիտելով որ ամէն մամերը վառած են, «Անտարակոյս շատ ծոյլ, կամ իմնէ առելի տկար ըլլալ պէտք ես որ դու անձամբ չես ելներ գանուք վառելու։ Գնա, վառէ, քայց միսակ երեք հատ վառէ։» Բայց փոխանակ երեք հատ վառելու՝ Նուրէտտին ամէնն ալ վառեց և ուխտաւն պատուհանները բացաւ, սինչդեռ Շէյխ Խալահիմ պեղանի պարսկուհուն հետ խօսքի բռնուած ըլլալով՝ այս պարագային ուշադրութիւն չդրաւ։

Նոյն պահուն Հասան-ալ-Բաշիտ իր պալատը՝ սրահի մը մէջ էր. այս պալատը սինչև Տիգրիսի եղերքը կը տարածուէր և պարտիզին ու պատուհանց տաղտարին վրայ կը նայէր։ Ըստ դիպուածոյ՝ այն կողմէն պատուհան մը բացաւ, և զարմանքը գինքը պաշարեց երբ տեսաւ որ տաղտարը լիովին լուսաւորուած է, այնպէս որ անոր սահակ պայծառութենէ կարծեց թէ քաղաքը կրակ առեր է։ Ճեռքերը միմ վեր պիրը դեռ ամիրապետին հետ էր և ի՛նպատէր անոր որ երթայ՝ որպէս զի ինքն ալ իր ապարանքը քաշուի։ Ամիրապետը սահակ բարկութենէ վեգիրը կանչեց։ «Անհոգ վեգիր, դոչեց նա, հոս եկուր, մօտեցիր, նայէ անդամ մը սա նկարուց թանգարանն, և ըսէ ինձի թէ այս ժամուս որ այն տեղը չեմ, ինչ պատճառաւ այսպէս լուսաւորեր են։»

Միմ վեգիրը դողելու այս լուրն առնելուն՝ վախնալով որ ամիրապետին բաժը ճշմարիտ չըլլայ։ Մօտեցաւ և առելի դողը բռնեց երբ տեսաւ որ ամիրապետին բաժը ճիշտ է։ Սակայն զգուի հանդարտեցնելու համար պատրուակ մը պէտք էր։ «Իշխան հաւատացեալց, ըսաւ անոր, բան մը չեմ կրնար ըսել Ձեր վեհափառութեան այս պարագային վրայ, բայց եթէ չորս հինգ օր առաջ Շէյխ Խալահիմ ինձի նե-

կայացաւ, և յայտնեց թէ իր մկիկթին պաշտօնեաները կոչելով ժողովի մ՚ընելու միտք ունի, արարողութեան մը համար՝ զոր Ձեր վեհափառութեան օրովը կատարելու իրեն երջանկութիւն կը սեպէր: Հարցուցի թէ այս պարագային մէջ ի՞նչ կրնամ ընել իրեն համար. ասոր վրայ ազաչեց որ այս ժողովին ու արարողութիւնը ձեր տաղտապին մէջ ընելու հրաման խնդրեմ: Ես ալ գինքը ձամբեցի և ըսի որ կրնայ իր ժողովը կազմել և թէ Ձեր վեհափառութեան խօսելու եմ. խնդրեմ, ներէք ինձ որ այս խնդիրը մոռցայ ձեզի յայտնելու: Կ՚ուզեմ թէ Շէյխ Խալահիմ ժողովը դումարելու համար այս օրս ընտրեց, և իր մկիկթին պաշտօնեաները մեծարելու համար անառարակոյս տաղտապը լուսաւորած պիտի ըլլայ:

— Ձեաֆէր, պատասխանեց ամիրապետն այնպիսի ձայնով մ՚որմէ կ՚իմացուէր թէ իր բարկութիւնը մեղմած է, քու խօսքիդ վրայ դատելով կը նայիմ որ երեք անհրեշտ սխալմունք գործեր ես. առաջին սխալմունքդ սա է որ հրաման տուեր ես այս արարողութիւնն իմ տաղտապիս մէջ կատարելու. պարզ բարեպատ մ՚այնչափ երևելի պաշտօնատար մը չէ որ այս պատուոյն արժանի ըլլայ. երկրորդ սխալմունքդ սա է որ այս մասին ինձի բան մը չյայտնեցիր, և երրորդն է՝ այս բանակիա մարդուն ներքին միտքը չհասկնալդ: Ցիրաւի, համոզուած եմ որ նպատակն ուրիշ բան չէր բայց եթէ այն ծախսն ընելու համար զրամական պարգև մը ձեռք ձգել: Ահա այս կէտը չմտածեցիր, և գինքը չեմ մեղադրեր որ յոյսը պարապ եղնելուն համար վրդովը կը լուծէ, այս լուսաւորութեամբ առելի ծախս ընելով:»

Ձեաֆէր վէզիրը՝ գիտենալով որ ամիրապետն այսպէս թելադրելի կ՚առնու գործը, յօժարակամ իր վրայ առաւ այս յանցանքն որով կ՚ամբաստանուէր, և խոստովանեցաւ բայէ՛ի բայ որ Շէյխ Խալահիմի քանի մ՚օսկի չտալուն յանցաւոր է: «Քանի որ յանցանքդ կը խոստովանիս, յարեց ամիրապետը ժպտելով, պէտք է որ յանցանքիդ պատիժը դանես. բայց այս պատիժը թեթև պիտի ըլլայ. այսինքն՝ բոլոր գիշերն՝ ինձի պէս՝ այս բարի մարդոց հետ պիտի անցնես, որովհետև կը փափաքիմ զանոնք տեսնել: Ես պիտի երթամ քաղաքացիի հագուստ հագնիլ, դու ալ գնա Մէսրուրի հետ ծպտէ, և երկուքնիդ ալ ինձի հետ եկէք:»

Ձեաֆէր վէզիրը ուզեց հասկցնել ամիրապետին որ ժամանակն ուշ է և թէ չհասած ընկերութիւնը պիտի ցրուի. սակայն պատասխան առաւ թէ անպատճառ երթալ կ՚ուզէ: Որովհետև վէզիրին ըսածները առոյղ չէին, ամիրապետին դիտաւորութիւնը զանի յուսահատութեան մէջ ձգեց, բայց հարկ էր հնազանդիլ և չպատասխանել:

Ուսաի ամիրապետը քաղաքացիի հագուստով իր պալատէն դուրս եկաւ, Ձեաֆէր վէզիրին և ներքինապետ Մէսրուրին հետ, և գաղտատաի Ճամբաներէն ընթացան, մինչև որ պարտէզը հասան:

Գիշերը բաց էր, Շէյխ Խալահիմի անհոգութենէն, որ դռները մոռցեր էր գինին գնելէն ետև: Ամիրապետը շատ գայթակղեցաւ. «Ձեաֆէր, ըսաւ իր մեծ վէզիրին, ի՞նչ պատճառաւ դուռն այս ժամուս բաց է: Արդեօք Շէյխ Խալահիմի տվարութիւնն է այսպէս դուռը բաց թողուլ գիշերները: Տրամադիր եմ հասկնալու որ հանդիսին չփոթութենէ զործած է այս յանցանքը:»

Ամիրապետը պարտէզը մտաւ, և երբ տաղտապը հասաւ, որովհետև ներսն անցած գարձածը չհասկցած՝ չէր ուզեր վեր երթալ, խորհուրդ ըրաւ վէզիրին հետ թէ արդեօք մօտակայ ծառերուն վրայ ելնէ որ տեսնէ թէ ներսն ի՞նչ կ՚անցնի: Բայց սրահին գռնէն նայելով մեծ վէզիրը դիտեց որ կէս մը բաց է, և ամիրապետին խնայուց: Շէյխ Խալահիմ այսպէս ձգեր էր երբ Նուրէտտինի խօսքերէն համոզուելով ներս մտեր էր Նուրէտտինի և գեղջկի պարսկուհւոյն ընկերութեան մասնակից ըլլալու համար:

Ամիրապետն իր առաջին միտքը փոխեց. սրահին դուռն երթալ առանց ձայն հանելու, և դուռն այնպէս բաց ձգուած էր որ ներս պտռտիները կրնար դիւրաւ տեսնել՝ առանց տեսնուելու: Զարհուրանց պտռտիները կրնար դիւրաւ տեսնել՝ առանց տեսնուելու: Զարհուրանց պատ

Ճէյլս Խպրահիմ երդեց, և ամիրապետին զարմանքը շատ մեծ եղաւ, որովհետև մինչև այն ատեն չդիտեր որ ծերունին դինի կը խմէ, և կարծեր էր թէ խոհական և ծանրաբարոյ մարդ մ՚է, ինչպէս որ միշտ երևցեր էր իրեն: Մի և նոյն ղուշդութեամբ դառնէն հեռացաւ, ինչպէս որ մօտեցեր էր, և ճեաֆէր վէզիրին եկաւ որ սանդղին վերի աստիճաններուն վրայ կեցեր էր:

«Վեր եկիր, ըսաւ անոր, և եկուր տես թէ սրահը դանուածները մղկիթի պաշտօնեաներ են, ինչպէս որ ինձի հաւատացուցիր:»

Ամիրապետն այնպիսի ձայնով մ՚արտասանեց այս խօսքերն որ վէզիրը քաջ հասկցաւ որ իրեն համար դործը դէշի կը դառնար: Ուստի վեր եկաւ, և դրան բացուածքէն ներս նայելով՝ վախէն դողդոջ երբ տեսաւ այն երիք անձերուն դիրքն ու վիճակին: Ամիրապետին դարձած բոլորովին շուարած, և ինչ ըսելիքը չդիտցաւ: «Ա՛յս ինչ անկարդութիւն է, հարցուց անոր ամիրապետն, ինչ յանդգնութեամբ անծանօթ մարդիկ իմ պարտէզս կդան և տաղտալին մէջ կ՚դբօսնուն, Ճէյլս Խպրահիմ զանոնք կ՚ընդունի, և անոնց հետ կ՚դբօսնու: Սակայն կարելի բան չէ որ այս երիտասարդին և նորատի տիկնիկն աւելի վայելչադեմ և իրարու յարմար էակներ դտնուին: Իմ բարեբաստիկ նշանը յայտնելէն առաջ կ՚ուզեմ տեղեկանալ թէ ո՞վ են ասոնք և ինչ առիթով այս տեղ եկած են:» Նորէն դուռը դարձաւ որ զանոնք նշմարէ, և վէզիրն ալ, որ անոր ետևէն դնաց, և սկսաւ դիտել: Երկուքին ալ Ճէյլս Խպրահիմի սա խօսքը լսեցին զոր պեղադէմ պարսկուհւոյն կ՚ուղղէր. «Իմ սիրանուշ տիկինս, արդեօք ուրիշ բան մը կը փափաքիս որ պէս պէս մեր այս երեկոյեան ցնծութիւնը կատարեալ ըլլայ: — Ինձի կ՚երևի, պատասխանեց պեղանի պարսկուհին, որ ամէն բան կատարեալ կ՚ըլլար եթէ նուագարան մ՚ունենայիր, որ ես ածէի և դու ալ հաճէիր զայն ինձի երգելու: — Տիկին, ըսաւ Ճէյլս Խպրահիմ, արդեօք վին ածել դիտե՞ս: — Բեր այն վինդ, ըսաւ անոր պեղադէմ պարսկուհին, սիրտ նայիս թէ դիտե՞մ թէ ոչ:»

Ճէյլս Խպրահիմ իր տեղէն շատ չհեռանալով՝ պահարանէ մը վին առաւ և զայն պեղանի պարսկուհւոյն ներկայացուց, որ նախ սկսաւ զայն լարելու: Սակայն ամիրապետը ճեաֆէր վէզիրին կողմը դարձաւ և ըսաւ. «Ճեաֆէր, նորատի տիկինը վին սիրտ զարնէ, եթէ լաւ խաղայ՝ անոր սիրտ նուիրեմ, խակ քեզ անպատճառ սիրտ կտխել տամ: — Իշխանդ հաւատայելոյ, վրայ բերաւ մեծ վէզիրն, եթէ այդ միտքն ունիս, կ՚աղօթեմ Աստուծոյ որ պէշ խաղայ: — Ինչո՞ւ համար, պատասխանեց ամիրապետը: — Վասն զի որչափ շատ ըլլանք, ըսաւ մեծ վէզիրն, այնչափ մխիթարուելու աւելի պիտի ունենանք բազմաթիւ ընկերներով մնալու:» Ամիրապետն՝ որ բարակ կատակներ կը սիրէր, սկսաւ այս պատասխանին վրայ խնդալ, և դրան բացուածքին կողմը դառնալով՝ ականջ կախեց, որպէս զի դեղանի պարսկուհւոյն նուագարանը մանրակրկիտ լսէ:

Գեղադէմ պարսկուհին արդէն այնպէս սկսաւ նուագել որ ամիրապետը հասկցաւ որ վարպետի պէս կը նուագէ: Ցետոյ եղանակ մ՚երգեց, և իր ձայնովը՝ որ աքանչելի էր՝ ձայնակից եղաւ նուագարանին, և այս եղանակին մէջ այնչափ արհեստ և կատարելութիւն ցոյց որ ամիրապետը զմայլեցաւ մնաց:

Երբ պեղանի պարսկուհին երդելը լմնցուց, ամիրապետը սանդղէն վար իջաւ և ճեաֆէր վէզիրն անոր հետևեցաւ: Երբ սանդղին ոտքը դատ. «Այնտեղ մէջ այսպիսի պեղչիկ ձայն մը, և վին զարնել չէի տեսեր, ըսաւ ամիրապետը վէզիրին. Իսահակ ասոր չմտանար, թէև կկարծէի թէ աշխարհիս առաջին նուագածուն է: Այնչափ գոհ եմ, որ կը փափաքիմ տեսնել անոր նուագելը. մինակ պէտք է որոշել թէ ինչ միջոց բռնեցնելու է:

— Հրամանատարդ հաւատայելոյ, վրայ բերաւ մեծ վէզիրն, եթէ ներս մտնես և Ճէյլս Խպրահիմը քեզ ճանչէ, վախէն սիրտ մնանի:

— Ահա ես ալ այդ բանին վրայ կը մտածեմ, պատասխանեց ամիրապետն, և անոր մտածուն պատճառ չեմ ուզեր ըլլալ, քանի որ այսչափ տարի ինձի կը ծառայէ: Միտքս բան մը կդայ որ կրնայ յաջողիլ, այս տեղ կեցէր Մէսրուրի հետ, և սա առաջին ճամբուն վրայ սպասէ մինչև վերադառնամ:»

Ամիրապետը Տիգրիս դետին մօտաւորութենէն օդուտ քաղել ուզելով՝ անոր ջրէն դարձուցեր և կամարակապ աւազան մը շինել տուեր էր, ուր Տիգրիսի ամենէն պատուական ձկները կը քաշուէին: Հինդա-

Ներսը քալ գնաւէին այս բանս, և այն տեղ ձուկ որսալու ապառոտիներն առնելով որչափ որ կը փափաքէին, ամիրապետը յատկապէս պատուիրեր էր Շէյխ Իպրահիմին որ բնաւ ձկնորս մը չթողու որ այն տեղը ձուկ որսայ։ Սակայն նոյն գիշերն խակ, ձկնորս մ՚որ պարտիզին դրան առջեւէն կ՚անցնէր, ներս մտեր էր դուռը բաց գտնելուն, և այս առթիւ ձուկ որսալու սկսեր էր։ Այս ձկնորսն իր ուսկանը նետեր ու քաշելու վրայ էր՝ երբ ամիրապետն, որ Շէյխ Իպրահիմի անհոգութեան վրայ կասկածեր էր այս գիշերն, ու անկից օգուտ քաղելու կը մտադրէր իր խորհուրդն ի գործ դնելու համար, այն տեղն եկաւ։ Թէև ծպտած էր, ձկնորսը ճանչցեր ամիրապետն և իսկոյն անոր ոտքն ընկաւ՝ ներում խնդրելով և իր աղքատութիւնը մէջ բերելով։ «Ոտք ելիր, և բանէ մը մի վախնար, վրայ բերաւ ամիրապետը. միայն ուսկանդ քաշէ, տեսնեմ թէ ինչ ձուկ պիտի բռնես։»

Ձկնորսը՝ հանդարտելով, իսկոյն ամիրապետին հրամանը կատարեց, և հինգ վեց պատուական ձկներ քաշեց, որոց մէջէն ամիրապետն երկու հատ խոշոր ձկներն ընտրեց և պրոտուվ մը գլխէն կապել տուաւ։ Ցետոյ ձկնորսին ըսաւ. «Հապուստդ ինձի տուր և իմն առ։» Իսկոյն այս փոխանակութիւնն եղաւ, և այն ինչ ամիրապետը ձկնորսի հագուստը հագաւ, նոյն իսկ անոր հողմաթափներն ու ապարօշը հագնելով՝ ձկնորսին ըսաւ. «Առ նայիմ ուսկանդ և բանիդ գնա։»

Երբ ձկնորսը մեկնեցաւ, իր բաղդին վրայ գոհ ըլլալով ամիրապետն երկու ձկները ձեռքն առաւ և գնաց Հաճիֆէր վէզիրին ու Մէսրուրը գտնելու։ Վէզիրին առջեւը կեցաւ, և վէզիրը գանի՞ ջանչեց։ «Ինչ կ՚ուզես, ըսաւ անոր. գնա, ճամբադ շարունակէ։» Ամիրապետն անմիջապէս սկսաւ ծիծաղիլ, և մեծ վէզիրն այն տեսնելով միայն հասկցաւ թէ ոմն է։

«Իշխանդ հաւատացեալց, գոչեց նա, միթէ երջանիկ էք։ Ձեզ ջանչցայ, և հաղար անգամ ներում կը խնդրեմ իմ անմաղդաւոր ընթացքիս համար։ Հիմակ կրնաք սրահը մտնել, ու վախնաք, Շէյխ Իպրահիմ չպիտի ճանչէ ձեզ։ — Ուրեմն այս տեղ կեցէք, ըսաւ ամիրապետը վէզիրին և Մէսրուրին, մինչեւ ես իմ դէրս խաղալու պիտի երթամ։»

Ամիրապետը սրահն եկաւ և դուռը զարկաւ. Նուրի տատին՝ որ առաջ լսեց դրան ձայնը, Շէյխ Իպրահիմի խնայած. այս ալ հարցուց թէ ով է։ Ամիրապետը դուռը բացաւ, և քալմը միայն առնելով սրահին մէջ, սրպէս զի գինքը տեսնեն. «Շէյխ Իպրահիմ, պատասխանեց նա, ջէրիմ ձկնորսն եմ. տեսնելով որ բարեհամբոյր խնջոյք ունիս, և այս միջոցիս ալ երկու պատուական ձկներ որսայի, կուզայ հաղցնելու թէ արդեօք ձկի պէտք ունիս։»

Նաբէտտեն և դեղապէմ պարսկուհին ձկի խօսքը լսելով շատ ուրախան. «Շէյխ Իպրահիմ, ըսաւ դեղանի պարսկուհին, կ՚աղաչեմ, ըսէ ձկնորսին որ ներս գայ իր ձուկը յուցնէ։ «Շէյխ Իպրահիմ նոյն միջոցին տանն չտնէր հաղցնելու ձկնորսին թէ ինչպէս և որ կողմէն ներս մտեր էր. միտակ մտածեց դեղանի պարսկուհւոյն հաճելի ըլլալ։ Ուստի՝ այնչափ շատ արբած էր որ դժուարաւ իր ըլտիքը դրան կողմը դարձուց, և ամիրապետին ըսաւ թոմոմելով. «Մօտեցիր, դիշերուան վարպետ պող, մօտեցիր որ երեսդ նայիմ։»

Ամիրապետը յառաջ անցաւ՝ ձկնորսի կերպարքը կատարեալ կերպ ձեւալով, և երկու ձկները ներկայացուց. «Ինչ պատուական ձուկեր են ասոնք, ըսաւ դեղանի պարսկուհին, սրտով ին պիտի ուտէի եթէ եփած պատրաստուած ըլլային։ — Տիկինն իրաւունք ունի, վրայ բերաւ Շէյխ Իպրահիմ, ինչ ընենք ձուկը քանի որ հում է. շուտ գնա եփէ, և բեր ուտենք. խոհանոցիս մէջ ամէն պէտք եղածը կրնաս գտնել։»

Ամիրապետը շեւաֆէր վէզիրին քով դարձաւ. «Շեւաֆէր, ըսաւ անոր, աղաչը ընդունելութիւնն մը գտայ, բայց ի՚ուզեն որ ձուկն եփինք։ — Հիմակ ես կը պատրաստեմ, վրայ բերաւ վէզիրն, ասոր համար շատ տաճն պէտք չէ։ — Այնչափ կը տենչամ իմ նպատակիս հասնելու, պատասխանեց ամիրապետն, որ ես ալ ձեզի պիտի օգնեմ։ Քանի որ քալմ ձկնորս մ՚եմ, կրնամ նաև ընտիր խոհարար ըլլալ։ Երբ պատրաստած եղած տաճնս կերցուր եփած եմ, և ձեր քէս կգայ։» Այս ըսելով՝ Շէյխ Իպրահիմի բնակարանին ճամփան բռնեց, և վէզիրն ու Մէսրուրն անոր կը հետեւէին։

Երիքնեն ալ դործի սկսան, և թէև Շէյխ Իպրահի խոհանոցը շատ

ՃԾ չէր, բայց որովհետև ամէն սէրաք եղածը կը գանուէր, շատ չանցաւ ձուկն եփեցին: Ամիրապետն ինքն անձամբ տարաւ, և մեծաքրեայ տանն ամէն մէկուն առջև կխարան մ՚ալ դրաւ, որ եթէ ուզեն քամեն: Մեծ ախորժանօք կերան ձուկը, մանաւանդ Նուրէտտինն և պեղանի պարսկուհին. իսկ ամիրապետն անոնց առջև ասքի վրայ կեցաւ:

Երբ կերակուրը լմնցուցին՝ Նուրէտտինն ամիրապետին նայեցաւ: «Չինարա, ըսաւ անոր, շատ համով էր ձուկդ, և մէզ չափազանց հաճոյք պատճառեցիր:» Նուրէտտին ձեռքը ծոցը խոթեց, և անկից քսակը քաշեց հանեց, որուն մէջ երսուն ոսկի կար, որոնք Պասրայի Թագաւորին բարեացն Սահմիարի տուած դումարին մնացորդն էր: «Առ այս ոսկիներն, ըսաւ անոր, աւելի պիտի տայի եթէ ունենայի. քեզ աղքատութեան վճռակիպ պիտի ազատէի եթէ իմ տասցուածքս վատնելէն առաջ՝ քեզ Ճանչցած ըլլայի. սրտով ընդունէ այս դուսմարս իբր մեծագին պարգև մը:»

Ամիրապետը քսակն առաւ, և Նուրէտտինի հնարհակալ ըլլալով զգաց որ քսակին մէջինն ոսկի է և ըսաւ. «Տէր իմ, չափազանց հնարհակալ եմ այս առատասիրտ պարգևիդ համար: Քանի՛ երջանիկ եմ քեզի պէս ընտիր մարդ մը Ճանչնալուս, բայց մեհեքէն առաջ՝ քեզի աղաչանք մ՚ունիմ, և յուսամ որ կը կատարես: Սա վիճակ տեսնելով կը դատեմ որ տիկինն ածել դիտէ: Եթէ հնարհ ընէիք ըսելու իրեն որ եղանակ մը նուագէ, այն տեսն շատ դոհ և ուրախ սրտիւ պիտի եղանակ մը նուագէ, այն տեսն շատ դոհ և ուրախ սրտիւ պիտի

միշտ զանի Ճշմարիտ ձիտօրս սեսիլով, Համիդեան անոր փափաքը կատարելու: Իր բոլոր պատանեթիւնը պատմեց, թէ ինչպէս իր հայրը՝ վէպերը կեղանի պարսկուհին գնեց Պասրայի թագաւորին համար, թէ ինչպէս ինքը գրաւեր էր, և ինչպէս Պաղտատ հասեր և Շէյխ Իպրահիմի պարահէզը մներ էր:

Երբ Նուրէտտինն խօսքն աւարտեց, ամիրապետն անոր հարցուց. «Հիմակ ձեր պիտի երթաս: — Ո՞ր պիտի երթամ մի, պատասխանեց Նուրէտտին, ուր որ Աստուած իս առաջնորդէ: — Եթէ խօսքիս միտ դնես, վասն բերաւ ամիրապետը, պէտք չէ որ հեռուն երթաս, ընդհակառակն պէտք է որ Պասրա դառնաս: Քեզի երիտասարդիս մը պիտի տամ որ իմ կողմէս թագաւորին պիտի յանձնես. պիտի տեսնես որ քեզ շատ աղէկ պիտի ընդունի երբ այս պիտոյքս կարդայ, և քեզ ոչ ոք բան մը պիտի ըսէ:

— Քէրիմ, պատասխանեց Նուրէտտին, բանդ զարմանալի բան մ'է. երբէք լսած չէ որ քիզի պէս ձիտօրս մը թագաւորի մը հետ թղթակցութիւն ունենայ: — Պէտք չէ զարմանաս այս բանիս վրայ, պատասխան տուաւ ամիրապետը, Պասրայի թագաւորին հետ մի և նոյն դաստատայ աշակերտութիւն ըրինք, և խիստ սիրա բարեկամներ էինք: Իրաւ է որ բաղդը միօրինակ չնպաստեց մեզ. զանի թագաւոր ըրաւ, իս՝ ձիտօրս, բայց այս անհաւասարութիւնը մեր բարեկամութիւնը չնուազեցուց: Ինքը մեծ փափաք ցցուց իս այս վիճակիս ազատելու, բայց ես բանական Հաւարիցի խնդրել իրմէ որ իմ բարեկամացս համար ինչ որ առաջարկեմ, չմերժէ. Թողուր ըսածս ընեմ և անոր յաջողելը սիրտ տեսնես:»

Նուրէտտին հաւանեցաւ ամիրապետին ուզածին: Որովհետև սրահին մէջ դրելու համար պէտք եղածը կը դանուէր, ամիրապետը Պասրայի թագաւորին նամակը գրեց, և ապա նամակին ծայրը՝ փոքր տառերով՝ սա բանաձևն աւելցուց: «Քանան ամենազօրանած Աստուծոյ յայտնելու համար որ անպատճառ իր հրամանին կատարումը կը պահանջէ:

ՀԱՐՈՒՆ-ԱԼ-ՐԱՇԻՏ ԱՄԻՐԱՊԵՏՆ ԱՒ ՓՈՔՐՈՒՐՆ ՊԱՍՐԱՑԻ

«Մահմէի որդի՝ Հարուն—ալ-Րաշիտ, սոյն գիրս կը յղէ իր եղբօրորդի՝ Մէհէմմէտ Զիւնէպիին: Երբ գրաբեռ՝ Գալան վէպերուն որդին Նուրէտտին, քեզ այս նամակս յանձնելով կարգաս, իսկոյն արքայական վերարկուդ հանէ, անոր տաբերան վրայ դիր, քու առջև նստեցուր զանի, և այս հրամանս կատարէ: Ողջ լեր:»

Ամիրապետը նամակը ծալլեց և ինքնց, և Նուրէտտինի չհայտնելով անոր պարունակութիւնն. «Առ սա գիրս, ըսաւ, և քիչ առենէ Ճամբայ եղիր նոյն ատենիջապէս մնիր, ինչպէս որ նոյն ժամուն ամէն օր նաւ կայ. նաւը մտնելուդ կրնաս քնանալ:» Նուրէտտին նամակն առաւ, և Սահմիաթ պահապետարին իր քսակը տուած առեւն առնացած քիչ մը տակովը Ճամբայ ելաւ. իսկ պեղպէմ պարսկուհին անոր մեհենքն վրայ անմխիթար ձնալով առանձին քաղցնելն վրայ քաշուեցաւ և սկսաւ յորդ արտասուք թափել:

Երբ Նուրէտտին սրահէն դուրս ելաւ, Շէյխ Իպրահիմ՝ որ այս անցած զարմանքներն վրայ անհոս կը կենար, ամիրապետին նայեցաւ՝ միշտ կարծելով թէ նա գէրիմ ձիտօրն է: «Միտ դիր, գէրիմ, ըսաւ անոր, դու եկար մեզի երկու ձուկ բերիր, որ շատ շատ քանի պղնձէ դրամ կ'արժեն, և այն ձուկերուն փոխարէն քեզի քսակ մը և աղախին մը տուաւ Նուրէտտին, միթէ կարծես թէ այս ամէնը քեզի համար է: Ահա բայց 'ի բայց կ'ըսեմ որ աղախնին կէսը կը պահանջեմ: Իսկ քսակին դարձով ցցուր նայիմ ինչ կայ անոր մէջ, եթէ արծաթ է՝ անոնք հատ մը կ'առնուս, իսկ եթէ ոսկի է՝ ամէնն ալ պիտի առնեմ և քանի մը կաթ պղինձ պիտի տամ, որ քսակիս մէջինը դանեն:»

Հետևեալ մասը լաւ հասկնալու համար, պատ Շէյխ Իպրահիմ խօսքն ընդմիջելով, պէտք չէ մոռնալ որ ամիրապետն՝ եփած ձուկը սրահը

քերելէն առաջ՝ ապտպրիր էր ձեռաֆիէր վէպերին որ շատով պատմեն երթայ, իրեն չորս սենեկապան և ղեռատ մը բերէ, և պայ սաղատալին միւս կողմը սպասէ մինչև որ պատուհանէ մը ձեռք գարնելով ձայն տայ անոր: Մեծ վէպերն այս հրամանը կատարեր էր, և ինքը, Մէսրուրն ու չորս սենեկապանները որոշեալ տեղը կ'սպասէին որ ներս մտնելու նշանը տեսնեն:

Հիմակ իմ պատմութեանս կը դառնամ, յարեց մոլեմտուհին: Ամիրապետը՝ միշտ ձկնորսի կերպարանքով՝ Ճէյլա Խալրահիմի պատասխան տուաւ: «Ճէյլա Խալրահիմ, չգիտեմ թէ քսակին մէջ ինչ կայ, թէ արծաթ և թէ ոսկի դրամ բլլայ բոլոր արտովս քեզի հետ պիտի բաժնեմ, իսկ աղախինն ես ինձի պիտի պահեմ: Եթէ առաջարկած պայմաններս չընդունիս, ձեռքդ բան մը չպիտի անցնի:»

Ճէյլա Խալրահիմ՝ ձկնորսի մը կողմէ այսպիսի լրբութիւն մը տեսնելով, սեղանին վրայէն յանձնապաղէ ոտնի մ'առաւ և ամիրապետին դլխուն դնեաց: Գինովի մը ձեռքով նետուած յանձնապաղէն խոյս տալ շատ դիւրին եղաւ ամիրապետին, յանձնապաղը պատին զարնուելով կտոր կտոր եղաւ: Ճէյլա Խալրահիմ, աւելի ևս զայրանալով հատուածը վրնպելուն, սեղանին վրայի կանթեղն առաւ, տատանելով ոտք ելաւ և դաղտնի սանդղէ մը վար իջաւ որպէս դի երթայ դատաղան մ'առնու:

Ամիրապետն՝ այս պատեհ առթիւ՝ ձեռքերը զարկաւ պատուհանի մը: Անմիջապէս վէպերը, Մէսրուր և չորս սենեկապանները հասան, և իսկոյն ամիրապետին ձկնորսի հագուստը հանելով արքայական դգեստը հագուեցուցին: Դեռ սենեկապաններն ամիրապետին բոլորտիքը կեցած իրենց պարտքը չէին աւարտեր, ամիրապետը սրահին մէջ տեղը դրուած աթոռին վրայ բազմեր էր, երբ Ճէյլա Խալրահիմ՝ շահասիրութեան ոգեշունչ վառուած՝ հասաւ պատանիով մը ներս մտաւ տուաւ ձկնորսը լաւ մը կոխելու մտօք: Ծերունի դռնապանին աչքին ձկնորսը չզարկաւ, այլ սրահին մէջ տեղ դտնուած դգեստն, և ամիրապետն՝ որ պահին վրայ հասեր և իր երկու կողմը վէպերն ու Մէսրուրը կեցեր էին: Այս տեսարանիս վրայ կանգ առաւ և չգիտեր թէ արթնո՞ւն է թէ՝ քո՞ւն: Ամիրապետն սկսաւ անոր հետեւեալ վրայ ծիծաղիլ. «Ճէյլա խալրահիմ, քանի անգամ, ինչ կ'ուզես, ինչ կը փնտռես:»

Ճէյլա Խալրահիմ՝ որ անհրնարին էր ալ ամիրապետը տեսնելուն, խօսքն անոր ոտքն ընկաւ, երեսն ու իր երկար մօրուքը պեղելով: «Հրամանատարդ հաւատացեալդ, ողջոյն նա, նաւատ պերճիդ ձեղ նախատեց, ձեր գոյքը կը հայցէ և հաղար անդամ ներում կը խնդրէ:» Նոյն միջոցին սենեկապանները ամիրապետը հագուեցուցին եղան, ուստի գահէն վար իջնելով անոր ըսաւ. «Ոտք ելիր, քեզ կը նեղեմ:»

Ցետոյ՝ ամիրապետը պեղադէմ պարսկուհւոյն գարձաւ, որ իր վիշտը զսպեր էր, տեսնելով որ պարտէզն ու տաղաւարն ամիրապետինն են, և չէ թէ Ճէյլա Խալրահիմին, ինչպէս որ Ճէյլա Խալրահիմ ստած ըսեր էր, և թէ ամիրապետը ձկնորսի կերպարանք առեր էր:

«Պեղադէմ պարսկուհի, ըսաւ անոր, ոտք ելիր, և եաևէս եկուր: Այս բոլոր տեսածներէդ հասկցար անշուշտ թէ ոչ եմ, և թէ անհնարին վհատանձնութեամբ նուրէտտինի լուծ ըրած պարգևն սեպհականելու տատիճանի մարդ չեմ: Նուրէտտինը պատրաստ ղրկեցի որ թագաւորը բլլայ, և երբ հարկ եղած դիրքերն իր հաստատութեան համար ապահով ձեռքը հասցնեմ, քեզ ալ պատրաստ պիտի ղրկեմ որ թագուհի ըլլաս: Սակայն մինչև այն ատեն քեզ սենեակ մը պիտի տամ իմ պալատիս մէջ, ուր քու արժանիքիդ համեմատ ընդունելութիւն պիտի դտնես:»

Պեղադէմ պարսկուհւոյն զգայուն սիրտն այս խօսքերէն հանդարտեցաւ և սիրտ առաւ, մանաւանդ իր տրտմութիւնը լիովին փարատեցաւ երբ լսեց որ իր խանդավառին սիրած Նուրէտտինն այնպիսի բարձր պաշտօնի մը հասեր է. ամիրապետն իր կնկան Զուպէյտէի ալ յայտնեց պեղադէմ պարսկուհւոյն Նուրէտտինի համար ունեցած յարգանքը յայտնելով:

Նուրէտտինի վերադարձն ի Պասրա իր ամենալաւ ձկնորսէն աւելի չգիտեր և քանի մ'օր առաջ եղաւ, թէև այն չգիտութենէն իր դժբաղդութիւնը ծագեցաւ: Ոչ բարեկամ և ոչ պզտիկ տեսաւ դարձն. շիտակ պալատը դնաց և թագաւորն ալ ունկնդրութիւն ունէր: Ամբոխը ճեղքեց նամակը ձեռքը բռնած բարձր. անոր տեղ բացին, և Նուրէտտինն

դիրը Թագաւորին ներկայացուց։ Թագաւորը զայն առաւ, բացաւ և կարգալու սկսաւ երեսին դոյնը նետուց։ Երեք անգամ զայն պատռեց, և ամիրապետին հրամանը կատարելու վրայ էր, երբ մտադրեց Նուբէտոյին անհաշտ թշնամի Սամսոյ վէզիրին ցոյց տալ։

Սամսոյ՝ որ Նուբէտոյինը ճանչնալը էր, և ինքն իրեն անձկութեամբ կը մտածէր թէ արդեօք ինչ նպատակաւ Պասրա դարձեր էր, Թագաւորին չափ զարմացած մնաց երբ նամակին խմբագրութեան փոխանակ Ալի Ռամիկին անունը տեսաւ։ Որովհետև Սամսոյ այս նամակին ի դերեւ հանելու շահ ունէր, հնարք մը մտածեց որ անոր դործադրութիւնն արգիլէ։ Անհնարին մը կեղծեց թէ պիրն ապրիլ չէ կարգացեր, և երկրորդ անդամ մ'ալ կարդալու համար, մեկնաբանութեամբ մը նամակին վերի բանաձևը պատռեց, որով ամիրապետին իր հրամանին դործադրութիւնը կը պահանջէր, բերանը տարաւ կտրեց ու կլլեց, և նոյն միջոցին ոչ ոք տեսաւ զայն, և նշանը չէր երևեր եթէ մեռնէն չտեսնուէր։

Այս անօրէնութիւնն ընելէն ետև՝ Սամսոյ Թագաւորին կողմը դարձաւ, նամակին անոր յանձնեց և կամացուկ մը խօսելով. «Վաւ ուրեմն, տէր իմ, հարցուց անոր, ինչ է Ձեր վհատութեան միտքն։ — Ամիրապետին հրամանը կատարել, պատասխան տուաւ Թագաւորը։ — Ըլլայ որ այդ բանն ընէք, տէր իմ, վրայ բերաւ անդամ վէզիրն, իրաւ է որ ամիրապետին ձեռագիրն է այս, բայց անոր վրայ բանաձևը չկայ։» Թէև Թագաւորն արդէն տեսեր, բայց շփոթած ըլլալուն կարծեց թէ սխալեր է՝ նոյն բանաձևը նորէն չտեսնելուն։

«Վհատիր տէր, շարունակեց վէզիրը, տարակոյս չկայ որ Նուբէտոյին ձեր և ինձի դէմ դանդատած ըլլալով՝ այն դիրը ստացած է, և ամիրապետը զայն տուած սիրոյ ըլլայ որպէս դի դլխատէ ազատի. բայց աստղ ըսելուզած չէ որ իր հրամանը կատարէք։ Ասկէ զատ՝ հարկ է դիտելոր յատուկ պատգամաւոր մը չղրկեց արտօնագրելին, որ անհրաժեշտ է այսպիսի պարագայի մէջ։ Ձեղի պէս Թագաւոր մ'իր աթոռէն վար չեն առնուր առանց այս արտօնագրին. օրէն մեկին ալ Նուբէտոյինէն զատ կրնայ մեկը սուտ նամակով մը դալ. այսպիսի բան մը քնաւ տեսնուած չէ։ Տէր, Ձեր վհատութիւնը կրնայ իմ խօս-

քիս վստահիլ, և եթէ իմ վրաս ի՛նտնում պատահելիք չարիքը։»

Զինեալ Թագաւորն իր վէզիրին խօսքէն համոզուեցաւ և Նուբէտոյինն անոր ձեռքը յանձնեց։ Սամսոյ բռնութեամբ զանի իր տունը դրկեց, ծեծել տուաւ այնչափ մինչև որ կիսամեռ ընկաւ. այս վիճակիս մէջ բանտ դնել տուաւ, և ամենէն մեթ ու խորունկ վնդանն իջեցուց՝ պատուիրելով բանտապահին որ մինակ չոր հաց ու ջուր տայ անոր։

Երբ Նուբէտոյին այսպէս գահավիժ ըլլալէն ետև ինքզինքը տատանումն մէջ, աղբամէջի ձայներ արձակեց՝ իր դժբաղդ ճակատագիրն օղբալով. «Ա՜հ, ձիհնօրս, դուխց նա, ինչպէս իս խաբեցիր, և ինչպէս դիւրաւ հաւատացի քեզ. միթէ այսպիսի անպատուոյն ճակատագրի մը կրնայի սպասել՝ քեզ ըրած բարիքէս ետքը։ Սակայն Աստուած օրհնէ քեզ, չեմ կրնար հաւատալ որ չար խորհրդով ըրիր այս բանս և մինչև աղեխարշ վախճանը սիրտ համբերեմ։»

Վաղուկիր Նուբէտոյին տասն օր ամրողջ նոյն մտածման մէջ մնաց, և Սամսոյ վէզիրը չմնացաւ թէ ինքն այն տեղ դնել տուեր էր զանի։ Թէև որոշեր էր անտանարկութեամբ սպաննել տալ զանի, բայց ինքն իր իշխանութեամբը չէր համարձակեր ընելու։ Իր չարահնար խորհուրդը յաջողցնելու համար իր դերիներէն շատերը ճոխ պարգևներով քեռնատուրեց, և անոնց դլուխն անցնելով դնաց Թագաւորին ներկայացաւ. «Վհատիր տէր, ըսաւ անոր չարանենգ ոգւով մը, նոր Թագաւորը ի՛նաղաչէ Ձեր վհատութիւնն այս ընծաներն իր պահակութեան տակ ընդունիլ։»

Թագաւորը հասկցաւ թէ Սամսոյ ինչ ըսել ի՛ուզեր։ «Ինչ, ըսաւ, այն Թշնամականը միթէ դեռ կ'ապրի. կարծէի թէ զանի սպաննել տուեր ես։ — Տէր իմ, պատասխանեց Սամսոյ, ինձի չհնար մարդու մը կեանքը բառնալ, այլ Ձեր վհատութեան։ — Գնա, պատասխանեց Թագաւորն, անոր վիզը կտրել տուր, ահա քեզի հրաման կը տամ։ — Տէր իմ, ըսաւ այն ատեն Սամսոյ, չափազանց շնորհապարտ եմ որ այս արդար պատասխանը կ'ընէք։ Բայց որովհետև Նուբէտոյին իր պիտոյս նախատինքը հրապարակաւ ըրաւ ինձ, կը խնդրեմ որ հրաման տուք պատճառին առջև ընել այս դլխատութիւնն, և մեռնելիներ

Երթան քաղքին ամէն կողմը պտուտ, որպէս զի ամէն մարդ իմանայ թէ ինձի ըրած նախատանոյց պատիժը կ'ընդունի։» Թագաւորն անոր ինդիրը կատարեց, և մանեսիներն իրենց պարտքը կատարելով՝ բոլոր քաղքին մէջ ընդհանուր տրտմութիւն մը տիրեցին։ Վասն զի Գալան վէզիրին առաքինութիւնները յիշելով՝ բոլորը ցաւագին որ անոր որդին վատօրէն պիտի դլխատուի Սաղոյ վէզիրին ինդրանաք և անօրէնութեամբը։

Սաղոյ ինքն անձամբ՝ քանի չափ գերի հետն առած՝ որոնք իր անպիտանութեան դործակատարներն էին, բանտը գնաց։ Նուրէտտինն իր առջևը բերին և առանց Թամրի ձիու մը վրայ նստել տուաւ։ Ան ինչ Նուրէտտինն ինքղինքը թշնամւոյն ձեռքը տեսաւ. «Կը յայտնանաս, ըսաւ անոր, և քու զօրութիւնդ չարաչար կը դործածես. բայց մեր մէկ գերքին այս խօսքերուն վրայ վստահութիւն ունիմ, որ կ'ըսէ. «Ցանիբաւի կը դատես, և քիչ տանէն դու ալ պիտի դատուիս։»

Սաղոյ վէզիրն որ իրօք յաղթութիւնը տանելուն կը յուսար. «Ինչ, աներես, ըսաւ նա, դու նորէն կ'ուզես նախատելու ինչպէս կը յանդգնիս։ Լաւ, քեզ կը ներեմ այս նախատինքդ, ինչ որ կ'ուզէ թող հատի, բաւական է որ բոլոր Պասրայի բնակչաց առջև դլխիդ կտրուիլը տեսնեմ. պէտք է նաև գիտնան թէ մեր մէկ ուրիշ գերքն ինչ կ'ըսէ։ «Ինչ փոյթս է եթէ իմ թշնամւոյս մահուան հետևեալ օրը մեռնիմ։»

Այս պաշտօնեան՝ որուն տեսնելու թիւնն անողոքելի էր, իր վհատած դիրքիներէն մէկ քանին հետն առաւ, և մուտերըն ձեռքը Նուրէտտինը դլխատութեան տեղն առաջնորդել տուաւ՝ ինքը պալատին ճամբան բռնելով։ Ծողովուրդը քիչ մնաց իր վրայ պիտի յարձակէր, և անտարակոյս գինքը պիտի քարկոծէր, եթէ առաջին քարը նետող մը ըլլար։ Երբ Նուրէտտինը պալատին հրապարակը՝ Թագաւորին սենեակին առջև տարաւ, զանի դահճին ձեռքը Թողուց և ինքը Թագաւորին քովը գնաց, որ արդէն իր դահլիճն էր և իր վէզիրներուն հետ այս արհեստաւոր տեսարանին հանդիսատես ըլլալու կը պատրաստուէր։

Թագաւորին պահապան զօրքն ու Սաղոյ վէզիրին գերիները, որ Նուրէտտինի բոլորտիքն առեր էին, ժողովրդեան զայրոյթը զսպելու մեծ նեղութիւն քաշեցին, վասն զի ամէնքն իրենց բոլոր ձիրը կը թա-

փէին, Թէև պարապ տեղը, պահակներուն շրջանն ալ բռնելու, զանոնք քշելու և Նուրէտտինն ազատելու համար։ Դահիճը Նուրէտտինն մօտեցաւ. «Ցէր իմ, ըսաւ, կը պաղատիմ քեզ մահդ ինձ ներելու, ես գերի մ'եմ միայն, և պարտաւոր եմ ինձ տրուած հրամանը կատարելու. եթէ բանի մը պէտք չունիս, ինդրեմ, պատրաստուէ, վասն զի Թագաւորը հիմակ պիտի հրամայէ ինձ որ զարնեմ։

— Այսպիսի անպատրոյն միջոցի մը մէջ, միթէ չկրնա՞ր անձ մը, ըսաւ վշտաբեկ Նուրէտտինն գլուխն ալ և ահեակ դարձնելով, որ շնորհ ընէ ինձ քիչ մը ջուր տալու որպէս զի պապակս անցնեմ։» Խնկոյն՝ ձեռքէ ձեռք անցնելով լեցուն աման մը ջուր բերին։ Սաղոյ վէզիրն՝ այս յապաղումը տեսնելով Թագաւորին դահլճին պատուհանէն դահճին պոռաց. «Ինչմե՞ կ'սպասես, զարկ։»

Այս բարբարիկ և անողոք հրամանին վրայ, ամէն կողմէն վէզիրին դէմ անէծք կարդացին, և Թագաւորն ալ, իր իշխանութեան նախանձախնդիր ըլլալով իր առջևն եղած այս յանդգնութիւնը չկրցաւ տանիլ, ինչպէս որ հասկցուց պոռալով որ քիչ մը սպասեն։ Բայց ուրիշ պատճառ մ'ալ ունէր. նոյն պահուն՝ աչքը դէպ ի մեծ փողոց մը ածելով՝ որ իր առջևն էր և հրապարակը կը յանդէր, ձիաւորներու խումբ մը նշմարեց որ սանձարձակ կը վազէին ընդ առաջ. «Ղէվիր, ըսաւ խնդոյն Սաղոյին, ինչ է այս, դայէ անդամ մը։» Սաղոյ որ քիչ մը կասկածեցաւ Թէ ինչ կրնայ ըլլալ, Թագաւորը սպրդեց որ դահճին հրամանը տայ. «Ո՛չ, վրայ բերաւ Թագաւորը, նախ կ'ուզեմ իմանալ Թէ ինչ կ'ուզեն այս ձիաւորները։ Ճեռֆէր մեծ վէզիրն էր այն իր արբանեակներուն՝ որ անձամբ ամիրապետին կողմէն՝ պաղատանքն կրպար։

Այս պաշտօնէին Պասրա դալուն պատճառն իմանալու համար, պէտք է գիտնալ որ Նուրէտտինն ամիրապետին նամակովը ճամբայ ելնելէն ետև՝ ամիրապետը՝ հետևեալ օրն, և ոչ իսկ շատ մ'օրեր անցնելով՝ չէր յիշած գեղադէմ պարսկուհւոյն ըսած արտօտպիրը ղրկել Պասրայի Թագաւորին պատուհասելու մը ձեռօք։ Ամիրապետը կանանոյն էր, և սենեկի մը կ'անդնէր, երբ խիստ աղաղ ձայն մը լսեց, կանչ առաւ, և այն ինչ երկրին քանի մը խօսքերը լսեց, որմէ կ'իմա-

ցուցը երդողին վիշտը բացակայի մը համար, որ ներքինի մը հարցուց թէ այն սենեակը բնակող կինն ալ է: Ներքինին պատասխանեց թէ Պասրա ղրկած երիտասարդին աղախինն էր:

«Ա՛հ, թշուառ Նուբէտամին Գոհանի որդի, դուխդ խիղճն ամբաստանեսն, ինչպէս քեզ մատչեմ: Խոկդն ձեռքիդը կանչեցէք» ըսաւ նա: Ու ձեռքը եկաւ: Ձեռքը, ըսաւ անոր ամիրապետը, բնաւ միաքս չեկաւ Նուբէտամինի թագաւորութեան հրամարտակը Պասրա ղրկել որպէս զի թագաւոր Ճանչցուի: Խոկդն պէտք եղած մտրակին ու ձիերը առ և փութով Պասրա հասիր: Եթէ Նուբէտամին կինդանի չէ, և գլխիդը սպանած են, Սաֆոյ վէզիրը կախել տուր. իսկ եթէ ողջ է, գլխովն առ այս տեղը բեր՝ Պասրայի թագաւորին և վէզիրին հետ:» Ձեռքը վէզիրը ժամանակ չանցուց, իսկոյն իրեն հետ բաւական մարդ առաւ ձի հեծաւ և Պասրա հասաւ այն կէրպով և ժամանակին որ արդէն լսեր: Այն ինչ հրապարակը մտաւ որ ամէնքն անոր տեղ ցոյցն ու քաշուելցան՝ Նուբէտամինի աղաւաթիւնը հայցելով. սակայն Ձեռքը նոյն շտապով մինչև պալատին անդուռը հասաւ և այն տեղ վար իջաւ:

Պասրայի թագաւորն՝ որ ամիրապետին վէզիրը Ճանչեր էր, անոր առաջքն առաւ և իր պալատին դրան վրայ գլխովն ընդունեց: Ձեռքը նախ հարցուց եթէ Նուբէտամին կինդանի է, և հրամայեց որ իր առջևը բերին: Նուբէտամին կապուած կաշկանդուած երևեցուն, վէզիրն անոր կապերը քակել տուաւ և հրամայեց որ Սաֆոյ վէզիրը ձերբակալ ընեն և մի և նոյն չտանեւրավ զանի կապեն:

Ձեռքը գիշեր մը միայն պատկեցաւ Պասրա. հետևեալ օրը Ճամբայ ելաւ, և իր առաջած պատուէրին համեմատ՝ իր հետը տարաւ Սաֆոյ վէզիրը, Պասրայի թագաւորն և Նուբէտամին: Երբ Պաղտատ հասաւ՝ զանազ ամիրապետին ներկայացուց. յետոյ իր ուղևորութեան պատմութիւնն անոր ըսաւ, մանաւանդ յայտնեց թէ Նուբէտամին ինչ վիճակի մէջ գտեր էր, և թէ Սաֆոյ վէզիրին ոխակալութեան պատճառաւ ինչ նեղութիւններ կրեր էր: Ասոր վրայ ամիրապետը Նուբէտամինի առաջարկեց որ Սաֆոյի դլուխն իր ձեռքը թարմ:

«Իշխանդ հաւատացելոց, պատասխանեց Նուբէտամին, որչափ որ այս անզգամ մարդը թէ ինձի և թէ բարեյիշատակ հօրս մեծ չարիք հասոյց, աշխարհիս ամենէն վատագոյն մարդը պիտի սեպեմ եթէ ձեռքս անոր արեան մէջ թաթաւեմ:» Ամիրապետն անոր վեհանձնութիւնը գովեց, և այս դլխատութեան դործը դահճին ձեռքը կատարել տուաւ:

Ամիրապետը Պասրա ուղեց ղրկել Նուբէտամինն իբր թագաւոր, բայց Նուբէտամին աղաչեց որ այս բարձր պաշտօնն իրեն չյանձնէ: «Իշխանդ հաւատացելոց, ըսաւ անոր, Պասրա քաղաքն այսուհետև այնքան աւերի պիտի երթի ինձ որ կ'աղաչեմ Ձեր վեհափառութիւնը ներել ինձ պահելու իմ երդումն, որ է բնաւ այն տեղ չդառնալ: Մեծ փառք պիտի սեպեմ վեհափառ տիրոջդ մօտ որ և է ծառայութիւն ընելու, եթէ բարեհաճիք ինձի այս տեղ պաշտօն մը շնորհելու:» Ամիրապետն իր մտերիմ պալատականաց կարդն անցուց զանի, գեղադէմ պարկուհին անոր յանձնեց և անոր այնչափ բարիք ըրաւ որ ամէն փափաքելի երջանկութեամբ միասին ապրեցան ցմահ:

Իսկ Պասրայի թագաւորին գալով՝ ամիրապետը բաւական համարեց անոր հասկցնելու թէ մեծ ղգուշութեամբ պէտք է ընտրել իր վէզիրներն, և զանի նորէն իր թագաւորանիստ քաղաքը դարձոյց:

ՎԵՐՋ ԵՐՐՈՐԴ ՀԱՏՈՐԻ

ՅԱՆԿ ՆԻՒԹՈՑ

Երես

Ասուլհասան Ալի Էմիր Պէդաթի և Հարուն-ալ-Բաշիտ ամիրա-
պետին Շէմսէդդինհար մեռեալին պատմութիւնը 5

Քամարալզամանի , Քալհատայի կողմանց իշխանին և Զինաստանի
Պատուր իշխանուհւոյն սիրային արկածից պատմութիւնը . . 78

2013

23295
23296

ՀՀ Ազգային գրադարան
NL0389828

ՀՀ Ազգային գրադարան
NL0389825